



Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

### **Правила пользования**

Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.


### **О программе**

Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу <http://books.google.com>.

HDI



HW 8564 9



Digitized by Google





# ԲԻՉՉԻՈՂԱ


ՊԱՏՄԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ



# ԲԻՉՉԻՈՒԼԱ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Ք. Վ. ՍԵՆԳԻՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ


1865



HARVARD UNIVERSITY  
LIBRARY

'JUL. 16 1991





## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

**Յ**ովսէփ-Քաավիէ Արնիփակիոս Սէնգին գաղղիացի գրագէտն ու թատրերգակը ծնած է Բարիզ 1797ին, յուլիսի 10ին: Բանաստեղծութեամբ ակաաւ իր ասպարէզը • քերթուածներ, տաղեր հրատարակեց որոնք մեծ ընդունելութիւն գտան, և Երանոսիան ուսման կոչածը պատկուեցաւ Գաղղիոյ Ճեմարանէն • ինչպէս նաև 1820ին ուսման կան հրահանգաց վրայ գրած մէկ ճառն ալ: 1823էն վերջը քանի մը թատրերգութեանցն հասարակաց հաճոյ անցնիլը տեսնելով՝ քաջալերեցաւ նոյն ճիւղը շարունակելու, և Աքքիս, Տիւվէր, Անարլոյ, Քարմուշ, Վարէն, Մասսոն և այլն, հեղինակաց հետ աշխատելով՝ երկու հարիւրէ աւելի թատրերգութիւն հանդիսացնել տուաւ, բոլորն ալ ընդ Քաավիէ անուամբ:

Աւելի ևս ծանօթացուց ինքզինքն հասարակաց մի և նոյն ժամանակ ՚ի լոյս հանած պատմական

ու վիպասանական երկասիրութիւններովը , ուրոնցմէ առաջիկայս՝ Բիւլիոս՝ ծաղկի մը ու բանասարգելոյ սրտաշարժ պատմութիւնը , շատ աճեցուց իր համբաւը . քսան անգամե աւելի տպուեցաւ , ամեն լեզուով թարգմանուեցաւ , և արժանի ըրաւ զինքը պատուոյ խաչանշանն և 3000 Ֆրանքի մոնղոլոնեան վարձատրութիւն մ'ընդունելու :

Այնպիսի գրուածք մ'է ասիկա , որ մարդ սիրա՛ի թունդ ու անյագաբար կը կարգայ , և լմնցուցած ժամանակ մխիթարութիւն ու մեծ ախորժ մը կը զգայ : Հեզինակն ոչինչ երեցած նիւթոյ մը դէպքերուն այնպիսի ճարտար հիւսուածք մը կուտայ՝ որ ըստ զանազան պարագայից ընթերցողը կը գորովէ , կը վհատեցնէ , կը զուարթացնէ , կ'ուսուցանէ ու կը խրատէ : Համառօտ ըսել՝ վեհ ու ընտիր ոճ մը , բնական ու կենդանի պատկերներ , փայլուն ու հանճարեղ իմաստներ , անընդհատ կապակցութիւն մը անակնկալ փոփոխութեամբք խառնած իր յատուկ կատարելութիւններն են :

Այսպիսի պատուական ու օգտակար գրուածքի մը ուզելով ազգերնիս ալ հազորդակից ընել , կը նուիրենք զայն ՚ի մասնաւորի աշխոյժ երիտասարդաց , իրենց ախրութեան ու վշտաց օրերուն միակ սփոփումն բնութեան հրաշալիքն ու անոնց Արարիչը ցուցնելով :

## ԱՌ ՏԻԿԻՆՆ ՎԻՐԳԻՆԻԱ ԱՆՍԸԼՈՅ

**Գրուածքս կրկին կարդացի ու վախով հրամանքիդ կ'ընծայեմ՝ սակայն ո՛վ կըրնայ լաւագոյն զայն յարգել:**

Հրամանքդ թանձր վիպասանութիւններ կամ երկայն թատրերգութիւններ չես սիրեր. իմ դիրքս ոչ թատրերգութիւն է ե ոչ վիպասանութիւն: Պարզ պատմութիւն մ'է պատմելիքս. անանկ պարզ՝ որ թերևս ոչ ոք համարձակած է այսպիսի ամփոփ նիւթի ձեռք զարնել: Գիւցազնս ոչինչ բան մի է. բայց այս ըսելովս չեմ ուզեր պակասութիւնը իր վրայ ձգել: Աստուած պահէ: Եթէ երկասիրութեանս գործը մեծ երևոյթ չունի՝ մտածութիւնը մեծ է, նպատակը բարձր է, ե եթէ այնմ չեմ հասած՝ կարողութեանս նուազութիւնն է պատճառ:

ուր : Եթէ ընդունելի անցնի, անշուշտ եմ թէ մէջի գտնուած խորունկ ու համոզողական պատճառաբանութիւններովն օգտակարալ կ'ըլլայ . և բարեմտութեամբ մը քան թէ ունայնասիրութեամբ ինծի հաւանական կ'երեւայ որ եթէ ռամիկ ընթերցողներէն շատերը մէկդի ձգեն ու արհամարհեն , բայց գոնեա ոմանց հաճոյ պիտի ըլլայ , ոմանց ալ օգտակար :

Ճմարիտ դէպքեր ալ հրամանքիդ ա խորժելի են . ասոր վրայ կրնաս ապահով ըլլալ , և ընդունէ անոնց տեղ որ թերեւս ցաւիս բաւականապէս չգտնելովդ այս իմ հատորիկիս մէջ :

Միտքդ է այն բարի ու շնորհալից խաթունը՝ Շառնէի կոմսուհին , որ գեռ քանի մ'ամիս է վախճանեցաւ . ցաւազին մը տածութեամբ սքողեալ նայուածքը այնպիսի երկնաւոր կրկին դրոշմ մ'ունէր՝ որ հրամանքդ ալ զարմացած էիր : Միտքդ կը բացուէր երբ այն վճիտ ու անուշ նայուածքը գորովանօք վրադ պտըտցուցած ժամանակ կենար ու անշարժ դիտէր . այն նայուածքն ուսկից ամենքն ակամայ աչքերնին կը բաժնէին ու մէկէն անձկանօք նորէն իրեն կը ձգուէին . այն նայուածքն որ նախ օրիորդի մը նայուածքին պէս երկչու էր , յետոյ տեսար որ կենդանացաւ՝

բորբոքեցաւ, կայծակ կը ցատքեցընէր, և յանկարծ ուժոյ՝ արիութեան ու անճնանութեան զգացմունքներ յայտնի ըրաւ. աղէկ ուրեմն, այն նայուածքը բռն վանդակ կին ըսել էր: Այս կինը անհաւատալի խառնուրդ մ'էր քաղցրութեան և յանդգնութեան, տկարութեան զգայարանաց և հոգւոյ հաստատամտութեան. կատաղի մատակ առիւծ մ'էր որ տղու մը խօսքով կը հանդարտէր. վախկոտ աղանի մը, բայց սիրովը — մայրական սիրովն ըսել կ'ուզեմ — աներկիւղ նաև 'ի կայծականց:

Ես այսպէս ճանչցայ զինքը, ինծմէ շատ առաջ ուրիշներն ալ նոյնպէս ճանչցեր էին, երբ որդիական ու վերջը հարսնութեան պարտքերովը բորբոքած էր հոգին: Ես հոս վառ ախորժ մը կը զգամ այս աղնիւ ստեղծուածոյն վրայ խօսած ժամանակս, բայց շատ քիչ առիթ պիտի ունենամ մէյմ'ալ զինքն յիշելու: Պատմութեանս գլխաւոր դիւցազն ինքը չէ:

Պելըվիլ, անգամ մը իրեն այցելութեան գնացած ժամանակդ, ուր որ բոլորովին հաստատուած էր՝ էրկանը գերեզմանին հոն ըլլալուն պատճառաւ, (ուր է նաև հիմա իրն ալ), շատ մը նորօրինակ բաներ զարկին աչքիդ. նախ ճերմակ մազերով



ձեր սպասաւոր մը որ սեղանին վրայ քովը նստեր էր . և մասնաւորապէս զարմացար տեսնելով անոր անկիրթ ձևերով ու հասարակ կերպերով կոմսուհւոյն աղջկանը խնամակալութիւն ընելն , ու շքեղ և զարդարուած օրիորդին՝ որ մօրը պէս գեղեցիկ էր , ակնածութեամբ ու մեծարանօք կնքահայր կոչելով՝ ձերոյն պատասխան տալը . և իրաւցընէ իր ասնն էր :

Թերևս միտքդ է ճոխ դրամի մէջ ամփոփուած չորցած ու գունաթափ ծաղիկ մ'ալ , ու ինչ նշխար ըլլալն հարցուցած ժամանակդ՝ խեղճ այրւոյն դէմքին ցաւագին զգացմունքը : Կարծեմ թէ հարցմունքիդ պատասխան իսկ չտուաւ . վասն զի ժամանակի կարօտ էր , և երկրորդ որ անտարբեր նիւթ մը չէր :

Նոյն պատասխանն ես այսօր կ'ուզեմ տալ հրամանքիդ : Մտերմութիւն ունենալովս այն պատուական խաթունին հետ՝ այլ և այլ անգամ ձերունի սպասաւորին և իր մէջը այն դրամոյն առջևը նստած , երկուքին բերնէն ալ չորցած ծաղկին վրայ անանկ երկայն ու մանրամասն դէպքեր լսեր եմ , որ սիրտս սաստիկ շարժեր է : Շատ ատեն քովս պահեր եմ կոմսին ձեռագիրները , թղթակցութիւններն ու բանտին մէջ լաթի ու թղթոյ վրայ ըրած կրկնազգի

օրագրութիւնները ջատագովական ու պատմական վաւերական գրուածքներ ալ պակաս չեմ ունեցած :

Այլ և այլ դէպքերն ուշադրութեամբ միտքս պահեր, ձեռագիրները խնամով քններ, թղթակցութիւններուն ալ յարգի կտորները առանձին հաւաքեր եմ. իսկ օրագրութիւնները՝ բոլորովին խանդիս բորբոքմանը պատճառ անոնք եղած են. և եթէ կարենայի բանտարգելոյն այս ամեն յիշատակները աչքիս առջև ունեցած ժամանակս կրած զգացմունքներս հրամանքիդ հոգւոյն խորն ալ թափանցել, 'ի զուր վախցած կ'ըլլայի գրքիս ինչ բաղդ ունենալուն վրայ :

Դեռ խօսք մ'ալ ունիմ ըսելիք : Ես այնպիսի ժամանակի մէջ ալ որ ազնուականութեան պատուանունները դադրած են, իմ գիւցազնիս կոմս մակդիրը պահած եմ, թէ գաղղիերէն և թէ իտալերէն այսպէս կոչուելուն համար : Աս ալ կ'ըսեմ որ մըտքիս մէջ անունն ու պատուանունը անբաժանելի կերպով միացած են . բայց զրչիս տակն ինչպէս եկեր է՝ անանկ առաջ գնացեր եմ :

Հիմա որ իմացար, խաթուն, ալ գրքիս մէջ բարձր ու մեծ դէպքեր կամ սիրոյ հրապուրիչ վէպեր մի փնտուեր : Ես օգտակար

կ'ուզեմ ըլլալ ըսի . իսկ սիրոյ վէպերն որո՞ւ  
արդեօք կրնան օգտակար ըլլալ : Մասնաւո-  
րապէս այս գիտութեան մէջ տեսականէն  
աւելի փորձառականն ազդու է , և ամե-  
նայն դք իր անձնական փորձովը կ'ուզէ  
սորվիլ՝ անոր համար ամենքը զուարթու-  
թեամբ ընդ առաջ կը վազեն , և բնաւ մէկը  
չկայ որ ուզէ նոյնը բաւորովին գրքերէ սոր-  
վիլ : Ստիպեալ բարոյախօս եղող ծերե-  
րուն համար դիւրին է ըսելը . — Զգուշա-  
ցէք այն վտանգէն յորում մենք ատենօք  
փնասուեցանք : — Բայց երիտասարդք չեն  
ուզեր մտիկ ընել՝ ըսելով . — Թողուցէք որ  
ձեզի պէս մենք ալ յաղթենք ծովուն . նա-  
ւակոծութեան իրաւունքնիս չենք ուզեր  
կորսնցնել :

Բայց սակայն իմ պատմութեանս մէջ  
ալ սէր կայ . բայց միայն սէր մէկու մը  
առ . . . ըսեմ . . . չէ , կարդա՛մ կ'իմանաս :

Ք. — ՎՄՆԻՓԱԿԻՈՍ ՍԷՆԴԻՆ

# ԲԻՉՉԻՈՒԱ

Գ Ի Ր Ք Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ա

Կարողոս վէրամոն Շառնէի կոմսը՝ որոյ անունն անշուշտ ժամանակիս հրմուտ անձինքը դեռ մոռցած չեն, և ըստ պիտոյից դիւրին է կայսերական ոստիկանութեան արձանագրութեանց մէջ գտնելը, 'ի ծնէ շատ յաջողակ էր ուսման. բայց մտաւորական բարձր կարողութեամբ դպրոցներու մէջ զարգանալէն վերջը՝ ձեռնարկութեանց սէր ձգեր էր. առանց շատ դիտողութիւններ ընելու կը հակաճառէր. մէկ խօսքով ըսեմ, աւելի գիտուն պէտք էր ըլլար՝ քան թէ փիլիսոփայ, ինչպէս եղաւ ալ:

Քսանը հինգ տարուան կատարելա-  
պէս եօթը լեզու գիտէր, և բոլորովին  
հակառակ այնչափ յարգոյ լեզուագի-  
տաց, որ կարծես թէ այլ և այլ լեզու-  
ներ սորվելու աշխատած են միայն ի-  
րենց տգիտութիւնն ու խեղճութիւնը  
յայտնի ընելու համար՝ թէ օտարաց և  
թէ իրենց հայրենակցացն առջև, — վասն  
զի կրնայ մէկը շատ լեզուով ալ տըխ-  
մար ըլլալ, — Շառնէի կոմսը կարևորա-  
գոյն ուսմունքներ սորվելու համար  
պէտք եղած պատրաստութիւնները կը  
տեսնէր :

Բազմաթիւ գրքեր ունէր որոնցմով  
միտքը կը զարգացնէր . անոնցմէ ամենն  
ալ իրենց պաշտօնն, զբաղմունքն ու լու-  
սաւորելու մասերն ունէին : Գերմանա-  
ցւոց հետ բնազանցութեան կը զբաղէր .  
անգղիացի ու իտալացի հեղինակներով  
քաղաքագիտութեան ու օրէնսգիտու-  
թեան մէջ առաջ կ'երթար . ամենէն  
պատմութեան վրայօք տեղեկութիւն-  
ներ կը ստանար, և ինչուան առ նախ,  
կին աղբիւրներն՝ առ Հրէայս, Յոյնս և  
Հռովմայեցիս գիմելով՝ կրնար հարց-  
մունքներ ընել :

Այսպէս ուրեմն ինքզինքը բոլորովին ծանր տեսութեանց տուաւ ու անոնց վերաբերեալ հարկաւոր ուսմանց ալ փոյթ ունեցաւ: Այլ քիչ ատենէն վախցաւ առջևը բացուած հորիզոնէն որ հետզհետէ կը լայննար. մտած լաբիւրինթոսին մէջ քայլ առ քայլ գայթիլը տեսնելով, և յոգնելով 'ի զուր տարակուսական ճշմարտութեան մ'ետեւէ ըլլալէն, պատմութիւնն իբրև մեծ աւանդական սուտ ենթադրեց, ու նոր հիմանց վրայ փորձեց կայացնել. նոր վիպասանութիւն մը ձևացուց զոր գիտունք նախանձով և աշխարհք տգիտութեամբ ծաղր բրին:

Քաղաքական ու օրէնսգիտական ուսմունքներն աւելի հաստատուն կ'երևէին մտքին, և կը կարծէր թէ շատ վերանորոգութեանց պատճառ կրնային ըլլալ Եւրոպայի. իսկ այն ըլլալիքներէն մէկ քանին երբ ուզեց յայտնել՝ ընկերական զեղծմունքը սաստիկ արմատացած տեսնելով վհատեցաւ, վասն զի ընդհանուր մոլար սկզբունք մը տիրած էր, և իմացաւ միանգամայն որ յեղափոխութեան մըրկին Գաղղիոյ մէջ բոլորովին քան-

դեւ չկրցածը, ինքն ուրիշ ազգաց մէջէն չէր կրնար ջնջել:

Եւ դարձեալ՝ որչափ անշուշտ իրեն պէս խելացիներ ու բարեսիրտներ բուրովին հակառակ տեսութիւններ ունէին: Թէ որ տարակուսի մը համար երկրագնացոյս չորս կողմը կրակ ձգելու ըլլար... այս խորհրդածութիւնս պատմական մոլորութենէն աւելի խոնարհեցուց զինքն ու տագնապալից վարանման մէջ ձգեց:

Բնազանցութիւնը՝ գաղափարաց աշխարհքը միայն դեռ հետն ունէր. ահով յեղափոխութիւնները այնչափ ահարկու չէր տեսներ. վասն զի գերմանացի բանաստեղծի մը ըսածին պէս՝ գաղափարներն երևակայական միջոցի մէջ անձայն իրարու կը զարնուին: Փայլուն քան թէ ստոյգ առած մը. համբմտածութիւնը հնչող արձագանգ ունի:

Շառնէ բնազանցութեամբ կը կարծէր թէ բնաւ մէկու մը հանգստութեանը մնաս չընէր, և իր հանգիստը կորսնցուց: Հետապօտելով, հակաճառելով, պատճառաբանութիւնները նելով որչափ այս ուսմանս խորն ա-

ուաջ գնաց, այնչափ աւելի խաւարի ու խառնակութեան մէջ ինկաւ: Հազիւ թէ քիչ մը կը մօտենար անըմբռնելի ճշմարտութեան՝ յանկարծ առջևէն կը փախչէր կ'անհետանար, և կարծես թէ շրջմովիկ հրոյ պէս ծաղր ընելով՝ երբեմն երբեմն նորէն կը փախչէր ու կը խաղցընէր զինքը. պայծառ տեսած ժամանակը կը մարէր ու չկարծած տեղէն դարձեալ դուրս կ'ելլէր: Առանց խոնջելու հաստատապէս միտքը դրաւ համբերութեամբ ու խոհեմութեամբ ետևէն իյնալու և ծածկարանին մէջ բռնադատելու. բայց անիկայ մէկէն կը հեռանար. կը փութար ետևէն հասնելու, և հազիւ դեռ շարժած ժամանակը բողբոլին աչքէն ալ կը կորսնցընէր: Միտքը կը դնէր թէ բռնեց. կարծէր թէ ձեռքին տակն է, ձեռքին մէջն է. մէյմ'ալ մատերուն մէջէն դուրս կը սահէր, կ'աճէր ու այլ և այլ հակառակ կէտեր կը բաժնուէր: Մտքին հորիզոնին վրայ մի և նոյն միջոցին քսան տեսակ ճշմաստութիւն կը փայլէր. խաբող լապտերներ՝ որ միտքը կը շփոթէին:

Ընդ մէջ Պոսսիւէի և Սբինոզայի,



աստուածպաշտութեան և անաստուածութեան, ոգեպաշտից, զգայականաց, հոգեպաշտից, էախօսից, ընտրականաց և նիւթականաց տարուբերելով, միտքը անհուն տարակուսով պաշարուեցաւ, զոր յուսահատաբար կատարեալ ուրացութեամբ լուծեց: Մէկդի ձգեց աստուածաբանից թնաճիւն գաղափարներն ու յայտնոչթիշնը, Լէյպնիցի թանքաշականը ու Լաիւսկարգեալ դաշնակոչթիշնը, Լոքի ընթացնունն ու իտրհրրդաճոչթիշնը, Քանդի որ յիրիւն էն և որ 'ի մեզ էն, սկեպտիկեանքը, տեսականքը, փորձականքն, իրականքն ու թուականքը, Կիտողութիւնն ու փորձը, զգացումնն ու վկայութիւնը, մասնական ուսմունքն ու ընդհանուր զօրութիւնքն, և թանձր համայնաստուածութեան մէջ ընկղմեցաւ. չուզեց գերագոյն իմացականութեան հաւտալ: Արարչագործութեան առնչական խառնակութիւնը, գազափարաց և իրաց մէջ եղած յարատե հակասութիւնները, բարեաց և զօրութեանց անհաւասար բաժանմունքը տեսնելով միտքը դրաւ թէ կոյր նիւթն է միայն ամեն բանի ծագումն, գործող և ուղղիչ:

Դիպուածն եզաւ իր աստուածը, ոչ-ինչն՝ յոյսը :

Եռանդեամբ ու գրեթէ մեծամտութեամբ այս ոճոյն հետևեցաւ, իբրև թէ ինքն եղած ըլլար գտող. կատարեալ անհաւատութեամբն երջանիկ համարելով ինքզինքը, իբր ազատ յամենայն երեւածութի վարանմանց :

Ազգականներէն մէկուն վախճանելովը շատ մը ստացուածոց տէր եղաւ. ուսմունք, գիտութիւն բոլորովին ծալլեց, որոշեց որ երջանկութեամբ ապրի :

Քաղղիոյ մէջ հիւպատոսութիւն հաստատուելէն վերջը՝ ընկերութիւնը նոր շոյլութիւն ու փայլ ստացեր էր. ամեն կողմանէ յաղթական երգեր կը լսուէին, ու ընդհանուր գինովութեան մէջ էր Բարիզ : Շտունէ աշխարհքի հետ վերաբերութիւնները շատցուց, հարուստ՝ սիրուն ու փալփլուն աշխարհքի հետ, լուսաւորեալ՝ շնորհալից ու հանճարեղ աշխարհքի հետ. բայց այն աղմըկայոյզ՝ դատարկ ու զբաղեալ կենաց մէջ՝ մեծամեծ վայելից ու հաճոյից մէջ, զարմացաւ երբ տեսաւ թէ երջանիկ չէ : Միայն կերպով մը մտադրութեան արժա-

նի սեպեց քանի մը պարերգութիւններ , կանանց պաճուճանքն ու անուշահոտ բուրմուկները : Իմաստուն ու խոհեմ սեպուած անուանի անձանց հետ փորձեց մտերմանալ . սակայն աչքին տկար , տգէտ ու մոլորութեամբ տողորուած երևցան ու խղճաց վրանին : — Այս բանս մարդկային գիտութեան չափազանց անպատեհութիւններէն մէկն է . մեզի հաւասար մէկը չենք գտներ . անոնք ալ որ մեզի չափ գիտեն՝ մեզի պէս չեն գիտեր . բարձրացած տեղերնէս ամեն ըստորինները խեղճ ու պզտիկ կը տեսնենք : Ինչպէս իշխանական՝ նոյնպէս մտաւորական դասակարգութեան մէջ ալ առանձնութիւնը մեծութեան հետեանք է : Միայնացեալ ապրիլը սաստիկ բարձրանալ ուզողներուն պատիժն է : —

Մեր փիլիսոփան հետզհետէ նիւթական ու դրական զուարճութիւններով ուզեց զբաղիլ : Նշանաւոր եղաւ ինքն ալ , բայց ՚ի զուր , անբաւ ծախքերովը՝ զեղխութեամբն ու անմտութեամբն այն նորածին ընկերութեան մէջ՝ որ երկայն ժամանակ ուրախութե

նէ ու հանդէսներէ զուրկ մնացած ըլլալով, դեռ ևս յեղափոխութեան արիւնահեղ պայքարներովն արատաւորած, ու հռովմէական վայրագութեան հետքերը տակաւին վրան կրելով, առաջին աշխուժով ինամակալութեան մեծասպաս շուայտութիւնները մոռցընել տուաւ :

Ձիեր՝ կառքեր ունեցաւ, հասարակաց սեղաններ տուաւ, երաժշտութիւն՝ պար՝ որսորդութիւն անպակաս ըրաւ, բայց ոչ երբէք վայելք զգաց . կեղծաւոր բարեկամներ յաղթութիւնները կը բարձրացնէին, տարփածունք հանգստեան ժամերուն սէր կը ցուցընէին վրան, որոնց համար ստիպուած էր շատ մը ըստակէ ալ ելլելու, այսու հանդերձ ոչ բարեկամութեան և ոչ սիրոյ ինչ ըլլալը գիտցաւ : Ասանկ զուարթ կենաց ամեն ցոյցերովն ու խեղկատակութեամբք ոչ միայն սիրտը չբացուեցաւ, այլ և ոչ անգամ մը կրցաւ ժպտիլ . անօգուտ տեղը ընկերութեան մոլար հրագուրանացը մատնեց ինքզինքը . կէսը դուրս՝ կէսը ջրոյ մէջ թաղուած յուշկապարիկը յաւերժահարսն գեղեցկութիւնը :

կը ցուցընէր ու մոգական ձայնը կը հնչեցնէր . սակայն ամբարիշտ փիլիսոփան առանց ուզելուն աչքն 'ի խորս ալեաց կը մխէր հրէշին թեփամորթ մարմինն ու երկճիւղ տտունը տեսնելու համար : Շաունէ ալ չէր կրնար ոչ ճշմարտութեամբ և ոչ մոլորութեամբ երջանիկ ըլլալ . իրեն համար առաքինութիւնն՝ օտար , ախտն՝ անտարբեր բան մ'էր : Գիտութեան ընդունայնութիւնը քններ ու քաղցր անդիտութիւնը կորսընցուցեր էր . յաւիտեան այն դրախտին դրուները փակուած էին վրան : Միտք՝ սուտ , հաճոյք՝ խաբող կ'երևէին իրեն : Հանդէսներու գոռում դոչումը կը պարտասեցնէր զինքը . ընկերութեան մէջ ուրիշներէն՝ առանձնութեան մէջ ալ ինքիրմէ կը ձանձրանար : Խորին տխրութիւն մը տիրեց վրան . որչափ որ փիլիսոփայական հետազօտութիւններէ կը ջանար հեռու կենալ՝ այնչափ աւելի միտքը կը գրաւէին . և այն վայելքն ու զեղխութիւնն որոնց մէջ կ'ուզէր ապրիլ՝ գոգցես կը նսեմացնէին կ'ուչընչացնէին կը մարէին ու պաղ կ'երևցընէին աչքին : Բարեկամներն այնչափ

իրենց համար ըրած ծախքերուն փոխադարձ միայն գովեստներ կը հատուցանէին, ու յայտնի կ'ընէին թէ մտքերնին ուրիշ բան չէր՝ բայց եթէ վնասիւք հանդերձ աշխարհիս բարեկեցիկներուն սեղանները վայելել: Հետազօտութեան ոգևով ամենայն ինչ լուծելով, ամեն բան իր նախկին տարերացը վերածելով նոր տեսակ հիւանդութիւն մ'ունեցաւ. սոսկալի ու կարծուածէն աւելի սովորական հիւանդութիւն մը, որ ամբարտաւաններուն կը պլլուի՝ որպէս զի խոնարհեցնէ: Բարակաման ասուեղէն զգեստները գոգցես կենդանւոյն բուրդին գարշահոտութիւնը կը բուրէին. ճոխ մետաքսեղինաց վրայ դեռ պժգալի շերամներուն քայելը կը տեսնէր. շքեղ կահկարասիքն, օթոցները, փառաւոր կազմուած գրքերը, գաղտակուր մարգարտէ և փղոսկրեայ սնտոի զարդերն՝ աւերակի կտորուանք կ'երևէին աչքին: Իսկ Մահը, աղտեղի արուեստաւորի մը քրտանցը ներքև բեղնաւորեալ ու գեղեցկացած:

Պատրանքը վերացաւ՝ երևակայութիւնը դադրեցաւ, բայց սակայն յուզ-

մունք պէտք էր սրտին : Շառնէ՛ որ և ոչ մէկ նիւթի մը վրայ կրնար հաստա-տուն սէր ձգել, ուզեց ամբողջ ժողովուրդ մը սիրել : Մարդասէր եղաւ . ինքզինքը դարձեալ քաղաքագիտութեան տուաւ, այլ գործնականին և ոչ փորձառականին, արհամարհած մարդկանցն օգտակար ըլլալու համար : Գաղտնի ընկերութեանց հետ միացաւ . աղանդաւոր եղաւ, ու այն մոլեռանդն ոգին ջանաց զգալու զոր նախապաշարմունքէ ազատ եղող միտքերն ալ կրնան ունենալ : Վերջապէս դաւակցութիւն մ՛ըրաւ . և որո՛ւ դէմ արդեօք . Պոնաբարդի իշխանութեանը դէմ :

Թերեւ խորը դիտելով՝ այն հանրական սէրն ու հայրենասիրութիւնը մէկու մը դէմ ունեցած ատելութեանն համար էր . մէկու մը դէմ՝ որոյ փառքն ու երջանկութիւնը զինքը կը նեղէին : Վրայէն հօրենական կոմսութեան պատուանունն առած ըլլալնուն՝ խրոխտ ազնուականութեամբը չէր ուզեր որ ուրիշ մը պարզ սրովն իշխանութիւն ձեռք ձգելուն համար՝ անպատուհապ կայսր կոչուի :

Ի՞նչ էր դաւակցութիւնը : Հարկաւոր բան չէ : Նոյն ժամանակները դաւակցութիւն պակաս չէր . այսչափ միայն գիտեմ՝ որ ըսածս 1803—1804 կը մտածուէր , բայց չգործադրեցաւ . ոստիկանութիւնն՝ որ իբր ծածուկ նախախնամութիւն մը ապագայ կայսրութեան բազդին վրայ կը հսկէր , ատենին առջին առաւ : Բայց պատշաճ դատուեցաւ որ ձայնը դուրս չելլէ , և ոչ կրննելի մարգագետնոյն մէջ գնդակագործութիւն ըլլուի : Դաւակցութեան զլխաւոր անձինքն յանկարծակի բռնուեցան , ոմանք նաև տներնուն մէջ , ու գրեթէ առանց գատաատանի դատապարտուեցան , և իրարմէ բաժնուած՝ նոյն ատենուան Գաղղիոյ հիւպատոսութեան 36 նահանգաց այլ և այլ բանտերուն , գլխակներուն ու բերդերուն մէջ ձգուեցան :

Բ

Կը յիշեմ որ Խտալիա մտնելու համար յունական Ալպեաններէն անցած ժամանակս , ես որ աշխարհք պտրտող



եմ, ուղքով քալելով՝ մախաղս ուսս զարկած, երկաթապատ գաւազանս ալ ձեռքս թոտորեղդոյ բլրոյն մօտ ստուար հեղեղատի մը քով՝ որ վերէն վազած սառամանեաց հոսանքն ուռած էր, խորունկ մտածութեանց մէջ ընկղմած մնայի: Հեղեղատին թաւալելու ժամանակ հանած շառաչիւնը, տեղ տեղ ձեւացուցած փրփրադէզ ջրվէժները, ջրոյն սև ճերմակ դեղին ու այլ և այլ գոյներն, որոնք կրախառն հողի խաւերու և դիւրափուխը կրային քարերու մէջէն անցած ըլլալն յայտնի կ'ընէին, մաշած ու փապարեալ մարմարիոններու և կոպճի ահադին կտորներն՝ որ չէր կրցած գետնէն խլել, և նորանոր խոխոջանքներով ու սահանքներով զանազան ջրվէժներ կը ձեւացնէին. մէկ կողմանէ բռնաշունչ քամիէն հոսանքին թափովն եկած կլիտով ջրասոյզ ծառերուն տերևներուն ծածանիլը, միւս կողմանէ կուտակադէզ ալիքներէ մղուիլը. դեռ ևս դալարի թումբերու միսսանց ու գետափունքներէ բաժնուած կղզեկաց հեղեղատին երեսը լիւղալն ու ծառերուն զարնուելով փշրուիլը, ինչպէս նաեւ ծա

ուերուն ալ՝ մարմարիոններու և կոպճա-  
քարերու մէջէն անցնելու ժամանակ  
ջախջախիլը . բոլոր այս ծփանքը մռն-  
չիւնը շառաչը , երկու բարձր ապա-  
ռաժ լերանց մէջ փակուած տեսարան-  
ները՝ քիչ մը ատեն զիս յուզման ու  
մտածութեան մէջ ձգեցին : Այս հեղե-  
ղատին անունն է Քլիւզոն , որուն ե-  
զերքներէն քերելով մտայ չորս հովիտ-  
ներէն մէկուն մէջ , որ Նորաղանդից կը  
կոչուին , ՚ի յիշատակ ատենօք հոն ապա-  
ւինեալ հին վալդէացւոց : Հեղեղատն  
ալ հոս նոյն երազասահ ու խառնակ ըն-  
թացքն ու գոչաւոր ձայնը չունէր , այլ  
հանդարտ էր . ծառերն ու կղզեակներն  
անշուշտ հարթ ափանց ու խորշերու մէջ  
ձգեր էր . միակերպ գոյն մ'առեր , ու  
մակերևոյթն ամենևին սևութիւն չու-  
նէր . ուժով՝ նազելով և գոգոցես պչրա-  
նօք կը սահէր , ու պզտիկ գետակ մ'ե-  
ղած՝ Ֆէնէսդրէլլոյի որմունքներուն կը  
քծնէր :

Ան ատենը տեսայ Ֆէնէսդրէլլոյ ա-  
րուարձանը որ անուանի է անանուխի  
լրովն , և մանաւանդ երկու լեռնաձայր  
բերդերովը , որոնց մէջն է աւանը : Այս

բերդերը ծածուկ ճամբաներով իրա-  
բու հետ հաղորդակցութիւն ունին, ու  
հասարակապետութեան պատերազմնե-  
րուն ժամանակ կէս փլփլած էին. ա-  
տնցմէ մէկը նորոգուեցաւ և Բիէմոնդի  
տէրութեան Գաղղիոյ ձեռքն անցնելէն  
վերջը մէկէն բանտ եղաւ :

Հոս Ֆէնէսդրէլլոյի բերդին մէջ բան-  
տուեցաւ ուրեմն կարոլոս Վէրամոն Շառ-  
նէի կոմսը, իբրև իր երկրին կանոնա-  
ւոր ու օրինաւոր կառավարութիւնը կոր-  
ծանել փափաքող, և շիտթութեան ու  
ահարկութեան պատճառ : Ահաւասիկ  
ուրեմն անշատեալ միանգամայն ուս-  
մնասէր և վայելք սիրող մարդկանցմէ,  
բայց ոչ մէկէն և ոչ մէկալէն զրկուե-  
լուն վրայ ցաւած . առանց մեծ վիշտ մի  
զգալու մոռցաւ քաղաքական վերանո-  
րոգութեան յոյսը՝ որ քիչ մ'ատեն մա-  
շած սիրտը կենդանացուցեր էր : Բռնի  
բայց համակամութեամբ հրաժարեցաւ  
հարստութենէն որ ամենայն փայլմամ-  
բը չէր կրցած ապշեցնել զինքը . թո-  
ղուց ձանձրացուցիչ բարեկամները,  
խաբող տարփածուներն, ու սկսաւ փա-  
ռաւոր ու ընդարձակ պալատին սեզ,

տխուր ու ամայի խցի մը մէջ բնակիլ՝  
միակ բանտապան ծառայով: Բայց ի՞նչ  
հոգն էր խցին տխրութիւնն ու ամայու-  
թիւնը. անհրաժեշտ պէտքն հոն կը  
գտնէր, իսկ աւելորդէն արդէն ձանձրա-  
ցած էր: Բանտապանն ալ տանելի երև-  
ցաւ աչքին. միայն մտածութիւնը կը ծան-  
րանար վրան. սակայն ասկէ ուրիշ ի՞նչ  
պարագմունք կրնար ունենալ: Արտա-  
քին հաղորդակցութենէ բոլորովին կը տ-  
րուած էր. բանտի կանոնաց համեմատ  
զիրք գրիչ թուղթ ոչ ունէր՝ ոչ ալ կըր-  
նար ունենալ: Ատենօք զրկմունք չէր  
սեպեր այս բանա, այլ ընդ հակառակն  
ուսմնական նեղութեան մէջ ինկած ըլ-  
լալով՝ ինքնին ուսէն թօթուել կը ջա-  
նար. իսկ այսօր զիրք մը՝ խորհրդատու  
բարեկամ, մանաւանդ թէ հետը կռուե-  
լու թշնամի մը կը սեպէր իրեն: Աշ-  
խարհքէ հեռացած ըլլալուն՝ ստիպուե-  
ցաւ անձին հետ հաշտուիլ, և թշնա-  
մւոյն՝ այսինքն մտածութեանն հետ ապ-  
րիլ: Բայց ի՞նչ դառն ու տանջող մը-  
տածութիւն որ անդադար յուսահատ  
վիճակը կը յիշեցնէր, ի՞նչ ցուրտ ու  
ծանր մտածութիւն իրեն համար որ

նախ բնութեան պարզեաներովը զարգա-  
րուած էր, և 'ի ծնէ բնկերութեան մէջ  
ընդունելութիւն ու առանձնաշնորհու-  
թիւններ գտեր էր, հիմա բանտարգեալ  
խեղճ ըլլալը. որ պաշտպանի ու օգնա-  
կանի պէտք ունէր, և չէր հաւտար ոչ  
Աստուծոյ կարողութեանը և ոչ մարդ-  
կանց զթութեանը: Նորէն ազատիլ ջա-  
նաց այն դիւական մտածութենէն որ կը  
քարացնէր սիրտը, ու ցնորից մէջ ին-  
կած ժամանակ կ'այրէր կը մրրկէր:  
Դարձեալ արտաքին աշխարհքի, նիւ-  
թական աշխարհքի հետ ուզեց ապրիլ.  
բայց մտածէ մէյմը թէ լինչպէս անձուկ  
էր իրեն համար հիմա այն աշխարհքը:

Շառնէի կոմսին բնակարանը դղեկին  
ետեի կողմը հին ու ամուր շէնքի մը ա-  
ւերակներուն վրայ բարձրացած մասին  
վրայ էր, որ ատենօք բերդին աղէկ  
պաշտպանութիւն էր՝ բայց բերգակազ-  
մութեան նոր գիւտերէն վերջը երեսէ  
ձգուած: Նոր բռած չորս որմունք՝ որոնց  
վրայէն ջնջուած էին ատենօք նոյն տե-  
ղւոյն մէջ բնակողներուն հետքերը, սե-  
ղանատախտակ մը՝ որ պարզ կերակրոյ  
կը ծառայէր, միակ աթոռ մը՝ որ կար-

ծես կ'ուզէր իմացնել թէ բնաւ ուրիշ մը քովը նստելիք չունէր . ճերմակեղէններն ու զգեստները դնելու տրկզ մը . կէս որդնոտ ճերմակ փայտէ նկարուած դարան մը՝ որուն վրայ մէկէն աչքի կը զարնէր դրուած աքաժու փայտէ շուրջանակի արծաթապատ հարուստ գզրուցը, (այս էր միայն անցեալ փառաւորութեան մնացորդը) . նեղ ու մաքուր մահիճ մը . աւելորդ տեղը պատուհանէն կախուած զոյգ մը կապոյտ կտաւէ վարագոյրեր, գոգցես կծու մը զինքը ծաղրելու համար . վասն զի հաստ վանդակներն ու 10 ոտք բարձրութեամբ առջևը տնկուած պատն ըլլալէն վերջը, ոչ հետաքրքիր աչքերէ վախ կար, և ոչ ալ պրկուն բարկացայտ ճառագայթներէն : Այս էր խցին կահ կարասիքը, որուն տակ ճեղդ նման ուրիշ մ'ալ կար՝ բայց պարապ ու անբնակ, որովհետև բնաւ ընկեր չունէր բերդին այս բաժնուած կողման մէջ : Շառնէի աշխարհքին միւս մասերն էին ձոյլ քարէ կարճ սանդուխ մը՝ որ յանկարծ կը դառնար ու դղեկին հին խրամներէն մէկուն մէջ պզտիկ հարթայատակ գաւթի մը վրայ կը հա-

ներ : Ասիկայ բանտարգելոյն շրջագայութեան տեղն էր , ուր օրուան մէջ երկու ժամ կրնար հրամանատարին կամացն համեմատ չափով ազատութիւն ունենալ : Հոնկէ լերանց ծայրերն ու հովտէն վեր ելած շոգիները կը տեսնուէին . վասն զի դղեակը վայրագութիւն արեւելեան կողմերը զգալի ցած ըլլալով՝ օդ ու արև կ'ընդունէր . իսկ խուցն որ դառնար՝ վսեմ ու գեղեցկազարդ բնութեան մէջ ինքը միայն որմածոյ հորիզոն մը կը տեսնէր , որուն աջ կողմը կ'իյնային Սալիւսեայ կոնանչազարդ սիրուն բլուրները , ու ձախ դին Ասողայ հովտին վերջին կոհակներն ու Քիարայի գետափունքը . առջևն էր Դուրինի հրաշալի դաշտագետինը , ետևն Ալպեանք՝ ձինսերայի լեռնէն ինչուան Սընի լեռը բարձր ու սանդխանման ժայռերով անտառներով ու անդունդներով լեցուն : Իսկ ինքն ուրիշ բան չէր տեսներ՝ բայց եթէ դիտուն վրայ կախուած՝ աղօտ երկինք մը քարայարկ շրջանակի մէջ , գաւթին յատակը , բանտին վանդակները , առջևի բարձր որմը , որուն նեղանալի միակերպութիւնը կը կոտրէր ծայրի

պզտիկ պատուհանը, որուն վանդակ-  
ներուն մէջէն երբեմն երբեմն տխուր ու  
խոժոռ դէմքով մէկն իրեն կը նայէր :

Ահաւասիկ շուրջ շուրջանակի իրեն  
զբաղանաց ու զուարճութեան աշխարհ-  
քը, յորում սփռիլը ջանաց : Խցին պա-  
տերուն վրայ ածխով գծեր քաշեց, տա-  
րիներու թուականներ ու քանի մը համ-  
րանք նշանեց, որ պատանեկութեանը  
քանի մը երջանիկ ժամանակները կը  
յիշեցնէին, և յիշատակով աւելի սիր-  
տը կը էքանէին . վերջը սատանայական  
չար մտածութիւններ սև խորհուրդնե-  
րով պաշարեցին միտքը, և չսոսկաց  
իբրև այլ և այլ առածներ, մօրն ու քը-  
րոջ անտւններուն քով դանոնք ալ  
պատին վրայ գրելու : Ուր ուրեմն ախ-  
տալից ցնորքներուն ու նեղացուցիչ դա-  
տարկութեանն յաղթելու համար չըն-  
չին ու տղայական զբաղանաց տուա-  
ինքզիկքը . փութաց այն ապշութեան  
մէջ իյնալու որ երկայն բանտարգելոց  
յատուկ է . ախորժով անոր մէջ թաթ-  
խուեցաւ ու ընկղմեցաւ : Գիտնականն՝  
ասուեայ ու մետաքսէ լաթերը թել թել  
ընել սկսաւ . փիլիսոփան՝ յարդէ ու ըն-



կուզի կեղևներէ ցօղուններ ու զարդա-  
րուն նաւեր շինեց . հանճարեղն՝ կորիզ-  
ներով սուլիչ գործիքներ, քանդակեալ  
գզրոցներ ու հիւսուած կողովներ ձեա-  
ցուց . ու խռովարարն՝ տաբատին փո-  
կերուն առաձգական խէժերովը շղթա-  
ներ ու ձայն հանող գործիքներ կազ-  
մեց . կեցաւ՝ քիչ մը զարմացաւ շինած-  
ներուն վրայ . ետքը մէկէն ձանձրացաւ  
ու ամենն ալ ոտքի տակ առաւ : Նոր  
բանի մը զբաղելու համար սեղանա-  
տախտակին վրայ հազար ու մէկ ան-  
ճոռնի ձևեր դրուագեց :

Ոչ երբեք աչակերտ մը իրմէ աւելի  
համբերութեամբ ու ճարտարութեամբ  
աշխատած է գրակալը արաբական զար-  
դերով բարձրաքանդակներով ու խորա-  
քանդակներով լեցունելու : Պրուքսէլի  
Քոտրպէքի եկեղեցւոյն շրջանակն, ու  
Ս. Կուտուլի ամպիոնն ու արմաւենին  
աւելի ճոխ մը չեն իրեն քանդակներուն  
քով, որոնք էին իրարու վրայ տներ,  
ծառերու վրայ ձկեր, զանգակատուն-  
ներէ բարձր մարդիկներ, տանիքներու  
վրայ նաւակներ, ջրոյ մէջ կառքեր, գա-  
ճաճ բրգեր ու հսկայաձև ճանճեր : Ա-

մենն ալ հորիզոնական՝ ուղղահայեաց՝  
խոտորնակի՝ առանց ետևառաջութեան՝  
խառնափնդոր, կարծես թէ իրաւցնէ  
մեհենադրոյժ տառերու քառս մ'էին, ու  
րուն մէջէն կը ջանար երբեմն խորհրդաւոր  
իմաստ մը՝ կապակցութիւն մը՝  
դէպք մը հանել. վասն զի ինքն որ այն  
չափ դիպուածոյ կարողութեանը կը հաւ  
տար՝ կրնար յուսալ ամբողջ քերթուած  
մը գտնելու փայտէ փորուածքներուն մէ  
ջէն, որպէս թէ մէկը տուսախի արմատի  
մը խայտախարիւ երակներուն վրայ Ռա  
փայելի ուրուագիծ մ'ուզենայ գտնել :  
Ջանաց նոր դժուարութիւններ հնա  
րել. առեղծուածներ լուծել, հանե  
լուկներ գուշակել. բայց ձանձրութիւնն՝  
անտանելի ձանձրութիւնն այն ծանր  
գրադանաց մէջն ալ վրայէն չվերցաւ :  
Կրնար թերևս նիւթապէս քիչ մը մը  
տաց ցրումն ունենալ պատէն նայողին  
դէմքը տեսնելով, բայց երբ քիչ մ'ու  
շադրութեամբ կ'ուզէր դիտել, անիկայ  
վանդակներէն ետ կը քաշուէր ու կար  
ծես թէ աչքէն փախչիլ կը ջանար, ու  
րով ատելի եղաւ Շառնէի :

Իսկ ինքը Շառնէ դիպուածոյ վրա

անանկ բարի հաւատք ունէր որ անծանօթին քաշուիլը տեսնելով միտքը դրաւ որ բանտին մէջ զինքը դիտող լրտես մ'է, կամ թշուառութեանն ու անարգանացը վրայ զուարճացող հին թշնամի մը: Հարցուց բանտապանին, որ միտքը փոխել ջանալով

— Բարի զաւակ, բարի քրիստոնեայ իտալացի մ'է, ըսաւ, որ ստէպ կ'աղօթէ:

Շառնէ ուսերը թօթուելով

— Ինչո՞ւ հոս եկեր է, հարցուց:

— Կայսրը սպաննել ուղելուն համար:

— Հայրենասէր է ուրեմն:

— Հայրենասէր. ո՛հ, չէ. խեղճը մանչ ու աղջիկ մէյո՛հէկ զաւակ ունէր. հիմա աղջիկը միայն ողջ է, իսկ մանչը Գերմանիա թնդանօթի հարուածով մեռեր է. խեղճ տղայ:

— Ըսել է թէ անճնասէր է, մումուաց Շառնէ:

— Ի՛նչ կը խօսիս. դու դեռ հայր չես, պարոն: Թէ որ իմ պզտիկ Անտոնիկս որ դեռ կաթ կը ծծէ, կայսրութեան շահուն համար, որուն գրեթէ տարեկից է կաթէ կտրուելու ըլլար... Տէր

Աստուած : Բայց լուռ կեցիր . Ֆէնէս-  
դրէլլոյի մէջ կ'ուզեմ որ բանալիները  
միշտ գօտիէսկախուած ու բարձիստակն  
ըլլան :

— Ի՞նչ է հիմա այս յանդուգն դա-  
ւաճանին զբաղմունքը :

Բանտապանը կէս հենգնական դէմ-  
քով

— Ճանճորսութիւն կ'ընէ , ըսաւ :

— Խե՞նդ է ուրեմն , պողաց Շառնէ :

— Ինչո՞ւ խենդ , պարոն կոմս : Դու որ  
իրմէ շատ վերջը հոս մտար , կրնայ ը-  
սուիլ թէ փայտի քանդակագործու-  
թեան արհեստին մէջ վարպետ ելար :  
Համբարուքիւն :

Բանտապանին վերջի խօսքերն ալ թէ-  
պէտ և հենգնական էին , բայց Շառնէ  
նորէն սկսաւ ձեռագործն առաջ տա-  
նիլ ու խորհրդաւոր տառերու ձևերը լու-  
ծել . սակայն աս ալ միշտ տխուր դեղ  
մ'էր զգացած սաստիկ նեղութեանը  
դէմ : Ասանկ տղայական զբաղմունքնե-  
րով ու ձանձրութեամբ ամբողջ ձմեռն  
անցուց . բարեբաղդաբար քիչ ատենէն  
նոր զբաղմունք մը պիտի բացուէր առ-  
ջեր :

Գ

Յը մը որոշեալ ժամուն Շառնէ գլուխը ծռած, ձեռքերը կունակը տարած, կարծես թէ շրջագայութեան տեղը մեծցընելու դիտմամբ ծանր ծանր՝ քայլ առ քայլ դաւթին մէջ կը ճեմէր: Գարունն սկսեր էր բացուիլ, անուշ օդն երակները կը լայնցընէր. ան ատեն ազատ ապրիլն ու երկրի և միջոցի տէր ըլլալը ցանկալի երևցաւ աչքին: Փոքրիկ դաւթին յատակի քարերը մի առ մի կը համրէր, անշուշտ հին հաշիւներն ստուգելու համար, վասն զի առաջին անգամ չէր այս բրածը. մէյնի՛ ալ յանկարծ աչքին երկու քարերու մէջէն վեր ելած հողի թեթև կոյտ մը դպաւ, որուն գլխի կողմը ճեղքուած էր: Կեցաւ. սիրտը կը բաբախէր, և չէր գիտեր թէ ինչու. բայց բանտարգելոյ համար ամենայն ինչ յոյս կամ վախ է. անտարբեր նիւթերէ, շնչին դիպուածներէ իր ազատութեանը հրաշալի պատճառներ կ'ուզէ ենթադրել:

Թերևս այս քիչ մը հողոյն վեր ել-  
լելը գետնոյն տակ եղած մեծ աշխա-  
տութեան մը հետևանք է : Թերևս հո-  
ղոյն տակ բացուելիք ծածուկ ճամբա-  
ներ կան, որ դէպ 'ի լեռներն ու դաշ-  
տերը կը հանեն : Թերևս ատենուան մը  
բարեկամներն ու կուսակիցները բա-  
հով ու ականով կ'ուզեն գալ զինքն ա-  
զատել :

Ականջը դրաւ մտիկ ընելու . դղելին  
ներսերէն խուլ ու շարունակեալ շշրն-  
կոց մը լսեց . վեր առաւ գլուխն, ու օ-  
ղոյն շտապողական զանգակի մը գան-  
գիւնէն թրթռայր զգաց . թմբուկներու  
դափիւնը պատերազմական նշանի պէս  
երկայն պատնէշներուն մէջ կը հնչէր .  
զուարթացաւ, ու դողդոջուն ձեռքը  
քրտնած ճակատին տարաւ :

« Գիտի ւազաափ ուրեմն . արդեօք Գաղ-  
ղիա նոր գլուխ մ'ունեցեր է :

« Այս ցնորքը փայլակի մը պէս ան-  
ցաւ . պատրանքը վերացաւ երբ սկսաւ  
մտածել թէ ակ կուսակից չունի, և եր-  
բէք բարեկամ չէ ունեցած : Նորէն մը-  
տիկ ըրաւ . նոյն ձայները լսեց, բայց  
ուրիշ մտածութեանց պատճառ եղան :

Չանգակին զանգիւնը, հեռաւոր եկե-  
ղեցւոյ մը զանգակատան ձայնն էր, որ  
ամեն օր նոյն ժամուն կը լսուէր. թըմբ  
կին դափիւնն ալ սովորական էր բեր-  
դին քանի մը յետամնաց զինուորներն  
հաւաքելու համար: Շառնէ դառնապէս  
ժողտեցաւ ու ինքիւր վրայ խղճաց, մտա-  
ծելով թէ թերեւ շնչին կենդանի մը,  
կամ անշուշտ ճամբէն խոտորած մուկ  
կամ խլուրդ մը թաթերովն հողը փո-  
րելով, կարծել տուեր էր թէ կայսրու-  
թիւնն ինկեր է, և մարդիկ սէր կը ցու-  
ցընեն վրան: Սրբեց միտքն այս մտա-  
ծութիւններէն, և պզտիկ հողակուտին  
վրայ ծռելով՝ թեթեւ մը մատովը բաժ-  
նուած ծայրերէն նախ մէկը, ու ետքը  
միւսը բացաւ, և զարմացաւ երբ տե-  
սաւ որ խարուելուն պատճառ ոչ թէ  
գործունեայ՝ անհանդարտ՝ փորող՝ ժա-  
նիքաւոր կամ ճիրանաւոր կենդանի մ'  
էր, այլ նոր ծլած դելին ու թռուսած  
բոյս մը:

Մատիկ ամշնալով ոտք ելաւ, ու  
քիչ մնաց վրան պիտի կոխէր՝ եթէ այ-  
ժատերևոց ու սպիտակ դժնկաց երե-  
սէն անցած զով քամի մը չգար չհառ-

ներ, կարծես թէ խեղճ անկոյն համար շնորհք խնդրելով, որ անշուշտ օր մը անուշ հոտովը պիտի զուարճացնէր զՇառնէ: Ասկէ դուրս ուրիշ մտածութիւն մ'ալ ետ կեցուց զինքը: Այս փափուկ, կակուղ ու խեղճ խոտը՝ որ պարզ գաչելով մը կրնար կոտորուիլ, ինչպէս կրցեր էր բաժնել ու դուրս թօթուել չոր ու արևով կարծրացած հողը. ինչպէս կրցեր էր այն շողախոտ կոպիճներուն մէջ բուսնիլ՝ ուր շատ անգամ կոխեր էր:

Նորէն ծուեցաւ մտադրութեամբ ևս քննելու, և վերին ծայրին առաջին տեղւններուն վրայ զոցուած՝ տեսակ մը մտտ զոյգ պատեաններ տեսաւ, զանոնք արտաքին վնասակար մարմնոց հարուածներէն պահպանելու համար. որոնցմով պատուեր էր նաև հողոյն կեղևը՝ օդ ու արև տեսնելու համար:

«**ՄԻ՛՛՛՛՛**, լոտու, անհա ամենայն դաղտնիքն: Ի բնէ սկզբնական ոյժ մ'ունի պզտիկ վառեկներու պէս, որոնք ծնանելնէն առաջ բաւական ամուր կտուց մ'ունին զիրենք պարունակող թանձր կեղևը կոտրելու: Խեղճ բանտարգել



տունկ . բայց գոնէ ազատելու համար պէտք եղած գործիքներդ ունէիր : Նորէն քանի մը վայրկեան ալ նայեցաւ , և ալ չուզեց փճացնել :

Երկրորդ օրը սովորական չքջագայտ թեանը ժամանակ երբ վերացեալ մտօք մեծաքայլ կը ճեմէր , քիչ մնաց որ վերան պիտի կոխէր . մէկէն կանկ առաւ , ու զարմացաւ տեսնելով թէ այս նախ ծանօթը խանդաղատանք մը կ'ազդէր վրան . անկէ վերջը սկսաւ ածիլը դիտել : Բոյսը մեծցաւ ու արևուն լուսովը նախկին հիւանդոտ դեղնութիւնը կէս մը կորսնցուց : Շառնէ կը մտածէր թէ պէն տկար ու տժգոյն ցօղունը մասնաւոր զօրութիւն մ'ունէր լոյս ծծելու , սրով կը սնանէր՝ կ'ուժոյնար , և հատուածակողման պէս մէջն ընդունած գոյներովն ամեն կողմանէ կը փայլէր : կը մտածէր թէ

— Անշուշտ տերևները ցօղունէն տարբեր ազնիւ գոյն մը պիտի առնուն . իսկ ծաղիկներն արդեօք ինչ գոյն պիտի ունենան . արդեօք դեղին , չէ նէ կապոյտ կամ կարմիր : Ինչո՞ւ համար երբ ցօղունին ու տերևներուն ծծած հիւժը

կը ծծեն, նոյն գոյնն ու նշանապզեստն ալ պիտի չհագնին : Ի՞նչպէս իրենք երկնագոյն կամ ծիրանեգոյն պիտի գտնեն հոն, ուր այլք բաց կամ մութ կանաչ կը գտնեն : Բայց այս այսպէս է . վասնզի աշխարհքիս անկարգութեամբն Եւ խառնափնդորութեամբն հանդերձ, նիւթը թէպէտ և կոյր՝ բայց կանոնաւոր ընթացք մ'ունի : Բոլորովին կոյր է, կրկնեց . որուն ուրիշ հաւաստիք չեմ ուզեր բաց 'ի աս մտտ ըլթակներէն, որոնք թէպէտ դիւրացուցին հողոյն տա կէն դուրս ելլելը, բայց հիմա անօգուտ են և դեռ իր էութենէն կ'ապրին, և վար կախուած ծանրութիւն են . Թնչ բանի կը ծառայեն :

Ասանկ խօսելուն ժամանակ գիշերը մօտեցեր էր, գարնանային գիշերն՝ որ երբեմն սառուտ կ'ըլլայ . ու տեսաւ որ երկու ըլթակներն սկսան շարժիլ, ու կարծես թէ զՇառնէ յանդիմանելու համար իրարու մօտենալով՝ ցրտէն ու միջատներու խածուածքէն ապրեցնելու համար իրենց ծոցոյն մէջ փակեցին այն փափուկ ու դիւրաբեկ տերևներն որ ալ չէին կրնար արև տեսնել, և այն .

պէս կակուղ մը վրանին գոցուած երկու թևոց մէջ տաքուկ քնացան :

Գիտնականն Շառնէ շատ աղէկ ըմբռնեց այս լռին՝ բայց որոշողական պատասխանը, տեսնելով որ երկու բուսական քսակներուն արտաքին երեսը առջի գիշերը կրծնուած խածոտուած էին պզտիկ խորունջներէ, որոնց արծաթի հետքը դեռ վրանին կ'երևար :

Այս մէկ կողմանէ մտածութեամբ միւս կողմանէ գործով եղած նորօրինակ խօսակցութիւնն ընդ մէջ մտորական և տնկոյն այսչափով չլմնցաւ : Շառնէ երկայն ժամանակ հակաճառութեանց ետեւէ եղեր էր, ու մէկ պատճառով մէկէն դիւրաւ չէր համոզուեր :

Աղէկ ուրեմն, ըսաւ. ինչպէս հոս նայնպէս սւրիչ տեղ ալ շատ մը յաջող հանգամանք դիւրացուցին այս տրեկար արարածոյն ծնունդը : Իր էութեանը կրկին պայմաններն են հողը վեր առնելու համար՝ ի ծնէ լծակ մ'ունենայր, և վահան մը՝ գլուխը պաշտպանելու համար. թէ որ ասոնք չըլլային, խոտը ծլելուն պէս կը չորնար, ինչպէս սւրիչ բիւրաւորներ կան իր տեսակէն :

որ 'ի բնէ անշուշտ անկատար, ապրե-  
լուև բազմանալու անկարող ստեղծուած  
ըլլալով՝ ժամ մը միայն կեանք ունին  
երկրիս վրայ: Ո՛ր դիտէ թէ որչափ սխալ  
ու անհնարին հանգամանքներ փորձեր  
է բնութիւնը մէկ կենսակիր էակ մը  
ժնանելու համար: Կոյր մ'ալ կրնայ նե-  
տը նպատակին հանդիպցնել, բայց որ-  
չափ սխալելէն վերջը: Բիւրաւոր դարերէ  
ետքը ձգողութեան ու վանողութեան  
կրկին շարժումներ կը փշրէ գնիւթը .  
դարձանալի բան է ուրեմն որ դիպուածն  
ալ շատ անգամ ճիշդ հանդիպցնէ: Կը  
հաւատտամ թէ այս պատեանը կրնայ  
առաջին տերևները պաշտպանել . բայց  
արդեօք պիտի աճի ու լայննայ՝ ուրիշ  
տերևներն ալ ցրտէ ու թշնամեաց հա-  
րուածներէն պահպանելու համար: Չէ:  
Գալ դարնան՝ երբ ասոնց պէս փափուկ  
ու դիւրաբեկ նոր տերևներ ծլին, ինքը  
դեռ կեցած պիտի ըլլայ արդեօք զա-  
նոնք ալ պաշտպանելու համար: Չէ:  
Ուրեմն մասնաւոր վախճան շունի . ու-  
րեմն չէ թէ խոհական իմաստութեան՝  
այլ պարզ յաջող գիպուածոյ մ'ար-  
դեւք է: —

Պարոն կոմս, բնութիւնը շատ կերպ  
պատասխաններով կրնայ պատճառա-  
բանութեանդ մոլորութիւնը երեցնել :  
Համբերէ ուրեմն ու դիտէ այն տկար  
ու միայնիկ արարածը, որ ոչ թէ դի-  
պուածով՝ այլ թերևս նախախնամու-  
թեան մասնաւոր դիտմամբ բնութեան  
ձեռքով ձանձրութեան արգելանիդ  
գաւթին մէջ բուսած է : Արտաքին պա-  
տեանները՝ զորոնք դու ալ քեզմէ լծակ  
ու վահան ենթադրեցիր, ուրիշ օգուտ  
ներ ալ ունեցան խեղճ տնկոյն նկատ-  
մամբ : Զմեռուան կարծր ու սառած հո-  
ղոյն մէջ պատենի տեղ ծառայելէն վեր-  
ջը, ատենին ծիծերնէն կաթ ու սնունդ  
տուին անոր, որ դեռ պարզ բողբոջ ըլ-  
լալուն՝ ոչ արմատ ունէր որ հողին հիւ-  
թը քաշէ, և ոչ ալ տերև՝ որ օդով կամ  
արևով սնանի : Իրաւ է, Շառնէ, թէ  
այն պաշտպանողական թևերը՝ որ ին-  
չուան հիմա մայրօրէն մատաղ բուսա-  
կին վրայ կը հակէին՝ իրեն հետ նորէն  
պիտի չծլին . պաշտօննին կատարելէն  
վերջը կ'իյնան կ'անցնին, երբոր սաներ  
նին ալ իրենց օգնութեանը կարօտ չեն  
ըլլար : Մի տագնապիր անոր ապագայ

ին վրայ . բնութիւնն ինչպէս ուրիշ իրեն ազգակից տնկերուն՝ նոյնպէս իր վրայ ալ կը հսկէ . և քանի որ հիւսիսային քամիներն Ալպեաններէն վարձեան տարաւիներ ու խոնաւ մառախուղ կ'իջեցնեն , նոր ծլած տերեւներուն հանգիստ ապաւէն են ինքնին այն բողբոջները , ուր օդոյն ազդեցութենէն պատրասարուելու համար խէժով ու ուտինով զանգած առաձգական յատուկ բնակարան մը իրենց համար պատրաստուած է , ուսկից տաքուկ մտրթերու ու բամբակէ աղուամազերու մէջ պըլլուած դուրս կ'ելլեն , վերջին սառոյցներէն և մթնոլորտին յանկարծական փոփոխութիւններէն չմնասուելու համար : Եզամծ է արդեօք մայր մը որ աակէ աւելի սիրով որդիքները խնամէ : Այս բանս շատոնց սորված կ'ըլլայիր , Շառնէ , եթէ ատենօք մարդկային գիտութեան բարձրագոյն գաւառներէն վար իջնելով՝ արժանի սեպած ըլլայիր տէք մը դարձնելու Աստուծոյ պարզ ու անպաճոյճ գործոցը վրայ : Արչաի աւելի դէպ 'ի հիւսիս մօտեցած ըլլայիր , այս սովորական հրաշալիքներն աւելի

յայանի կ'երևէին աչքիդ : Բազմապա-  
տիկ վտանգաց մէջ Աստուծոյ նախա-  
խնամութեան գութն ալ կը կրկնա-  
պատկի :

Փիլիսոփան ուշի ուշով գիտեց տըն-  
կոյն ածուամն ու փոփոխութիւնները .  
նորէն հակաճառեցաւ , և ամեն անգա-  
մուն ալ պատասխաններն առաւ :

— Ի՞նչ ընգունայն բան է , բաւաւ , ցօ-  
զունիդ վրայ եզած փշալից մորթը :

Երկրորդօրը թեթեւ եղեմաւ մը ծած-  
կուած տեսաւ զայն , որով փափուկ կե-  
ղևը սառելէ պահպանուեր էր :

— Աւելորդ չե՛ն մի տաք օգեբուն մէջ  
բաժնակց ու աղուամնադդ :

Տաք օգեբն եկան , ու բոյան աչքին առ-  
ջևը ձմեռուան վերարկուն մէկդի թո-  
ղուց , որպէս զի գարնանային կանաչա-  
գեղ վայելչութեամբ զարդարուի . ու  
նոր ճիւղերն առանց մետաքսէ պատե-  
նի սկսան աճիլ , որ ալ աւելորդ էին :

— Բայց տերուներդ քամիին , մրկիին ,  
ու կարկուտին դէմ կենալու համար  
չառտ տկար ըլլալով , պիտի թօթափին ու  
ջարգուին :

Երրորդ քամի ելաւ՝ բուսական որ դէմ

չէր կրնար դնել, գետին ինկաւ ու տեղիք տալով շմեասուեցաւ: Իսկ երբ կարկուտ սկսաւ գալ, տերևները մէկմէկով կկաթաւ զէպ 'ի ցօղունն երկնցան, թէ զայն և թէ փոփոխակի մէկզմէկ պաշտպանելու համար, որով խոտորնակի ընդունեցան մթնոլորտին նետաձիգ հարուածները իրենց պինդ ջղերուն վրայ. և այսպէս միաբանութեամբ իրարու ամրութիւն եղան: Վերջապէս՝ ինչպէս առաջ նոյնպէս այս անգամուս ալ բոյսը պատերազմէն ազատեցաւ քանի մը թեթև վէրքերով, բայց դեռ կենդանի և ուժով ըլլալուն՝ արևու առջև գլարթացաւ ու սկսան վէրքերն անցնիլ:

— Խեղացի է ուրեմն դիպուածը, պռուաց Շառնէ. պէտք է նիւթն ոգիացընել, կամ ոգին նիւթականացնել: — Այսպէս հարցմունքներ ընելէն չէր դադրեր իր համր խօսակցին. կ'ախորժէր աճիլն ու աստիճանաւ կրած փոփոխութիւնները տեսնել:

Օր մը երկայն բարակ վրան մտածելէն վերջը երբ ինքիրեն եկաւ տեսաւ որ բուսակին քովն է: Այն ցնորական մրտածութիւններէն անսովոր քաղցրու-



Թիւն մը կը զգար, և երջանիկ կը սե-  
պէր ինքզինքը քանի որ մեծ մեծ քայ-  
լեր առնելով գաւթին մէջ երկայն ա-  
տեն այսպիսի խորհուրդներ կ'որոճար :  
Վերջը երբոր գլուխը վեր վերցուց՝ տե-  
սաւ որ ձաւնաճորսը վանդակապատ պա-  
տուհանէն զինքը կը դիտէր : Նախ կար-  
մըրցաւ, իբրև թէ ուրիշ մը կըրցած ըլ-  
լար միտքը գուշակել. ետքը երեսն 'ի  
վեր ժպտեցաւ, վասն զի ալ չէր ա-  
տեր :

Իրաւունք չունէր արդեօք, միթէ ան  
ալ բնութեան խեղճ արարածներէն մէ-  
կուն վրայ մտածելու չէր աշխատեր : —  
Ո՛վ գիտէ, կ'ըսէր, թէ աս իտալացին  
ճանճին վրայ նոյնչափ սորվելու բան  
գտած չէ, որչափ որ ես իմ բուսակիս  
վրայ :

Երբոր խուցը դարձաւ՝ մէկէն աչքին  
զարկաւ երկու ամիս առաջ պատին վը-  
րայ գրած սոսկալի վճիռը, թէ

— Դիպոշաճը կոյր է, և միակ արեղ-  
ճագորճոշքեան պատձառ : Ածուխ մ'ա-  
ռաւ ու տակն աւելցուց

— Թերևս :

Դ

Շառնէ ալ պատին վրայ չէր դժեր . սեղանատախտակին վրայ ալ միայն նոր ծլած ու իրենց կճեպներովը պաշտպա- նուած ցօղուններ կը դրուագէր , ու տե- րւներ՝ հանդերձ իրենց ճեղքուածքովն ու դուրս ցատքող երակներովը : Շրջա- գայութեան ժամերուն մեծ մասը տըն- կոյն առջևը կ'անցընէր . կը դիտէր , կը քննէր . բարգաւաճելուն վրայ տեղե- կութիւններ կը ստանար , ու շատ ան- գամ սենեակը դառնալէն վերջն ալ վանդակներուն ետևէն ուշադրութեամբ դեռ վրան կը նայէր ու կը մտածէր :

Աս էր հիմա բանտարգելոյն հաճոյա- կան զբաղմունքը , զբօսանքն ու գանձը . արդեօք ասկէ ալ շուտ մը պիտի ձանձ- րանար :

Առտու մը պատուհանը կեցած ժա- մանակ տեսաւ որ բանտապանը շտա- պաւ գաւթին մէջ տնկոյն քովէն անց- նելու ատեն քիչ մնաց վրան պիտի կո- խէր . սիրտը դող ելաւ : Երբոր Լուդուիկ

Նախաճաշիկը բերաւ, միտքը դրաւ աղաչելու որ ճեմելիքին միակ զարդին խնայէ. բայց չէր գիտեր թէ ասանկ պարզ խնդրուածք մ'ալ ինչ կերպով պէտք էր սկսիլ: Թերևս բանտին կարգը կը պահանջէր որ գաւիթն ամեն օրուսակ բոյսէ խոտէ մաքուր ըլլար. ուրեմն շնորհք մ'էր խնդրելիքը. իսկ կոմսը փոխարէն ընելու գրեթէ բան չունէր: — Արդէն այս Լուդուիկ ըսածնիս ալ սաստիկ խստութեամբ կը վարուէր հետը, և կը նեղէր զինքն այն ամեն նիւթերու մէջ որ բանտապան մը իշխանութիւն ունի բանտարգելոց տալու: — Աս ալ կար որ Շառնէ ինչուան ան ատեն շատ քիչ անգամ խօսեր էր ան մարդուն հետ, որուն բիրա կերպէն ու անհամ բնութենէն կը զգուէր. անչուշտ շնորհք ընելու շատ պատրաստական պիտի չգտնէր: — Մէյմ'ալ որ անձնասիրութեանը դէմ կու գար ձաւնձոր, սին ախորժէն սեպուիլը, զոր յայտնապէս արհամարհեր էր: — Եւ գարձեալ կարելի է որ աղաչանքը մերժէր. վասն զի ստորնագոյնը քիչ մ'ատեն որ ընդունելու և մերժելու կարողութիւն ու

նենայ՝ իշխանութիւնը միշտ տմարդութեամբ կը բանեցնէ. չգիտեր թէ ներողամտութիւնը կարողութեան արգիւնք է :

Եթէ Լուդուիկ խնդիրը մերժէր՝ Շառնէի սիրտն ու անձնասիրութիւնը փոխանակ այնչափ ակնկալութեանց սաստիկ պիտի վիրաւորուէր : Ասոր համար շատ մը ճարտասանական զգուշութիւններով, և մարդկային տկարութեանց վրայօք ունեցած տեղեկութիւնները բանեցնելով սկսաւ խօսակցութիւնը, զոր տրամաբանօրէն կարգի վրայ առեր էր մտքին մէջ վախճանին հասնելու համար, որպէս զի անձնասիրութիւնը՝ մանաւանդ թէ ունայնամտութիւնը չմահացնէ :

Սկսաւ նախ իտալերէն խօսիլ բանտապանին հետ, որպէս զի մանկութեան ու ազգային յիշատակներն արթընցնէ անոր մտքին մէջ. տղուն՝ Անտոնիկին վրայօք խօսքեր մէջ բերաւ, որպէս զի ուշադրութիւնը գրաւէ. երակն աղէկ ճանչցեր էր. վերջը հարուստ գզրոցէն կարմիր թմբուկ մը հանեց ըսելով որ իր կողմանէ տղուն տայ :

Լուդուիկ ժպտեցաւ ու չուզեց ան-  
նույ :

Շառնէ քիչ մը շփոթեցաւ, սակայն  
բացէ 'ի բաց ժխտուած չսեպելով՝ վրայ  
տուաւ, ու վարուետ անտարբերութեամբ  
մը — Գիտեմ, ըսաւ, որ իրեն աւելի կը  
յարմարին խաղալիկներ, շրուշակ մը  
կամ քանի մը ծաղիկ . այլ կրնաս, սի-  
րելի, թմբուկը ծախել ու ստակովը վա-  
նոնք գնել :

Բայց ճաղիկ ըսի նե՛ աղէկ միտքս  
եկաւ յարելով, խօսքն ուզած նիւթոյն  
դարձուց :

Այսպէս ահա ամենայն հնարք բա-  
նեցուց, Լուդուիկի ծնողական գութը,  
ծննդեան տեղւոյ սէրը, մանկութեան  
յիշատակներն, անձնական ախորժն ու  
հետաքրքրութիւնը ջանաց արթնցնել  
վախճանին հասնելու համար : Ի՞նչ ա-  
ւելի կրնար ընել եթէ անձնական կե-  
նացն համար ըլլար . ասկէ իմանանք  
թէ որչափ ուրեմն կը սիրէր զբոյսը :

Երբոր խօսքը լմնցուց,

— Պարոն կոմս, ըսաւ Լուդուիկ, ոս-  
կեզօծ թմբուկդ պահէ, որպէս զի զիւքն  
հեռացնելուդ վրայ սիրունիկ գզրոցիդ

մէջ եղած ուրիշ խաղալիկները չցաւին : Անշուշտ մոռցեր ես որ զաւակս իրեք ամսուան է , ու դեռ կաթ ծծելուն՝ թա սի կարօտութիւն չունի : Իսկ զալով մեխակիդ . . .

— Ի՞նչ , մեխակ . մեխակ է ուրեմն անիկա , պոռաց Շառնէ , տգիտաբար խաբուելով , ու ցաւելով հասարակ ծաղկի մը վրայ այնչափ խնամք տանելուն համար :

— Չեմ գիտեր , պարօն կոմս . իմ աչքիս առջև՝ չճանչնալուս՝ ամեն բոյս մեխակի պէս է : Բայց դու պէտք էիր կանխէիր ինձի յանձնելու որ գութ ունենամ վրան . վասն զի թէ որ ունեցած խնամքդ աչքիս զարկած չըլլար՝ շատոնց թերևս փճացուցած կ'ըլլայի , առանց քեզի կամ իրեն մնաս հասցնելու դիտմամբ :

— Ո՛հ , այս գութն ու խնամքը պարզ բան մ'է . . . ըսաւ Շառնէ :

— Դա , դա , դա , գիտեմ ի՞նչ ըսել կ'ուզես , ըսաւ Լուդուիկ՝ կէս աչք նայուածքովն յայտնելով որ միտքն իմացեր էր . մարդուս միշտ զբաղմունք պէտք է , հարկ է որ բանի մը սրտերնիս կա .

պենք . խեղճ բանտարգեալները չեն գիտեր ինչ ընտրեն : Նայէ ինչ կ'ըսեմ, պարոն կոմս . թոշակաւոր անձինքներէ ոմանք կան , որ անշուշտ ատենօք մեծ անձինք ու բարակ ըղբիւնք էին, (վասնզի ողորմելիներ հոս չեն գար), հիմա առանց ծախքի կը զուարճանան . մէկը ճանճ կ'որսայ, որ փնաս չունի . ուրիշ մը — վրայ բերաւ դարձեալ աչքերն ամփոփելով — ուրիշ մ'ալ զմելինով ու կտորոցով եղևնեայ սեղանատախտակին վրայ նկարներ կը ձևացնէ, առանց մտածելու որ ես տեղոյն կահ կարասեացը պատասխանատու եմ : — Կոմսն ուղեց խօսքը բերնէն առնուլ, բայց Լուդուիկ չթողուց : — Ոմանք, ըսաւ, դեղձանիկներ ու խայտիտներ կը մեծցընեն, ոմանք ալ պզտիկ ճերմակ մկեր . ես շատ կը յարգեմ իրենց ախորժը . այնպէս որ ատենօք աղուոր մեծ կատու մ'ունէի Անկիւրիոյ, երկայն ու ճերմակ մազերով . անանկ սիրուն կը ցատքէր ու կը խաղար որ չեմ կրնար ըսել . երբոր մըրափէր՝ կարծէիր թէ մուշտակէ բազպան մ'է . կինս ու ես՝ երկուքնիս ալ կը մարէինք վրան . հանդերձ այսու հե-

ուացուցի, վասն զի այս պզտիկ որսորդը կրնար իրենց փորձութիւնը ըլլալ. աշխարհիս բոլոր կատունները բանտարգելոյն համար մէկ մուկ մը չեն աժեր:

— Շատ աղէկ, պարոն Լուգուիկ, պատասխանեց Շառնէ — նեղանալով որ զինքն ալ տղայական ախորժ ունեցողներուն կարգը կը դնէր, — բայց այս բոյսս ինձի համար բարձրագոյն զբաղմունք մ'է:

— Ի՛նչ հող. եթէ միայն յիշեցնէ քեզի այն ծառոյն կանանչութիւնը որուն տակը մայրդ տղայութեանդ ժամանակ զքեզ որորեր է: Գաւթին կէսէն աւելին կրնայ շուք ընել. հրամանագիրն այս բանիս արգելք դրած չէ, ուստի այս կողմանէ աչք կը գոցեմ: Երբոր ծառըլայ, անանկ որ կարենայ քեզի սանդրխի տեղ ծառայել պատէն իջնելու համար, ան ատեն ուրիշ խնդիր. բայց այս վերջին կտորին վրայ մտածելու դեռ շատ ժամանակ ունինք, անանկ չէ, ըսու — բարձրաձայն ծիծաղելով — . ասով չէ թէ չեմ փափագիր որ արձակ օդ ու ազատութիւն վայելես, հապա ատենին, ըստ կանոնի, գլխաւորներուն հրամա-



նաւը : վայ թէ որ ուզենաս ծածուկ բերդէն փախչիլ . . . :

— Ի՞նչ կ'ընես :

— Ի՞նչ կ'ընեմ . . . ճամբադ կ'արգելում . եթէ զիս սպաննել ալ ջանաս , պահապանին կը հրամայեմ որ հրացանը վրադ պարպէ , առանց գլխալու՛ իբրև թէ ճագարի մը վրայ ըլլար . այս է կարգը : Բայց մեխակդ ոտքի տակ առնուլ , կամ մէկ տերեւին դաչիլ , ո՛հ չէ , չէ , ամենեւին չէ . ես միշտ եղեռնագործ ու բանտապանութեան անարժան սեպեր եմ այն մարդն՝ որ չարութեամբ խեղճ բանտարգելոյն սարդը սպաննեց . անանկ բան ընելը վատութիւն է , յանցանք է :

Շառնէ միանգամայն զգացուեցաւ ու զարմացաւ այսչափ սիրտ տեսնելով իր պահապանին քով . բայց նոյն իսկ քիչ մ'աւելլի զայն յարգել սկսիլը պատճառ եղաւ որ ունայնամտութեամբ ճգնինչանաւոր ևս փաստերով ցուցնելու տրնկոյն վրայ ունեցած խնամքը :

— Սիրելի պարոն Լուդուիկս , ըսաւ , շնորհակալ եմ ազնիւ վարմունքիդ : Իրաւցնէ կը խոստովանիմ որ այս բոյսն

ինծի համար շատ մը փիլիսոփայական ու հետաքննական դիտողութեանց աղբիւր է : Կը սիրեմ բնախօսական երևոյթներն հետազօտել . . . — Եւ երբ տեսաւ որ բանտապանը դլուխը շարժելով կ'ուզէր իմացնել՝ թէ առանց հասկընալու մտիկ կ'ընէ , վրայ բերաւ — Մանաւանդ այն ցեղն որուն ինքը կը վերաբերի, բժշկական զօրութիւններ ունի ծանր անհանգստութեանց դէմ՝ որոնց ես ենթակայ եմ :

Մուտ էր ըսածը . բայց վասն զի իրեն համար ծանր էր ինչուան բանտարգելոց այլանդակ տղայամտութեանցը նըւաստացած երևնալն այն մարդուն առջևը՝ որ մեծարոյ կ'երևար աչքին , այն մարդուն՝ որ միակ քովն եկող էակն էր և իրեն համար չամբողջ մարդկային ազգն էր :

— Այլէկ ուրեմն , պարօն կոմս , եթէ բոյսդ այնչափ օգտակար եղաւ քեզի , աւելցուց Լուդուիկ՝ խցէն ելլելու պատրաստուելով , աւելի երախտագէտ պէտք էիր ըլլալ , ու երբեմն երբեմն ջուր տալ . եթէ ես փոյթ չունենայի ըմպելիքդ բերելու ժամանակ քանի մը կաթիլ եր-

բեմն վրան սրսկելու, ինչուան հիմա  
խեղճ բոյսը ծարաւէն մեռած կ'ըլլար :  
Մնաս բարով, պարոն կոմս :

— Վայրկեան մ'ալ, իմ ազնիւ լու-  
ղուիկս, — ըսաւ Շառնէ՛ ևս առաւել  
զարմանալով թանձր կաշիի մը տակ  
այնչափ փափկութիւն սրտի ամփո-  
փուած գտնելուն, և գոզցես ցաւելով  
ինչուան ան ատեն չճանչնալուն վրայ :  
— Ի՞նչ կ'ըսես, առանց բան մ'ըսելու  
ինձի հաճոյք ընելու համար կ'աշխա-  
տէիր դու. ան կ'աղաչեմ 'ի նշան ե-  
րախտագիտութեանս այս պզտի ընծաս  
ընդունէ, և ատենօք կատարելապէս  
պարտքս հատուցանելուս ապահով ե-  
ղիր :

Աս ըսելով նորէն իրեն երկնցուց կար-  
միր թմբուկը. այս անգամուս առաւ  
Լուգուիկ ու հետաքրքրութեամբ զննե-  
լով,

— Ի՞նչ պարտք պիտի հատուցանես,  
պարոն կոմս. բոյսերը միայն ջուր կ'ու-  
զեն, ու առանց գինետունները ծախք  
ընելու դիւրին է իրենց ըմպելիքը գըտ-  
նելը : Թէ որ ինքը անձկութեանդ թե-  
թեւութիւն պատճառէ, թէ որ ատենին

աղէկ պտուղներ հասցրնէ՝ վախճանիդ հասած կ'ըլլաս :

Ու գնաց մէկէն թմբուկը գզրոցին մէջը դնելու . կոմսը քայլ մը Լուդուիկի մօտեցաւ , ու ձեռքն իրեն երկնցուց :

— Ո՛հ չէ , չէ , ըսաւ Լուդուիկ , ա՛մրչկոտ դէմքով մը ետ ետ քաշուելով . մարդ միայն իր հաւասարին ու բարեկամին հետ ձեռք կը թօթուէ :

— Աղէկ ուրեմն , Լուդուիկ , բարեկամս եղիր :

— Չէ , չէ , պատասխանեց Լուդուիկ , անկարելի է . պաշտօն մը միշտ խղճով կատարելու համար , պէտք է ամեն բանի նախատեսս ըլլալ : Թէ որ բարեկամս ըլլաս և ուղենաս փախչիլ՝ կրնամ՝ ես սիրտ ունենալ պահապանին պողալու որ հրացանը վրադ պարպէ : Չէ . ես պահապանդ եմ , բանտապանդ ու ամենախոնարհ ծառայդ :

Ե

Լուղուիկին դուրս ելլելէն վերջը Շառնէ մտածեց թէ անձնական աւաւելու թիւններովն հանդերձ որչափ ստորին մնացեր էր այն հասարակ մարդէն՝ մէկտեղ ըրած խօսակցութեանը ժամանակ : Ի՛նչ թշուառական դարաններ լարեր էր այն պարզ ու բարի մարդուն սիրտն որսալու համար, և չէր ամրցած ինչուան սուտ ալ խօսելու :

Ուրեմն Լուղուիկ՝ Շառնէի բուսակին վրայ ծածուկ խնամք տարեր էր, գիտնալով թէ հաճոյք կ'ընէ ուրեմն ըստ Շառնէի մտաց՝ անմեղ բաներն ալ արգիլել ուզող բանտապանը՝ կանխաւ ուշադրութիւն ըրեր էր փափաքը կատարելու. և դիտեր էր՝ ոչ թէ տխրութեանը վրայ ծիծաղելու համար, այլ որպէս զի ախորժ պատճառելու առիթ ըլլայ. ուրեմն անչափասիրութեամբն ազնուական կոմսն ալ իրեն պարտական ըրաւ :

Շրջագայութեան ժամանակն հասած

ըլլալով՝ Շառնէ չմոռցաւ զբոյսն իրեն  
ջրոյն մասնակից ընելու . գոհ չեղաւ  
արակելովը , նաև ջանաց տերևներուն  
փոշիներն ու ճճիները մաքրել : Այս գոր-  
ծողութեանս մէջ բոլորովին ընկղմած  
ժամանակ՝ միտքը Լուդուիկի վրայ գը-  
նաց . բաղձանքն եկաւ լսու ևս ճանչա-  
լու . ուզեց բառ մը գտնել որ այս մար-  
դուն նորօրինակ ու դէմ առ դէմ բնու-  
թիւնը բացատրէ , որ միանգամայն բիրտ  
ու բարի , անգութ ու զգայուն , ազահ  
ու անշահասէր էր : Շառնէ որ ատենազ  
այնչափ հին կայսրութեանց կյնալուն ,  
ցեղերու գաղթականութեանց , քաջու-  
թեանց , կիւրոսի՝ Աղեքսանդրու՝ ճին-  
կիզ-Խօանի աշխարհակալութեանցը վը-  
րայ մտածեր էր , համաշխարհի մեծ  
պատմութեան մէջ իր բանտապանին  
պատմութիւնը քննելու ետևէ եղաւ . և  
ահաւասիկ ինչ որ հարցընելով ենթա-  
դրելով ու տրամաբանօրէն հետևցնե-  
լով իմացաւ իրմէ :

Լուդուիկ Բիդդի Բիէմոնդէյին նից-  
ցա ծնած էր , քաղաքակից ու ժամա-  
նակակից Մասսենայ : Երկուքն ալ նոյն  
փողոցի տղաքներ , նոյն դպրոցի աշա-

կերտք , և դպրոցէ ալ դուրս իրարու  
ընկեր էին ու կից առ կից կը բնակէին .  
միայն թէ տղայութեան առաջին հա-  
սակնէն զանազան բնութեան տէր ըլ-  
լալնին կը յայտնէին : Թէ որ ձիավա-  
րութիւն խաղային՝ Լուդուիկ ձի կը  
ձեանար , Մասսենա՝ կառավար . եթէ  
ուզէին մերձակայ ցանկապատէն պը-  
տուղ գողնալ՝ Լուդուիկ ուս կու տար ,  
Մասսենա պատէն վեր կ'ելլէր և առիւ-  
ծուն մասն իրեն կ'առնուր . եթէ գաղ-  
տուկ անտառներն որսորդութեան եր-  
թային՝ Լուդուիկ մացառները կը ճեղ-  
քէր , Մասսենա որս կը զարնէր : Այս-  
պէս երկու ընկերակիցք մէկտեղ մեծ-  
ցեր , մէկտեղ թափառեր , ու հասարա-  
կապետութեան ծառայելու համար  
մէկտեղ զինուոր եղեր էին , և մէկտեղ  
ընդունեցան նաև քաղաքացի կոչուել-  
նուն թուղթը , ոչ ըստ սովորական կար-  
գի Գաղղիացի հռչակուելով , այլ օգնե-  
լով պատերազմաւ հայրենիքնին Գաղ-  
ղիա հրատարակելու : Իրաւ է որ այս  
միջոցին Մասսենա բիւրապետի նշան-  
ները վրան կը կրէր , երբ Լուդուիկ դեռ  
բրդէ ուսնոցներով էր . վասն զի մէկն

իշխանութեան և հրամանատարութեան համար ծնած էր, միւսն հնազանդելու համար :

Այո կրող՝ կատարեալ ու կոյր հնազանդութեան համար, որ Ղուղուիկի վրայ իբրև երկրորդ բնութիւն, իբրև իսկաշնորհ բարք և բնական պէտք մը կ'երևար. դրեթէ սոսկ պատերազմական մեքենայ մ'էր՝ որ շարժողին կողմը կը հակէր: Առաջնորդին հրամանն՝ Աստուծոյ պատուէր կ'երևէր աչքին, և ամեն շարժմունքն այնպէս կէտ առ կէտ ըստ հրամանի կը կատարէր, որ եթէ սաստիկ խառնուրդի ժամանակ՝ թշնամուց մը ատրճանակի հարուածն իր վրայ շտկուած տեսնելովն հանդերձ՝ յայտնինչանէ մը հաշտութիւն եղած ըլլալն իմանար, սուրն առանց զարնելու օդին մէջ կը մնար:

Ղուղուիկ թէպէտ և կարգէ դուրս կտրիճ էր՝ բայց ոչ երբեք ինքզինքը բռնորովին եռանդեանը ձեռքը կը թողուր, և ոչ գնդէն քայլ մ'առաջ կամ ետև կը խոտորէր: Պատերազմներու մէջ եթէ մեծ քաջութեամբ մը չփայլեցաւ՝ պատճառն ան էր որ չէին հրամայած:



և եթէ ամենօրեայ ցքւոյն տեղ տասնապետը գաւաթ մը թանաք տար, Հրամանն այս է ըսելով առանց տարտամելու մէկէն կը խմէր: Այն սարսափելի 1795 տարւոյն մէջ երբ բոկոտն ու անօթի Ալպեան ձիւներուն մէջէն անցնելու ժամանակ ընկերները կը տրտնջէին՝ Լուդուիկ անխռով Հրամանն այս է կ'ըսէր:

Մարէնկոյի մէջ սաստիկ վիրաւորուելով ու թեթև մը կալանալով՝ ազդրին մէջ գնտակ մը մտնելուն պատճառաւ, Լուդուիկ ակամայ ստիպուեցաւ ծառայութենէ քաշուելու: Շատ մեծ տարակուսանաց մէջ ինկաւ. Գերմանիոյ, Իտալիոյ ու Գաղլիոյ այլ և այլ կողմերն ըրած պատերազմներէն ձեռքն ուրիշ բան չէր մնացած՝ բայց եթէ զարմանալի պիւրութիւն մը չորս հինգ զանազան լեզուով երգուրննալու: Նիցցա՝ հայրենական քաղաքը դարձաւ ու ինքիրեն նստողական կեանք սկսաւ վարել, և արտաքին միումն չունենալուն՝ չէր գիտեր թէ ինչպէս շարժի ու կեանքին ինչ կանոն բռնէ:

Ուրիշ զբաղմունք՝ ուրիշ ախորժ ու

երջանկութիւն չունէր, բայց եթէ պահապան զօրաց շարժմունքը նայիլ, ու անոնց պէս քայլ առ քայլ քալել, գացող ու դարձող պահապանները դիտել: Ամեն իրիկուն երբ զօրաց հաւաքուելուն փողը կը լսէր՝ քնանալու կը քաշուէր. բայց արթննալու ու կերակրոյ փողն իրեն համար չէր: Կենաց սովորական գործոց մէջ ալ ոչ ոք իրեն կը պուռար — Յաջ — Յահեակ — Յսուաջ: Ի՞նչ ընէր ուրեմն այն կենաց մէջ՝ զոր ինքը պիտի կառավարէր, որուն յուզմունքը պիտի կրէր: Ծոյլ անձանց համար այսչափ ուրեմն անուշ է հնազանդութիւնը. ետքը սովորութիւնը հարկ կը դարձնէ զայն:

Վերջապէս տարտամ վիճակէն ազատելու համար Լուդուիկ մեծ որոշողութիւն մ'ըրաւ: Կարգուեցաւ. նոյն կրող հնազանդութիւնն, որով երևելի եղեր էր բանակին մէջ, տանելով առ ամուսինն. կարծես թէ երջանկութիւնը կատարեալ ըլլալու համար՝ իր հին ընկերակցին Մասսենայի պաշտպանութեամբը Ֆլենէսդրէյլոյի բանտապան ալ եղաւ. որով մէկի տեղ՝ երկու գլխաւոր

ունեցաւ , կինն ու բերդին հրամանա-  
տարը :

Կինը քան զինքն երիտասարդ էր , ու  
մեծդի կախուած վզովն հանդերձ՝ հարա-  
նութեան ժամանակը սիրուն աղջիկ  
մը կը սեպուէր . բայց բնութեամբ վէս  
ու կծծի էր , ու բռնադատեր էր զլու-  
դուիկ՝ որ 'ի բնէ անշահասէր էր , հա-  
տուցմունք պահանջելու բանտարգեալ-  
ներէն ամեն նիւթի համար որ իրեն  
ձեռքն էր շնորհելը : Սակայն Լուդուիկ  
այսու հանդերձ բաց 'ի մատակարարի  
պաշտօնէն ամենևին ընծայ չէր ընդու-  
ներ . վասն զի այս պարագայն միայն  
բանտին ներսը կրնար հանդիպիլ , ու  
կնկանն աչքէն հեռու ըլլալով՝ կրնար  
ուզածին պէս գոյծել . մէյմ՝ ալ որ կարգն  
աս էր :

Ուրեմն Լուդուիկի վրայ իրեք բա-  
րակ զանազանութիւն կար , որ փոփո-  
խակի կ'ազդէին վրան հրամանատարը ,  
կինն ու իր բնութիւնը : Դղեկին բարե-  
կարգութեան կանոններուն նկատմամբ  
անողորբելի էր . այս էր ահաւասիկ հրա-  
մանատարին ազդեցութիւնը . ազահու-  
թեամբ կը վարուէր բանտարգելոց հետ

կնկանն համար . իսկ ինքն իրմէ բարի ,  
զգայուն , վեհանձն ու կարեկցող էր ,  
երբ հրամանատարն ու կինը շէին փու-  
թար սիրտը կարծրացնելու , կամ ա-  
գահութեամբ լեցրնելու :

Ասկէ աւելի ով որ կ'ուզէ Լուդուիկ  
Րիդզիի կատարեալ նկարագիրն ունե-  
նալ՝ գիտնայ որ քառասուն տարուան  
էր , թխագոյն , մօրուքը թանձր , ուսերը  
լայն , միջակահասակ ու կտրիճ : Երևա-  
կայե՛նք որ տարտամ քալուածքով մը  
զղեկին գաւթէն կ'անցնի , սև ու կարճ  
ծխանոց մը բերանը , ստէպ ստէպ գաղ-  
ղիերէն՝ բրովանսալ իտալերէն ու դեր-  
մաներէն երդմունքներ ընելով , թեթև  
մը աչքն ամիոփելով՝ խորագիտի դէմք  
առնել ուզած ժամանակը , ու դիւրաւ  
մէկէն զուարթանալով՝ բարեգործու-  
թեան մը յիշատակաւ , կամ իր պզտիկ  
Մատոնիկին անունը լսելով . ու գիտցած  
կ'ըլլանք ինչ որ ինքնին Շառնէ ալ կրը  
ցաւ գիտնալ , ու թերևս պէտք եղածէն  
ալ աւելի :

2

Շառնէ հետևեալ օրերէն մէկուն մէջ  
ատեն մը բուսակին քովը կեցած էր,  
երբ մէյմ՝ ալ տեսաւ որ թանձր սև ամպ  
մը երկնքին երեսը մթնցուց, և շար-  
ժուն ու մոխրագոյն գմբեթի պէս դղե-  
կին բարձր աշտարակներուն վրայ կա-  
խուած մնաց: Շատ չանցաւ՝ անձրևի  
թանձր կաթիլներ սկսան թափիլ. մը-  
տածեց որ երթայ պատսպարուի, և ա-  
հա կարկտախառն անձրև սկսաւ տե-  
ղալ գաւթին յատակին վրայ: Խեղճ  
բոյսը միրկին առջև հերարձակ ճիւղե-  
րը տատանելով խլուելու մօտ էր. թաց  
տերևները քամիէն սարսուելով ու մէկ-  
մէկու շփուելով կարծես հառաչանաց  
ու անձկութեան ձայներ կը հանէին:

Շառնէ կանկ առաւ. միտքն եկաւ  
լուղուիկի յանդիմանութիւնն ու սկը-  
սաւ անձկանօք չորս կողմը նայիլ որ  
զտունկը պաշտպանելու բան գտնէ,  
բայց բան մ՝ալ չգտաւ. կարկուտն աւելի  
սաստկացաւ ու վախ կար որ բոյսը ջախ-

ջախի : Դող ինկաւ սիրտն , ինքն որ ա-  
տենօք անոր լաւ մը քամիններու և կար-  
կտի դէմ դնելը տեսեր էր . բայց անանկ  
սաստիկ էր հիմա վրան ունեցած սէրը՝  
որ զայն վտանգի մէջ չուզեց պնել , դո-  
ղալու պատճառ ունենալը փորձելու  
համար :

Հօր ու տարփածուի արժանի խոր-  
հուրդ մը միտքն ինկաւ և ուզեց կատա-  
րել . մօտեցաւ , աշկերտին առջևը պատ-  
ձեւացաւ որպէս զի քամիէն պաշտպա-  
նէ . ծռեցաւ ու կարկտէն պատսպարե-  
լու համար զստանը վահան եղաւ անոր .  
ու հոն անշարժ՝ հեալով՝ բոյսն ազա-  
տելու համար , քամիէն չարչարուած  
ձեռքերովը , մարմնովը , գլխովը , սի-  
րովը ծածկելով՝ կը սպասէր որ ամպն  
անցնի :

Անցաւ . բայց նոյնպիսի վտանգ մ'ալ  
արդեօք չէր կրնար հանդիպիլ բուսա-  
կին , անոր պաշտպանին՝ Շառնէի՝ վան-  
դակներու տակ փակուած ժամանակը :  
Մանաւանդ որ Լուդուիկի խաթունը՝  
հետը պահապան մեծ շուն մ'առած  
երբեմն գաւթին այցելութեան կու գար .  
չէր կրնար ըլլալ որ այն շունը խաղալու

ատեն՝ ցռուկովը կամ թաթովը փիլի-  
սոփային զուարճութիւնն ոչնչացընէր :  
Շառնէ նախատեսութեան փորձ եղած  
ըլլալուն՝ օրուան մնացած ժամանակը  
հնարք դարման մտածեց ու երկրորդ  
օրը գործադրելու պատրաստուեցաւ :

Այն քիչ կտոր փայտէն՝ որ հազիւ  
կը բաւէր իրեն նոյն կլիմային տակ՝ ուր  
երբեմն նաև ամառն իսկ գիշերներն ու  
առտունները ցուրտ կ'ըլլայ, քանի մը օր  
ինքզինքը զրկեց. անկողնոյն տաքու-  
թիւնը բաւական սեպեց. մտածեց որ  
աւելի կանուխ պառկի, աւելի ուշ ել-  
լէ. խնամքով պահեց գանձեց փայտերն  
ու պաշար պատրաստեց, ու երբ լու-  
գուիկ ինչ միտք ունենալն հարցուց,

— Սիրուհւոյս պալատ մը շինելու  
համար են, ըսաւ :

Բանտապանը մէկ աչքն ամփոփեց  
իբրև թէ հասկըցած ըլլար, բայց բան  
մ'ալ չէր հասկըցած :

Այս ատեններս Շառնէ փայտերը  
ճեղքեց կտրեց ու շերտերուն ծայրերը  
սրեց. բարակ ճիւղերը զատեց. զգուշու-  
թեամբ ուռենիի ճապուկ ողորներն ալ  
մէկտեղ ամփոփեց՝ որ հանապազօրեայ

խուրձերը կապելու կը ծառայէին : Ետ-  
քը ճերմակեղինաց արկղին տակը հա-  
սարակ ու թանձր հիւսուած հին լաթի  
կտոր մը գտաւ . հանեց ու անոր ամուր  
թելերը դուրս քաշեց . և նիւթերն ա-  
սանկ պատրաստելէն վերջը քաջու-  
թեամբ բանտին օրինաց ու բանտա-  
պանին խղճմտանքաւոր ճշդութեանը  
ներկուն համեմատ մէկէն գործողու-  
թեան ձեռք զարկաւ :

Տնկոյն շորս կողմը գաւթին յատա-  
կին վրայ անհաւասար մեծութեամբ  
ձողեր տնկեց , ու յատակին ասղիէն  
անդիէն հազիւ հազ քիչ մը ժողված  
հողովն , ու դղեկին հին խրամներուն  
խոնաւ որմերէն ծածուկ քերած բռովն  
ու բորակովը՝ շաղախի խառնուրդ մը  
կազմելով ծայրերնին հաստատեց : Փայ-  
տի մեծ կտորուանքն այսպէս տեղաւո-  
րելէն վերջը՝ տեղ տեղ ալ անոնց վրայ  
թելթե ճիւղեր ագուց ու տեսակ մը վան-  
դակ ձևացուց , խեղճ բոյան արտաքին  
մարմնոց հարուածէն կամ շան մօտե-  
նալէն ապահովցնելու համար :

Այս աշխատութեան մէջ իրեն մեծ  
քաջալերութիւն եղաւ տեսնելն որ թէ-



պէտ լուգուիկ իսկզբան գլուխը շար-  
ժեւով քթին տակէն կը մումուար, որ իբ-  
րև ձախորդ նշան կրնար սեպուիլ ու  
վախ կու տար թէ առաջ տանիլը պի-  
տի արգիլէր, յետոյ սկսաւ իր կողմը  
բռնել: Նաև երբեմն գաւթին ծայրը կե-  
ցած, անուշ մը ծուխը քաշելով, ուսը  
դրան կռթնցուցած, սրունքներն իրա-  
րու վրայ ծալած, ժպտելով մ'անփորձ  
աշխատաւորը կը դիտէր. երբեմն ալ  
ծուխը բերնէն վար կ'առնուր ու աղէկ  
խորհուրդ մը կու տար Շառնէի, բայց  
անիկա չէր գիտեր ամեն անգամ իր  
օգտին գործածել:

Այսպէս այնպէս գործն առաջ կ'եր-  
թար, զոր գլուխ հանելու համար Շառ-  
նէ առ սէր բուսակին՝ խեղճ բանտի ան-  
կողինն իսկ աղքըտցուց: Նոր զոհ մ'էր  
ըրածը. յարդին շատը հանեց թեթև  
ցանց մը հիւսեց, պարագային համե-  
մատ շինած տախտակամածին չորս կող-  
մը դնելու համար, որպէս զի Ալպեանց  
վրայէն փչող քամիներէն, կամ արևուն  
ցորեկուան ճառագայթներուն՝ կոպիճ-  
ներէն ու պատէն անդրադառնալով  
կրկին սաստկութեամբ տկար տնկոյն  
վրայ զարնելէն պաշտպանէ զանիկա:

Իրիկուն մը ուժով քամի մը փչեց .  
Շաունէ վանդակներուն ետեւէն տեսաւ  
որ յատակին երեսը յարդի ու ճիւղի  
կտորներով լեցուեր էր . յարդերն ու  
վանդակին միջոցները դէմ դնելու տը-  
կար գտնուեր էին . միտքը դրաւ որ եր-  
կրորդ օրը ճարն ընէ : Հետեւեալ օրն  
երբ գաւիթն իջաւ տեսաւ որ ամեն բան  
հոգացուած էր . իրմէ աւելի ճարտար  
ձեռք մը վանդակն ու յարդերուն հիւ-  
սուածքն ամրացուցեր էր . Շաունէ իմա-  
ցաւ թէ որո՞ւ պէտք էր շնորհակալ ըլ-  
լալ 'ի ներքուստ :

Այսպէս ուրեմն իրեն ու անոնց ձեռ-  
քով բոյսը վտանգաց դէմ պատնէշ-  
ներով ու յարկով պատասպարուեցաւ .  
Իսկ ինքը Շաունէ հետզհետէ աւելի սէ-  
րը շատցընելով՝ զմայլմամբ մեծնալն ,  
աճիլն ու նորանոր հիանալի պրանչելիք-  
ներ առջևը բանալը կը դիտէր : Կարծես  
թէ բուսակն ալ ժամանակաւ աւելի  
կ'ուժովնար , կ'անտառանար , ու ցօղու-  
նին չորս կողմն ելող փայտանիւթ կե-  
ղևն՝ որ առաջ փափուկ էր՝ օր օրուան  
վրայ կը պնդանար , որով տէրը երջանիկ  
կը համարէր զինքն ու հետաքրքրու-

Թեամբ ծաղիկը տեսնելու կը փափաքէր :

Վերջապէս ուրեմն բանի մը կը փափաքէր այն մարդն՝ որուն երակը մաշած ու ըղեղը կարծրացած էր . այն մարդն որ իր խելքին սաստիկ հաւնած էր , ամբարտաւան գիտութենէն վար իջաւ , և լայն մտքովը խոտի մը ցօղունին վրայ մտածելու ընկղմեցաւ :

Զրլլայ մէկն որ փութայ այս բանս տղայական տկարութիւն կամ յիմարութիւն սեպելու : Յովհաննէս Պերդրամ անուանի գուռաքոռ ժամերով մանուշակի մը կազմութիւնը դիտելէն վերջը , ինքզինքը բոլորովին տնկաբանութեան տուաւ , ու քիչ ատենէն նոյն գիտութեան վարժապետներէն մէկն եղաւ : Եւ եթէ Մալապարցի փիլիսոփայ մը խենթեցաւ պատկառուկին երևոյթները մեկնել ուղելով , ընդհակառակն կարելի է թէ Շառնէ իր բուսակին մէջ ճշմարիտ գիտութիւնը գտնէ . միթէ չգտաւ արդէն ձանձրութիւնը փարատելու ու բանտն ընդարձակելու գաղտնիքը :

— Ո՛հ , ծաղիկը , ծաղիկը , կ'ըսէր ,

որուն գեղեցկութիւնը միայն իմ աչքս պիտի վայելէ, որուն անուշահոտութիւնը պարզ ինձի համար պիտի ըլլայ, արդեօք ինչ ձև՝ ինչ գոյն պիտի ունենայ. անշուշտ նոր հանելուկներ ու մըտքիս առջև վերջին ասպարէզ մը պիտի բանայ: Թող բացուի ուրեմն. թող իմ սկար թշնամիս ամենայն մասամբ զինուած գայ, ես դեռ կռուելէ ետ չեմ կենար: Թերևս այն ատեն միայն կարենամ ըմբռնել ամբողջապէս այն գաղտնիքն որ բուսակին անկատար վիճակի մէջ ըլլալուն պատճառաւ՝ ինչուան հիմա հագիւ կրցայ վեր 'ի վերոյ նշմարել: Բայց պիտի ծաղկին արդեօք. պիտի ըլլայ արդեօք օր մը, ԲԻ՛ՉՉԻՈՒԱ՝<sup>1</sup>, որ ամենայն գեղեցկութեամբ ու զարդարանքովդ պայծառացած երևնաս աչքիս:

ԲԻ՛ՉՉԻՈՒԱ՝. այո, այս անունը դրաւ բուսակին երբ աշխատութեանը ժամանակս:

<sup>1</sup> ԲԻ՛ՉՉԻՈՒԱ՝ իտալերէն Picciolo (փոքրիկ) անուանին իգականն է. և իոպ՝ փունկ բառերն այն ընդունին մէջ իգական ըլլալուն, բանտարգէանն ալ նոյն սեռով փաղպջական մակդիրն իբրև յատուկ անուն կը գործածէ:

Նակ մարդկային ձայն մը լսելու պէտքն  
զգաց : Ընկերոջ պէս համարձակ հետը  
կը խօսէր բանտին մէջ, ու երբեք խնամ-  
քը չէր պակսեցնէր : Խեղճ Բի'չչիո-  
յա, ըսեր էր Լուդուիկ բացազանչու-  
թեամբ մը բուսակին 'ի ծարաւոյ մեռ-  
նելու մօտեցած ըլլալուն վրայ ցաւելով .  
ասկէ նոյն անունը Շառնէի միտքն ե-  
կաւ :

— Բի'չչիոյա, Բի'չչիոյա, շուտով  
պիտի ծաղկիս արդեօք, կը կրկնէր՝ ըզ-  
գուշութեամբ ծայրի տերևները կամ  
ճիւղերուն անկիւնները բանալով, տես-  
նելու համար թէ արդեօք ծաղիկն հաս-  
նելու մօտ էր . և այս Բի'չչիոյա անունն  
արտաբերելը քաղցր էր իրեն համար,  
վասն զի միանգամայն իր տիեզերացն  
երկու էակները, բոյսն ու բանտապա-  
նը միտքը կը ձգէր :

Առտու մը երբ սովորական շրջագա-  
յութեան ժամուն տերև առ տերև զԲի'չ-  
չիոյան կը զննէր, յանկարծ աչուրնե-  
րը բոյսին մէկ մասին վրայ կանկ առին .  
սիրտն սկսաւ ուժով ուժով վարնել .  
ձեռքը մօտեցուց ու կարմրցաւ . շատ  
ատենէ 'ի վեր ասանկ զգացմունք չէր

ունեցած . այս էր որ գլխաւոր ցօղունին ծայրը սովորականէ դուրս կանանչ մե- տաքսեայ գնդաձև ուռեցք մը տեսեր էր , իրարու վրայ պլլուած թեթև թեր- թերով , փառաւոր հովանոցի մը բոլո- րակ գմբեթին յարկի քարերուն նման :

Ա՛լ չտարակուսեցաւ որ կոկոնն ըլ- լայ . ծաղկիլը մօտ էր :

է

Ճանճորսը շատ անգամ վանդակնե- րուն ետևէն ախորժ կը զգար կոմսը դի- տելով , երբ բուսակին չորս կողմը մեծ հոգի մէջ ընկղմած էր : Տեսաւ շաղա- խը պատրաստելն ու յարմարցնելը , ցանցն հիւսելը , յարդերը կապել ա- գուցանելը , վերջապէս՝ պատնէշ կանգ- նելը . ու Շառնէի պէս՝ բայց անկէ շատ առաջ՝ բանտուած ըլլալով , դիւրաւ միտքը փիլիսոփային մեծամեծ զբաղա- նացը տուեր էր :

Նոյն վանդակապատ պատուհանէն ուրիշ զուարթ ու կայտառ դէմք մ'ալ կը նայի հիմա . կին մը , աշխոյժ ու

վախկոտ աղջիկ մ'է : Գլխին շարժմունքը՝ աչքին վառվռունութիւնը, համեստութեամբ միայն կը չափաւորուի . ու գելից ու իմաստալից նայուածքն երկայն ու վար կախուած արտևանանցը մէջէն անցնելու ժամանակ կէս կը մարի : Առաջին անգամ զինքը վանդակներուն ետևը ճերմակ ձեռքը վրանին դրած, մտածութեան մէջ ընկղմած ու ճակատը վար առած կենայր տեսնող մը, բանտարգելութեան խորհրդաւոր ու զգաստ նշան մը կրնայ կարծել : Բայց երբ ճակատը վեր առնու ու լոյս վրան ցայտէ, պայծառ ու համեմատական դէմքին մտտ ու կենդանի գոյնէն յայտնի կ'ըլլայ թէ ազատ օդոյ ու շարժման մէջ՝ և ոչ թէ վանդակներու տակ կ'ապրի :

Պէտք է արդեօք իբրև բանտերու այցելու գթութեան հրեշտակներէն մէկն համարիլ ու վրան զարմանալ : Չէ . ինչուան հիմա սիրտը ծնողական սիրով լեցուած է, և այս սիրով սաստիկ վառուած ըլլալուն՝ ուժն ու զոգցես գեղեցկութիւնն ալ կը կորսնցնէ : Ժիրարտի ի տալացւոյն՝ այսինքն ճանճորսին աղջիկն է, որ Դուրինի հանդէսներն ու սիրուն

ճեմելիքները ու Տորիա-Րիբարիայի ա-  
փուկքը թողլով, եկեր Ֆէնէսգրէլլոյի  
պզտիկ աւանին մէջ հաստատուեր էր.  
չէ թէ մէկէն ղհայրը տեսնելու համար,  
վասն զի հրաման չունէր, այլ որպէս զի  
մի և նոյն օդով սնանի ու մօտանց հօ-  
րը վրայ մտածէ: Իսկ հիմա աղաչան-  
քով պաղատանքով հրաման ընդունել  
էր երբեմն երբեմն հօրն այցելութեան  
գալու, և ահաւասիկ աս է զուարթ՝ կայ-  
տառ ու գեղեցիկ ըլլալուն պատճա-  
ռը:

Հետաքրքրութիւնը շարժեցաւ պրզ-  
տիկ գաւթին վրայ եղող վանդակա-  
պատ պատուհանէն նայելու. ակամայ  
ախորժ մը զգաց հոն կենալու. կը վա-  
խէր թէ բանտարգեայր զինքը չտեսնէ,  
բայց թող ապահով ըլլար որ Շառնէ  
պիտի չտեսնէր. վասն զի այն միջոցին  
Բի' Նյուայ ու իրեն նոր պտկիլ սկսած կո-  
կոնը բոլոր ուշադրութիւնը գրաւեր էին:

Երկրորդ շաբաթ երբ աղջիկն հօրը  
քով եկաւ, նորէն գնաց ծածուկ մը  
վանդակեայ պատուհանէն նայեցաւ ըզ-  
Շառնէ տեսնելու համար: Ժիրարտի  
երբ իմացաւ,



— Իրեք օր է, ըսաւ, որ տնկոյն քով  
չերեցաւ. խեղճն անշուշտ հիւանդ է :

— Հիւանդ, հարցուց աղջիկը զար-  
մանքով :

— Տեսայ որ գաւթին մէջէն բժիշկ-  
ներ ալ անցան. և ինչ որ Լուդուիկէն  
լսեցի՝ ամենքը նոյն մտքի վրայ են թէ  
կրնայ մեռնիլ :

— Մեռնիլ, կրկնեց աղջիկն, — ու աչ-  
քը լեցուեցաւ, և թերևս գորովանքէն  
աւելի վախ մ'երեցաւ երեսին վրայ :

— Ո՛հ, խեղճին վրայ կը ցաւիմ, ըսաւ :

— Ետքը անհանգիստ ու անձկալից կեր-  
պով հօրը նայելով, — Հոս ալ ուրեմն  
կարելի է մեռնիլ, մանաւանդ թէ կա-  
րելի է ապրիլ. անշուշտ բանտին բնա-  
կութիւնն ու հին խրամներուն ապա-  
կանեալ արտաշնչութիւնը պատճառ ե-  
ղած են հիւանդութեանը, գոչեց, բազ-  
կացը մէջ գրկելով զժերունին, վասն  
զի Շառնէի վրայ խօսելով զհայրը կը  
մտածէր :

Փիրարտի ջանաց մխիթարելու ձեռքն  
իրեն երկնցուց, զոր արցունքովը թա-  
ցաւ :

Նոյն վայրկենին Լուդուիկ ներս մը-

տաւ, ճանճորսին համար բռնած նոր որս մը բերաւ : Աղուոր փալփլուն պատե- նաթե միջատ մը՝ ոսկիեզնակ մ'էր, զոր ուրախութեամբ ընծայ ըրաւ անոր : Ժիրարտի ժպտեցաւ ու շնորհակալ ե- դաւ, և առանց տեսնելուն ազատ թո- դուց, վասն զի ասիկա քսաներորդն էր որ Լուդուիկ քանի մ'օրուան մէջ բե- բեր էր : Վերջը յարմար առիթ սեպեց ու Շառնէի ինչպէս ըլլալն հարցուց :

— Տէր ողորմեա, ըսաւ Լուդուիկ, ուրիշներուն հաւասար զինքն ալ միշտ կը հոգամ, պարոն, քանի որ չէ մեռած. անոր համար դեռ քիչ մ'առաջ բուսա- կին ջուր տուի :

— Ի՞նչ բանի կու գայ թէ որ ծաղկիլը պիտի չտեսնէ, — վրայ բերաւ աղջիկը տրտմութեամբ :

— Ինչո՞ւ համար, աղջիկս, ըսաւ Լու- դուիկ : — Ետքը հասկըցողի պէս սովո- ռական ոճով մէկ աչքն ամփոփելով՝ թե- թե մը ձեռքը շարժելով ու ցուցամատը վեր առնելով՝ Բժիշկները մտքերնին դրեր են, ըսաւ, թէ խեղճը մէյմ'ալ անկողնէն ելլելիք չունի, բայց չեմ հաւ- տար. ես ալ իմ գաղտնիքս ունիմ :

Շրջան մ'ըրաւ ու խոժոռ ձայնն ու  
լուրջ դէմքը ձևացնելով, ժամացոյցը  
ձեռքը օրիորդին իմացնել ուզելէն ետքն  
որ դեռ քսանուերկու վայրկեան ունէր  
հօրը քով կենալու, դուրս ելաւ: Քսան,  
ուերկու վայրկենէն դարձաւ ու հրա-  
մանը կատարել տուաւ:

Իսկ Շառնէ իրաւցնէ հիւանդ էր:  
Իրիկուն մը Բի'չխոյալի այցելութիւնն  
ու օրական խնամքն ընելէն վերջը սաս-  
տիկ թմրութիւն զգաց. գլուխը ծան-  
րացեր էր ու անդամները ջղային դողով  
կը սարսէին. գնաց պառկեցաւ, և քնով  
առողջանալ կարծելով՝ արհամարհա-  
նօք մարդ օգնութեան չկանչեց:

Քնոյն տեղ ցաւով բռնուեցաւ: Եր-  
կրորդ օրն երբ ուզեց անկողնէն ելլել,  
կամքէն աւելի զօրաւոր ոյժ մը չթո-  
ղուց. աչքերը գոցեց ու համակամե-  
ցաւ: Նեղութեան հետ փիլիսոփայա-  
կան հանդարտութիւնն ու դաւաճանի  
ամբարտաւանութիւնը նորէն պաշարե-  
ցին զինքը: Նուաստութիւն կը սեպէր  
բերնէն հառաչանք կամ տրտունջ մը  
հանել, կամ օգնութիւն խնդրել ա-  
նոնցմէ որ բռնի հեռացուցեր էին զինքն

աշխարհքէ : Միայն քանի մը յանձնա-  
րարութիւններ ըրաւ բուսակին նկատ-  
մամբ Լուդուիկի, վասն զի չէր գիտեր  
թէ որչափ ատեն արգելեալ պիտի մնար  
անկողնոյն մէջ՝ որ երկրորդ և աւելի  
ծանր բանտ մ'էր :

Բժիշկներ եկան, բայց հարցմունք-  
ներնուն պատասխան չտուաւ : Իրեն ա-  
նանկ կ'երևար թէ պիտի չապրի՝ որով  
պարտք ալ չունի ինքզինքն հոգալու,  
և ոչ յարքունիս գրաւեալ ստացուած-  
քը մատակարարելու . և թէ անոնցն էր  
որոնք հսկողութիւն ընելով ամեն բանի  
տէր կ'ըլլային :

Բժիշկները նախ բանի տեղ չդրին ի-  
րեն չկամութիւնը ու բռնադատեցին .  
բայց հիւանդն յամսու լուծեամբն յու-  
սահատցուց զիրենք, ուստի որոշեցին  
որ անկէ վերջը պարզ հիւանդութիւնը  
քննեն : Ախտին նշանները իւրաքան-  
չիւրին ալ մէյմէկ կերպ երևցան . ա-  
մենքն ալ հմուտ բժիշկներ էին ու այլ  
և այլ դրութիւններ ունէին : Մէկը՝ բբին  
լայննալն ու շրթունքներուն մանուշա-  
կագոյն երևոյթը յայտնապէս ապակա-  
նեալ ջերմի նշաններ համարեցաւ : Միւ-

սը փորուն ուռիլը աղեաց տաքութեան հետեանք սեպեց : վերջապէս երրորդն ալ, ( վասն զի իրեք էին ), վզին ու այտերուն գոյնը, և անդամներուն ծայրերուն պաղիլը, երեսին պնդութիւնը՝ կաթուածի ու անդամալուծութեան տուաւ, և վարդապետեց թէ հիւանդին լուծիւնն ուրիշ բանէ առաջ չէր գար՝ բայց եթէ ըղեղին մէջ հիւթ լեցուելէն :

Երկու անգամ դղեկին հրամանատար հազարապետը հիւանդին խուցն այցելութեան եկաւ . առջի անգամուն հարցուց թէ բան մը կ'ուզէր արդեօք . նաև առաջարկեց որ բնակութիւնն ալ կը փոխէ, եթէ մասամբ մը նոյն տեղը հիւանդութեան պատճառ կը համարի . իսկ կոմսը նշանով՝ չէ ըսաւ : Երկրորդ անգամ քահանայով մ'եկաւ : Շառնէի բժիշկներէն մահուան դատապարտուած ըլլալուն՝ անոր պարտքն էր փոյթ ունենալ որ բանտեալը կրօնից նպաստներն ընդունի :

Քահանայութեան վսեմ և սրբանուէր պարտքերէն մէկն ալ է բանտերու քահանային պաշտօնը, որ միակ հանդիսական է և ներկայութեամբը կը

սրբացնէ զկախաղանը : Բայց սակայն դարուս սկեպտիկեան վարդապետութիւնն՝ աներկիւղ աս ալ դառնապէս կը քամահէ : — Վարժութեամբ սրտերնին պնդացած ըլլալով, կ'ըսեն, չեն կրնար լալ յանցաւորին հետ . տուած յորդորնին ու մխիթարութիւննին միշտ մի և նոյն մտածութիւններն են, ու արուեստ դարձուցած ըլլալնուն՝ եռանդն ու բորբոքումն չեն զգար : —

Ո՛հ, ինչ կ'ըլլայ իմաստներուն նոյն ըլլալէն . կ'ըլլայ մէկը որ զանոնք կրկին անգամ լսէ : Արուեստ մը կը դարձընեն, կ'ըսէք . բայց այն արուեստն իրենք ընտրած են ու կը կատարեն : Այն առաքինի ու մաքուր սիրտերը՝ կարծրացած սրտերու մէջ կ'երթան ապրելու, և իրենց եղբայրական՝ յուսոյ և խաղաղութեան խօսքերուն տեղ՝ թերևս փոխադարձ հայհոյանք ու նախատինք կը լսեն : Կրնային իրենք ալ ձեզի պէս աշխարհիս զուարճութիւններն ու շռայլութիւնը վայելել . բայց ցնցոտիներ հագուողներու քով կ'երթան, բանտերու ապականեալ ու թաց օդը կը ծծեն : Իբնէ զգայուն են, և ինչպէս ընդհանուր

մարդկութեան յատուկ է՝ արիւնէ և մահուրնէ կը սոսկան . և ընդհակառակն կամաւորապէս դատապարտուած են կեանքերնուն մէջ բիւր անգամ կիյնել . դիւրի արիւնսահեղ սրոյն վեր ելլելն ու վար իջնելը տեսնելու :

Զարմանալի հեշտութիւն մ'է արդեօք ասիկա , և կարելի է դիւրաւ անզգայ ըլլալ :

Փոխանակ բոլոր կենօք այն ծանր պաշտօնն յանձն առնող և ցաւոց նուիրեալ անձին , այն անձին տեղ՝ որ առաքինութեամբ ընկեր եղած է դահճին , ամեն մէկ նոր դատապարտելոյ համար նոր քահանայ մը բերել տուէք : Անշուշտ է որ գութը կը շարժի , կը խանդաղատի , կու լայ , բայց նուազ կը մըխիթարէ : Եթէ խօսք մ'ալ կարենայ ըսել՝ հեծեծանօք լի կ'ըլլայ . ինչպէս կարելի է ուրեմն որ իր անձին ու մտածութեանցը տէր ըլլայ . ունեցած սաստիկ զգացմունքն արգելք չըլլար արդեօք պարտքը կատարելու . և իր տկարութիւնը տեսնելով՝ միթէ կրնայ եղեռնաւորը քաջասրտութեամբ ինքզինքը մահուան տալ , արեամբը յանցանքը քաւելու համար :

Եթէ նոր քահանային արիութիւնն ու պնդութիւնը այն աստիճանի է որ և ոչ առջի անգամուն սոյն յուզմունքն ու տկարութիւնը զգայ, անշուշտ եղիր որ ինքը բիւր անգամ աւելի անզգայ է 'ի բնէ՝ քան թէ միւսը վարժութեամբ:

Այս ասանկ ըլլալով՝ կ'ուզէս ուրեմն հիմա բանտի քահանաներուն պաշտօնը վերջացնել. ան, մի յափշտակեր մահապարտներուն վերջին բարեկամը. ապաշխարող յանցաւորը կախաղանին վրայ ելլելու ասեն՝ թող խաչ մ'ունենայ աչքին առջև որպէս զի տապարը չտեսնէ. կամ գոնէ աչքին յետին նայուածքը՝ մարդկանց արդարութիւնը ներկայացնողին քով՝ Աստուծոյ գթութեան պաշտօնեայն ալ տեսնէ:

Շառնէի քով եկող քահանան իրաւցընէ այս անուան արժանի անձն էր, բայց բարեբաղդաբար շատ ծանր պարտք չէր կատարելիքը: Ներող ու գթած մէկն էր. ոչ միայն հիւանդին լուծենէն ու անշարժ կենալէն՝ այլ և պատին վրայ գրած քանի մը յուսահատ տողերէն հասկըցաւ թէ քիչ յոյս կրնար ունենալ այն ամբարտաւան հոգիէն:



Բոլոր գիշերն աղօթքով գլխոյն կողմն  
անցուց, և սիրով երբեմն ջերմեռան,  
դուժիւնը կ'ընդհատէր Լուդուիկի օգ-  
նելու համար, որ անդադար կը խնամէր  
դճիւանդը . համակամութեամբ կը սպա-  
սէր որ քիչ մ'ինքիրեն գայ՝ որպէս զի  
անհաւատութեան խոր խաւարը յուսոյ  
ճառագայթով լուսաւորել կարենայ :  
Նոյն որոշիչ գիշերուան մէջ հիւանդին  
արիւնն ուժով դէպ 'ի գլուխը զարնելով  
ըղեղը շփոթեց, և ժամ մը ու աւելի կը  
բանդագուշէր . այն միջոցին խոստովա-  
նահայրն ու բանտապանը մէկտեղ բո-  
լոր ուժերնին թափելով չէին թողուր  
որ անկողնէն դուրս ցատքէ . և երբ այս-  
պէս իրենց բազկացը մէջ կը տապալտը-  
կէր, խառնափնդոր խօսքերուն ու այ-  
լանդակ բացագանչութիւններուն հետ  
ստէպ ստէպ՝ Բի'լլիոյա, խեղձ Բի'լլիո-  
յա ալ լսուեցաւ Շառնէի բերնէն :

Երթամ, երթամ, ատենն հասաւ,  
մոմուաց Լուդուիկ . այո հասաւ, անհամ-  
բերութեամբ կը կրկնէր . բայց ինչպէս  
կ'ըլլայ միայն քահանան թողուլ մեռ-  
նողին վերջին տագնապներուն ժամա-  
նակ . աս ալ կայ որ ժամէ մը թերևս շատ

ուչ ըլլայ : Ա՛հ , Ս . Աստուածածին , կարծեմ թէ հանդարտելու վրայ է . աչքերը գոցեց , թեւերը կ'երկնցնէ , անշուշտ պիտի քնանայ . թէ որ դառնամ ու տեսնեմ որ չէ մեռած՝ ուրբա , հուզգէյ , ուրբա :

Իրաւցնէ հիւանդին զառանցանքը մեղմացաւ . Լուդուիկ թողուց որ միայն քահանան հսկէ ու ինքը սենեկէն դուրս ելաւ : Նոյն խցին մէջ՝ որ դողդոջուն լապտերի մը աղօտ նշոյլը կը լուսաւորէր , ուրիշ ձայն չէր լսուեր՝ բաց 'ի հոգեվարին անկանոն ու տկար շնչառութենէն , քահանային միաձայն աղօթելէն և Սլպեանց քամիէն որ պատուհանին վանդակներուն մէջ կը հծծէր : Երկու անգամ միայն կարծես թէ օտար ձայն մ'ալ խառնուեցաւ ասոնց հետ , որ պահապանին Ո՛վ է պողալն էր , Լուդուիկի իր բնակարանն երթալու և հիւանդին խուցը գալու համար կրկին անգամ գաղտնի դռնէն անցնելուն ու գառնալուն ժամանակ :

Հազիւ թէ կէս ժամ անցեր էր երբ նորէն քահանային օգնութեան եկաւ , ձեռքը տաք ըմպելիքի աման մը բռնած :

— Տէր Աստուած, ըսաւ մտնելու ատեն. հարկ եղաւ որ շունս սպաննեմ. ինչ գէշ նշան՝ սկսեր էր ոռնալ: Բայց ինչպէս է. շատ շարժմունք ըրաւ. ինչ որ ալ ըլլայ, ահաւասիկ զինքը հանդարտ բռնելու միակ զեղը. համը փորձեցի, հինգհարիւր հազար սատանայի չափ լեղի է...: Թողու՛թիւն, հայր իմ, կ'ուզես հրամանքդ ալ փորձէ:

Քահանան անուշութեամբ մէկզի հրեց ամանը:

— Բան մը չէ, մեզի համար չէ. կիտրոնի շերտերով խառն գաւաթ մը մըշկահոս գինի ցուրտ գիշերուան մէջ աւելի ազէկ կրնայ զմեզ տաքցընել. անանկ չէ մի, տէր հայր: Բայց ասիկա իրեն համար է, միայն իրեն համար...: Պէտք է որ խմէ, ... ամբողջ խմէ. ասանկ է կարգը:

Աս խօսքերս ըսելով ըմպելիքին մէկ մասը թասի մէջ կը փոխադրէր, կը տրորէր ու վրան կը փչէր որպէս զի քիչ մը պաղի. և երբոր բաւական սեպեց՝ քահանան հիւանդին գլուխը բռնեց ու լուգուիկ գրեթէ բռնի խմել տուաւ: Ետքը վերմակներուն ու սաւաններուն տակ լաւ մը ծածկելով,

— Նայինք ինչ արդիւնք պիտի ունենայ, ըսաւ. շատ չկրնար ուշանալ: Սակայն ես ասկէ չեմ հեռանար ինչուան որ ինչ ըլլալիքը չտեսնեմ: Թուշուններս ամենն ալ վանդակի մէջ են, չեն կրնար փախչիլ. կինս գիշեր մը կրնայ առանձին անցընել. անանկ չէ մի հայր սուրբ... Թողութիւն ըրէ, հայր իմ, կրկնեց, խոհեմ քահանային վրայ անզգալի նեղանալու կերպ մը տեսնելով, ու գնաց անկողնոյն քով ոտքի վրայ անշարժ շունչը բռնած լռիկ մնչիկ կեցաւ, աչքերն հոգեվարին դէմքին վրայ տնկած, կարծես թէ մէկէն ըլլալիք բանի մը սպասելով: Երբոր տեսաւ թէ նշան չկայ՝ դեղոյն չափը կրկնեց, նորէն լուռ մունչնոյն շարժմունքներն ըրաւ, ու հիւանդին վիճակին վրայ ամհնեկին փոփոխութիւն չտեսնելուն մտմտութի մէջ ինկաւ. վախցաւ որ անխոհեմութեամբ մահը փութացնելու սլատճառ եղած ըլլայ. սկսաւ սենեկին մէջ ոտուրները զարնելով՝ մատուրները կոտրտելով վեր վար մեծաքայլ քալել, և ձևերովը կը սրդողէր ամանին՝ որուն մէջն էր ըմպելիքին միւս մասը:

Այս ամեն շարժմանցը ժամանակ վայրկեան մը կեցաւ, Շառնէի գունատ ու անշարժ դէմքը դիտեց ու յանկարծ

— Սպաննեցի զինքը, պոռաց՝ գաղ-  
ղիերէն, իտալերէն՝ բրովանսալ լեզուով  
խառն սոսկալի երգմունք մը ետևէն  
կցելով: Քահանան սարսափելի երգու-  
մը լսելուն զլուխը վեր առաւ. լուղուիկ  
ուշադրութիւն չըրաւ ու նորէն սկսաւ  
ոտուրները զարնելով, երգմունք ընե-  
լով ու մատուրներն ուժով ուժով կո-  
տրրտելով քայել: Ետքը վերջապէս  
շարժմունքէն ու յուզմունքէն յոգնելով  
գնաց քահանային քով ծունկ չորեցաւ  
Մեղայ, Մեղայ մումուլով, ու աղօթք  
ընելուն ժամանակ քունը տարաւ:

Երկրորդ օրն արշալուսոյն դեռ կը  
քնանար, իսկ քահանան միշտ աղօթքի  
հետ էր. ան ատեն տաք ձեռք մը գրլ-  
խոյն վրայ ինկաւ ու յանկարծ արթըն-  
ցուց զԼուղուիկ:

— Զուր, ըսաւ հիւանդը:

Լուղուիկ՝ Շառնէի ձայնն առնելուն  
պէս որ կարծէր թէ ալ լսելիք չունի՝  
աչքերը լաւ մը բացաւ ու ապշած հի-  
ւանդին երեսը կը նայէր, որ քրտինքով

ծածկուած էր . անդամները բոլոր ջուր դարձեր էին , ու շողիի ամպ մը կ'ելլէր թաց վերմակներուն և սաւաններուն վրայէն :

Թերևս հիւանդութեան յանկարծ ճիգնը և բանտարգելոյն ուժով խառնուած , քը բնութեան օգնելովն՝ յաղթեց ախտին . կամ թէ թերևս Լուդուիկի կրկին անգամ տուած ըմպելիք դեղը սաստիկ քրտինք պատճառեց ու լաւ մ'արտաշնչութեամբ հիւանդին այլէկ ըրաւ ու խնդրը գլուխը բերաւ : Մնձամբ հրամայեց ինչ որ իրեն պէտք սեպեց . վերջը դէպ 'ի քահանային դառնալով որ խոնարհաբար գլխուն քովը կեցեր էր ,

— Դեռ չեմ մեռած , ըսաւ , ինչպէս կը տեսնես . եթէ առողջանալու ըլլամ , ինչպէս յոյս ունիմ , կ'աղաչեմ որ իմ կողմանէս երեք բժիշկներուս ըսես թէ իրենց շնորհակալ չեմ ըլլար , ուստի դուրս ձգեն զիս իրենց այցելութենէն ու գիտութենէն՝ որ այլոց նման խենդ ու խարերայ է : Բաւական հասկըցայ խօսակցութիւննին , որով աւելի համոզուեցայ թէ յաջող բաղդ մը՝ դիպուած մը ինձի օգնական եղաւ :

— Դիպուած մը, մումուաց քահանան՝  
աչքերը պատին այն գրութեանը վրայ  
դարձուցած՝ թէ

— Դիպոշաճը կոյր է, և միակ ստեղ-  
ծագործոչեան պատճառ :

Ետքը անոր ետեէն Շառնէի աւել-  
ցուցած բառը կցելով,

— Թերևս, ըսաւ բարձրաձայն , ու  
դուրս ելաւ :

## Ը

Լուդուիկ եղածին վրայ զարմացեր  
ու կոմսին խօսիլը լսելով զմայլման մէջ  
ընկղմեր էր. չէ թէ ըսածներուն ուշա-  
գրութիւն դնելով, այլ հոգեվարին խօ-  
սիլը, մտածելը, նայիլը, ապրիլն ու  
քրտնիլը տեսնելով մեծ յուզման մէջ  
ինկաւ, և սիրտն ուրախութեամբ ու  
պարծենկոտութեամբ լեցուեցաւ : Քա-  
նի մը վայրկեան լուռ զարմանալէն  
վերջը՝

— Կեցցես, կեցցես, կանչեց, ազա-  
տեցար. որո՞ւ ձեռքով արդեօք :

Ու օդուն մէջ ասդին անդին շարժե-

լով պարապ պտուկը՝ կը պագնէր, ու բառգրքին ամենէն անուշ բառերովն հետը կը խօսէր :

— Որո՞ւ ձեռքով արդեօք, կրկնեց բանտարգեալը . թերևս քու ազնիւ իւր-նամքովդ, իմ համեստ Լուդուիկա : Բայց թէ որ իրաւցնէ առողջանալու ըլլամ, բժիշկներն իրենց հրամաններուն, քահանան ալ՝ աղօթիցն արդիւնք պիտի սեպեն :

— Ոչ ինձմով, և ոչ ալ բժիշկներով, ըսաւ Լուդուիկ . թերևս քահանային ձեռքով... չեմ գիտեր... աս յայտնի է թէ բարիք ըրաւ : ... Այլ ուրիշի, ուրիշի մը ձեռքով :

— Ո՞վ է ուրեմն այս բարեգործն ու անձանօթ պաշտպանը, հարցուց Շառնէ անտարբերութեամբ . կը կարծէր թէ Լուդուիկ առողջանալը սրբոյ մը միջնորդութեան արդիւնք համարի :

— Ոչ բարեգործ՝ այլ բարեգործուհի մը, պատասխանեց Լուդուիկ :

— Ի՞նչպէս . ի՞նչ կ'ուզես ըսել . Ս . Աստուածածնայ պատկեր մը արդեօք :

— Չէ, չէ, պարոն կոմս . զքեզ մահ-ւրնէ ու անշուշտ սատանային ճիրան



ներէն ազատողը, վասն զի առանց խոստովանանքի պիտի մեռնէիր, նախ և առաջ ու ամենէն առաջ Բի'չչիոյա խաթունը, Բի'չչիոյի'նա, Բի'չչիոյէ'դդա խաթունիկը, իմ սանս՝ եզաւ . այո իմ սանս, վասն զի ես եզայ նախ որ իրեն այս անունը դրի ու Բի'չչիոյա կոչեցի . անանկ չըսիր մի ինծի . ուրեմն իմ սանս է, ես ալ կ'ըբահայրն եմ, ու իրաւունքս կը պահանջեմ :

— Բի'չչիոյա, գոչեց կոմսն ու յանկարծ անկողնէն վեր ցատքեց՝ բարձին կոթընած նստաւ, ու սաստիկ ախորժէն ու հետաքրքրութենէն դէմքը կենդանացաւ :

— Պարզ խօսէ, պարզ խօսէ, ըսաւ, ազնիւ լուգուիկս :

— Ինչո՞ւ կը զարմանաս, ըսաւ բանտապանը՝ սովորական ոճով մէկ աչքն ամփոփելով . կարծես թէ այս առաջին անգամն է որ այսպիսի ծառայութիւն մը կ'ընէ քեզի . երբ այս հիւանդութիւնդ վրադ կու գայ՝ որուն սաստիկ ենթակայ ես, այս խոտով չէ՞ որ միշտ կ'առողջանաս . զո՞նէ ինծի ասանկ ըսիր . աղէկ որ միտքս եկաւ, վասն զի

յայտնի կ'երևայ թէ Մոնթէլիէի և Բա-  
րիզու բժիշկներն ամենը մէկտեղ եկած  
չեն կրնար այնպէս հիւանդութիւնդ  
ճանչնալ ու դարմանել, ինչպէս որ Բի'չ-  
չիորա իր մէկ տերևովը կ'ընէ: Այո,  
այս բանիս մէջ իմ սանիկս բժիշկնե-  
րու չորեքգնդեան բանակի մ'ալ՝ ամեն  
մէկ գնդի մէջ չորս հարիւր անձինք ալ  
դնելու ըլլանք՝ նոյնպէս կրնայ յաղթել.  
և այս անկէ յայտնի է որ երեք բժիշկքն  
ալ վատութեամբ գրեզ անկողնոյ մէջ  
ձգեցին հեռացան. ընդհակառակն Բի'չ-  
չիորա... աս, այն սիրուն բուսակը...  
Աստուած սերմն անկորուստ պահէ: ...  
Իսկ ես չափը քանակը պիտի չմոռնամ,  
ու թէ որ պատիկ Անտոնիկս հիւանդա-  
նայրու ըլլայ՝ խաշած կամ աղցան ըրած  
պիտի կերցընեմ, թէպէտ և եղերդէ ալ  
ոււելի լեղի է: Քիչ ատենուան մէջ բո-  
ւորովին յաղթեց ախտին. վասն զի ա-  
հա առողջացար. ասա հիմա զարմա-  
ցած կը նայիս... կը խնտաս ալ: ...  
Ա՛հ, կեցցե՛ր ուզնուաշուք բարեխիչնն  
Բի'չիորա:

Ետնէ ախորժ կը զգար պատուա-  
կան պահապանին ուրախ ու խօսուն

կերպը տեսնելով . մահուրնէ ազատիլն ու տնկոյն պարտական ըլլալու մտածութիւնը՝ որ արդէն բանտարգելութեան երկայն ժամերուն մէջ զինքը ըզմայլեցուցեր էր , երջանկութեան եռանդուն զգացմունք մը կը զարթուցանէին սրտին մէջ , և իրաւցնէ ժպիտ մը ջերմոտ շրթանցը վրայ փայլելու վրայ էր՝ երբ յանկարծ մտքէն դժպատեհ ու անգութ խորհուրդ մ'անցաւ :

— Բայց ան նայինք թէ այս բոյսս՝ առողջանալուս ինչպէս ծառայեց . ինչ կերպով պատրաստեցիր :

Հարցուց , ու հարցընելու ատեն սուկում մը զգաց :

— Ամենապարզ կերպով , պատասխանեց հանդարտութեամբ բանտապանը : Քիչ մը ջրով աղէկ կրակի վրայ դրի , երեք անգամ եռացուցի . . . կատարեալ դեղ մ'եղաւ . դժուարին բան չէ ամենևին :

— Տէր Աստուած , — պոռաց Շառնէ՛ բարձին վրայ իյնալով ու ձեռքը ճակտին զարնելով , — փճացուցիր զբոյսը . ան . . . բայց չեմ կրնար , Լուդուիկ , յանդիմանել զքեզ . և սակայն . . . խեղճ Բի՛չ-

չիոյրս . Թնչ պիտի ընեմ , Թնչ պիտի  
ըլլամ առանց իրեն :

— Հանդարտէ՛ հանդարտէ , — ըսաւ  
Լուդուիկ՝ գոգցես հօր պէս մխիթարա-  
կան ձայնով քովը մօտենալով , որ մեծ  
տրտմութեան մէջ էր , տղու մը պէս՝  
երբ սիրած խաղալիկը ձեռքէն աւած  
ըլլան . — հանդարտ կեցիր ու ծած-  
կուած բռնէ զքեզ : Ինծի մտիկ ըրէ .  
ըսաւ , ծածկոյթներն ու անկողնոյն խառ-  
նափնդորութիւնը շտկելու զբաղած , որ  
յանկարծական շարժմունքներէն բոլո-  
րովին աւրուեր էր : — Ի՞նչ կ'ըսես ,  
կրնայի տարակուսիլ բոյսը զոհելու՝  
մարդու մը կենաց համար . յայտնի է  
թէ չէ . և սակայն չուզեցի առաջին  
անգամուն մէկէն սպաննել ու ամբողջը  
պտուկին մէջ լեցընել , որ անօգուտ ալ  
էր . կտոր մը բան միայն վերուցի վը-  
րայէն . կնկանս մկրատովը շատ մը ան-  
ցած տերևներէն կտրեցի , քանի մ'ալ  
առանց կոկոնի ճիւղեր . . . վասն զի հի-  
մա վրան իրեք կոկոն կայ . Թնչ աղուոր  
է : . . . Անդամահատութիւնն առանց  
փնասելու յաջողութեամբ կատարեցի . . .  
չմեռաւ , մանաւանդ թէ քեզի պէս ինքն

ալ հիմա աւելի աղէկ է : Կը տեսնես որ խոհեմ ըլլալու է . . : Խոհեմ եղիր , լաւ մը քրտնէ , կատարելապէս առողջացիր ու կը տեսնես :

Շառնէ երախտագիտութեամբ մ'իւրեն նայեցաւ ու ձեռքն երկնցուց :

Այս անգամուս Լուդուիկ ալ իրենը մօտեցուց ու զգացմամբ կոմսին ձեռքը սղմեց ու աչքը լեցուեցաւ . բայց մէկէն անշուշտ կանոնին դէմ ըրած անսովոր զանցառութեանն համարներքուստ ինքզինքը մեղադրելէն՝ երեսին մկանուկքն երկնցան ու ձայնը խռպոտեցաւ : Ետքը ետքը՝ դեռ բանտարգելոյն ձեռքը բռնած , և ջանալով որ Շառնէ այլայլելուն պատճառը ուրիշ բանէ ենթադրէ ,

— Նայէ՛ նորէն կը բացուիս , ըսաւ , և մեղմով ու բժշկի ոճով թէն անկողնոյն մէջ անցուց . յետոյ պաշտօնական ձայնով նորանոր յանձնարարութիւններ ընելէն վերջը՝ սենեկէն դուրս ելաւ , լուրջ դէմքով մ'այսպէս երգելով ,

Իմին արուեստս օրական

Բանտապան է , բանտապան .

Քան ըզբանտեալն ընտրելի է բիւր անգամ :

Թ

Նոյն օրն ու երկրորդ օրը Շառնէ շատ տկար էր, որ հիւանդութեանց սաստիկ տազնապմանցն ու առատ արտաշնչութեան բնական հետեանքն է, անանկ որ ոչ շարժիլ և ոչ մտածել կրնար. բայց երրորդ օրն աղէկ զգաց և եթէ դեռ տկարութեանն ու հիւանդութեանն համար ստիպուեցաւ անկողին կենալու, բայց կ'իմանար թէ ոտք ելլելու ժամանակը մօտ էր, որով կրնար սովորական շրջագայութիւններն սկսիլ, և նորէն ընկերակիցն ու ազատարարը տեսնել:

Դարձեալ բոլոր մտածութիւնը բուսակին վրայ սկսաւ պտըտիլ. չկրցաւ ամենեին մեկնութիւն մը տալ թէ ինչ նորօրինակ պարագայով արդեօք՝ բանտին գաւթին մէջ ոտքին տակ կոխուելու խեղճ բոյսը՝ ձանձրութիւնը փարատեց, զոր և ոչ հարստութիւնն ու աշխարհիս փայլը կրցեր էին, և ապրեցուց զինքը մահուրնէ, որ մարդիկ ի-

րենց գիտութեամբն անհնարին սեպեր էին :

Այս խորհրդաւոր կէտը չկարենալով միակ իր մտացը լուսովն ըմբռնել, աւելորդապաշտութեամբ և ևս յարեցաւ Բի'չչիոյայի : Անգործ և անզգայ էակին վրայ ունեցած երախտագիտութիւնը չէր կրնար խորհրդածեալ և նկատեալ բանի մը վրայ հիմնուիլ . սակայն հարկ զգաց սէր ձգել վրան՝ այնչափ ընդունած բարեացը փոխարէն : Ուր միտք չհասնիր՝ երեակայութիւնը կը ճգնի՝ Բորբոքեցաւ Շառնէինն ալ, ու Բի'չչիոյայի վրայ ունեցած սէրը քիչ ատենէն կրօնական պաշտօն դարձաւ : Միտքը դրաւ թէ գերբնական կապով միացած էր անոր հետ, և թէ նիւթը ծածուկ ձգողութիւններ ու անըմբռնելի համակրութիւններ ունի, որովք մարդ բուսոյ կը մերձենայ : Որ չէր ուզեր տակաւին խուտովանիլ զԱստուած, թերեւս յուռութեա պաշտութեան տղայամիտ հաւատոցն ու աստղահմայութեան մէջ ինկաւ . Բի'չչիոյա իր աստղը, իր սրբուհին և յուռութեն եղաւ :

Ինչէն է որ գիտութեամբ կամ հան-

ճարով անուանի մարդիկ՝ անաստուած եղեր են, և միանգամայն յիմարական աւելորդապաշտութիւններ ունեցեր են։ Այն ատեն մարդկային ամբարտաւանութեամբ կուրցած՝ ամեն բան իրենց փառացը կամ ուժոյն կ'ուզէին վերաբերել. բայց սրտերնուն մէջ ցամքած և ճշմարիտ ճամբէն մոլորեալ բնածին և կրօնական զգացումը՝ առանց ուզելուն երևան կ'ելլէր, իրենց մտածութեանցն այլանդակ դրոշմը վրան կրելով : Կ'արգելուին սրտերնին որ մեծարանօք յերկինս չվերաթևէ, որով երկրիս վրայ կ'եյնար : Կը կարծէին թէ կը դատեն ու չեն հաւտար. և իրենց հանճարն անձուկ 'ի մեծութեան, հորիզոնն առջնին ամփոփելով, կը թողուր որ սոսկ համագոյից քանի մը բաղկացութիւնքն ըմբռնեն : Ամբողջին անհոգ կ'ըլլային ու մանրամասանց փոյթ կը տանէին. կը կարծէին թէ մասունքը զատելով՝ կրնան կշռել և իրենց տկար մտացը քննութեան տակ ձգել, չտեսնելով զայն արարչաստեղծ աշխարհիս միւս մասանցն հետ կապող կէտերը. վասն զի արարչագործութիւն, երկիր,



երկինք , մարդիկ , աստեղք և ամբողջ տիեզերք՝ մի միայն անհուն, կատարեալ և յանչափա զանազանեալ էակ մը շե՛ն արդեօք , որ Աստուծոյ հզօր ձեռքին տակ կ'ապրի ու կ'երերայ :

Այսպէս Շառնէ դեռևս շերմատ երևակայութեամբը վառուած՝ միայն Բի՛չ չիոյան կը տեսնէ բնութեան մէջ , և անոր նմաններ գտնելու համար՝ գիտնական յիշողութիւնը կ'արթնցնէ և հրաշալի տնկոց պատմութիւնը կ'ուզէ յիշել . Հոմերի մոյիէն , Լետովայ արմաւենիէն , Ոտէնի հացիէն սկսեալ՝ ինչուան Բրետոն գեղջկին առջև փայլող ոսկեղէն խոտը , կամ Պրիոյ հովուուհիները չար մտածութենէ ազատող փշեայ ծաղիկը : Կը յիշէ Հռովմայեցւոց Հռոմինեան թղենին , Կելտաց դեղադեան՝ ընդ կաղնոյ կերպարանօք պաշտեալ , Գաղղիացւոց աղաւնիճը , Յունաց ներգիւնը , Արմորիկայց քարեմիլը , Պիւթագորեանց ոլոռուկը , Կէպրաց պահման մոլոշն , Հրէից քահանաներուն մանրագորը , Սողոմոնի կնքոյն և կաղնիէ մատանւոյն հրաշալի արդիւնքը : Կը յիշէ Պարսից կապտագոյն քան

քաքը, որ ըստ իրենց՝ լոկարքայութեան մէջ կը բուսնի. սիքաքորուն՝ որոյ պըտուզն ուտողն՝ ըստ նտեսիասայ երկու հարիւր տարի կ'ապրի. դոշպա ծառն՝ որ հսկայաբերձ ճիւղերովը Մէհմէտի երկնաւոր բնակարանին վրայ կը հովանանայ. քաքիմիւս աստուածային ծառն, որոյ ծաղիկներուն ամեն մէկը հոգի ունի: Միտքը կը բերէ մոզական քաւնալադան, կանանչ անրիդան՝ որուն վրայ Հնդիկք անմահութեան և հեշտութեան պտուղներ կախուած կը տեսնեն. քոշն պորմ կարմիր ծառն՝ որոյ իւրաքանչիւր տերևոց վրայ քանդակուած կ'երևայ թիպէզաց բազմաթիւ արվարեստներէն մէկուն տառերը. քերթուած բուսական, որ եղանակէ եղանակ նորոգուելով՝ կը փոփոխէ իր յաւերժական երգն՝ ի պատիւ Պուտտայ, Հնդկաց Քրիստոսին<sup>1</sup>, վերջապէս խորհրդաւոր մտա-

1 Ըստ Հիւք (Huc) և Կապէ (Gabet) իմաստուն միասինարաց, որք 1844էն ց 1846 Թաթարստան, Թիպէզ ու Չինաստան այցելութեան ելան, գտնուած կամ Բիւրբիւրի ծառն իրական է. դեռ այսօր ալ նոյն հանգամանաց մէջ կը գտնուի. և իրենք ուղղափառ քահանայքն՝ խնամուք պուտտայեան

ծուլթիւն կը համարի Յարոնաց չատուածներնուն ոտքին խարիսխը արեւածաղկօք կամ նունուֆարովք զարդարելն, ու սիրոյ ծնունդը ծաղկի պսակին վրայ համարիլը : Կը հաւնի Չինաստանի ժողովրդոց զգեստնին, զարդարանքնին ու բնակարաննին ծաղկանց ձևոյն և զանգակատնկոց ծուէնից նրմանցնելուն : Կը զարմանայ Սիամացւոց կրօնական խղճահարութեանը վրայ, յորս արգիլեալ է այլ և այլ տնկոց փնասելն, և նոյն իսկ զանոնք կտրելը : Օրէնսդիր ու փիլիսոփայ Մեծին Կարողութի՛ արեւմտեան գահուն վրայէն իր ժողովրդոց սրբանուէր ծաղկադարմանութիւն յանձնելը մտիկ կ'ընէ . ինչուան կ'ըմբռնէ նաև Քսերքսեսի ունեցած սաւտիկ գուլթը սօսւոյ մը վրայ, զոր ըստ Ելիանոսի և Հերոդոտի՛ կը գգուէր կը գրկէր և ախորժով անոր շքոյն տակ կը քնանար . զոր ոսկիէ ապարանջաններով ու մանեակներով զարդարեց, և բաժնուելուն վրայ տխրեցաւ :

ամենայն բարեպաշտական խաբէութիւն պատժելու, կը վկայեն թէ « մանրակրկիտ մտադրութեամբ քննելէ վերջը, անկարելի եղաւ յայսմ գոյզն խաբէութիւն մը գտնել » :

Ինչ որ ատենօք զինքը կը գրգռէր՝ անշուշտ տկար մարգկութիւնը ծաղրելու, անարգելու և արհամարհելու, հիմա կը բարձրացնէ զայն աչքին առջև. գիտէ հիմա թէ ինչ կարևոր տեղեկութիւններ կրնան ծագիլ մէկ ցօղունէ կամ ճիւղէ մը. և յայնմհետէ կուսպաշտութիւնը երախտագիտութենէ առաջ եկած կը համարի: Տկար եղէգ մը բաւական չեղաւ արդեօք մարդուս առաջին նետը, առաջին գրիչն ու առաջին երաժշտական նուագարանը հայթայթելու, որոնք աշխարհակալութեան երեք մեծամեծ միջոցներն են:

Շառնէ արդէն լաւ վրայ դրած ըլլալով՝ առաւօտ մը այս տեսակ մտածութեանց խորն ընկղմած էր սենեկին մէջ, ուսկից հիւանդութենէն ետքը խոհեմաբար դուրս չէր ելած. մէյմ՝ ալ յանկարծ դուռը բացուեցաւ, Լուդուիկ աւետեաց դէմքով ներս վազեց ու

— Ծաղիկ տուեր է, գոչեց:

— Ի՞նչ... Բի՛լլիոյա՞:

— Ա.յո Բի՛լլիոյա, Բիլլիոյն՝դդա, իմ սանիկս:

— Ծաղիկ տուեր է, — կրկնեց Շառ-

նէ, աչքերը բորբոքած, ճակատը կարմրած. — ծաղկե՞ր է. — ու դէպ 'ի սանդուխը վազելով — կ'ուզեմ տեսնել, ըսաւ :

Ի զուր բարի բանտապանը ջանաց գինքն համոզել որ անխոհեմութիւն էր ասանկ շուտով դուրս ելլելը, և թէ պէտք էր մէկ՝ երկու օր ալ համբերէր. և թէ դեռ կանուխ էր ու օդը զով, և թէ կրկին հիւանդանալէն քիչ հոգի կ'ազատի : Այսչափ միայն կրցաւ համոզել որ ժամ մ'ալ համբերէ, ինչուան որ արևը բարձրանայ :

Ինչպէս ծանր կ'անցնէր այն ժամը, թէպէտ և կրցածին չափ ալ զբաղեցաւ : Նախ առաջին անգամ բանտարգելութեանը մէջ մտածեց զարդարուիլ. այո՛ զարդարուիլ 'ի պատիւ Բի'չչիոշային, ծաղկեալ Բի'չչիոշային : Զգեստները փոշոտած, մազերը խառնափրնդոր, մօրուքն երկնցեր էր. ասոնք ամենն ալ կարգաւորեց. ինչուան աս տեն մեծագին արկղին մէջ մտցած հայլին դուրս հանեց. խնամքով մ'աժիլուեցաւ, Բի'չչիոշան ծաղկած տեսնելու համար աժիլուեցաւ :

Այս էր բոլորովին հիւանդութենէն ազատիլը . հիւանդին առ բժիշկ , պարտաւորի առ իւր բարերարը , տարւիաւորի առ սիրուհին ըրած այցելութիւնը :

Եւ երբ մաքրուեցաւ կոկուեցաւ , աչքերը հայլին վրայ տնկեց ու զարմացաւ նոր կրած հիւանդութենէն ալ ետքը աչքը սովորականէն աւելի պայծառ , դէմքն աւելի ևս վրայ եկած ու ճակտին կնճիռները պակասած տեսնելով . յիշեց որ դեռ երիտասարդ է , և հասկըցաւ որ եթէ դառն ու թունալից մտածութիւններ կան՝ որ ինչուան իրենց ծրարը կը թառամեն , կան ուրիշներ ալ որ կարող են կենդանացնել զայն :

Ճիշդ որոշեալ ատենին ներս մտաւ Լուգուիկ . բռնեց ու օգնեց կոմսին՝ զալարուն ու ձոյլ սանդիսին բարձր աստիճաններէն վար իջնելու , որ երբ փոքրիկ դաւթին մէջ մտաւ , թերևս մաքուր օդոյն և երկնից լուսոյն ազդեցութեամբ , կամ թերևս աշխոյժ ու նոր կարողութեանցն առանձնաշնորհութեամբ՝ զոր հիւանդութենէ ելլողները կը վայելեն , կարծեց թէ իր ծաղկին ճառագայթումը ամենայն ինչ չորս կողմն անուշա-

հոտ ըրեր է, և անկէ համարեցաւ ա-  
ղէկ զգալուն քաղցր ու կայտառ ազդե-  
ցութիւնքը :

Մաղկանց անուշահոտութիւնն ի-  
րենց ինչ բանի կը ծառայէ . կը զուար-  
ճանան անով :

Չէ :

Արդեօք կենդանեաց համար կը բու-  
րեն :

Բայց տեսնուած է երբեք որ ոչխարն  
ու շունը վարդի մ'առջև կենան հոտուը-  
տալու համար :

Ուրեմն պարզ մարդուս համար ա-  
նուշ բուրումն կը սփռեն :

Ինչո՞ւ :

Թերևս սիրելի ըլլալու համար :

Շառնէ շատ մեծ սխալմունք չէր ը-  
ներ վերջապէս այն խորհրդաւոր ուժոյն  
հաւտալով՝ որ զմարդ գէպ 'ի տունկը կը  
հակէ :

Այս անգամուս Բի'չիոյա գեղեց-  
կութեան ամենայն պատրանօքն աչքին  
առջևը երևցաւ, ծաղկին նուրբ ու պայ-  
ծառ պսակը տարածած . ճերմակ, կար-  
միր և ծիրաներփին գոյներ իրարու հետ  
խառնուած էին լայն բլթակներուն վը-

րայ, որոնց մէջէն արևու ճառագայթ մը սարդելով՝ ծաղկին չորս կողմը գոգցես լուսաւոր պսակ մը կը շողշողացնէր :

Շառնէ անձկանօք զմայլեցաւ վրան . կը վախէր որ չըլլայ թէ շունչ տալէն գունաթափի կամ դաչելով թոռմի . ալ չմտածեց որ հետազօտէ ու դիտէ . հիացաւ, տեսքն ու հոտը վայելեց : Սակայն շատ չանցաւ ուրիշ մտածութիւն մը միտքն եկաւ ու ալ ծաղկին վրայ չէր նայեր : Յօղունին երկայնութեամբը կտրուածքի հետքեր, փնասուած ճիւղեր և մկրատին հանդիպելէն կիսով փճացած տերևներ աչքին զարկին . սպիւնները դեռ գոցուած չէին . ան ատեն յիշեց թէ կեանքն անոր պարտրկան է . զարմանքէ աւելի եռանդուն և քաղցր զգացմունքով սիրտը լեցուեցաւ, և Բի'չ-յիոյայի երախտիքը մտածելով՝ մոռցաւ փայլն ու անուշահոտութիւնը :



Ժ

Բժիշկներն հրաման տուին Շառնէի որ հետևեալ օրերուն մէջ ըստ իրեն յարմար ժամերուն ուզածին չափ երկայն ժամանակ գաւթին մէջ շրջագայի, որով դարձեալ սկսած ուսումը եւ ուանդեամբ կրցաւ շարունակել: Ինչուանայն ատեն բուսակին վրայ ըրած գիտողութիւնները գիր անցընելու դիտմամբ ջանաց որսալ զլուդուիկ որ իրեն թանաք, գրիչ ու թուղթ շնորհէ: Ապահով էր որ նախ յօնքը պուրստէ, խրոխտ դէմք մ'առնու, շատ աղաչել տայ, և վերջապէս կամ իր ու Բի'չչիոյայի վրայ ունեցած ինամոցն համար, և կամ շահու յուսով՝ վասն զի այս անգամ բանը տնտեսութեան կը նայէր, զի ջանի:

Բայց ասանկ չեղաւ. Լուդուիկ առաջարկութիւնը նախ զուարթութեամբ ընդունեցաւ.

— Ի՞նչ կ'ըսես, պարոն կոմս, ասկէ դիւրին ի՞նչ կայ — ըսաւ՝ թեթեւ մը ծը-

խանոցը խծկելով, և մէկդի դարձած քանի մ'անգամ իրեն քաշելով որպէս զի չմարի, վասն զի Շառնէի առջև՝ որ ծխոյ հոտէն կը նեղուէր՝ ոչ երբեք կը ծխէր: — Ես ամենեին արգելք չեմ ըլլար. բայց ամեն այս պզտիկ գործիքներն ալ հրամանատարին բալլիքին տակն են և ոչ թէ իմ: Եթէ գրելու կազմած կ'ուզես ունենալ, շուտ շնորհքով աղերսագիր մ'ուղղէ, ու փափաքդ կըրնայ կատարուիլ:

Շառնէ ժպտեցաւ ու չվհատեցաւ:

— Բայց այս աղերսագիրը գրելու համար, սիրելի Լուդուիկս, նախ ուզածս պէտք է, այսինքն թանաք, գրիչ ու թուղթ:

— Իրաւ է, իրաւ է, պարոն կոմս. էշը պոչէն քաշեցի աւելի շուտով քաշընելու համար, վրայ բերաւ բանտապանը: Ահաւասիկ ինչ ոճով որ կ'ըլլայ սովորաբար աղերսագիր տալը, — ըսաւ բանգէտ դէմքով մը, գլուխը կէս ծռած ու թևերը ծալած: Կ'երթամ հրամանատարը կը գտնեմ ու կ'ըսեմ որ խընդրուածք մ'ունիս իրեն ընելու, բայց չեմ ըսեր թէ ինչ է... ասիկա ոչ ինծի՝ այլ

քեզի և իրեն կը վերաբերի: Եթէ չկարենայ ինքն անձամբ գալ հետդ խօսիլ, մարդ մը կը խաւրէ, որ գրիչ՝ կաղամար ու թերթ մը դրոշմաւոր գծած թուղթ կու տայ, որուն վրայ իրեն ներկայութեամբ կը գրես. ինքն ալ առջևդ թուղթը կը կնքէ, գրիչը կը դարձնես, կաղամարը կ'առնու, նամակը կը տանի. այս է ահա ըլլալիքը:

— Բայց, Լուդուիկ, ես չէ թէ հրամանատարէն՝ այլ քեզմէ կ'ուզեմ այս շնորհքս ընդունիլ:

— Ինծմէ՞. ուրեմն ինծի յանձնուած հրամանը չե՞ս գիտեր, ըսաւ բանտապանը, բիրտ ու դժխեմ կերպարանքն առնելով:

Ուժով մը ծուխը քաշեց ու ծանր ծանր՝ կարծես թէ կոմսը հեռու բռնելու դիտմամբ բերնէն դուրս փչեց. դէպ 'ի աջ կէս շրջան մ'ըրաւ ու ելաւ գնաց: Երկրորդ առաւօտ երբ Շառնէ նոյն խընդիրը կրկնեց, բաւական սեպեց աչք ընել ու գլուխը շարժել:

Շառնէ ամբարտաւանութեամբ մեծ նուաստութիւն համարելով հրամանատարին առջև խոնարհիլը, և միանգա-

մայն չուզելով մէկէն մէկդի ձգել մտքին խորհուրդն՝ այլ կատարել, ակուախառնիչովը գրիչ շինեց, ածելին՝ որ ոչ աղէկ ոչ գէշ բան մ' էր՝ զմեկինի տեղ գործածեց, մուրը ջրոյ մէջ լուծելով թանաք ձևացուց, ու գգրոցին սրբուականերէն մէկն ալ կաղամար, ու բարակ կտաւէ ճերմակ թաշկինակները՝ որ իրեն անցեալ փառաւորութեանը մնացորդներն էին՝ թղթոյ տեղ ծառայեցուց :

Այսպէս ահա Շառնէ Բիւլլիոյայի քով չեղած ժամանակն ալ դեռ կրնար անով զբաղիլ դիտողութեանցը բովանդակութիւնն 'ի գիր անցընելով : Ի՛նչ անուշ, ի՛նչ զարմանալի դիտողութիւններ . և ի՛նչպէս ախորժ զգաց հաղորդելով զանոնք ուրիշի մը՝ որ սիրով մտիկ կ'ընէր և կրնար հասկընալ :

Դրացի ճանճորսն արժանաւոր կը թուէր իրեն գաղտնիքը լսելու : Այն դէմքն որ առաջ խոժոռ ու անշնորհք երևցեր էր աչքին, յետոյ բարեսրտութեամբ պայծառացած տեսաւ, և այնպիսի լուսով կը փայլէր որ աշխոյժ մը տաց յատուկ է : Երբ ծերունին պզտիկ

պատուհանէն կէս հետաքրքրական ու կէս մտածող աչքը Բի'լլիոյսյի ու իր վրայ կը պարտօցնէր, կը յանկուցանէր զՇառնէ : Ինչուան փոփոխակի ձեռք շարժեր ու ժպտեր էին . բայց ըստ կանոնաց բանտի չէին կրնար խօսիլ, և ոչ առողջութեան նկատմամբ ինչպէս ըլլալնին հարցընել . որով բնութեան հրաշալեաց մեծ հետազօտողն՝ պարտաւորեցաւ քովը պահելու անգին գիւտերը :

Այն անթիւ հրաշալեաց մէջ պէտք է համարիլ նաև այս մասնաւոր յակութիւնն ալ, այսինքն ծաղկին միշտ դէպ 'ի արևուն դառնալն ու երես առ երես նայիլը ամբողջ շրջանին ժամանակ, լաւ մը ճառագայթները ծծելու համար . իսկ երբ արևն ամպերու ներքև կը ծածկուէր և անձրևի վախ կ'ըլլար, մէկէն վրան ծռած բլթակներուն տակ կը պատսպարուէր, մրրկի ատեն առագաստներն ամփոփող նաւու պէս :

— Տաքութիւնն ուրեմն այսչափ հարկաւոր է իրեն, կը մտածէր Շառնէ . ինչո՞ւ համար . նաև ինչո՞ւ համար արդեօք թեթև մը թրջելէն ալ կը վախնայ, որ կրնայ զովացնել զինքը : Ո՛հ, ես իր վը-

րայ վատահ եմ. ինքն ինձի կը բացատրէ :

Բի'յլիոյա արդէն իրեն համար բարերար դեղարան մ'եղեր էր . կրնար ըստ պիտոյից կողմնացուցի ու ծանրաչափի տեղ ալ ծառայել. հիմա սկսեր էր ժամացուցի տեղ ալ բռնել : Հոտը շատ վայելելով իրեն թուեցաւ որ օրուան այլ և այլ պահերուն կը փոփոխուէր . այս երևոյթս նախ զգայարանացը խարէութիւն սեպեց . բայց կըրկին կրկին փորձերով անսխալ ըլլալն իմացաւ , և սկսաւ ստուգապէս օրուան ժամերն որոշել բուսակին հոտին համեմատ <sup>1</sup> :

Ծաղիկները բազմացեր էին և մանաւանդ իրիկուան դէմ շատ անուշ կը բուրէր Բի'յլիոյա . ինչպէս այն ատեն երջանիկ բանտարգեալը կ'ախորժէր քովը մօտենալ : Լուդուիկի առատաձեռնութեամբը քանի մը տախտակով

<sup>1</sup> Անգղիացի տնկադէտն Սմիթ (Smith) նոյն յատկութիւնքը դիտեր է շերտաւոր կտաւուկի (Antirrhinum repens = la Linaire rayée) վրայ : Ծաղկոց Բրիտանիայն (Flore britannique) հա . Բ . երես 658 :

փոքրիկ բազմոց մը շիներ էր, չորս կտոր հաստատուն սրածայր փայտերու վրայ յեցած, որոնք յատակին անջրպետներուն մէջ մխուած էին: Երբ ուզէր բուսակին մթնոլորտին մէջն ապրելով մրտածութեանց մէջ ընկղմիլ, նստարանին խորտուրորտ կոնակը նեցուկ կ'ըլլար իրեն. հոն աւելի հանգիստ կը զգար ինքզինքը՝ քան թէ ատեն մը մետաքսեայ ճոխ քանաքէներուն վրայ. երբեմն ամբողջ ժամեր կ'անցընէր հոն անուշահոտութեամբ զմայլած մտածելով, պատանեկութեան օրերն յիշելով՝ որ առանց վայելից և ախորժանաց սահեցուցեր, ընդունայն ցնորքներով և վաղահաս ձանձրութեամբ կորուսեր էր:

Շատ անդամ ալ կ'ըլլար որ անցելոյն վրայ ըրած քննութեանցը ժամանակ՝ կէս արթուն կէս քուն խոր ցնորից մէջ կ'ընկղմէր, տեսակ մը անզգայ ապշութեամբ մարմնոյ. և այն ատեն երևակայութիւնը և ևս տաքնալով՝ բանտին գաւիթը հեշտալից երազներով կը լեցընէր: Այն հանդէսներուն մէջ կը գտնէր ինքզինքը՝ յորս երբեմն ձանձրութիւնն անբաժան եղեր էր իրմէ, ուր

ամեն տեսակ հաճոյք լի էին, բայց ինքը միայն մասնակից չէր կրնար ըլլալ անոնց :

Չմեռ իրիկուն մը վէռնէօյլ փողոցին մէջ ունեցած հին դղեկին ճակատը ինքիրեն փառաւորապէս լուսաւորուած կը տեսնէր : Բազմաթիւ կառքերու շնկոցն ականջին մէջ կը հնչէր, որոնք ջահերով բոլորչի բակին մէջ կը մտնէին, ու ետեւէ ետեւ իւրաքանչիւրէն կամարակապ սրահին ճեմելիքներուն մէջ, որոնց վրայ օթոցներ ու վարդարուն ծածկոցներ փռուած էին, անուանի զարմանուհիներ<sup>1</sup> կը լեցուէին, թանձր մուշտակներու մէջ պլլուած՝ որոնց տակը մետաքս կը շողար. նաև անհաւատալի երիտասարդք՝ սրածայր գլխարկներով, չքեղ վզնոցով ու երիզապատ սրունքներով. վզերնին մերկ, մազերնին կարճ, կէս յոյն՝ կէս գաղղիացի տարազով՝ ե-

<sup>1</sup> Գաղղիերէն բառով Merveilleuse կ'ըսուէր Հասարակապետութեան վերջի ասրիներուն մէջ այն կինն որ արուեստակեալ ոճով, բանիւք, շարժմամբ և զարդուք ազնուաշուք խաթուն կը ձեւնար. ինչպէս նաև արանց մէջէն ալ նոյն կերպը կեղծողն Incroyable կ'անուանուէր :



րեւելի արուեստաւորներ ու գարգմանակաւոր ու եռագոյն գօտւովք զօրավարներ, գիտուններ, մատենագիրներ, ոմանք կանանչ վզնոցներով, ոմանք առանց վզնոցի: Միանգամայն անթիւքազմութիւն ծառայից ալ կ'երևէին ամեն կողմ, որոնք նոր նշանագգեստներով հասարակապետական դաշնաժողովոյն (république conventionnelle), որոյ նորութիւնն անցեր էր, հանած հրովարտակները ծաղր կ'ընէին:

Իր դահլիճներուն մէջ խառնափնդոր դարուն ամենայն շքեղութիւնն ու մտացածին նորութիւնները կը գտնէր: Մեկնոցին ու քղամիդին հետ շատ մ'ալ մեկնոցակ ու տառատոկ կը տեսնէր. կաքաւի համար վարդաձև զարդերով մոյկեր (les escarpins à rosettes), խթանաւոր կամ ժապաւինէ գործած կօշիկներ քաշիժի ու սօլերաց հետ կը սահէին յատակին վրայ. օրէնսդէտք, գրագէտք, զինուորականք, մեծատունք, պաշտօնեայք, համբարապետք, արուեստաւորք և կառավարիչք (gouvernants) իրարու քով խոնուած էին Տեսչութեան (Directoire) թոհ բոհին մէջ: Գուսան

մը կը տեսնէր հին կղերին անդամներէն մէկուն քով. նախ քան զյեղափոխութիւնն եղած կառավարութեան յարուող (ci-devant) ազնուական մը, նոյն զգացմունքն ու կարծիքն ունող աղքատի մը քով. Ազնուապետութիւնն ու Ռամկավարութիւնը ձեռք ձեռքի տրւած. Հարստութիւնն ու Գիտութիւնը՝ որ թե թեի մտած կը ճեմէին : Վերածնեալ ընկերութիւնն էր, հասարակաց կեդրոնի մը բոլորտիքն ամեն մասունքը միացնելով, որոնցմէ իւրաքանչիւրն իսկ կ'իմանար թէ շատ տկար էր առանձին ընկերութիւն մը կազմելու համար :

Հերձուածն ուրիշ ժամանակի կը թողուէր :

Ասանկ կ'ընեն զուարճանալու համար ժողվուած այլ և այլ վիճակի հասակակից տղաք ալ. քանի կը մեծնան իրենց խաղի ընկերներէն կը բաժնուին, առանց գիտնալնուն ընկերական պիտոյից զօրաւոր ձգողութենէն քաշուելով :

Շառնէ ժպտելով կը դիտէր բարոյից, վիճակաց և սովորութեանց խառնուրդը : Ինչ որ ատենօք ամբողջ մարդկու-

Թեան վրայ նախատալից մտածութիւններ ունենալու դառն ու արգասաւոր աղբիւր մ'եղեր էր իրեն համար, հիմա թեթև այպանք մը կը զարթուցանէր սրտին մէջ յիմարութեանցն և ընդունայն փորձերուն դէմ:

Յանկարծ փառաւորապէս աշխոյժ բաղմակերպ և աղազակաւոր երաժրչտութիւն մը սկսաւ ու հանդէսը թեւաւորուեցաւ: Կոմսն ուրիշ անգամ լրած եղանակները ճանչցաւ, բայց հիմա շատ աւելի տպաւորութիւն կ'ընէին վրան: Լուսոյ փալփլուն պայծառութիւնն ու բիւրեղներու և հայլիններու վրայէն ցայտելով հատուածակողմեան անդրադարձութիւնքը, խնճոյից կամ պարահանդիսի դահլճին տաք ու անուշահոտ օդը, կերակրոց համեղութիւնը, կոչնականաց աշխոյժ զուարթութիւնը, կաքաւողաց ցատքտուկ խումբերն՝ որ անցնելու ատեննին իրեն կը քսուէին, չորս կողմը լսուած թեթև ու փուճ անտիարանութիւնները, քրքջածայն ծիծաղները, այս ամենը մէկէն անանկ անպատմելի զուարճութիւն կ'ազդէին որ երբեք զգացած չէր:

Յետոյ վայելչահասակ ու կայտառ խաթուններ, ուսերնին ճերմակ, վզերնին կարապինման, փառաւոր կերպասներով զարդարուած առջևը կ'ելլէին ու ժպտելով կ'ողջունէին զինքը. ճանչցաւ զանոնք. սովորական սեղանակիցքն ու պերճ գիշերահանդէսներուն զարդերն էին, երբ մեծատուն ու ազատ էր և աշխարհքիս բարեկեցիկներուն կարգը կը համարուէր :

Հոն կը փայլէր պարծենկոտն Տալլիենէ առանց նախանձորդներ ունենալու, յունական զգեստներով, բոկոտն ու հագիւ թէ ոսկիէ թեթև սանդալ մը հագած, ակունքներ ու թանկագին մատնիներ գրած. չքնաղն Հռեքամիէ, զոր Աթէնք կ'աստուածացնէր թերևս. վերջապէս համբոյրն և զմայլեցուցիչ Յովսեփինէ, ատենուան մը Պոհաունէի կոմսուհին, որ իրեքին մէջ շատերէն առաջին շնորհալիցն ու աղուորը կը համարուէր :

Այս ամէն կանայքն այսօր Շաունէի աչքին հաւասարապէս գեղեցիկ կ'երևէին և խանդակաթ զգացմունքներ յազդելու արժանաւորք. նայուածքնին

աւելի անուշ ու վառվռուն էր հիմա քան թէ ատեն մը . շփոթեր էր թէ որն ընտրէ :

Փորձեց . ու տարտամութեամբ մէկուն մէկալին թափառելէն վերջը , յանկարծ մէջերնէն մէկն աչքին զարկաւ , որուն ոչ ուսերը բաց էին և ոչ իսկ ադամանդեայ զարդեր ունէր : Զգեստն ու կերպը անպաճոյճ , երկիւղածութեամբ գլուխը կախած՝ երևնալու կը վախէր , բայց ինքն ալ նոյնպէս գեղեցիկ էր . ճերմակներ հազած աղջիկ մ'էր , որոյ գեղեցկութիւնը պարզ բնական շնորհքովն ու այտերուն կարմրութեամբը դուրս կը ցատքէր : Շառնէ ոչ երբեք տեսեր էր զինքը , և սակայն քանի կը դիտէր , մէկալնոնց փայլը կը մարէր կ'անհետանար . քաղցր յուզմամբ սիրտը լցաւ , ու պատճառն ինչ ըլլալը չէր իմանար :

Բայց ինչպէս յուզմունքը կրկնապատկեցաւ՝ երբ աղջկան սև մազերուն վրայ ծաղիկ մը տեսաւ որ անոր միակ զարդն էր : Այն ծաղիկը . . . իր բոյսին ծաղիկն էր , բանտին ծաղիկը : Առ օրիորդն երկնցուց ձեռքը . . . յանկարծ

ամեն բան շփոթեցաւ, աչքին առջև ամենայն ինչ իրար անցաւ. վերջին անգամ մ'ալ պարի երաժշտութիւնը կրկին ուժով լսուեցաւ, յետոյ աղջիկն ու ծաղիկը գոգցես իրարու մէջ կորսուեցան. տարածուած ճիւղերը, բաց ու հոսուէտ պսակները սիրուն դէմքին չորս կողմը շատցան և մէկէն զինքն իսպառ ծածկեցին :

Արդէն դահլճին որմունքը գորգերէ կը մերկանան ու կը մթննան և Շառնէ ուրիշ բան չտեսներ՝ բայց եթէ ամպեզէն շոգի մը : Լոյսն աստիճանաբար մարելով կը զատուի ձեղունէն, յանկարծ խոտոր լոյս մը կը ձևանայ ու աղօտանալով կ'երթայ ամպին ստորը փայլելու. լուսաւոր ու հնչող դահլճին տեղ գժնեայ յատակ մը կը փոխանակէ. զառանցանաց մէջ ցուրտ բանականութիւնը վրան կու գայ. միտքն զպատրանքը, իսկութիւնն ալ զերազը կը կոտրէ :

Բանտարգետան աչքերը կը բանայ, կը տեսնէ որ բազմոցին վրայ է, ոտքերը դաւթին յատակին վրայ երկնցուցած, ծաղիկն առջևը, ու արևն հորիզոնին վրայ մտնելու մօտ :

Շառնէ առաջին անգամներն որ այս տեսակ բանդագուշանաց մէջ ինկաւ, իբրև պանչելիք մը զարմացաւ: Երբոր բոյսին մօտ բազմոցին վրայ կը նստէր՝ միշտ այս քաղցր ցնորքներով միտքը կը լեցուէր: Քիչ մը խորհրդածելով երևոյթը մեկնեց. և միթէ չէր սորված որ ծաղիկներէն ելած կազային շոգիները կրնան երբեմն թեթև ու ախորժանզգայութիւն մը պատճառել: Ան աւտեն հասկըցաւ թէ ինչուան ուր կըրնային ձգուիլ իր և բուսակին մէջ եղած վերաբերութիւնքն, ու անոր իւր վրայ ունեցած գոգցես մոզական ազդեցութիւնը:

Տեսած փառաւոր հանդէսները Բի'չ-չիոյան էր վայելել տուողը: Բայց ո՞վ էր այն համեստ ու պայծառ աղջիկն որ յանկարծ երևցաւ և նորօրինակ յուզման ու հեշտութեան մէջ ձգեց զՇառնէ. տեսած էր արդեօք կանխաւ. միթէ միւս խաթունայց պէս իր անցեալ ժամանակի յիշատակներէն էր. սակայն միտքը չէր գար որ անոր նման մէկը տեսած ըլլայ: Արդեօք ընդհակառակն այն յանկուցիչ երևոյթը փոխանակ ան-

ցելոյ՝ ըլլալիք բանի մը , ապագայի յայտնութիւն մ'էր . . . : Բայց միթէ ապագայ ունէր Շառնէ՝ ցնորակոծ անզգամն , և յայտնութեանց պիտի հաւտար : Չէ . այն սպիտակազգեստ ամօթխած մատաղ աղջիկն , այն անսլաճոյճ ու սիրուն ծաղիկն ու աղջիկը Բի'չչիոյա էր , որոյ առջև խաւարեցան շքեղ նախանձորդները . Բի'չչիոյա անձնաւորեալ և բանաստեղծեալ յերազի :

Աղէկ ուրեմն . Շառնէ պէտք է որ զայն սիրէ , և պիտի սիրէ զայն Շառնէ : Դիւրաւ կրնայ անոր շնորհագեղ հասակն ու անկեղծ կերպարանքն յիշել . յայսմհետէ այն քաղցր երևութին վրայ պիտի բանդագուշէ , որով սրտին ու ըղբղին ամայութիւնը պիտի լեցուի : Գոնեա այն աղուոր աղջկան առջև , իր միայնութիւնը կոտրելու համար՝ երևցած զուարթ ցնորքին առջև բանտին դռները պիտի բացուին . պիտի կարենայ անոր այցելութեան երթալ , քովը նստիլ , մօտէն քալել , ետևէն երթալ , երեսին ժպտիլ ու սիրել զայն : Իր կեանքովը , շնչովն ու սիրովը պիտի ապրեցընէ . մտքէն պիտի խօսի . աչքերը գոց՝



պիտի տեսնէ . իրարու հետ մէկ պիտի  
ըլլան , ու ինքն երկու պիտի ըլլայ :

Այսպէս Ֆէնէսդրէլլոյի բանտեալը  
զուարճալի հետաքննութեանցն ետևէն  
խարէական զմայլման մէջ կ'ընկղմէր և  
հետզհետէ բանաստեղծութեան խորը  
կը մտնէր , ուսկից այնպէս կ'ելլէ մարդ՝  
ինչպէս մեղուն ծաղկանց գրկէն անու-  
շահոտ ու մեղրալից : Դրական կենացն  
ընթեր երևակայական կեանքն ունէր  
անջինն ամբողջացնող , առանց որոյ  
մարդս կիսով կը վայելէ Արարչին բա-  
րեք :

Արդ իր ժամանակը կէս մը Բի'լլիո-  
շա տնկոյն , կէս մ'ալ Բի'լլիոշա օրիոր-  
դին հետ կ'անցընէ : Պատճառաբանու-  
թենէ ու աշխատութենէ վերջը , հա-  
ճոյք ու սէր կը վայելէ :

## ԺԱ

Շաունէ ծաղկին նկատմամբ ըրած  
խուզարկու փորձերն առաջ տանելով  
օրըստ օրէ աւելի կը զմայլէր բնութեան  
կանոնաւոր հրաշալեացը վրայ . բայց

չէր կրնար նուրբ ու անտեսանելի գաղտնեաց խորը թափանցել, ու անկարու թեանը վրայ կը զարմանար, երբ լուդուիկ դրացի իտալացի դաւաճանին կողմանէ ապակիէ մեծ ոսպնածև մը բերաւ, որով անիկա ճանճին եղջերիկին վրայ ութը հազար տեսողական ոսպնածևներ (facettes oculaires) կրցեր էր համրել: Շառնէ սաստիկ ուրախացաւ:

Այս գործիքով բուսակին նկնատեսիլ մասերուն տարածոցը սովորականէն հարիւրապատիկ աւելի մեծցած երևցան աչքին: Ան ատեն սկսաւ կամկարծեց մեծամեծ գիւտեր ընել:

Ծաղկին արտաքին ծրարը մանրամասնաբար հետազօտեց. հասկըցաւ թէ բլթակներուն պայծառ գոյնը, ձևը, կարմիր պիսակները, թաւիչէ կամ փալփլուն կերպասեայ երիզներն որ չորս բոլորտիքը կը պճնէին կամ խարխիւր կը զարդարէին՝ պարզ տեսքով աչք զլաւարճացնելու համար չէին, այլ նաև ծաղկին պիտոյիցն համեմատ արևու ճառագայթները բաժնելու կամ անդրադարձնելու, և անոնց ուժը մեղմացնելու կամ զօրացնելու համար, որով

պտղաբերութեան գործոյն ձեռնառու կ'ըլլային :

Յախճապակեայ փայլունութեամբ շողշողացող օժեալ թիթեղներն՝ անշուշտ ծծող անօթներու գեղձական կոյտեր են , որոնք հատիկները սնուցանելու համար՝ օդ , լոյս ու խոնաւ շոգիներ կը ծծեն . վասն զի առանց լուսոյ գոյն չկայ , առանց օդոյ և ջերմութեան ալ կեանք չկայ : Խոնաւութիւն , ջերմութիւն և լոյս , ասոնցմէ կը բաղկանան բոյսերն՝ երկրիս հրաշալիքը , և ահաւասիկ ինչ որ կը հատուցանեն հողոյն երբ կը մեռնին :

Շառնէ առանց գիտնալուն շատ անգամ ուսման և զմայլման ժամանակը՝ երկու հանդիսատես ունէր , որ ուշի ուշով ամեն շարժումները կը դիտէին և սիրով համակարիք կ'ըլլային իր զգացմանցը . ասոնք էին Ժիրարտի և անոր աղջիկը :

Այս վերջինս կրօնասէր հօրէ կըրթուած ըլլալով , և հայեցողական ու միայնակեցական կեանք անցընելով՝ սուրբ եռանդեամբք լի բնութիւն մը ստացեր էր : Գեղեցիկ , առաքինի ու

շնորհալից ըլլալուն ու մտացի կատարելութիւններ ունենալուն՝ տարփաւորներն անպակաս եղած էին : Խոր ու հաղորդական էր զգայնութիւնը , և գրեթէ ամեն պարտքերէն վեր կը սեպէր գութն ու կարեկցութիւնը . և թէ որ ատենօք թուրինի հանդէսներուն մէջ թեթև հակամիտութիւններ հոգւոյն ամբօթութիւնը ցրուրտեր էին , հօրը բանտարկութիւնը վանոնք մէկէն մեծ ցաւոց մէջ ընկղմեր էր :

Իսկ հիմա կրնայ ինքն երջանիկ մը սիրել , երբ կրօնական և որդիական կըրկին պարտքով Վաստուած խաչին վրայ ու զհայրը բանտին մէջ կը տեսնէ : Ասով ըսել չէ թէ ազնիւ թուրինուհին դիւրաւ տխրութեան և մաղձոտութեան մէջ կ'իյնայ : Իրեն համար ամեն պարտքըն ալ քաղցր են , ամեն նուիրմունքը սրտին մէջ խնտում կը տպաւորեն . բայց միթէ աշխարհիս բարեկեցիկներուն քով կրնայ գոհ ըլլալ : Հոն է իր տեղը , պարծանքն ու յաղթանակը ուր արցունք մը կը ցամքեցնէ ու ժպիտ մը կը պատճառէ : Այս գեղեցիկ ջանքն ինչուան հիմա մէկու վրայ միայն բանեցուց ֆէնէսդրէլլոյի մէջ :

Սակայն զՇառնէ տեսած վայրկենէն  
գութ ու կարեկցութիւն զգաց վրան :  
Հօրը պէս ու հօրը մօտիկ բանտար-  
կուած , աշխարհիս վրայ խեղճ բուսա-  
կէ մը ուրիշ սիրելու բան չունի , և զայն  
այնպէս սաստիկ կը սիրէ :

Իրաւ է որ թերևս բանտարգելոյն  
դէմքը , ալնուական ճակատը , վայե-  
լուչ հասակն՝ աղջկան խանդաղատա-  
նացը կ'օգնեն . այլ եթէ մեծատուն ե-  
ղած ժամանակը զայն տեսած ըլլար՝  
երբ արտաքնայարդար երջանկութեան  
մը մէջ էր , ուրիշներէն ամենևին չէր  
զանազաներ : Զինքն ախորժելի ընողն  
հիմա առանձնութիւնը , ձախորդու-  
թիւնն ու համակամութիւնն էր : Բնա-  
կան բերմամբ բարեկամացաւ հետը .  
նաև սկսաւ մեծարել , վասն զի ամեն  
մասամբ տգէտ ըլլալով , թշուառու-  
թիւնն ալ առաքինութեանց կարգը  
կը սեպէր :

Ալնուասիրտ օրիորդն՝ որ այնչափ  
բարեգործութիւն ընելու յանդուգն էր ,  
որչափ որ աչքի նայուածքէ մ'ալ երկ-  
չոտ էր , չափէն աւելի թերևս ամեն վը-  
տանգ մոռնալով , անդադար կը քաջա-

լերէ կը ստիպէ զհայրը որ Շառնէի նը-  
կատմամբ ունեցած բարի դիտաւորու-  
թիւնը գործադրէ :

Հուսկ ուրեմն օր մը Ժիրարտի պա-  
տուհանէն նայելով՝ գոհ չըլլար ըստ  
սովորութեանը պարզ ձեռքով բարև  
տալ կոմսին . նշան կ'ընէ որ ըստ կա-  
րելւոյն մօտենայ , ու դաշն ձայնով , մեծ  
կասկածով որ չըլլայ թէ մէկը լսէ , կը  
սկսի հետևեալ խօսակցութիւնը հետն  
ընել :

— Կարծեմ յաջող լուր մ'ունիմ քե-  
զի հաղորդելու :

— Ես ալ , պարոն , պարտական եմ  
չնորհակալ ըլլալու փոխ տուած ման-  
րադէտիդ համար :

— Եւ ոչ իսկ մտածութեան ար-  
դիւնքն իմն է . աղջիկս միտքս ձգեց :

— Աղջիկ մ'ունիս , պարոն , և կրնաս  
հետը տեսնուիլ :

— Այո՛ , հայր եմ , և ամեն օր շնոր-  
հակալ կ'ըլլամ Աստուծոյ : Ինքը քու  
վրագ մեծ համարում ու գութ ունի ,  
սիրելի պարոնս , հիւանդութեանդ ժա-  
մանակէն սկսեալ , և հիմա ալ՝ երբ բու-  
սակին վրայ այնչափ խնամք ունենալը

կը տեսնէ : Երբեմն այս վանդակներուն ետեւէն տեսած չեմ գիներ :

— Իրաւ . . . կարծեմ թէ : . . .

— Բայց աղջկանս վրայ խօսելով՝ եղած մեծ լուրը քեզի հաղորդելու կը մոռնամ : Կայսրը Միլան պիտի երթայ ու Խտալիոյ թագաւոր պիտի օծուի :

— Խտալիոյ թագաւոր . աղէկ ուրբեմն , ըսել է թէ յաւիտեան իմ ու քու տէրդ պիտի ըլլայ : Իսկ մանրադէտին գալով , — վրայ բերաւ Շառնէ՝ որ այն մեծ լրոջն ալ մտացն ամփոփմունքը չէր կորսնցուցած , և անկէ հետեանք մ'աւմենեին չէր կրնար յուսալ , — իմ պատճառաւ շատ ատենէ վեր զրկուած ես անկէ . . . թողութիւն ըրէ . թերևս դեռ կարօտութիւն ունենամ նոր ընելիք փորձերու համար . սակայն շուտով կը դարձնեմ : . . .

— Ինձի պէտք չէ , ես ուրիշ ալ ունիմ , պատասխանեց բարեսրտութեամբ ճանճորսը , խօսակցին ձայնէն գուշակելով թէ գործիքը քովէն հեռացնելուն վրայ կը ցաւէր . պահէ զայն , պարոն , պահէ՛ ի յիշատակ բանտի ընկերակցիդ , որ հաւտա մեծ գութ ունի վրադ :

Շառնէ ընդունած վեհանճնութեանը փոխադարձ երախտագիտութիւնն ուզեց յայտնել . բայց ծերն ընդհատեց .

— Սակայն թող գոնէ որ տալու լուրս ամբողջացնեմ :

Ու ձայնը և ևս մեղմացնելով .

— Կ'ըսեն թէ ապահովապէս կայսրը թագադրութեան առթով շնորհքներ պիտի ընէ : Թուրին կամ Միլան բարեկամներ ունիս . զանոնք շարժելու միջոց չրկրնար արդեօք գտնուիլ :

Շառնէ թախծութեամբ գլուխը շարժեց ,

— Բարեկամ ամենեկին չունիմ , ըսաւ :

— Բարեկամ չունիս , կրկնեց ծերը վշտակից աչքով . ուրեմն մարդկանց վըրայ տարակուսած ես . բարեկամութիւնն իրեն հաւտացողներն ամօթով չհաներ : Ի՛նչ և իցէ , ես բարեկամներ ունիմ , ձախորդութեանց մէջ ալ հաստատուն կեցող բարեկամներ . ինձի համար ընել չկրցածնին՝ թերևս քեզի համար կարենան ընել :

— Պոնաբարդ սպարապետէն բան մը չեմ ուզեր ինդրել , կրկնեց կոմսը չոր



ու վէս ձայնով, յորում յանկարծ իր հին քէնն արժարծեցաւ :

— Կ'աղաչեմ ցած խօսէ, . . կարծեմ թէ եկող կայ . . . բայց չէ : Պահ մը լը-  
ռութենէն վերջը խաալացին անանկ ձայնի ոլորակով՝ յորում յանդիմանու-  
թիւնը իբրև հօր շրթունքէ անցնելով կը մեղմանար,

— Սիրելի ընկեր, ըսաւ, դեռ տըր-  
տում ես. կարծէի թէ քանի մ'ամիսէ 'ի վեր բուսակիդ վրայ ըրած դիտողու-  
թիւններովդ սրտիդ մէջ եղած ատե-  
լութիւնները մարեցան, որոնք դարչե-  
լի են Աստուծոյ և մարդուս կեանքը կը փճացնեն : Ծաղկիդ բարերար զօրու-  
թիւնքն ուրեմն աշխարհային վէրքերդ բոլորովին չսպիացուցին : Քեզի ատելի Պոնաբարդը՝ աւելի թերևս ինծի պէտք էր ատելի ըլլար, վասն զի որդիս ծա-  
ռայութեանը մէջ մեռաւ :

— Եւ դու որդւոյդ վրէժն ուզեցիր առնուլ, եռանդեամբ կցեց Շառնէ :

— Կը տեսնեմ որ այս սխալ ձայներն ինչուան քեզի հասեր են, ըսաւ ծերը՝ վեհութեամբ գլուխը դէպ 'ի երկինք վերցնելով, իբրև թէ զԱստուած վկայ

կոչէր : — Ես եղեռամբ վրէժ խնդրեմ .  
չէ . բայց ցաւոյս առաջին վայրկեաննե-  
րուն մէջ՝ իրաւ է . չկրցայ ինքզինքս բռու-  
նել , ու երբ Թուրինի ժողովուրդը ու-  
րախովթեան ազազակներով յաղթողը  
կ'ողջունէր , իմ յուսահատ ձայնս ամ-  
բոխին կեցցէներուն մէջ խառնեցի :  
Բռնուեցայ . վրաս դանակ մը գտան :  
Վատ մարդիկ . որպէս զի իրենց տիրոջն  
աչքը մտնեն , անանկ հասկըցուցին իբ-  
րև թէ ես զինքն սպաննել ուզած ըլ-  
լայի : Մարդասպան սեպեցին զիս , փո-  
խանակ զի որդւոյս մահուանը վրայ  
վշտացեալ թշուառ հայր մ'էի : Այլէկ  
ուրեմն . կ'իմանամ որ խաբուեցաւ .  
բայց կը հասկընամ միանգամայն որ  
Պոնաբարդ չար մարդ չէ , վասն զի ըզ-  
քեզ ալ զիս ալ մահուանէ ազատեց :  
Եթէ ինձի ազատութիւն շնորհէ , ըրած  
մէկ սխալը պիտի ուղղէ . սակայն պիտի  
օրհնեմ զինքը , չէ թէ բանտարգելու-  
թեանս ինձի անտանելի ըլլալուն հա-  
մար . — նախախնամութեան լիուլի կը  
հաւտամ և յամենայնի համակամ եմ . —  
բայց բանտս աղջկանս համար նեղու-  
թիւն է . աղջկանս համար կ'ուզեմ ա-

զատ ըլլալ, աշխարհքէ պքսորեալ կի-  
նալուն վախճան տալու համար, որպէս  
զի հասակին վայելքը գտնէ: Չունիս դու  
ալ էակ մը որուն սիրտդ կապուած ըլ-  
լայ. զքեզ լացող կին մը, որուն ախոր-  
ժով քու նեղեալ անձիդ ամբարտաւա-  
նութիւնը նուիրես: Հնապա հաւանե-  
ցուր իմ բարեկամներս որ քու անուամբդ  
խօսին:

Շառնէ ժպտեցաւ: — Բնաւ կին մը  
զիս չըլար, ըսաւ, կամ դառնալուս  
չհառաչեր. ալ իրենց տալու ստակ չու-  
նիմ: Ի՞նչ երթամ ընեմ աշխարհի մէջ՝  
ուր հոսկէ աւելի երջանիկ չէի: Բայց  
սեպենք թէ բարեկամներ, բազդ ու եր-  
ջանկութիւն ալ գտնեմ, դարձեալ չէ՝  
կ'ըսեմ, հաղար անգամ չէ, եթէ հոն  
մտնելու համար այն իշխանութեան առ-  
ջև խոնարհիլ հարկ ըլլայ՝ զոր ես կոր-  
ծանել ուզեցի:

— Ի՞նչ. յուսոյ ամեն դռները գո-  
ցած ես դու քեզի համար:

— Ոչ երբեք կայսր անունը պիտի  
տամ իմ հաւասարակցիս:

— Նայէ որ խենթութեամբ ապա-  
գայդ չզոհես անանկ բանի մը համար՝

որ ընդունայն զգացումն է քան թէ հայրենասիրութիւն : . . . Բայց . . . լուռ կեցիր — ըսաւ դարձեալ ծերունին ժիրարտի — այս անգամուս ալ չեմ խարուիր . եկող կայ . մնաս բարով, — ըսաւ ու պատահանին վանդակներէն ետ քաշուեցաւ :

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ մանրադէտին համար՝ պոռաց ետեւէն Շառնէ քանի որ աչքէն բոլորովին չէր աներևութացած :

Լուդուիկ բանտարգելոյն առօրեայ սովորական պարէնը կը բերէր զոր մըտածութեան ու ցնորից մէջ ընկղմած գտաւ, ու չուղելով միտքը շփոթել՝ քովէն անցնելու ժամանակ բաւական սեպեց թեթեւ մը սկաւառակներուն վրայ զարնել, որով կ'ուղէր իմացնել թէ ճաշը պատրաստ է : Յետոյ սենեկին ամեն բանը կարգի դնելէն վերջը, դուրս ելաւ, լուիկ մը բարեւելով զՊարոնն ու Խարոնը, ինչպէս որ կ'ըսէր երբեմն, այսինքն զկոմսն ու բուսակը :

— Մանրադէտն իմս եղաւ, կը մըտածէր Շառնէ . բայց ինչպէս ես այս համեստ օտարականին բարեսրտու-

Թեանն արժանի եղայ . — և տեսնելով որ այն միջոցին Լուդուիկ բակէն կ'անցնէր, — սիրտս ասոր հետ ալ կապուեցաւ . բանտապանի կեղևին տակ անշուշտ եմ որ ազնիւ սիրտ մ'ունի . ուրեմն բարի ու զգայուն մարդիկներ ալ կան, բայց ուր կու գան կ'ապաւինին :

Կարծեց թէ ձայն մը պատասխան տուաւ .

— Որովհետև դժբաղդութիւնը քեզի բարիք մ'ըմբռնել տուաւ, շատ մի արհամարհեր զմարդիկ : Ի՞նչ ըրին այս երկու անձիկքը . մէկը առանց գիտնալուդ բուսակդ ջրեց . միւսը զայն լաւ ևս ճանչնալու և քննելու միջոցները դիւրընցուց :

— Ո՛հ, կ'ըսէր ինքիւրեն Շառնէ, սիրտը չխաբուիր . ճշմարիտ վեհանձնութիւն մ'ըրին իրենց կողմանէ :

— Այո՛ կը յաւելուր ձայնը . բայց այս վեհանձնութիւնը քեզի ընեխուն համար զիրենք կը գովես : Եթէ Բի՛չչիո յա ծնած չըլլար, այս երկու անձիկներէն մէկը աչքիդ ինչուան հիմա անմիտ ու նուաստ զբաղանաց ետէէ եղող ծեր մը պիտի երևար, միւսը վատ

ու փցուն ազահութեամբ տմարդի ա-  
րարած մը : Ատեն մը աշխարհի մէջ , պա-  
րոն կոմս , մարդ մը կամ բան մը սիրեք  
էիր . չէ . մտածութեանդ պէս սիրտդ  
ալ միայնացեալ էր : Հոս զԲի'չչիոյան  
սիրելուդ համար՝ այս երկու անձինքը  
վրադ սէր կապեցին , անով հետդ ըն-  
տանեցան :

Շաունէ փոփոխակի մէյմը բուսակին՝  
մէյմը մանրադէտին կը նայէր : — Նա-  
բուէոն , Գաղղիացուց կայսր , իտալիոյ  
թագաւոր . — այս սոսկալի անուանա-  
կոչութիւնը , որուն ատենօք կէսը միայն  
բաւական եղաւ խորհրդակորոյս դաւա-  
ճան մ'ընելու զինքը , նոյն վայրկենին  
հագիւ թէ միտքն եկաւ :

Ինչ հոգն էր ազգային նորընտիր  
կայսեր յաղթանակներն ու Եւրոպայի  
ազատութիւնքը : Ծաղկանցը բոլորտիքը  
բզզացող միջատ մը աւելի նեղութիւն  
ու հոգ կը պատճառէր իրեն համար ,  
քան թէ նոր կայսրութեան ըրած ամեն  
յափշտակութիւնները :

ԺԲ

Նորէն սկսաւ աշխատիլ . ոսպնածևր ձեռքը՝ որ ալ իր յատուկ ստացուածքն էր, դիտողութիւնները կրկնեց, գիւտերուն ասպարէզն ընդլայնեց և հետզհետէ խանդակաթ եռանդեամբ բորբոքեցաւ : Սակայն պէտք է ըսել որ հետազոտութեան անփորձ, ու նախնական ծանօթութիւններէ ու զօրաւոր գործիքներէ զուրկ ըլլալով՝ երբեմն առանց իմանալուն դրութեան ու այլանդակ եզրակացութեան (paradoxe) ոգին, խուզարկու ոգւոյն հետ կը խառնուէր :

Այսպէս ահա բիւր տեսութիւններ հնարեց հոյզին շրջանին վրայ, թէ ինչ միջոցներով կը բարձրանայ, կը տարածուի, կը փոխակերպի, առանց կրկին ընթացքին վրայ կասկածելու . նաև բուսակին կերպ կերպ գունաւորութեանցը վրայ, ինչպէս նաև ցօղունին տերևներուն ու ծաղկանց այլ և այլ համեմուններուն ակունքին վրայ . բոյսերէն մը

զուած խէժին ու ռետինին վրայ ու մե-  
ղուաց անոնցմէ քաղած մոմին ու մեղ-  
րին վրայօք : Նախ ամեն բանի պատաս-  
խանը կը գտնէք . բայց երկրորդ օրուան  
դրութիւնքը նախընթաց իրիկուաննե-  
րը կ'ոչնչացնէին , և յանկարութեան  
իւրում կ'ուրախանար . կը ստիպէր մը-  
տացն ու երեակայութեանն ամեն կա-  
րողութիւնը բանեցնելու , և վերջը գու-  
շակել չէր տար իրեն այս զուարճալի  
զբաղանացը :

Յաղթանակի օր մը սկսաւ ծագիլ  
իրեն համար . չքեղ օր մը՝ յորում ա-  
մենէն նշանաւոր դիտողութիւններէն  
մէկը պիտի կարենար 'ի գիր անցընել :

Ատենօք ծագկանց սիրոյն , Լիննէոսի  
հանճարեղ ու վեհ գիւտոյն վրայ ու  
պսակի մը մէջ ընդ հովանեաւ բլթակ-  
ներուն կատարուած բազմաթիւ հար-  
սանեաց վրայօք խօսակցութիւններ  
լսած էր , բայց հենգնութեամբ մտադիր  
չէր եղած : Մանրադէտին օգնութեամբ  
այս նոր քննութեանց տուաւ զինքը .  
դիտեց , համբերութեամբ սպասեց , ուր  
ուրեմն հարսանեկան անկողնոյն գաղտ-  
նեացը խորը թափանցեց :



Աչքին առջև ծաղկին ամենայն մասանցք վրայ սիրոյ ու կենաց շարժմունք մ' երևցաւ, որ գոգցես պահ մը սիրող ու խորհող էակաց կենդանութիւնը պղաց: Շառնէ՛ շփոթած ու կորակոր՛ կը կարծէր թէ դեռ ցնորից մէջ է. դլուխը չէր կրնար այն վառ զարմացումը բովանդակել՝ յորում ընկղմած էր: Համեմատութեամբ բոյսէն կենդանեաց ելլելով՝ արարչագործութեան սանդխին ամբողջ ներդաշնակութիւնն ու անհունութիւնը կ'ըմբռնէ: Կը տարակուսի թէ տիեզերաց գաղտնիքն իր ձեռքն ըլլայ. աչքերը կը մթագնին, գործիքը ձեռքէն վար կ'իյնայ, փիլիսոփան մահացած գեղջկային աթոռին վրայ կ'իյնայ, թևերը կ'երկնցընէ. յետոյ երկայն բարակ մտածելէն վերջը բուսակին դառնալով,

— Բի՛ւլլիոյա, կ'ըսէ, ատեն մը կըրնայի երկիրներ քալել, շատ բարեկամներ ու ամեն տեսակ գիտնականներունէի չորս բողբոս, բայց այն գիտուններէն մէկն ալ երբեք քեզի չափ բան չտրվեցուց ինձի. ոչ դք իմ բարեկամներէս մանաւանդ՝ անոնցմէ որ այս ա.

նունս իրարմէ կը յափշտակէին՝ քեզմէ  
ընդունած բարիքներս չհատուցին ին-  
ծի . և ես քու շրջապատեալ երկրիդ  
մէջ, ուր երկու յատակի կոպճաքարե-  
րու մէջ խեղճութեամբ բուսած ես, ա-  
ռանց զքեզ աչքէս կորսնցընելու՝ չորս  
կողմդ քալելով աւելի մտածեցի, զդա-  
ցի ու դիտեցի, քան թէ Եւրոպիոյ մէջ  
ըրած երկայնճանապարհորդութեանցս  
ժամանակ : Ի՛նչ աստիճան կուրութեան  
մէջ էի՝ երբոր դու տկար, գունատ ու  
թոռմած ինծի եկար և ես բան մը չէի  
յուսար քեզմէ, փոխանակ զի Ընկեր մը  
ինծի կը շնորհուէիր, Գիրք մ'առջևս կը  
բացուէիր, Աշխարհք մ'աչքիս կը պար-  
զուէիր : Այս Ընկերը ձանձրութիւններս  
մեղմացուց ու փարատեց, և այն էու-  
թեան հետ կապեց՝ որ զիս պիտի պահ-  
պանէր . իրմէ սորվեցայ զմարդիկ ճանչ-  
նալ ու հետերնին հաշտուեցայ : Այս  
Գիրքն ամենուն կարեկից բլլալ սորվե-  
ցուց, տգիտութիւնս ճանչցուց ու ամ-  
բարտաւանութիւնս խոնարհեցուց .  
բունի հասկըցուց ինծի թէ գիտութիւնն  
ալ առաքինութեան պէս անկարելի է  
առանց խոնարհելու ձեռք ձգել, և թէ

հարկ է խոնարհիլ բարձրանալու համար, և թէ այս անհուն սանդխին առաջին մատը՝ որուն ծայրը հասած կը կարծենք մենք զմեզ՝ հողոյն տակ թաղուած է, և անկէ պէտք է սկսիլ: Այս է լուսոյ Մատեանը կենդանի տառերով դրուած, և անանկ լեզուով մը որ դեռ ինծի համար խորհրդաւոր է, և այն վսեմ առեղծուածները դուշակել տուաւ՝ որուն ամեն մէկ բառը մխիթարութիւն է: Այս Աշխարհս միակ ու բացարձակ ճշմարտութեան աշխարհն է, խոհուն արարչագործութիւնն է. երկնաւոր ու յաւիտենական աշխարհին համառօտութիւնն ու առհաւատչեայն է, տիեզերքը կառավարող սիրոյ անսահման օրինաց յայտնութիւնն է, որով հիւլէներն ու արփիները կը հողովին, որ մէկ կապով կը կապէ բոյսէն սկսեալ ինչուան աստղերը, գետնասող միջատէն սկսեալ ինչուան զմարդ՝ որ ճակատը դէպ 'ի երկինք կ'ամբառնայ, հոն գտնելու համար իր հեղինակն՝ ով որ ալ ըլլայ:

Շառնէ սաստիկ տազնապած սկսաւ գաւթին մէջ մեծաքայլ քալել. մտա-

ծութիւններ իրարու ետև կը յաջորդէին մտքին մէջ . խիղճը ինքիրեն կը կռուէր . վերջը նորէն Բի'չչիոյսյի քով եկաւ , խանդաղատանօք աչքերը վրան , յառեց . յանկարծ շտապաւ դէպ 'ի վեր նայեցաւ ու այս խօսքերս մումուաց .

— Աստուած հզօր , աներևոյթ աղբիւր ամենայն ներդաշնակութեան ու արգասաւորութեան . ծայրայեղ մոլար գիտութեամբ միտքս խաւարեցաւ , սաստիկ իմաստակութեամբ սիրտս պնդացաւ և արգիլեց մէկէն ներս թափանցելդ : Չեմ կրնար ձայնդ լսել , բայց անունդ կը կանչեմ . չեմ կրնար զքեզ տեսնել , բայց կը փնտռեմ :

Երբ խուցը գարձաւ՝ որմոյն վրայ կարդաց ,

Աստուած քառ մի է .

Աւելցուց

Այս քառը տիեզերաց մեծ առեղծոռածոյն քառը չէ՞ արդեօք :

Յայսմ ալ երկմտութիւն կար . բայց իր դուռոց ոգւոյն համար տարակուսիլն՝ ինքզինքը կիսով յաղթուած խոստովանիլ , առաջին ուրացութիւնը նզովել ու մոլար ճամբան ուղղել չէր արդեօք :

Հիմա միայն ինք իր վրայ յեցած չէ տատամսեալ փիլիսոփան, միայն իրեն ուժոյն ու մտացը չհաւտար, և տալով ինքզինքն այն անձանօթ զգացմանցը՝ որոնց մէջ քաղցր վայելք մը կը զգայ, Բի'լլիոյայէն կը խնդրէ կարծիք մը, Աստուած մը ու նեցուկ մը, և եռանդեամբ նորէն իրեն կը հարցունէ զինքը պատող մի՞թոյն մնացորդը ցրուելու համար :

### ԺԳ

Այսպէս օրերը կը սահէին : Ամբողջ ժամեր ուսման ու հետազօտութեան անցընելէն վերջը, աշխատելէն յոգնած և մտածելով որ զուարճալի զբաղմամբ մը սխալի՝ կը զատուէր Բի'լլիոյա բուսակէն՝ Բի'լլիոյա օրիորդին համար :

Երբոր ծաղկանց անուշահոտութիւնը սաստիկ կը բուրէր՝ որով գլուխը կը ծանրանար ու աչքերը կը գոցուէին՝

— Այս իրիկունս Բի'լլիոյա հանդէս պիտի ունենայ, կ'ըսէր ինքիրեն :

Եւ իրաւցնէ ցնորից մէջ թարթափած՝ կիսարթուն երազայոյզ քնոյ մէջ

կ'ընկղմէր, զոր մտաց բնածին ազօտ լոյս մը դեռ կրնար կանոնաւորել: Ո՛հ, ա սիկա մարդու համար պատրաստուած հիանալի վայելքներէն մէկը չէ արգեօք, իրեն ցնորիցը մղումն կարենալ տալ և ըստ կամս յայլ կեանս կեալ, ուր երազ երազ դէպքերն իրարու կը յաջորդեն, յորում դարերը մէկ ժամէ աւելի չեն տևեր, յորում դիւթական անդրադարձութիւն մը գողցես ամեն թատերախաղ գուսանները կը գունաւորէ, ուրանօր յուզմունքը միայն իրական է:

Հոն չկան ամենեին դրական իրք, այլ ամեն բան իր զուտ էութեանը մէջ է:

Կ'ուզես լսել. ահա դաշնակաւոր երաժշտութիւններ, ուր եղանակին խլրրտիւնը ականջիդ չզարներ, ու երաժշտաց կարկամած կերպարանքն ու գործիքներուն այլանդակ ու անհաճոյ ձևերը չես տեսներ: Հոգեկան կեանք մ'է ասիկա, հաճոյք մը առանց ցաւոց, ծիրանի գօտի մը առանց մրրկի:

Շառնէ այս պատրանաց մէջ կ'ընկըղմէր: Բի'լլիոյայի անուշ կերպարանքն աղէկ միտքն ըլլալով՝ զինքը կը

կանչէր, և անիկա նախ իրեն կ'երևար միշտ նոյն շնորհալից գէւթովն ու կերպով, առոյգ, համեստ ու սիրուն. երբեմն ուսմանն ու հաճոյիցն հին ընկերակցացն հետ, երբեմն ալ այն միակ էակաց քով՝ զորս սիրեր էր ու ալ չկային, այսինքն հօրն ու մօրը քով: Բի'յիոյա իրեն համար հաճոյական և քաղցրախորժ յիշատակի՝ այն է պատանեկութեան և ընտանեաց տեսարաններ կը նորոգէր, և անոնց հետ կը խառնուէր՝ գոզցես աւելի քաղցրացընելու համար:

Երբեմն համեստ տեպով տան մը մէջ կը մտցընէր զինքը՝ ուր հեշտ և ախորժելի էր կենալը: Այն անձինքն որոնց հետ կը գտնուէր՝ անծանօթ էին իրեն, բայց ժպտելով զինքը կ'ընդունէին, որով ինքզինքը հօրենական գերդաստանին մէջ կը կարծէր:

Հանգուցեալ ընտանիքն և անցեալ զուարճութիւնները կենդանացնելէն վերջը, ուրիշ ընտանիք մ'ալ դուրս կը կանչէր արդեօք՝ զոր օր մը պիտի ունենար. այն յիմար մտածութեանց վրայ կը պտըտէր միտքը, որ պաշարեր էին

զինքն ատենօք : Այս քաղցր երևոյթներով իր բաղդին վրայ կը վստահէր և կանոնաւոր ոճով կը նշանէր բարակ կտաւէ օրագրոյն վրայ իր ցնորից դէպքերը . ասոնք միայն կենացն երջանիկ պարագաներն էին , բաց 'ի բանտարգելութենէն :

Բայց անգամ մը Բի'լլիոյաւ այն հանդէսներէն մէկուն մէջ , յորում Շառնէանոր քով հանգստութիւն և երջանկութիւն կը վայելէր , յանկարծական սոսկում մը պատճառեց : Ատեն անցնելէն վերջը յայտնութեանց և հոգւոյ նախատեսութեանց հաւտալու համար միայն կը յիշէր այս բանս :

Բուսակին բուրմունքը կ'իմացնէր թէ ժամը երեկոյեան վեցն է . երբեք ասանկ սաստիկ ու զօրաւոր եղած չէր . վասն զի երեսուն բացուած ծաղիկներ մագնիսական մթնոլորտը կը թանձրացրնէին յորում թմրած էր Շառնէ :

Բազմութենէ հեռու կանանչ դաշտավայրի մը մէջ օդ կը ծծէր ուր միայն ցնորքն ընկերակցեր էր հետը . Բի'լլիոյաւ առջևը կ'ելլէր նայուածքովն ու շարժուածքովը ժպտելով , իսկ ինքը կը



զարմանար օրիորդին ճապուկ հասակին, ճերմակ զգեստին, խորշաքաղ ծալքերուն և սև մազերուն ծամերուն վրայ, որոնց վրայ սովորական ծաղիկը կ'երևար. տեսաւ որ յանկարծ կայնեցաւ, երերաց, թւերն իրեն երկնցուց, ճակտին վրայ մահուան կնիքը դրոշմուած էր: Ուզեց դէպ 'ի անոր վազել. անընկճելի արգելք մը խափանեց զինքը. պոռաց ու արթնցաւ. բայց արթըննալուն պէս իր ձայնին պատասխան մէկու մը պոռալու ձայնը լսեց. այո՛ պոռալու ձայն . . . կնկան մը ձայն:

Բայց սակայն Շառնէ դաւթին մէջ բուսակին քով բազմոցին վրայ նստած հանգիստ էր. և այս անգամ մարմնական աչքերուն առջև երկրորդ անգամ երևութացեալ օրիորդը մը տեսաւ: Վանդակապատ պզտի պատուհանէն այն շնորհագեղ ու մելամաղձոտ կիսաստուեր կերպարանքը անորոշ բան մ'երևցաւ աչքին՝ բայց կամաց կամաց տեսաւ որ պայծառացաւ, թափանցող նայուածք մը ինչուան իրեն հասաւ. ոտք ելաւ, մօտեցաւ, և յանկարծ քաղցր երեոյթը վերացաւ, կամ մանաւանդ թէ օրիորդը փախաւ:

Բայց որչափ ալ շուտով փութաց փախչելու, Շառնէ՛ դէմքը, մագերը, հասակն ու զգեստին ճերմկութիւնը տեսաւ, տեղը անշարժ մնաց. կարծեց թէ կատարելապէս արթնցած չէ, և թէ ցնորիցը ժամանակ զինքը Բի՛լլիորայէն բաժնող անյայթելի արդեւքը բանտի մը վանդակն էր :

Ա.յն միջոցին լուղուիկ զարմացած վազեց ու դեռ զՇառնէ բարորովին շփոթած գտնելով՝

— Պարոն կոմս, ըսաւ, արդեօք հիւանդութիւնդ նորէն բռնելու վրայ է : Յատուած վկայ, պէտք է որ բժիշկներ բերե՛նք՝ վասն զի այս է հրամանը . բայց սիրտդ հանդարտ բռնէ . այս անգամ Բի՛լլիորա խաթունն ու ես առօղջանալուդ խնամք կը տանինք :

— Հիւանդ չեմ, պատասխանեց Շառնէ, հազիւ ինքիրեն եկած . ո՞վ անանկ հասկըցուց քեզի : . . .

— Ճանճօրսին աղջիկը . զքեզ տեսեր է, պոռալդ լսեր է, ու վազեց ինձի իմացուց . աղէկ չըրաւ արդեօք խեղճ աղջիկը :

Շառնէ սկսաւ մտածել . միայն այն

ատեն յիշեց որ դղեկին այն մասին մէջ  
երբեմն երբեմն օրիորդ մը կը բնակէր :

« Օտար աղջիկը Բի'չիոյայի նման  
կարծելս՝ իմ զգայարանացս վրիպակն  
է, տեսարանական պարզ ու հասարակ  
արդիւնք մը, ըսաւ ինքիրեն : Այսպէս  
յաճախ երևութական տեսիլքով մը  
մարդուս աչքը քիչ մը ժամանակ հե-  
տը կը տանի առարկայի մը կերպարան-  
քը որուն վրայ նախ հանդչած էր : Նոր-  
օրինակ բան մ'է տեսնելն որ այն քաղցր  
երևոյթը երևակայական կեանքէ իրա-  
կան կենաց մէջ կ'անցնի, յերազոյ  
յարթնութիւն » : Նախ մեծ հետաքրք-  
րութիւն մը չունեցաւ այս դժուարին  
ցնորքին վրայ, բայց միտքը Բիէմինդե-  
ցի օրիորդին վրայ կանկ առնելով յի-  
շեց անոր իր վրայ ունեցած խանգաղա-  
տանքը, ըստ բանից ծերունւոյն :

Հիւանդութեան ժամանակ վրան  
գութ ունեցեր է. անգին մանրադէտին  
համար ալ պէտք է անոր երախտագէտ  
ըլլայ. ախորժեր և հետաքրքիր եղեր է  
ըրած աշխատութիւններուն ու քաղցր  
հետազօտութեանցը, և հիմա ալ նոյն-  
պէս լուղուիկի իմացնելը բարեսրտու-  
թեանը յարացոյցն էր :

Եւ Շառնէ եռանդուն երախտագի-  
տութեամբ սիրտը լեցուած սաստիկ  
պէտք մը զգաց զայն յայտնելու . բայց  
ի՞նչպէս :

Տարակուսելով մը՝ ծածուկ ինքզինքն  
յանդիմանելով իբրև թէ ամբարշտու-  
թեամբ մեղանչէր, լռիկ մնջիկ ու զգա-  
յուն ձեռքով բուսակին վրայէն ծաղ-  
կած պզտի ճիւղ մը փրցուց :

« Ատենօք որչափ ես ոսկի շռայլեր  
եմ՝ յիմարաբար երդմնազանց ու պիղծ  
ճակատներ ակունքներով ու աղամանդ-  
ներով զարդարելու համար, ըսաւ մըտ-  
քէն . որչափ խաբող կանանց ու բարե-  
կամաց ձեռք մատներ եմ՝ մաս մաս իմ  
ինչս, սրտիս սեպհական զգացմունքէն  
դուրս՝ առանց ուրիշ բան հոգալու, որ  
թէ իրենց և թէ իմ ոտքերուս տակը կը  
ձգէի : Ո՛հ, թէ որ տրուած բանի մը  
դինը տուողին որչափ աժեցնելէն կը  
կախուի, կ'երդնում, Բի՛լլիոյա, որ քե-  
զի ըրածէս աւելի մեծագին ընծայ մ'ը-  
րած չունիմ » : — Ու պզտիկ ճիւղը բան-  
տապանին ձեռքը տալով՝

« Բարի Լուդուիկա, ըսաւ, իմ կող-  
մանէս ասիկա ծերունի ընկերակցիս

աղջկանը նուիրէ . ըսէ թէ շնորհակալ եմ՝ վրաս ունեցած գորովոյն . և թէ Շառնէի բանտեալ ու աղքատ կոմսը ասկէ աւելի արժանաւոր բան չունի իւրեն ընծայելու » :

Լուդուիկ ապշած առաւ ծաղիկը :

Վերջը վերջը կատարելապէս հաղորդակից եղաւ այն սիրոյն՝ զոր կը զգար կոմսը բուսակին վրայ, բայց հազիւ կրնար ըմբռնել թէ անանկ թեթեւ ծառայութիւն մը այսչափ մեծ աժէքի արժանի սեպուի Շառնէի աչքին առջև, և ասանկ վեհ առատաձեռնութեան մը նշանով վարձատրուի :

— Յայտնի է, ըսաւ ելլելու ժամանակ, սանս դեռ միայն հեռուանց տեսան, փորձով կ'իմանան թէ ինչպէս ազնուաշուք ու անուշահոտ է :

## ԺԴ

Իսկ գալով Շառնէի՝ պէտք էր որ քիչ ատենէն շատ մ'ուրիշ այս տեսակ զահեր ընէր, վասն զի Բի'չիոյսյի պըտղաբերութեան ժամանակն հասնելու

մօտ էր : Արդէն ծաղիկներէն ոմանք իրենց փայլուն բլթակները կորսնցուցեր էին . առէջքն ալ անպէտ ըլլալով ինկեր էին՝ ինչպէս ատեն մը կճեպները , երբ առաջին տերևներն ուժովնալով՝ ալ անոնց օգնութեանը կարօտութիւն չունէին : Իսկ հիմա ձուանօթը (ovaire) հատերուն սերմը պարունակելով՝ կը սկսի լայն բաժակին տակն ուռիլ . մայր ծաղիկները փայլերնին կը կորսնցնեն , այն կանանց պէս որ երբ մայրութեան սրբանուէր խնամքը վրանին կ'առնուն՝ ընդունայն զարդերը կ'արհամարհեն :

Շաունէ նոր դիտողութեանց պատրաստեցաւ . անշուշտ ամենէն բարձրագոյններուն և վսեմներուն . վասն զի էակաց ցեղերուն տևողութեանը , անոնց ստեղծագործութեանը վրայ էր՝ որոնց որոշողական գործը բեղնաւորութիւնն է : Արդէն միջատի մը խածուածքէն կտրուած ու ցօղունէն բաժնուած ծիլ մը հետազօտելով՝ տեսաւ նախնական սերմը , այն տկար սաղմը որ ծաղկանց սիրովը ծնած չէ , բայց ապրելու ու փրթթելու համար այնմ պէտք ունի : Զարմանալի նախատեսութիւն , հիանալի

բաղկացութիւն բնութեան՝ զոր ուսմունք դեռ չեն կրցած բացատրել: Հիմա կատարեալ էակին մանկածնութիւնը կ'ըլլայ. այն հատին՝ որուն նեղ ծրարն ամբողջ տունկը մէջը կը բովանդակէ. երևոյթ մը՝ որուն այլք պարզ պատրաստութիւն մ'եղան: Հասաւ ժամանակը դիտողին համար որ բուսական ձուոյն ամեն ատենուան յղութիւնը դիտէ բողբոջին մէջ, փայլուն ու զարդարուն ծաղկին մէջ ու բլթակներովը պրսակազարդ բաժակին տակ: Պէտք է որ նորէն կտրատէ զԲի'չիոյա, բայց պիտի չկարենայ արդեօք դիւրաւ ըրած կորուստը լեցընել: Ամէն կողմանէ ցողունին ազոյցներուն վրայ, տերևոց անութներուն տակ նոր ճիւղեր կը ծլին, ապագայ ծաղիկներ կը յուսացուին. ետքը Շառնէ պիտի խնամէ զանոնք:

Վաղը ուրեմն գործողութեան ձեռք պիտի զարնէ:

Երկրորդ օրը կ'երթայ բազմոցին վրայ կը նստի անանկ լուրջ մարդու մը պէս որ դժուարին փորձ մ'ունի ընելիք և կը յուսայ որ յաջողցընէ: Բուսակին վրայ առջի աչք տալուն կը զարմանայ

ընդհանուր թարշամութիւն տեսնելով վրան : Ծաղիկներն իրենց կոթերուն վրայ կախուած՝ գոզցես ալ արևուն դառնալու ոյժ չունին . տերևները կիսով թափուած՝ իրենց վառ կանանչութիւնը կորսնցուցեր են :

Շառնէ նախ կը կարծէ թէ սաստիկ փոթորիկ մը կը պատրաստուի , մէկէն թափով մը հիւսուածքը կարգի կը դնէ՝ քամիին ու կարկուտին սաստիկ հարուածներէն զբի՛ւջիոյա պաշտպանելու համար : Սակայն երկինքն անամպ է , օդն հանդարտ ու աներևոյթ արտուտը միջոցի մէջ կորսուած կ'երգէ :

Ճակատը կը մթազնի , պահ մը ինքզինքն ամփոփելէն վերջը՝ — Ջրոյ կարօտութիւն ունի , կ'ըսէ մտքէն , կը վազէ խցէն ջուր կը բերէ , տնկոյն առջևը ծունր կը դնէ և ստորին ճիւղերը կը բանայ որպէս զի լաւ մը կարենայ ոռոգել , ու հոն յանկարծ անանկ անշարժ կը մնայ : Աչքը նոյն կէտին վրայ գետինը կը տընկուի , ջրոյ անօթը ձեռքին մէջ կախուած կը մնայ , և ապշութեան ամեն նշաններն երեսին վրայ կը նկարուին : Չարեաց պատճառը կը գտնայ :



Բի'լլիոյա մեռնելու մօտ է :

Մէկ կողմանէ իրեն առջև ծաղիկներն և անուշահոտութիւնը շատցուցած ժամանակը հաճոյիցն և ուսմանն համար, միւս կողմանէ նաև արմատն ալ դուրս կ'ելլէր, որն որ երկու յատակի քարերու մէջ սղմուած, կրկին ճնշման տակ խղղուած՝ նախ լայն ուռեցք մ'ունեցեր էր, բայց շփմամբ մէկէն պատուտեցաւ խճաքարերուն անկեանց մէջ, և բուսակին սննդարար հիւթերը միանգամայն շատ ճեղքուածքներէ կորսուեր էին :

Բի'լլիոյայի հողը պակսեր էր. ու ժախթափ և անսնունդ մնացած պիտի մեռնէր եթէ շուտով օգնութեան չհասնուէր : Յնորից մէջ Բի'լլիոյա չէր նախատեսել տուած Շառնէի թէ վտանգ կայ, ու ինքը չէր հասկըցած : Պիտի մեռնէր. Շառնէ կը տեսնէր. մէկ միջոց մը միայն կար զինքն ապրեցնելու. ծանրութիւն եզոզ քարերը վերցնել :

Դէպ 'ի մուտքի պզտի դուռը կը վազէ, ու կրկին կրկին կը սկսի զարնել, լուղուիկի անունը պոռալով, որ վերջապէս կ'երևնայ : Լսածն ու դժբաղդ

տեսարանը զինքը կը շփոթեն . բայց  
թէպէտ և իր սանը ու Շառնէի աղա-  
չանքը՝ որ կ'երգուընցնէր խճերը վերցը-  
նելու՝ կը խանդաղատեցնէին զինքը ,  
պաղատախառն զայրացմանց փոխան՝  
լիարերան հառաչանք ուսը շարժելով  
սոսկ ,

— Իսկ պահպանութեան օրէնքս ,  
կ'ըսէ , պարոն կոմս :

Այս անգամուս բանտարգետալը ոչ  
միայն պծինք մը կու տայ մեծագին արկ-  
ղէն , այլ ամբողջ արկղիկը մէջի ամեն  
ունեցածներովը : Լուդուիկ շիտակ կը  
կայնի , թւերն ուժով կուրծքին վրայ  
կը սղմէ ու բանտապանի քալուածքով ,  
կէս բիէմոնդեցի կէս բրովանսալ ոլո-  
րակով ,

— Գանձ ալ տալու ըլլաս . . . հին զի-  
նուորական մ'եմ , գիտեմ իմ պարտքս .  
հրամանատարին դիմէ :

— Չէ , կը պոռայ Շառնէ . աւելի  
յանձն կ'առնում , ըղունգներս ալ իյ-  
նան , որ ես անձամբ վերցնեմ այս քա-  
րերն ու հողէն մէկդի ընեմ :

— Դա , դա , դա , ըղունգներդ թող  
քարերուն պէս իրենց սեղը կենան : —

Ու Լուդուիկ որ վայրագաւիթը մտնելու ժամանակ մտադիր եղեր էր ծխանոցը բխամատովը կէս մը մարելու, և բանտարգելոյն մօտեցած ատենը հեռու կը բռնէր, յանկարծ զայն նորէն բերանը տարաւ, ու ժով մը շնչելով արծարծեց, և իսկոյն հեռանալու պատրաստուեցաւ. Շառնէ արգելեց:

— Իմ աչնիւ Լուդուիկս, ես զքեզ միշտ արգահատող գտայ. ուրեմն բան մը չես կրնար ընել ինձի . . . Իրեն համար:

— Դրոնտեւտիոռ, պատասխանեց աւսիկս, ջանալով երդմամբ այլայլութիւնը բռնել. զիս հանդարտ թողէք դու ու քու անիծեալ շահպուրակդ . . . Խեղձին համար ըսածիս թողութիւն կը խընդրեմ. քու դիւական յամառութեանդ պատճառ ինքը չէ: Ի՞նչ, կրնայ սիրտդ դիմանալ թողլու զինքը որ առանց օգնութեան մեռնի:

— Ի՞նչ ընեմ:

— Հրամանատարին դիմէ ըսի:

— Ոչ երբեք:

— Նայինք, թէ որ քեզի համար ծանր է այս բանս, կ'ուզես ես խօսիմ հետը:

— Կ'արգելում որ չխօսիս, պոռաց Շառնէ:

— Ի՞նչպէս . ինծի արգելք կը դնես : Միթէ ես քեզմէ հրաման պիտի ընդունիմ , եթէ ուզենամ խօսիլ : Բայց չէ , չեմ խօսիր . վերջը վերջը , իրաւունք ունիս , ասիկա ինծի չիյնար . մեռեր է , ապրեր է՝ իմ ի՞նչ փոյլթա , ի՞նչ հոգս . չես ուզեր , անանկ չէ . բարի իրիկուն :

— Բայց քու հրամանատարդ կրնայ իմ միտքս հասկընալ . կրնամ յուսալ որ հասկընայ , հարցուց կոմսն՝ յանկարծ մեղմանալով :

— Ինչո՞ւ չէ . ի՞նչ . քէնզերդիքի տեղ դրեր ես զի՛նքը : Ազնուութեամբ աղէկ դարձուածքներով բացատրէ ուզածդ . . . ոչ շատ երկայն : Դու գիտուն ես , ահաւասիկ զայն հաւաստելու վայրկեանը : Ինչո՞ւ պիտի չհասկընայ բոյսդ սիրելուդ պատճառը . ես աղէկ հասկըցեր եմ . մէյմ'ալ որ ես հոն կ'ըլլամ , սիրտդ ամուր բռնէ , կ'ըսեմ թէ ի՞նչպէս աղէկ ըմպելիք կ'ըլլայ ու ամէն ախտից դարման է : . . . Ի բնէ շատ առողջ մը չէ . . . և մասնաւորապէս հիմա յօդացաւ ունի . . . յարմար ատենն է . . . աւելի լաւ կը հասկընայ : . . .

Շառնէ դեռ կը տարտամէր . Լու-

դուիկ աչք ըրաւ և ցուցուց զԲի'լլիոյա  
ախտակիր վիճակին մէջ : Կոմսը ձե մ'ը-  
րաւ ու Լուդուիկ դուրս ելաւ :

Քանի մը վայրկենէն կէս զինուորա-  
կան՝ կէս քաղաքական տարագով մարգ  
մը բանտելոյն ամբողջ գրարան մը ու  
թերթ մը թուղթ բերաւ, որուն վրայ  
հրամանատարին դրոշմը կար : Լուդուի-  
կի ըսածին համեմատ Շառնէ խնդիրքը  
գրելուն ժամանակ մարդը հոն կեցաւ  
սպասեց . երբոր կնքեց լմնցուց, առաւ,  
բարև տուաւ ու գրարանն հետը դուրս  
ելաւ :

Թերևս արհամարհանօք մը խնտաս  
տեսնելով որ ազնուական կոմսին ամ-  
բարտաւանութիւնն ասանկ դիւրաւ նը-  
ւաստացաւ, և այն վեհ կամքը թողմած  
ժողկի մ'առջև խոնարհեցաւ : Բայց  
մոռցար արդեօք որ Բի'լլիոյա բանտար-  
գելոյն ամենայն ինչն է . չմտ գիտեր  
ուրեմն թէ ինչ կարողութիւն ունի  
միայնութիւնն ու բանտարգելութիւնը  
պնդագլուխ և պարծենկոտ մտքերու  
վրայ : Ո՛հ, այն տկարութիւնն որուն հա-  
մար կը յանդիմանես զինքը երեցոնց  
արդեօք՝ երբ կրելէն նեղուած՝ ոչ ա-

զատութիւն ունէր և ոչ օդ, ու բանտին քարերուն մէջ ճնշուած էր, ինչպէս բուսակն երկու կողմաքարերու մէջ : Չէ. բայց այս երկուքին մէջ իրարու նկատմամբ փոփոխակի պարտաւորութեան սրբազան պարտք մը մտաւ : Անիկա զինքը մահուընէ ազատեց, պէտք է որ ինքն ալ փոխադարձ զայն ազատէ :

Ծերունին ժիրարտի տեսաւ որ Շառնէ գաւթին երկայնութեամբն ու լայնութեամբը կը քալէր, և վրան սպասելու և անհամբերութեան նշաններ կը դիտէր : Իրեն կ'երևար թէ գալիք պատասխանը կ'ուշանայ. իրեք ժամ անցեր էր խնդիրքը հրամանատարին խաւրելէն վերջը, և այն իրեք ժամուան մէջ բոյսը հոյզը կորսնցնելով նուազելու վերայ էր. անշուշտ Շառնէ աւելի անխուով կրնար դիտել իր արեանը հոսիլը :

Ծերունին մէկ քանի մխիթարական խօսքեր ջանաց ըսել և յուսացուց զինքը, ու աւելի փորձ ըլլալով տնկագիտութեան և տնկոց հիւանդութիւնը ճանչնալու, Բի'լլիոյայի վէրքերը փակելու կերպ մը սորվեցուց, գոնեա մէկ վտանգէ մը ուսկից վախ կար՝ պահպանելու համար զինքը :

Շառնէ անոր խորհրդոյն համեմատ  
յարդի կտորուանք առաւ, բարակ բա-  
րակ մանրեց ու թաց հողով ու մա-  
մուռով խառնեց զանգուած մը ձևա-  
ցուց ու վէրքին վրայ դրաւ :

Ասանկ զբաղմունքով ժամ մ'ալ ան-  
ցաւ՝ բայց պատասխանը չեկաւ : Երբոր  
ցորեկուան կերակրոյ ժամանակն հա-  
սաւ՝ լուղուիկ գաւիթը մտաւ . խիստ  
ու բազմահոգ կերպը անյաջող բան կը  
նշանակէր . հազիւ թէ Շառնէի հարց-  
մունքներուն քանի մը կտրատ ու կցկը-  
տուր պատասխաններ տուաւ : — Սպա-  
սէ, տէր ողորմեա . — շատ կը փութաս .  
— ժամանակ թող որ գրէ :

Կարծես թէ կը նախատեսէր ինչ որ  
պիտի ստիպուէր ընելու, և կանխաւ  
զկոմսը պատրաստ կը բռնէր առ այն :

Շառնէ չճաշեց . ջանաց համբերու-  
թեամբ Բի'չչիոյայի մահուան կամ ա-  
զատութեան դատավճռոյն սպասելու,  
և քաջալերուելու համար ինքզինքը բռ-  
նադատեց համոզուելու որ հրամանա-  
տարն առանց անգութ մարդ ըլլալու  
չէր կրնար ասանկ չնչին խնդրուածք մը  
ժխտել : Սակայն քանի կ'ուշանար՝ ան-

համբերութիւնն ալ հետզհետէ կը զայրանար, և կը վարամանար իրրե թէ հրամանատարն անկէ աւելի շտապողական գործ մը չունենար: Թեթև ձայն մ'առնելուն՝ աչքը մէկէն գաւթին դրանը կը դառնար, և միշտ կը կարծէր թէ լուրը գալու հետ է:

Իրիկուն եղաւ. բան չկայ. գիշեր եղաւ. . . եկող գացող չկայ, աչքերը չգոցուեցան:

## ԺԵ

Երկրորդ առտու կանուխ անհամբերաբար սպասած պատասխանը վերջապէս եկաւ: Հրամանատարը չոր ու լակոնական ոճով մը կ'ըսէր թէ ամենեին փոփոխութիւն չկրնար ըլլըւիլ որմոց, խրամոց և դղեկին ամրութեանցը վրայ՝ առանց Թուրինի քաղաքապետէն մասնաւոր հրաման առնելու. և թէ Շառնէի խնդրուածոցն համար անոր կը դիմէր. վասն զի՝ կը յաւելուր՝ քսևտի մը գաւթին յարակն աչ ևոյնպէս որով է:

Շառնէ երբ այս լուրը կարդաց՝ չփո-



Թեցաւ : Ծաղկի մը կեանքը տէրու-  
թեան խնդիր ընել . ամբողթեան տե-  
ղափոխութիւն . թուրինի քաղաքապե-  
տին որոշմանն սպասել . դար մը սպա-  
սել՝ երբ մէկ օրուան մէջ կրնայ մեռ-  
նիլ : Այս քաղաքապետն ալ խնդիրը  
նոյնպէս պաշտօնէին պիտի չյանձնէ  
արդեօք , պաշտօնեայն ալ կայսեր ,  
կայսրն ալ ծերակուտին : . . . Ո՛հ , ինչ-  
պէս դարձեալ մարդատեցութիւնը սրը-  
տին մէջ արթնցաւ . լուրուիկ ինքնին  
գահճին գործակատարն երևցաւ աչ-  
քին : Յուսահատ ձայնին մէկը պաշտօ-  
նական լեզուով կը պատասխանէ . միւ-  
սը՝ պաղատանացը զինուորական պարտ-  
քը դէմ կը դնէ :

Հիւանդ տնկոյն քով մօտեցաւ , ու  
րուն շքեղութիւնը կ'անցնէր , որուն  
գոյները կը մարէին . տրտմութեամբ  
դիտեց . երջանկութիւնն ու բանաստեղ-  
ծութիւնն էին որ կը փախչէին : Անու-  
շահոտութիւնքը միայն սխալ ժամ մը  
կը ծանուցանէին , խանգարեալ ժամա-  
ցուցի պէս՝ որուն գործիքները չեն բա-  
նիր . իւրաքանչիւր բաժակ ինքիր վրայ  
կծկած արևուն դառնալէ դադրեր էր ,

մահացու օրիորդի մը նման որ աչքերը կը գոցէ վախէն՝ չըլլայ թէ զսիրելին սաստիկ վշտացնէ :

Այս ցաւագին խորհրդածութեանց ժամանակ բանտարգելութեան ծեր ընկերակցին ձայնը լսեց :

— Սիրելի պարոն — կ'ըսէր բարի ծերունին հայրական կերպովը, ձայնը մեղմացնելով ու ճակատն ինչուան վերջին վանդակները ծռելով, ըստ կարելուոյն աւելի մօտէն խօսելու համար — եթէ չորնայ . . . և վախեմ որ պիտի չորնայ, հոս միայն՝ բոլորովին միայն ինչ պիտի ընես . ինչ զբաղմունք կրնայ գրեզ սթափել երբ ինքը չըլլայ որ այնչափ կը զուարճացնէր գրեզ : Դարձեալ ձանձրութեամբ պիտի տանջուիս, ընդհատեալ առանձնութիւնը շատ անտանելի է . պիտի չկարենաս դէմ դնել . զոր օրինակ հիմա ես ալ եթէ աղջկանէս զրկուէի, այն պահապան հրեշտակէն որուն ժմիտը զիս ըստ ամենայնի կը մխիթարէ : Իսկ բուսակիդ գալով՝ անշուշտ Ալպեան քամին սերմը բերեր էր, կամ թէ թերեւ թռչուն մը այս գաւթին մէջ թողուցեր է թռչելու

Ժամանակ . հիմա նոյնպիսի դէպք մը կրնայ ուրիշ Բի'չխոյրս մ'ալ տալ քեզի առջինին ցաւը նորոգելու համար , վասն զի կանխաւ պէտք ես գիտնալ որ ան ալ պիտի մեռնի : Հաւտա ինծի , սիրելի , թող որ բարեկամներս գործեն , վերջապէս զիջիր . կարծածէդ աւելի թերեւ ազատիլդ դիւրին է : . . . .  
Շատ բաներ կը պատմեն նոր կայսեր զթուլթեանն ու վեհանճնութեանը վըրայ . հիմա թուրին է Յովսէփինէի հետ մէկտեղ :

Յովսէփինէի անունն անանկ մը հընչեց իբրև թէ ստոյգ յաջողութիւնն անկէ կախուած էր :

— Թուրին , հարցուց Շառնէ ուժով մը գլուխը վեր առնելով , որ ինչուան անատեն կուրծքին վրայ ծռեր էր :

— Երկու օր է որ թուրին է , կրկնեց ծերը սաստիկ ուրախութեամբ , տեսնելով որ այս անգամ կոմսը սկսաւ իր բարի խրատներուն տարտամութեամբ ուշագրութիւն ընել :

— Ո՛րչափ է Ֆէնէսդրէլլոյէն թուրինի հեռաւորութիւնը :

— Ճիւղինոյէն Աւիլեանոյէն ու մեծ ճամբէն երթալով 16 փարսախ է :

— Ո՞րչափ ատենի մէջ կրնայ երթը-  
ցուիլ :

— Գոնէ տասը՝ տասուերկու ժամ  
պէտք է . վասն զի հիմա ճամբան զօ-  
րաց դնդերով կազմածներով ու շրջա-  
կաներէն հանդէսը տեսնելու համար  
վազող կառքերով խռնուած ըլլալու  
է : . . . Հովիտներէն ու գետոյն քովէն  
տանող ճամբան անշուշտ ամենէն եր-  
կայնն է . բայց աւելի քիչ ժամանակի  
մէջ կ'երթըցուի կարծեմ :

— Ըսէ ինծի , պարոն . արտաքին հա-  
ղորդակցութեամբդ կրնամ մէկը գտնել  
որ այսօր թուրին երթայ . . . այս առ-  
տուընէ :

— Աղջիկս կը յարմարցնէ :

— Եւ կ'ըսես թէ Պոնաբարդ զօրա-  
վարը . . . առաջին . . . հիւպատոսը . . . :

— Կայսրը , մեղմով մը յաւել ժիրար-  
տի :

— Այո կայսրը , կայսրը իրաւցնէ դեռ  
թուրին է , — կրկնեց Շառնէ՝ մեծ որո-  
շողութեամբ գլուխը լեցուած . — աղէկ  
ուրեմն , կը գրեմ , աղերսագիր մը կ'ուղ-  
ղեմ . . . կայսեր :

Այս վերջին բառը ծանր ու ծամծը-

մելով արտաբերեց, գողցես նոր բռն-  
նած ճամբուն մէջ հաստատուն կենա-  
լու համար :

— Ո՛հ , օրհնեալ ըլլայ Աստուած ,  
գոչեց ծերունին , ինքն է պատճառ այս  
բարի մտածութեանդ , յորում մարդկայ-  
ին ամբարտաւանութիւնն ուղքի տակ  
գնաց : . . . Այո գրէ , իրեն դիմէ որ  
խնդրուածոցդ շնորհք ընէ . ֆոստմպրո-  
նի , ֆողէննա ու Տըլարիւ իմբարեկամ-  
ներս քեզի՝ ինչպէս նաև ինձի ալ միջ-  
նորդ կ'ըլլան Մարեպալքի պաշտօնէին ,  
Քարրարա ու Մէլցի կարդինալներուն՝  
որոնցմէ վերջինը նոր թագաւորութեան  
կնքապահ անուանեցաւ : Սիրելի ընկե-  
րակիցս , թերևս մէկտեղ ու մի և նոյն  
օրը այս բանտէն ազատինք . դու՝ գոր-  
ծունեայ ու զօրաւոր կեանք մը սկսե-  
լու համար , ես՝ աղջկանս հետևելու ուր  
որ ուզենայ երթալ :

— Թողութիւն ըրէ , պարոն , թողու-  
թիւն՝ թէ որ դեռ բոլորովին հաւանած  
չեմ երևար այն պաշտպանութեանցն  
որ ասանկ բարեսրտութեամբ ու անշա-  
հասիրութեամբ ինձի կ'ընես . յար-  
գանքս ու երախտագիտութիւնս գրա-

ւեցիր : Բայց նոյն իսկ կայսեր պէտք է  
ելլէ իմ խնդիրքս այս իրիկուն, կամ  
ուշ ուշ՝ վաղը առաւօտ . կրնաս հաւա-  
տարիմ սուրհանդակ մը ճարել :

— Այո, ինչպէս ինձի համար, պա-  
տասխանեց ծերունին, քիչ մը մտածե-  
լէն վերջը :

— Մէկ հարցմունք մ' ալ, յաւել  
Շառնէ . չե՞ս վախեր ինձի ըրած մասնա-  
ւոր ծառայութեանդ պատասխանա-  
տուութենէն :

— Բարիք ընելու հաճութիւնն ամեն  
վախ փարատել կու տայ : Ի՛նչ կ'ուզէ  
ըլլայ՝ երանի թէ քիչ մը քու թշուա-  
ռութիւնդ կարենամ սփոփել : Գիտեմ  
երկնից կամաց հնազանդիլ :

Շառնէ մինչև 'ի խորս սրտին զգա-  
ցուեցաւ այս պարզ բառերէն . խան-  
դակաթ աչօք զծերունին դիտեց :

— Ի՛նչպէս կ'ուզեմ ձեռքդ սխմել,  
ըսաւ, և ուժով մը ձեռքը դէպ 'ի պըզ-  
տիկ պատուհանը երկնցուց . Ֆիրարտի  
ալ իրենը վանդակներէն դուրս հանեց,  
բայց ընդունայն եղաւ . չկրցան իրարու  
հասցընել : Ան ատեն ծերունին գորո-  
վագութ մորմոքմամբ ներշնչեալ՝ որ ար-

գելլականի մը հոգւոյն մէջ շատ վառ է , շուտ մը վզնոցը քակեց , մէկ ծայրէն բռնեց ու միւսը Շառնէի նետեց , որ եւ ռանդեամբ բռնեց ու երկու ծայրերը ձեռքերնին կրկին կրկին այն անզգայ կտաւը սրտալիր զգացմամբ շարժեցին :

Շառնէ Բի'լլիոյայի քովէն անցնելու ժամանակ — Զքեզ պիտի ազատեմ , ըսաւ : — Սենեակը քաշուեցաւ , թաշկինակներուն ամենէն ճերմակն ու նուրբը առաւ , խնամքով ակռախառնիչը կտրեց , թանաքը շտկեց նորոգեց ու փութով գրել սկսաւ : Երբ աղերսագիրը լմնցուց , որ իրեն յուզեալ ամբարտաւանութիւնը սաստիկ նեղեց , վանդակապատ պատուհանէն պզտիկ չուան մ'երկնցաւ գաւթին որմոյն երկայնութեամբը . աղերսարկուն անոր վրայ կապեց աղերսագիրը , ու չուանը վեր ելաւ :

ժամ մը վերջը աղերսագիրն առկայսքը տանող անձը առաջնորդի մը հետ ճամբայ էր ընդ մէջ Սուզայի , Պուստլինոյի և Ս . Գէորդայ հովիտներուն Տորիա-Բիքարիա աջ գետափունքէն երթալով : Երկուքն ալ ձիով էին՝ բայց 'ի գուր կը փութային . անակնկալ ար-

դելքներ ճամբանին արգիլեցին : Նոր եկած անձրևներով գետինը շաղախուտած էր, առուակը շատ տեղեր ոռոգեր էր. հեղեղները կարծես թէ միացուցեր էին Տորիա և Աւիլեանոյ լճերը : Արդէն ճիովենոյի դարբնոցները հեռուն անոնց ետևէն հետզհետէ աւելի կարմիր տեսնուելով կ'իմացնէին թէ գիշերը մօտ է : Լաւ սեպեցին հասարակաց ճամբէն երթալ . անցան նեղութեամբ Րիվոլիի պողոտայէն ու իրիկուրնէ շատ առաջ թուրին հասան :

Հոն իմացան որ կայսրը Ալեքսանդրիա գացեր էր :





**Գ Ի Ր Ք Ե Ր Կ Ր Ո Ր Դ**



# Բ Ի Չ Չ Ի Ո Ւ Ա .

---

Գ Ի Բ Բ Ե Բ Կ Բ Ո Բ Դ

---

Ա .

Երկրորդ օրը առաւօտանց կանուխ Ալեքսանդրիա քաղաքը տօնական զարդերու մէջ էր . մէկէն անհուն բազմութիւն լեցուած էր՝ տերևներով լեցուն ու պճնազարդ դրօշներով ծածկեալ փողոցներուն մէջ . բազմութիւնն՝ այն հասարակ տնէն ուր էին Նարոյէոն ու Յովսէփինէ՝ դէպ 'ի արուարձանին ծայրը կանգնուած յաղթական կամարը կ'երթար, ուսկից պիտի անցնէին Մարէնկոյի անսւանի դաշտերն երթալու տեսներու համար :

Ալեքսանդրիայէն Մարէնկոյ տանող ճամբուն վրայ նոյնպէս էր ժողովրդեան

խառնիճաղանճը, աղաղակն ու փողերու ձայնը :

Ոչ երբեք Լորեսոյի Ս. Աստուածածնայ պանդխտութեանը կամ Հռովմայ յորելեան հանդիսի մը համար այնչափ ամբոխ մարդկանց խոնուած էին՝ որչափ որ այս պատերազմական ծխաշունչ դաշտը դիտելու համար ամեն կողմանէ կը թափէին : Վասն զի գլխաւոր հանդէսն հոն էր . Նաբոլէոն կայսրը կեղծեալ պատերազմի մը ներկայ պիտի գտնուէր՝ ի յիշատակ հինգ տարի առաջ հոն ըրած յաղթութեանը, քանի որ դեռ առաջին հիւպատոս էր : Ճամբուն երկայնութեամբը սեղաններ, ստոլներ դրուած են . ուտել խմել ու բաց օդուն մէջ կատակերգութիւն ձևացրնել, և ինչուան քարոզ տալ՝ առհասարակ է . յանկարծ ընդ մէջ թէատրոնին ու գինետան այլ և այլ ամպիոններ կը տեսնուին : Կրօնաւորներ ամբոխին մէջ խառնուելով, կամ մէկդի ճամբուն եզերքը քաշուելով և գոհ չըլլալով սոսկ օրհնել անցորդները՝ կը յորդորեն որ հանդարտին ու ժուժկալութիւն ունենան, և փղոսկրէ պզտիկ

Աստուածածնի պատկերներն ու օրհնած վարդարաններ կը ծախեն իրենց :

Մարէնկոյ գեղին միակ ձիգ ճամբուն վրայ ամէն տուն պանդոկի փոխուեր է ու բազմամբոխ շարժման ու շփոթութեան մէջ կ'երևան : Ամէն պատուհաններէ գնողներուն փորձութիւնն ու ախորժը շարժելու համար ծխեփեաց խոզնի ապուխտներ, երշիկներ, շամփուրով խորոված մսոտ կարմրակաքաւներ, լորամարգիներ ու շատ մ'ալ ձուազեղներ ու շաքարեղէններ : Խտաւացիք, Գաղղիացիք, զինուորական, քաղաքացի կը մտնեն կ'ելլեն, մէկզմէկ կը հրեն . դդմածներու քաքարներու բոկեղներու ու պլակունտերու կոյտեր ծախողներու ձեռքին մէջ կը սպառին :

Նեղ ու մութ սանդուղներու վրայ ելողներն ու իջնողներն երկու գիծ ձևացած զիրար կը հրեն կը հրմշտրկեն . ու մանք պարէննին ձեռքերնին՝ որպէս զի մօտականներնուն յափշտակել չտան՝ թևերնին գլխերնէն վեր կը բարձրացընեն, ու մթուն մէջ աւելի երկայն ու ճարտար ձեռք մը կը կորզէ համադամ խորտիկը, հոգելից կսկուծ մ'եղեր է,

կամ թուզ նարինջ ապուխա խատու-  
տիկ լորամարզի, կամ կեղևոտ բլիթ .  
կամ պտուկի մէջ կարմրցուցած գե-  
րազանց մսի կտոր մը, պտուկն ալ մէ-  
ջինն ալ մէկտեղ յափշտակելով: Առջի  
քայլէն ինչուան վերջինը խեղկատակու-  
թիւնք, կանչուրուտիւն ու երկայն բա-  
րակ քրքիջներ կը լսուին . ներս մտնող  
գողն առած մասին վրայ գոհ ետ կը դառ-  
նայ . իսկ վար իջնողն ու գողցընել աք-  
ւոզը կը ստիպուի կերակրոյ համար նա-  
րէն ներս մտնելու . ու խուան ստիպը  
յանկարծական մակընթացութեամբ ու  
տեղատուութեամբ խախտուելով ու շրթ-  
լաններ ընելու բռնադատուելով, զուար-  
թութեամբ երդմունքներ ընելով, օգոյն  
մէջ բռնցի հարուածներ տարով մաս մը  
փողոց կը թափի, մաս մ'ալ դահլիճ-  
ներուն մէջ՝ ուր ծխողները կրօնաւո-  
րաց բարի խրատները մոռցած՝ գլուխ  
ճաթեցնելու ազադակաւ կ'երգեն:

Խորտկալից սեղաններու և կոշնա-  
կաններով լեցուն բաղմոցներու հետ  
խուցէ խուց սպասաստը կանայք և ման-  
րիկ ազախիներ կը շտտնային . ոմանք  
գունաստը զենջակներով, մազերնին փո-

շելից, ու պզտիկ դանակ մը ձեռքերնին , որ հիմա ալ նոյնպէս իրենց գլխաւոր զարգն է . տմանք ալ կարճ ներքնամեկնոցով, մազերնին հիւսած , բոկոտն ու վզերնին ճակատնին ականջնին ոսկեզօծ ակունքներով զարգարած :

Ճամբուն գեղին տան փողոցի այս աշխոյժ տեսարաններուն , այս խուլ շէնկոցներուն երգերուն գոռում գոչումին խնտալներուն և խօսակցութեանց՝ գաւաթներու պնակներու ձայներուն ուրիշ աղաղակներ պիտի յաջորդեն քիչ ատենէն :

Ժամէ մը թնդանօթն այս գեղին վրայ պիտի որոտայ , յայտնի է թէ գրեթէ անվնաս կերպով , միայն ապակիները ջաղճախելով . ճամբան ալ պատեւրազմի եռանդեամբ բորբոքած զօրաց ձայներովը պիտի հնչէ , ու տներն ամենն ալ անգնտակ հրացանաց ծխոյն ներքև պիտի աներևութանան :

Վայ ան ատեն եթէ պարէններն աղէկ պաշտպանուած չըլլան . վայ նաև բոկոտն մանրիկ աղախնոյն , վասն զի ձևացեալ պատերազմք երբեմն բուն պատերազմի զեղծմունքն ունի :



Մասնաւորապէս կը ջանան որ տե-  
սարանները նման ըլլան . Մարէնկոյի  
դաշտին մէջ պատրաստուածը շատ  
պերճ ու վառվռուն էր :

Արդէն չքեղ գահոյք մը բարձրա-  
ցած էր այն չքնաղ բլուրներէն մէկուն  
վրայ՝ որովք երկիրը գմբեթարդ է, ու ե-  
ռագոյն գրօշակներ չորս բոլորը կը ծա-  
ծանին . արդէն ամեն տեսակ զինուո-  
րութեանց և նշանազգեստի գնդերն  
սկսեր՝ էին լեցուիլ իրենց տեղերը բըռ-  
նելու . փողն հնչեց, ձիաւորներն ալ ե-  
կան . թմբուկն ամբողջ գետինը կը  
թնդացնէր, իսկ ձիերն ու թնդանօթա-  
ձիգ կառքերը գողցես կը դղրդէին ու  
կը խանդարէին զայն : Աջակից սալար-  
ներն իրենց փողփողեալ տարազովը  
կ'անցնին ու կը դառնան , հազար ու  
մէկ ուղղութեամբ կը բաժնուին . գրօ-  
շակներն օդուն մէջ կը ծաւալին կը  
ճօճին , և միանգամայն նոյն ատեն գարգ-  
մանակներու , ցցուններու , երփն երփն  
ու եռագոյն փետուրներու շարժուն ծո-  
վը կոհակաձև կը տատանէր : Իսկ ա-  
րևը՝ Նարոյէոնի հանդէսներուն մեծ  
հրաւիրակը , կայսերական չքեղութեան

այն լուսալիւր փայլը, կրակի պէս կը շողշողացընէր ոսկեղէն երիզները, թըն դանօթոց պղինձները, գլխարկները, լանջապաններն և վաթսուն հազար սուխներն, որոնցմով խողանացեալ էր դաշտը :

Հետաքրքրաց բազմութիւնը տեսնելով որ զինուորները սկսան փութով իրենց շարժմունքները, մէկէն ետ ետ քաշուելով՝ նահանջի անբաւ բոլորակ մը կը ձևացնեն, նման Ռվկիանու ալեաց որոնց վրայ յանկարծ սոսկալի կոհակ մը կու գայ կը ճնշէ : Քանի մը ձիաւորներ ալ դէպ 'ի յետամնաց ամբոխը վազելով շուտ մը զմիջոցը կը սրբէին :

Գեղն ամայացաւ, զուարթ վրանները ծալլուեցան, սեղանները վերցուեցան, երգերն ու աղաղակները լուցին. մարդիկ կերակուրնին կամ խաղերնին կէս թողուցած, կանայք ալ ձիոց խրխնջիւնէն ու սուրերու շողիւնէն սարսափած՝ տղաքնին ետևնէն բերելով՝ դաշտին ամեն կողմանէ կը վազէին :

Եթէ մէկը դեռ չտարտղնած ու իւրաքանչիւր դրօշներու տակ եղած ժա.

մանակ ամբողջ բանակին շարքին վրայ աչք մը տար, զօրաց կեցուածքէն՝ վայրագ բնաւորութենէն կամ երեսնուն վրայ եղած լռին տխրութենէն գիւրաւ կրնար հասկընալ թէ անոնք են որ լան մարաջախտն իր հրամաններովը կանխաւ իբրև յաղթեալ կամ ապագայ յաղթող որոշած էր: Ինքն իսկ հոն էր բազմաթիւ սպաներով ու կը ճանչնար այն տեղն ուր քաջութեամբ նահատակեր էր երբեմն և իւրաքանչիւրոց ընելիք մասը բաժներ էր:

Հոն պիտի կրկնուին 1800 տարւոյն յունիսի 14ին եղած ճակատամարտին գլխաւոր շարժմունքը, բայց ջանալով եղած վրիպակները զանց ընել. վասն զի կեղծ ռազմայարգարութիւն մ'է, թնդանօթի հարուածներով յանկարծական բանաստեղծութիւն մը՝ որ նոր կայսեր ու թագաւորին կը պատրաստուէր:

Գնդերը կը կազմուին կը կարգաւորուին և ըստ սալարներուն հրամանաց կը գալարին, Ալեքսանդրիոյ ճամբուն վրայ սրաձայն ներդաշնակութիւններ լսուելուն պէս: Տարտամ մունչիւն մը կը թանձրանայ ու անթիւ բազմութեան

մէջ կը տարածուի , որ Դանարոյի , Պոր-  
միտայի , Որպայի գետափանց կամ Դոր-  
դոնէի լեռանցամէջներուն վրայ պատրու-  
պարուած էին , ու այն ընդարձակ կըր-  
կէսին երերուն ու եռանդուն գօտին կը  
ձևացնէին :

Յանկարծ մարտակռուոյն թմբուկը  
կը հնչէ . ամեն կողմանէ կեցցէներ ու  
պոռալու ձայներ կը բարձրանան ալեձև  
փոշոյն մէջէն . սուրերը լուսով կը փայ-  
լին , հրացանները կը շտկուին , և միա-  
ձոյլ շարժմամբ կը հնչեն և ութը ձիով  
լծուած փառաւոր կառք մը՝ իտալիոյ  
ու Գալղիոյ զէնքերով դրոշմուած՝ ին-  
չուան իրենց գահուն ստորտը կը բերէ  
զՅովսէփինէ և զՆաբոլէօն , որ իտալիոյ  
ամեն երեսփոխանաց և Լուքքայի , Ճե-  
նովայի , Ֆիորէնցայի , Հռովմայ ու Բրու-  
սիոյ դեսպանաց մեծարանքն ընդունե-  
լէն վերջը , հանգիստ կենայլէն նեղուե-  
լով , ձիուն վրայ կը ցատքէ ու մէկէն  
ամբողջ դաշտը կրակով ու ծխով կը  
բորբոքի :

Ասոնք էին առոյգ աշխարհակալին  
խաղերը , պատերազմը պարապուլթեա-  
նը զբօսանքն էր , պատերազմը իրեն

բարձր վախճանին հասնելու համար . այս բանս պէտք էր իրեն պէս կրակոտ սրտի մը՝ որ տիրապետելու համար ծընած էր, և աշխարհակալութեամբ էր միայն որ ինքզինքն անգործ կեցած չէր սեպեր :

Յովսէփինէ միայն մնացեր էր գահուն վրայ և գրեթէ զարհուրած էր այն տեսարանէն . կայսերմէ որոշուած սպայ մը այն մեծամեծ շարժմանց վախճանն ու տեղափոխութեանց գաղտնիքն իրեն կը բացատրէր :

Ցուցըցեր էր Մելաս աւստրիացւոյն Գաղղիացիքը Մարէնկոյ գեղէն վճնտելն ու գլխակոր Բիէդրա Պուոնա և Քասգէլ Չէրիոլոյ փախցընելը, և Պոնաբարդի յանկարծ զյաղթականը կարկամեցնելը 900 հիւպատական թիկնապահներովը : Իսկ հիմա բոլոր ուշադրութիւնը մարտին որոշողական մէկ վայրկենին վրայ ամփոփել կու տայ . հասարակապետականք ետ կը քաշուին, բայց Տըզէ Դորդոնէի ճամբուն վրայ կ'երևայ . Հունգարաց զարհուրելի առաջքն Չաքին հրամանատարութեամբը՝ կուտ վառեալ զէնքերով իրեն դէմ՝ կը վազեն : . . .

Սպան դեռ խօսելու հետ էր երբ Յովսէփինէ թեթև շփոթութիւն մը զգաց իրեն մօտ . պատճառն հարցուց և իմացաւ թէ մատաղ աղջիկ մը անխոհեմութեամբ զօրաց պատնէշներուն մէջէն անցնելով՝ յարձակման ժամանակ ձիաւորներէն կամ կառքէ մը բիւր անգամ ջախջախուելու վտանգաւ, յուզմունք կը պատճառէր յամառութեամբ պնդելով պահապանաց ու նաժշտաց դէմ՝ թէ կայսեր կ'ուզէ երթալ :

Բ

Ժիրարտեայ աղջիկն իմանալով որ կայսրը թուրինէն դէպ 'ի Ալեքսանդրիա ճամբոյ ելեր է — վասն զի ինքն էր որ առաջնորդով մը Շառնէի աղերսագիրը կը բերէր, — սաստիկ մահացաւ ու գրեթէ վհատեցաւ, բայց շուտ մը զգաստացաւ և յիշեց որ այս միջոցին իր ձեռքն էր խեղճ բանտելոյ մը ուրախութիւնն ու միակ յոյսը, որ դեռ չէր գիտեր թէ ո՞վ յանձն առեր էր այն վտանգաւոր աղերսագիրը տանիլ : Ոչ ժամանակ և ոչ աշխատութիւն նայե-

ցաւ, ուշ հասնելու վտանգաւ հանդերձ՝ միաքն ամուր բռնեց, և առաջնորդին իմացուց որ իրենց ընթացքին կէտը թուրին չէր՝ հապա Ալեքսանդրիա :

— Հո՛, հո՛, ըրաւ առաջնորդը ականջը քերելով, ձիերս թէպէտ և կտրիճ են բայց կարօտ են հոնգչելու, ինչպէս նաև ես ալ: Ալեքսանդրիա... թուրինէն հեռու է, գիտե՛ս :

— Ուրեմն ես առաւել շուտով պէտք է ճամբայ ելլենք :

— Ես պատրաստ եմ, խաթուն, ճամբայ ելլելու, պատասխանեց հանդարտութեամբ առաջնորդը, բայց ետև թողլով թուրինն ալ՝ Ալեքսանդրիան ալ. թիվոլի կէս ճամբուն վրայ հօրեղբորորդի մ'ունիմ՝ որ աղջիկը կը կարգէ, յայտնի է թէ ձրի գիս ալ ձիս ալ կը պահէ. ասիկա միշտ շահ մ'է՝ առանց հարսնիքը հաշուելու :

Եւ որովհետև թերեզա դէմ կը գնէր, — Անշուշտ եղիր, ըսաւ, որ վաղը առաւօտ նորէն զքեզ ֆէնէսդրէլոյ կը գարձընեմ, ինչպէս գաշինք դրեր էինք. բանիդ ձեռք կու տայ. չէ՛. բարի ձանաւ պարհ, իւրաքառնիկ :

Որչափ ալ շանաց խօսքով միտքը փոխելու՝ անկարելի եղաւ. անիկայ իր բիէմոնդեցի պնդագլխութեանը մէջ սևեռած կեցաւ: Թերեզա մէյմը ոտքը անձնանուիրութեան ճամբուն վրայ դրած՝ ալ ետև չէր նայեր. որոշեց որ առանձին ճամբան շարունակէ. Տորիս կրոսաւս փողոցին վրայ աւանին պանդոկապետուհին աղաչեց, որուն քով ինջեր էր, որչափ շուտով որ կրնայ իրեն Ալեքսանդրիա երթալուն ճար մը գտնէ: Պանդոկապետուհին մանչերն աւանը խաւրեց, բայց ՚ի վուր վեր վար քալեցին, Սուզայի դռնէն ինչուան Բոյինը, ու Նոր դռնէն ինչուան Պալատինը՝ հասարակաց կառքեր, սայլեր, բեռան համետի թամբի կենդանիներ՝ ճամբայ ելած էին կամ շատոնց վարձուած էին Ալեքսանդրիոյ հանդիսին համար:

Թերեզա վշտացած ձախորդ արգելքներուն համար՝ ցնորից մէջ թարթափած տրտում տխուր աւանին ճամբուն վրայ կեցեր էր, վասն զի գիշեր ըլլալով իրեն ծննդեան աւանին մէջ զինքը ճանչցողները չէին կրնար տես-



նել, մէյմ՝ ալ բոժոժներու ձայնի հետ խառն անիւներու շառաչ մ'է լսուեցաւ. քիչ ատենէն երկու մեծղի ջորիներ կանկ առին իր առջին՝ որոնք կը քաշէին այն վաճառակիր կառքերէն մէկը, որուն խոր ու կղպուած արկղին մէջ ծախու նիւթեր կ'ըլլան, և ասոր առջև նստելու համար պզտիկ բազմոց մը կար պղնձէ՝ հազիւ թէ կպրաշաղախ կտաւով մը պատսպարուած: Կառքին ու վաճառքին տէրերն էրիկն ու կնիկը վար իջան, գոհ կերպով երկայն շունչ մ'առին, ոտքերնին զարկին, թևերնին ձկտեցին թմրութիւննին անցընելու և արթննալու համար, և ճանչուորի պէս պանդոկապետուհին բարևելով՝ շուտ մը վառարանին երկու անկիւնը քաշուեցան և ձեռքերնին ու երեսնին՝ որթի ճիւղերով վառուած կրակին տուին որ կը կրկըջար. յետոյ յանձնեցին որ ջորիներն ախոռ քաշուին, և հասնելուն համար մէկմէկու ուրախակից ըլլալով ընթրիքի նստան՝ ըսելով թէ որչափ կարելի է շուտով անկողին քաշուին:

Պանդոկապետ խաթունն ալ նոյն պատրաստութեան հետ էր և մանչերը

կէս արթուն իջևանին դռները փակե-  
լու զբաղած էին : Իսկ թերեզա այս ա-  
մեն պատրաստութեանց ժամանակ  
միշտ մտայոյզ ու սաստիկ վշտացած կը  
մտածէր թէ ժամանակն անցնելու հետ  
է, յոյսը կորսուելու և ծաղիկը մեռնե-  
լու վրայ է :

— Գիշեր մը, գիշեր մը, կ'ըսէր ինքնի-  
րեն . խեղճը քնացած ժամանակս վայր-  
կեանները պիտի համրէ . թերևս վաղն  
ալ արգելք մը հանդիպի ճամբայ ելլե-  
լուս :

Ու ասանկ ինքիրեն խորհրդածելով  
փոխ առ փոխ անանկ ուշով կը նայէր  
սեղանի նստող երկու վաճառականաց  
երեսը՝ իբրև թէ բաղդը իրենցմէ կա-  
խուած ըլլար : Սակայն չէր դիտեր թէ  
ինչ ճամբայ պիտի բռնէին . արդեօք  
կ'ուզէին կամ կրնային զինքն ալ հե-  
տերնին առնուլ : Խեղճ աղջիկը մինա-  
կութեան անվարժ ըլլալով՝ օտարակա-  
նաց մէջ ասանկ ինքիրեն մնացած՝ չէր  
համարձակեր բան հարցընելու : Մէյմը  
բարեսրտութենէն մղուելով, մէյմը երկ-  
չոտութեամբ ետ քաշուելով, մէկ ոտքն  
առաջ, շրթունքը կիսաբաց լուռ ու տար-

տամ կեցած ժամանակը, յանկարծ աղախին մը աշտանակ մը ու բանալի մը եկաւ ձեռքը տուաւ՝ մատովն երթալիք խուցը ցուցընելով :

Թերեզա ինչ դրից մէջ ըլլալն զգալով և ստիպուելով միտքն որոշելու, շուտ մը աղախինը թևովը թեթև մը հեռացուց ու սաստիկ այլայլած դէպ 'ի երկու ընթրողներուն մօտենալով,

— Թողութիւն ըրէք հարցմունքիս, — ըսաւ դողդոջուն ձայնով, — Թուրինէն անդին ինչ ճամբայ պիտի բռնէք :

— Ալեքսանդրիայի ճամբան, սիրուն աղջիկս :

— Ալեքսանդրիայի . . . պահապան հրեշտակս ուրեմն զձեզ հոս բերաւ :

— Քու պահապան հրեշտակդ մեզի անպիտան ճամբորդութիւն մ'ընել տրւաւ, ըսաւ կինը . ոսկորնիս ջախջախեցաւ :

— Բայց նայինք ինչ բարիք կրնանք ընել քեզի, հարցուց վաճառականը :

— Շտապողական գործոյ մը համար Ալեքսանդրիա պիտի երթամ, կ'ուզէք զիս ալ մէկտեղ առնուլ :

— Անկարելի բան է, ըսաւ խաթունը :

— Ո՛հ, աղէկ կը վճարեմ... դաղղիա-  
կան 10 լիրէ :

— Դժուարին է, խաթունիկ, յա-  
րեց մարդը, նախ որ նստարանը նեղ է  
ու դժուարաւ երեք հոգի կ'առնէ. այս  
յայտնի է թէ դու նեղութիւն չես ըլ-  
լար, բայց ուրիշ դժուարութիւն մ'ալ  
կայ աղջիկս. մենք Րեվինակոյի տօնա-  
վաճառին կ'երթանք՝ սր Ասդիի մօտ է,  
չէ թէ Ալեքսանդրիայի. համառօտ ը-  
սել անոր կէս ճամբան է :

— Աղէկ ուրեմն, ըսաւ աղջիկը, զիս  
ինչուան Ասդիի դրան առջև տարէք .  
բայց այս իրիկուրնէ մէկէն ճամբայ ել-  
լենք :

— Անկարելի է, անկարելի է, կըրկ-  
նեցին երկուքը մէկէն. յոգնած ենք,  
քուններնիս չենք ուզեր ծախել :

— Երկինը կը վճարեմ, զրուցեց թե-  
րեզա ցած ձայնով :

Էրիկը կնկան երեսը նայեցաւ, աչքո-  
վը կամօն հարցընելով. անիկա

— Չէ, չէ, ըսաւ, հիւանդանալ ու-  
զել է. մէյմ'ալ որ Պիսակն ու Ճանճ-  
կէնը հանգչելու պէտք ունին. կ'ուզեմ  
զիրենք սպաննել :

— Տասը լիրէ, մումուաց էրիկը, տասը լիրէ :

— Պիսակն ու ճանճկէնը աւելի կ'աժենն :

— Կէս ճամբուն համար կրկին վըճարք :

— Է՛հ, ինչ վրաս պէտք է. վենետկոյ ցեքքին մ'աւելի կ'աժէ քան ճենովայի կրկին թարթայետը :

Բայց սակայն տասը լիրէի՝ դիւրին շահու մը փափաքը ինչպէս էրկան նոյն պէս կնկան ալ մտածութիւն եղաւ, ու մէկ կողմանէ քիչ մը դէմ կենալնէն վերջը՝ միւս կողմանէ աղջկան սաստիկ աղաչանաց ու պաղատանաց լսելով ջորիները դուրս բերել տուին ու լծեցին :

Թերեզա գիշերուան ցրտէն պատրու պարուելու համար լաւ մը վերարկուին մէջ պլլուեցաւ, կէս մ'անհանգիստ ուճով բազմոցին վրայ երկուքին մէջտեղը նստաւ ու ճամբայ ելան :

Թուրինի ամեն ժամացոյցները 11 կը զարնէին :

Թերեզա անհամբերութեամբ հասնելու կը նայէր, որպէս զի փութով յա-

Չող լուր տանի Ֆէնէսդրէլոյ . կը փա-  
փաքէր որ սրարչաւ կառքի մը մէջ ե-  
ղած ըլլար ու հողմընթաց արագու-  
թեամբ ձիեր ունենար . ընդ հակառակն  
վաճառական կառքը շատ ծանր կը շար-  
ժէր . Նորիները դանդաղ դանդաղ՝ քայլ  
առ քայլ կը քայլէին , ու բոժոժներուն  
միակերպ ձայնն ալ կարծես թէ ծու-  
լութեամբ ու անհոգութեամբ երթալնին  
աւելի սաստիկ երևակայել կու տար :

Նախ համբերեց յուսալով որ շատ  
չտևեր քիչ մը ընթացք ընելով կեն-  
դանիները կ'արթննան ու կառավարը  
մտրակով քալուածքնին կը շուտցընէ .  
բայց տեսնելով որ անիկա չշարժիր ու  
գոհ կ'ըլլայ միայն բերնովը սուլել , սկը-  
սաւ փութացնել՝ ըսելով թէ շատ կա-  
րևոր է իրեն . շուտ Ասդի հասնիլը , որ-  
պէս զի առտուն կարենայ Ալեքսան-  
դրիա գտնուիլ :

— Սիրուն աղջիկս , պատասխանեց  
առաջնորդը , ես ալ քեզի պէս շատ  
համ չեմ զգար գիշերը աստղները  
համբելէն , բայց պէտք է որ վաճառա-  
կանն իր վաճառքին զգուշութիւն ընէ :  
Բովիկանոյ տարածներս խեցեղէն ու

յախճապակեայ անօթներ են, ու թէ որ ջորիները կատողին՝ ամբողջ բեռնը շարդուբուրդ կրնան ընել :

— Ի՞նչ, արհեստդ բրուտ է, հարցուց թերեզա այլազունած դէմքով :

— Յախճապակեայ անօթներու բրուտ, պատասխանեց վաճառականը :

— Ա՛հ տէր Աստուած, Աուրբ Աստուածածին, ի՞նչ ընեմ հիմա . . . բայց անշուշտ դիւրին է գոնէ քիչ մ'աւելի շուտ երթալը :

— Իմ կործանումն կ'ուզես :

— Պարոն, կը փութամ շուտով հասնելու :

— Իսկ մե՛նք, աղջիկս . ասիկա պատճառ է որ ամեն բան կոտորտե՛նք .

Բայց սակայն շնորհք ընելու ոճով բրուտը քիչ մ'ատեն սուլելը շատցուց . այլ ջորիները իրենց քալուածքին այնպէս վարժած էին որ անանկ դիւրաւ չէին փոխեր :

Թերեզա այն միջոցին սրտակտուր ինքզինքն յանդիմանեց մտքէն թէ ինչո՞ւ կանխաւ շհարցուց թէ որչափ ատեն պէտք էր Ասդի երթալու համար . նոյնպէս նաև ինքիրենն նեղացաւ թէ ինչ

չո՞ւ անձամբ թուրինի մէջ չպտրտեցաւ , որով քաղքին վրայօք ունեցած ծանօթութեամբը ճամբորդութեան աւելի դիւրին միջոց մը կրնար գտնել . հիմա ուրիշ բան չէր մնար՝ բայց եթէ համաւկամիլ, ուստի այնպէս ըրաւ :

Կառքը սովորական ընթացքովն առաջ կ'երթար . Պիսակն ու ճանճկէնը ոչ աւելի կը շուտցընէին և ոչ կը դանդաղցընէին քալուածքնին . միայն ճամբուն եղբրքներէն երթալնուն՝ անիւներուն ձայնը յատակը չէր թնդացներ . վաճառականն ու կինը որ ինչուան անատեն երկայն բարակ թվիկանոյի տօնավաճառին մէջ իրենց ընելիք հաւանական առուտուրին վրայ կը խօսէին , լռեցին . թերեզա մթոյն ու լռութեան մէջ՝ ոտքերը ցրտէն ընդարմացած սկրսաւթմրութենէն բոժոժներու միակերպ ձայնը մշուշ լսել : Գլուխն աջ ձախ կը տատանէր ու բարձ մը կը փնտուէր կնկան կամ էրկանը ուսոյն վրայ , ու ծանրացած կուրծքին վրայ կ'իյնար :

— Աղէկ մը ինձի կռթընէ , ու բարի դիշեր , աղջիկս , ըսաւ առաջնորդը :

Թերեզա խօսքին մտիկ ըրաւ ու կըր-



ցածին չափ հանգիստ դիրք մ'առաւ ու սկսաւ քուն ըլլալ :

Ժամերով աղէկ մը քնացաւ, ու առտուան լուսով աչքերը բացուեցան. զարմացաւ ճամբուն մէջտեղ բաց օդուն մէջ գտնուելուն վրայ : Երբոր սթափեցաւ՝ չորս կողմը նայեցաւ ու տեսաւ որ կառքը ալ չէր շարժեր, և կարծես թէ երկայն ատենէ 'ի վեր նոյն տեղը կեցեր էր :

Վաճառականը, կինն ու ջորիներն իսկ խորունկ կը քնանային ու երկու բոժոժներն և ոչ ձայն կը հանէին :

Թերեզա նայեցաւ որ ետեւէն զանգակատանց ծայրերը քիչ հեռու կ'երևային. առաւօտեան գոլորշիներն այլանդակ երևոյթներ առնելով ցնորակերպ տեսլեամբ ամփոփ հորիզոնի մը մէջ իբրև կոյտ մը կ'երևցնէին աչքին Սուբերկայի գագաթունքը, Բիւր — Ծաղկանց, թագուհւոյն այգիին դղեակները, վեղարաւորներուն եկեղեցին և թուրինի շքեղ բլրան գեղեցիկ զարդերը :

— Տէր ողորմեա, տէր Աստուած, ո՞ւր ենք, գոչեց Թերեզա. առտու կ'ըլլայ ու մենք դեռ հազիւ թէ արուարձաննե-

րէն դուրս ելեր ենք : Այս ձայնէն վաճառականն արթնցաւ ու աչքերը շփշփեւէն վերջը՝ փութաց մէկէն զինքն ապահովցնելու :

— Ասդիի մօտ ենք, ըսաւ, ու այս զանգակատուններն որ կը տեսնես ետևդ՝ Ռեվիկանոյիններն են : Պիսակին ու Ճանճկէնին վրայ զանգատելու բան չունինք, միայն քնացեր են՝ բայց սաստիկ կարօտութիւն ունէին . իմ քնանալս իմանալով ուզածնին ըրեր են . — Թերեզա ժպտեցաւ . — ճամբայ ելլենք :

Ու յանկարծ մտրակը հնչեցուց, որուն ձայնէն թէ կինն և թէ ջորիներն արթնցան . Ասդիի դրան մօտ Թերեզա կառքէն վար իջաւ, ու պատուական խեցավաճառը առած 20 ֆրանքովը երեսը խաչակնքեց, ու բարի ճանապարհ մաղթելով ջորիները դէպ 'ի Ռեվիկանոյի ճամբան դարձուց :

Թերեզա այսպէս ճամբուն կէսն ըրաւ, բայց ալ չէր յուսար կայսեր առաջին ունկնդրութեանը հասնելու :

— Բայց սակայն, կ'ըսէր ինքիրեն, կայսր մը պէտք է անկողնէն ուշ ելլէ :

Ո՛հ ինչպէս կը փափաքէր արևուն հո-

րիզոնին մէջ ընկղմելը որ կրկնապատիկ լուսով գալուատը կ'իմացնէր: Կը կարծէր թէ ամենայն ինչ չորս կողմն իր յուզմունքը կը զգային և Ասդիի բոլոր ժողովուրդն ոտքի վրայ պիտի տեսնէր Ալեքսանդրիա երթալու պատրաստութեան մէջ, որով կրնար այնչափ սայլերու կառքերու բազմութեան մէջ տեղ մը գտնել, նոյն իսկ թերևս ճամբու կառքի մը մէջ. բայց ինչպէս զարմացաւ քաղաք մտած ատենը ճամբաները լուռ ու ամայի գտնելով: Հազիւ թէ դեռ նոր արևը ծագեր էր ու բարձր տանիքներն ու եկեղեցեաց գմբէթները կը լուսաւորէր. միտքն եկաւ թէ երկայն ատենէ 'ի վեր Ասդի բնակող մօրենական ազգական ունէր, որ իրեն մեծ օգնութիւն կրնար ըլլալ. ուստի խեղճ տան մը ստորին յարկին վրայ կապարաւոր պատուհանէն կարմիր լոյս մը տեսնելով՝ սիրտ ըրաւ զարնելու և ազգականին ուր ըլլալը տեղեկանալու:

Պատուհան մը բացուեցաւ, չոր ու ճշող ձայն մը իրեն իմացուց որ փրնտուած անձը իրեք ամիսէ 'ի վեր Մոնպէրսէլլոյի ամառաստունը կը բնակէր, ու պատուհանը գոցուեցաւ:

Թերեզա ճամբուն մէջ մնացած մի-  
նաւորիկ ըլլալուն համար սկսաւ վախ-  
նալ. ինքը զինքը խրախուսելու համար  
քանի մը քայլ հեռու որմոյ մը մէջ ե-  
ղած Ս. Աստուածածնայ պատկերին  
առջև ուր կանթեղ մ'ալ վառուած էր՝  
առաւօտեան աղօթքն ըրաւ : Հագիւ  
թէ լմրնցուց՝ ճամբու ոտնաձայն լսեց .  
մարդ մը տեսաւ :

— Կ'աղաչեմ ցուցուր ինձի , պարոն ,  
Ալեքսանդրիա գացող կառքերը :

— Շատ ուշ է , աղջիկս , պատասխա-  
նեց օտարականը . ամեն կառքերը ու  
կառավարներն իրեք օրուրնէ 'ի վեր  
բռնուած են . — ու անցաւ : Ուրիշ երկ-  
րորդ մ'եկաւ ու Թերեզայի նոյն ըրած  
հարցմունքին կեցաւ դժնեայ երեսով  
մը նայեցաւ :

— Այսչափ ուրեմն Գաղղիացիքը կը  
սիրենս . անիճաճ ձեռ . — ու առջինէն ա-  
ւելի շուտով հեռացաւ :

Խեղճ աղջիկը քիչ մը վախն առաւ ,  
բայց երիտասարդ գործաւոր մը տես-  
նելով որ երգելով դռնէն գուրս կ'ելլէր՝  
սիրտ ըրաւ ու երրորդ անգամ նոյն  
բանն անոր ալ հարցուց :

— Ա՛հ, ա՛հ, խաթուն, պատերազմական կռիւ մը կ'ուզես տեսնել, բայց աղջիկներու համար տեղ չգտնուիր . հաւտա ինծի հոս կեցիր . այսօր տօն է, ու տարփածու պարողներ կը կռուին իրարու մէջ թէ ո՛վ քեզի հետ գիւղական պար բռնէ : Աշխատութիւնը կ'աժես . պզտիկ կռիւ մը քու պատուոյդ համար, մէկայլէն աւելի շանժեր արդեօք : — Ու նազելով մը առաջ գալով ուզեց հենգնել զինքը . բայց երբ թերեզա մէյմը իրեն նայեցաւ, նորէն երգելով սկսաւ ճամբայ ընել :

Չորրորդ մը, հինգերորդ մ'ալ անցաւ . թերեզա ալ չուզեց անոնց հարցընել . աչքը միշտ դռներուն էր որ այն միջոցին ամեն կողմանէ կը բացուէին ու գաւիթներուն մէջ կեցող կառքերուն կը նայէր : Վերջապէս շատ դժուարութենէ վերջը իբրև մասնաւոր շնորհքով քարրոսի մը մէջ մտաւ՝ որ պարզ ինչուան Աննոն պիտի տանէր զինքը, վասն զի հոն ճամբորդ մը պիտի առնուր կառքը՝ որուն տեղը բռնած էր հիմա թերեզա :

Աննոնէն ինչուան Ֆելիզանոյ, Ֆելի-

զանոյէն ինչուան Ալեքսանդրիա ուրիշ  
ընդդիմութիւններ ու արգելքներ ունե-  
ցաւ. ամենուն ալ յաղթեց : Ալեք-  
սանդրիա որ հասաւ՝ գիտէր արդէն թէ  
կայսրը հոն չէ , ուստի առանց վայրկեան  
մը կորսընցնելու՝ բազմութեան հետ  
ոտքով Մարէնկոյի ճամբան սկսաւ ընել :

Հոն չորս կողմն եղած ամբոխէն հըր-  
մը շարկուելով , ուշադրութեամբ ցան-  
ցառ տեղերը գիտելով , ճամբուն եզերք-  
ներէն երթալով , անդադար կը ջանար  
իրմէ առաջ ելողներն անցնելու : Ոչ մը-  
ժեխներու և ոչ ձեռնածուաց տեսա-  
րաններուն միտ կը դնէր . ընդ վայրա-  
քնին ժողովրդեան խառնաղանձին մէջ՝  
որ կը խօսէին , կ'երգէին , կը պոռային ,  
որ ուրախութեամբ ու գինովութեամբ  
ցատքելով տօթոյ ու փոշոյ մէջ կը  
տապըլտըկէին , թերեզա ինքը միայն  
օտարական նոյն օրուան հանդիսին  
մէջ , դէմքն այլայլած , աչքը լուրջ ու  
մտայոյզ , ձեռքովը ճակտին քրտիկքը  
սրբելով առաջ կ'անցնէր , անժպիտ  
դէմքովն ընդդիմերևոյթ մը ձևացնելով  
այլոց զուարթ երեսներուն հետ :

Արիութեամբ սրտի կը քալէր ու կը-

ջանար առաջ երթալու . հազիւ թէ այս ժամանակիս մէջ իր նպատակն ու ինչ վախճանաւ գործելը միտքը կ'իյնար . բայց զօրաց պատճառաւ բազմութեան առաջին կարգերուն շարժիլը տեսնելով ստիպուեցաւ քայլերը ծանրացնելու : Միտքը վրան եկաւ , յիշեց զհայրը որ իրեն ուշանալուն համար քիչ ատենէն պիտի տագնապէր , վասն զի զինքը թուրին ձգող առաջնորդը չէր կրնար քոֆն երթալ ուշանալուն պատճառն իմացնելու համար : Շառնէի վրայ ալ գնաց միտքը թէ թերեւս սուրհանդակին ընտրութեանը վրայ կը նեղանար և իբրև անհոգ ու մոռացկոտ կը մեղադրէր զինքը . յետոյ յանկարծական զգացմամբ ձեռքն ինքիւր վրայ տարաւ որ չըլլայ թէ աղերսագիրն ինկած ըլլայ . յետոյ դարձեալ հայրը աչքին առջև նկարեց , իբրև թէ կը վշտանար աղաչանքին մտիկ ընելուն համար , ու կը կարծէր թէ աղջիկն ալ իրեն համար կորսուած է :

Սիրելի հայրը յիշելու ժամանակ արցունք մը թերեզայի բիբը թրջեց . յետոյ մտածութեան թելը կորսնցուց չորս

կողմն եղած ուրախութեան աղաղակները լսելով : Ետևէն անհուն տեղ պարապ մնացեր էր, և անկէ հեռու բազմութիւնն իրար անցումի մէջ էր. ետ դարձաւ. մի և նոյն ժամանակ երկու հոգի երկու կողմանէ բռնեցին ձեռքերէն և թէպէտ յանկարծակիի գալով հանդերձ աշխատեցաւ դէմ դնելու, բայց ակամայ ստիպեցաւ մասնակից ըլլալու ճամբու վրայ եղած մէկ մեծ պարու մը որ առ դիէն անդիէն եկող ինքնակամ երիտաւ սարդներէ ու աղջիկներէ ձևացեր էր :

Այս ալ ճամբորդութեանը նեղացուցիչ դէպքերէն մէկն եղաւ, բայց դեռ չվհատեցաւ, վասն զի կը կարծէր թէ մօտ է վախճանին հասնելու :

Այն նորօրինակ ընկերութենէն բաժնուելէն վերջը յետին ճգամը նախընթաց բազմութիւնը ճեղքելով վերջապէս դաշտն հասաւ : Գոհ ու ապշած աչքով քիչ մը ատեն Մարէնկոյի մարգագետնոյն վրայ տարածուած գեղեցիկ բանակը դիտելէն ետքը՝ զմայլմամբ աչքերն այն բլրան վրայ անկեց որ իբրև խարիսխ էր կայսերական գահուն : Բովանդակ ոյժն եռանդն ու հաստա-



տամտութիւնը նորէն զգեցաւ. բայց ինչպէս կրնար հոն երթալ բիւրաւոր մարդկանց ու ձիոց մէջէն . մտքէն իսկ արդեօք կրնա՞ր անցընել :

Սակայն ինչ որ առաջ իրեն արգելք էր՝ յետոյ օգնութիւն եղաւ :

Ամբոխին առաջին կարգերը հեղեղօրէն Ալեքսանդրիայէն դուրս ելան աղէկ դիրք մը բռնելու համար ու աջ ձախ բաժնուեցան, և Դանարոյի ու Պորմիտայի ափանց վրայ հաստատուեցան : Եղաւ վայրկեան մ'ալ որ հետագայ բազմութենէն մղուելով անանկ շտապաւ դաշտին մէջ թափեցան որ կարծես թէ պատերազմը կ'ուզէին դիտել :

Հարիւրի չափ ձիաւորներ այս անկարգ բազմութեան առջևը վազեցին, և մերկ սուրերնին շողացնելով ու ձիերնին քայցընելով ստիպեցին որ իրենց սահմանին մէջ մտնեն : Քիչ մ'ատենուան մէջ շահած երկիրնին շուտ մը ամէնքն ալ կորսնցուցին բաց 'ի մէկ հոգիէ մը :

Նոյն երկրին ծաւրերուն վրայ առուակ մը կը վազէ ծառերու և դժնիկի ամուր ցանկով մը պատած : Թերեզա

հետաքրքրաց հեզեզէն դէպ 'ի հոն մը-  
ղուելով՝ գունատ ու դողդըզալով ին-  
չուան կանանչներուն վրայ քշուեր էր .  
այս սաստիկ մղումէն սոսկացած՝ վախ-  
նալով որ ծառերուն զարնուելով գլու-  
խը չճախճախի, աչքերը փակեց ու տը-  
ղու մը պէս որ վտանգն անցած կը կար-  
ծէ երբ շտեմնար, իբրև իրեն նեցուկ  
կազամախի մը բունը գրկելով քիչ մը  
ժամանակ անանկ անշարժ կեցաւ, ա-  
կանջը ամբոխին ու տերևներուն շնջիւ-  
նովը լեցուած :

Ժողովուրդը զօրաց մօտենալուն պէս  
անանկ շուտով ետ քաշուեցաւ որ երբ  
թերեզա գլուխը վեր առաւ ու չորս կող-  
մը նայեցաւ՝ ինքրզինքը միայն տեսաւ .  
բանակէն ծառերուն փնջովն ու դժնե-  
կաց ցանկովը ու բազմութենէն ալ փո-  
շի թանձր ամպով մը զատուած՝ որ յե-  
տամնաց փախչողներուն ետևէն՝ ոլոր-  
տապտոյտ երկինք կը վերանար :

Առանց տարակուսելու սկսաւ ցան-  
կին խորերն երթալ ու մէկէն անտա-  
ռակին մէջը մտաւ . ու քիչ մը վախը  
փարատելէն վերջը, սկսաւ տեղերը  
ճանչնալ :

Աղբերակը քսան կաղամախի ու բար տի տակ հողոյն մէջ ծածկուած սողուն բաղեղով մամուռով կնճթածաղկով գոցուած դղջերով կը պղպղակէր, ուսկից առուակ մը կը սահէր դաշտին մէջ մըկնականջներով ու ճերմակ հրանունկներով զարդարուած: Վրայէն ելած շոգին թերեզայի յուզմունքն ու շփոթութիւնն անցընել տուաւ. իրեն անանկ մը կ'երևար որ կանանչութեան և հանգրստեան ռաւիւի մէջ մտեր էր, և թէ շրջափակին ցանկը փոշիէն տաքութեանէն ու գոռում գոչումէն զինքը կը պաշտպանէր:

Քիչ մ'ատեն դաշտին մէջ լուսթիւն եղաւ. ոչ սպաներուն ձայնը՝ ոչ ժողովրդեան հուշրա պոռալը և ոչ ձիոց խրխինջը կը լսուէր:

Բայց նորօրինակ շարժմունք մը գրլխուն վերևը տեսաւ. ծառոց անդադար խարշափն ու երեբումն էր. նայեցաւ ու կաղամախներուն և բարտիներուն ճիւղերն անթիւ ճնճղկանց բազմութեամբ լեցուած տեսաւ, որ շրջակայ ժողովրդեան ընթացքէն ու աղմուկէն հալածուելով թերեզայի նման եկեր էին կա-

նանչութեան մէջ ապաւինելու : Գողցես վախերնէն ձայներնին ու թևերնին հատեր էր . այնչափ բազմութեան մէջէն ոչ ճիշ ոչ գեղգեղմունք մը կը լսուէր : Տեսան որ գրեթէ ոտքի տակ երթալու վրայ էր իրենց նոր ապաստանարանն ալ ու չէին փախած , այնչափ չորս կողմերնին եղած տեսարանն ու աղաղակը զիրենք համրացուցեր ու ապշացուցեր էր : Արդ ձիաւոր գնդեր 'ի ձայն փողոց առաջ անցան ու հոն տեղը զետեղեցան ուր քիչ մ'առաջ ժողովուրդը կեցեր էր . և թռչուններն տեղերնէն չշարժեցան . միայն կտուցնին սրելով , ճիւղէ ճիւղ ցատքելով , մէյմը հոս՝ մէյմը հոն դառնալով նեղուած՝ հանդէսին լմննալուն կը սպասէին . և շարժմունքը տերևոց հետ բազմապատկեալ թուրինուհւոյն ուշադրութիւնը կը գրաւէր :

Այլ սակայն զինուորները ճամբու ամենայն հաղորդակցութիւն փակեցին . ներսէն անմեղ աղջիկը իրենց սկսաւ նայիլ որ ամէն կողմանէ այսպէս զօրքերով շրջապատեալ էր :

Անժնասս պատերազմ մ'է , կ'ըսէր

ինքիւրեն . և թէ որ անխոհեմութիւն ըրի , Աստուած շանքիս վախճանը գիտէ , ինքը զիս կը պաշտպանէ :

Ան ատեն ուշադրութիւնը հակառակ կողմը դարձնելով , անտառակին ինչուան ծայրն առաջ գնաց ու իրմէ իրեք հարիւր քայլ հեռուն տեսաւ այն բազմոցն ուր Յովսեփինէ և Նարոլէոն նըստեր էին : Անկէ ինչուան իր կեցած տեղը եղած միջոցը երբեմն զինեալ զօրքերով լեցուն էր , որ իրենց պատերազմական ձեռագործը կը կատարէին , երբեմն ալ նաև տեղ ու անցք կը բացուէր : Թերեզա սիրտ ըրաւ . ատենն հասեր էր . ցանկը պատուեց որ դուրս ելլէ , մէյմ ալ յանկարծ ամբչցաւ ու շփոթեցաւ որ վրան գլուխը խառնափնդոր էր . մաղերն անհիւս ու ցըրցկնած էին , երեսներուն կպած կամ ուսէն կախուած , ձեռքերը ու դէմքը քրտինքով ու փոշւով աղտոտած : — Աս վիճակի մէջ Գաղղիոյ ու Իտալիոյ պետին առջին ելլել մերժուիլ ուզել է կամ ձեռք զարկած գործը չյաջողցնելու ինքնին պատճառըլլալ :

Նորէն ուրեմն անտառակը մտաւ .

ջրոյն մօտեցաւ, յարդէ գլխարկը քահեց, սև մազերը ցնցեց, մատուրները մէջն անցուց ու սկսաւ հիւսել. ճակտին վարսակալը կոկեց, վզնոցը շրտեց. վերջը ջրոյն քով ծունկ չոքեցաւ, մէջը նայեցաւ, ձեռքերը խոթեց լուաց երեսը ոտք ու դեռ չելած եռանդուն աղօթք մը ուղղեց յերկինս իր հօրն ու Շառնէի համար :

Պատերազմական գաշտի մը մէջ Թերեզայի վայելչապէս զարգարուիլը Աւպանիի շնորհալից ստուերագիծ մը չէր արդեօք յանկարծ Սալվադոր Բողայի ճակատամարտի մը մեծ նկարին վրայ տեսնուած :

Երբոր Թերեզա նորէն յարմար ժամանակի կը սպասէր որ դուրս ելլէ, յանկարծ քսան կողմանէ մէկտեղ թնդանօթից դղրդիւն սկսաւ լսուիլ. գետինը թնդաց, ու ծառերուն վրայ թառած թռչունները մէկ թռիչով ամէնը մէկէն սլացան, ու կանչելով կանչուրուտելով, շրջաններ ընելով դէպ 'ի վալբետոյի անտառներն ու վոկերայի հովանինները գացին :

Պատերազմն սկսեր էր : Թերեզա թըն,

դանօթից թնդիւնէն խլցած, գոռում գոչումէն վախցած տեսակ մը թմբրութեան մէջ ինկեր մնացեր էր, աչքը միշտ գահուն վրայ տնկած, որ երբեմն առջևը բացուած կ'երևար, երբեմն ալ սուխններու և նիզակներու քօղով ծածկուած էր:

Կէս ժամէ վերջը, յորում բնական սարսափով ամեն միտքն ունեցածը մոռցեր էր, արիասարտութիւնը նորէն ձեռք առաւ. աւելի հանդարտութեամբ դիտեց թէ ինչ արգելքներու պիտի յաղթէր դրօշազարդ բլուրն ելլելու համար, ու անկարելի չսեպեց:

Երկու առաջք հետևակ զօրաց երկայն դիծեր ձևացուցած՝ որուն կրկին խարխախը անտառակին կողին վրայ կը կռթռնէր, իրարու վրայ հրացաններ կը պարպէին: Յուսաց որ վառօդոյն ծխոյն մէջէն առանց տեսնուելու ճամբայ մը բանայ. սակայն կը տարակուսէր երբ հուսարաց գունդ մը ծարաւով պապակած կեցած տեղոյն վրայ արշաւեցին: Ան ատեն ալ շտարակուսեցաւ. արիութիւնն ամօթէն զօրանալով, վազեց թռաւ հետևակաց երկու առաջ-

քին մէջ, և երբ ծուխը փարատեցաւ՝  
զինուորներն սկսան զարմանքի ձայներ  
հանել, մէջերնին ճերմակ պարեգօտ մը,  
կնկան գլխարկ մը, մատաղ սիրուն տես  
քովաղջիկ մը տեսներով՝ որ պռուչուն  
չնայելով առաջ կ'երթար :

Ջրահաւորելոց ջոկատ մը առաջնե-  
րէն մէկուն օղնութեան կը հասնէր .  
գնդապետը գետին տապըլտկեց զթե-  
րեզա, բայց մէկէն թեէն բռնելով գետ-  
նէն հանեց, ու երդուրննալով հայհոյե-  
լով առանց տեղեկանալու թէ ինչ դի-  
պուածով աղջիկ մը պատերազմին բա-  
նակետդին վրայ կը գտնուէր, երկու  
զինուորաց ձեռքը տուաւ յանձնելով  
որ կանանց կողմը տանին :

Պէտք եղաւ որ զրահավառի մը ե-  
տեէն լերան գլուխն ելլէ՝ և այսպէս դէպ  
'ի հոն տարուեցաւ ուր որ Յովսէփինէ  
կայսրուհւոյն նաժիշտները կային բըլ-  
րան վրայ քանի մը զինակիցներով և  
խտալիոյ քաղաքաց երեսփոխաններով :

Թերեզա հոն որ ելաւ վախճանին  
հասնելու մօտ էր, ու ալ չէր կրնար վրի-  
պիլ : Շատ դժուարութեանց յաղթած  
ըլլալով՝ կուզէր վերջին դժուարութեանն



ալ յաղթել. անոր համար երբոր կայսեր հետ ուզեց տեսնուիլ ու պատասխան տուին թէ զօրաց գլուխն անցած դաշտին մէջ ասդին անդին կը վազէ,

— Ազէկ ուրեմն, կայսրուհին կ'ուզեմ տեսնել, պողոսցհաստատամտութեամբ: Բայց երկուքն ալ իրարմէ դժուարին խնդիրներ էին. որպէս զի չձանձրացրնէ, աչքը վախցնել փորձեցին, բայց չկրցան: Պէտք է զօրաց դրիցը փոխուելուն սպասել ըսին. յանձն չառաւ և ուզեց դէպ 'ի դահը երթալ. արգիլեցին՝ դէմ կեցաւ, ուժգին մը պողոսցինչուան որ նաև վերջապէս Յովսէփինէի ուշադրութիւնն ալ իբ վրայ արթնցուց:

Գ.

Յովսէփինէի հրամանը դեռ չէր հաղորդուած՝ մէյմ'ալ թերեզա զօրաց գնդի մը մէջէն անցնելով երևցաւ, աղաչաւոր ու զգօն կերպով և տակաւին դէմ դնելով:

Կայսրուհւոյն բարեսիրտ կերպը տես

նելով յայտնապէս՝ ամենքը տեղ տը-  
ւին թերեզայի, որ ազատութեամբ ա-  
ռաջ նետուելով, գտած արգելքներուն  
դէմ կռուելէն՝ վրան գլուխը աւրշոր-  
կած, շունչը բռնուած՝ ինչուան գահուն  
աստիճաններն հասաւ, ծունր կրկնեց  
ու արտորանօք ծոցէն թաշկինակ մը  
հանեց ու եռանդեամբ թօթուելով,

— Խաթուն, խաթուն, խեղճ բան-  
տեալ մը :

Յովսէփինէ նախ մէկէն չհասկըցաւ  
թէ ինչ կը նշանակէր ցուցըցած թաշ-  
կինակը :

— Նայինք ինչ է, աղերսագիր է, հար-  
ցուց :

— Ահաւասիկ, խաթուն, ահաւա-  
սիկ. խեղճ բանտելոյ մը աղերսագիրն է :

Ու երեսն 'ի վար արցունքը կը թա-  
փէր, որուն հետ յուսոյ ժմիտ մ'ալ  
դէմքը կը կենդանացընէր : Երայրուհին  
ալ փոխադարձ ժպտեցաւ, ձեռքն եր-  
կընցուց ու ստիպեց որ ոտք ելլէ ու սի-  
րայիւր դէմքով դէպ 'ի իրեն ծռելով.

— Սիրտ ըրէ, աղջիկս, արիացիր-  
այս խեղճ բանտեալը շատ սիրելի է քե-  
զի ուրեանն :

Աղջիկը կարմրեցած՝ աչքերը վաղ առաւ :

— Երբեք հետը խօսած չեմ, գրուցեց. բայց շատ խեղճ է. կարդա, խաթուն :

Յովսէփին է թաշկինակին ծալքը բացաւ, ու սիրտը շարժեցաւ մտածելով թէ որչափ թշուառութեանց ու պրրկմանց վկայ էր այն կտաւը. շինծու թանաքով անպիտան գրուած. և առջի բառին կանկ առնելով .

— Բայց կայսեր ուղղուած է, ըսաւ :

— Ի՞նչ կ'ըլլայ եղեր. հրամանքդ իրեն ընկերը չե՞ս. կարդա, կարդա, խաթուն, շնորհք ըրէ կարդա, շտապողա, կան բան է :

Ճակատամարտին ամենէն տարժամա նակն էր. հունգարացի զօրաց առաջըր թէպէտ Մարմինի թնդանօթածիրդնէրէն ուժեղութեալ իրեն ահեղ շարժմունքը դարձեալ ստացեր էր: Զաք ու Տըղէ դէմ առ դէմ էին, ու իրենց բախմունքէն կը կախուէր բանակին փրկութիւնը կամ կորուստը :

Թնդանօթն ամեն կողմանէ կ'որտար. պատերազմին գաշտը բորբոքած

էր . զինուորաց աղաղակը շեփորներուն  
հետ խառնուած՝ մրրկի պէս օդը կը  
խռովէր :

Կայսրուհին հետևեալը կարդաց :

### ՎԵՀԱՓՈՒ ՏԵՐ .

Հրամանքէդ միակ շնորհք մը այս կը  
խնդրեմ որ բանտիս գաւթին մէջ երկու  
խճաքար պակաս ըլլան . բայց խնդրած  
պաշտպանութիւնս ինծի համար չէ . այս  
ամայի որմածոյն մէջ , ուր հրամանքիդ  
դէմ ըրած յանցանքս կը քաւեմ , մէկ էակ  
մը միայն կրցաւ իմ նեղութիւններս քաղ-  
ցրացնել , միակ էակ մը կենաց ախորժ  
ազդեց ինծի . բոյս մը , ծաղիկ մըն է ասի-  
կա որ յանկարծ բուսաւ գաւթիս յատա-  
կին մէջ , ուր որ շնորհեալ է ինծի երբեմն  
օդ ծծել և երկինք տեսնել : Ա՛հ , մի՛ զիս  
մէկէն իբրև զառանցեալ կամ խենդ հա-  
մարիր : Այս ծաղիկս ինծի քաղցր ու մխի-  
թարական տեղեկութեանց նիւթ եղաւ .  
զինքը դիտելով ճմարտութիւնը ճանչցայ .  
իրեն պարտական եմ միտքս՝ հանգիստս  
ու թերևս կեանքս . կը սիրեմ զինքը՝ ինչ  
չափ որ հրամանքդ փառք կը սիրես :

Իսկ արդ հիմա այս ժամուս իմ խեղճ  
տունկս մեռնելու վրայ է՝ տեղ ու հող չու-  
նենալուն պատճառաւ . մեռնելու վրայ է ,  
և ես շեմ կրնար անոր օգնել . Ծէնէսդրէլ-

լոյի հրամանատարը աղերսագիրս Թուրքի-  
նի քաղաքապետին կը խաւրէ, և ինչուան  
որոշմունք ըլլայ՝ բուսակս կը մեռնի. և ա-  
հաւասիկ ասոր համար ես հրամանքիդ կը  
դիմեմ, հրամանքիդ՝ որ մէկ խօսքով մը  
կրնաս ամենայն ինչ՝ նաև ծաղիկս ալ ա-  
զատել: Ա երցնել տուր այն երկու քարե-  
րը որ իր և իմ՝ վրայ ծանրացած են. ազա-  
տէ գինքը չորնալէն, ազատէ գիս յուսա-  
հատելէ: Հրամմէ. բուսակիս կեանքն է  
հրամանքէդ խնդրածս. կ'աղաչեմ կը սլա-  
զատիմ ու ծունկ ընկած կը խնդրեմ, և  
կ'երդնում որ ըրած քարեացդ երախտա-  
գէտ ըլլամ:

Խեղճ բոյսն ինչո՞ւ չորնայ: Եթէ ինքը  
մեղմեց այն հարուածը որով հրամանքիդ  
հզօր աջը կ'ուզէր գիս խոշտանգել, քայց  
նաև ամբարտաւանութիւնս ալ կոտորեց,  
և ինքն է որ հիմա գիս աղաչաւոր հրա-  
մանքիդ ոտքը խոնարհեցնել կու տայ:  
Կրկին գահուդ բարձրէն աչքդ վրանիս  
պիտի դարձընես արդեօք. կրնաս ըմբռ-  
նել թէ ինչ կապերով մարդ մը բուսոյ հետ  
կրնայ միանալ՝ այն առանձնութեան մէջ,  
յորում բանտեալը պարզ բուսական  
կեանք մը կ'ունենայ: Չէ, չես գիտեր հրա-  
մանքդ, Տէր. և Աստուած չընէ որ եր-  
բեք գիտնաս թէ բանտարգելութիւնն ա-  
մենէն վայրագ ու ամուր սրտերու վրայ ալ  
ինչ ազդեցութիւն կրնայ ունենալ: Ես իմ  
բաղդիս վրայ չեմ տժգոհար՝ համակամու-

Թեամբ կը տանիմ. երկնցուր, թող կեանքիս չափ տուէ, բայց բուսակիս համար չընորհք ըրէ :

Գիտցիր, Տէր, որ խնդրած շնորհքս մէկէն այսօր հարկաւոր է: Կրնաս քիչ մը ստեն մահապարտին ճակտին վրայ սուրը կախուած թողուլ, յետոյ վերցընել ու ներել, բայց բնութիւնը մարդկանց արդարութենէն տարբեր օրէնք ունի: Երկու օրէ մը թերևս Նաբոլէոն կայսրն իսկ չկարենայ բան մ'ընել Ֆէնէսդրէլոյի բանտելոյն ծաղկին :

### Շ Ա Ռ Ն Է

Յանկարծ թնդանօթներու սաստիկ դղրդումն լսուեցաւ. թանձր բոլորածև ծուխ մը հրոյ շեղանկիւնով, հարիւր հազար հրացանի փայլմանէն պատերազմին դաշտը միանգամայն լուսաւոր ու մթին ընդարձակ ցանկով մը ծածկեց. յետոյ կրակները մարեցան, և կարծես թէ բարձրէն երկնցած ձեռք մը պատերազմողները ծածկող ամպերու քօղը մէկէն պարզեց:

Այն միջոցին հրաշալի տեսարան մ'էր արևով դիտելը. այն անուանի դէպքն, յորում Տրսէ մեռաւ՝ կատարուած էր: Զաք Հունգարացիներովը

ճակատ առ ճակատ Պուտէի հետ զար-  
նուեցաւ, և ձախ կողմէն Քելլերմանի  
այրուծիէն նեղուելով խառնափնդոր կը  
պատերազմէր, ու անվեհեր հիւպատո-  
սը մէկէն իրեն նոր մարտակուռոյ գի-  
ծը հաստատելով՝ Քասդէլ-Չէրիոլոյէն  
ինչուան 'ի Ս. Յուլիանոս փաստղա-  
կան կռուոյ ձեռք զարկաւ, ու ամեն  
կողմանէ կայսերականքը ջախջախեց. ո-  
րով ստիպուեցաւ Մելաս նահանջ հըն-  
չեցնելու :

Բանակին յանկարծական դիրքը փո-  
խելը, մեծամեծ շարժմունքը, մարդկանց  
տեղատուութիւնն ու մակընթացութիւ-  
նը՝ հպատակելով գլխաւորի մը ձայնին  
որ առերևոյթ խառնակութեան մէջ  
միայն ինքը անշարժ կեցեր էր, ամենա-  
ցուրտ երեսկայութիւնն իսկ գրաւելու  
տեսարան էր : Գահուն խլորն եղած  
հանդիսականաց բազմութիւնը սկաւ-  
ծափ զարնել ու կեցցէներ պռաւ, և  
այն գոչումը շրջակայ անդադակին դէմ  
առ դէմ հնչելով, զկայսրուհին՝ որ խռ-  
րունկ մտածութեան մէջ ընկղմեր էր՝  
օրթընցուց :

Վասն զի այս վերջի ու փառաւոր

գործառնութիւններէն և իրարու ետև  
յաջորդող վեհ տեսարաններէն՝ Յովսէ-  
փինէ բան մը չտեսաւ, մտածութեան  
մէջ ընկղմած և աչքերը ձեռքը բռնած  
նորակերպ ազերսագրին վրայ ուշադրու-  
թեամբ տնկած ըլլալով, առանց կար-  
դալու :

Նախ 'ի սկզբան մէկէն ապահովցուց  
զաղջիկը որ առջևը ոտքի վրայ կայնած  
կ'երազէր :

Թերեզա այն անուշ խոստմամբ լի  
նայուածքէն զուարթացած ու գոհ, և յա-  
ջողութեան վստահութիւն ստանալով,  
բիւր անգամ երախտագիտութեամբ ու  
գորովանօք այն քնքուշ և միանգամայն  
հզօր ձեռքը պագաւ՝ յորում՝ Նաբոլէո-  
նի հարսանեկան մատանին կը փայլէր :  
Կանանց խմբին մէջը խառնուեցաւ, ու  
դաշտին պարպուելէն վերջը, մէկէն ե-  
կեղեցի մը՝ մատուռ մը փնտռեց որ կա-  
րենայ առանձինն լալով Ս. Աստուա-  
ծածնայ ոտքն ինկած շնորհակալ ըլլալ,  
որ նեղելոց պաշտպանն է :



Դ

Մտածէ թէ կայսրուհի—թագուհին  
ինչպէս գորովանօք զգացուեցաւ այն ա-  
ղերսագիրը կարդալով: Ամեն մէկ բառը  
ինչպէս իրեն գութը կը զարթուցանէին:  
Յովսէփինէ ալ նոյնպէս ծաղիկ կը դար-  
մանէր, և այս էր իր ուսմունքն ու վայել-  
քը. ու այլ և այլ անգամ իշխանու-  
թեան փայլն ու ձանձրութիւնը մոռցեր  
էր նոր բացուող կոկոնի մը պսակի մը  
կազմութիւնը քննելով, Մալմէզոնի գե-  
ղեցիկ շերմանոցներուն մէջ:

Հոն յաճախ աւելի երջանիկ կը սե-  
պէր ինքզինքը, հնդկաթղենիներուն ցե-  
ղին կարմրութիւնը՝ քան թէ կայսերա-  
կան ծիրանւոյն գոյնը դիտելով. և մա-  
նեռոյիսներուն անուշահոտութեամբն  
աւելի զմայլեր էր՝ քան թէ պալատա-  
կանաց թունալից հրապոյրներովը:  
Հոն կ'ախորժէր գահուն վրայ նստիլ,  
և մի և նոյն գաւազանին տակ կը հա-  
ւաքէր աշխարհիս չորս կողմանէ եկած  
բիւրաւոր բուսական ժողովուրդներ.

կը ճանչնար զանոնք, կը զանազանէր, ըստ ցեղի և կարգի կը դասաւորէր, և երբ նոր եկած հպատակներէն մէկը առաջին անգամ տեսնէր՝ կրնար քննաբանութեամբ անոր հասակն ու բնաւորութիւնը, անունն ու ազգատոհմն իմանալ, և զանիկա ալ եղբարցը կարգը կ'անցընէր. վասն զի հոն իւրաքանչիւր ժողովուրդ իրեն դրօշն ունէր, իւրաքանչիւր ցեղ՝ իւր դրօշակը :

Նարոյէոնի պէս ինքն ալ պարտեալ ժողովրդոց օրէնքն ու սովորութիւնները կը մեծարէր : Իւրաքանչիւր աշխարհաց բոյսերը Մալմէզոնի ջերմանոցներուն մէջ իրենց նախնական գետինն ու բնական կլիման կը գտնէին : Մանրանկար աշխարհ մ'էր. հոն շրջափակ միջոցի մէջ արօտատեղիք, ժայռեր, կոյս անտառաց հողեր ու անապատներու աւազներ, կաւէ ու կրախառն հողէ բազմոցներ, լճեր, ջրվէժներ և ողողուած ափունքներ կային : Հոն մարդ արևադարձին ջերմութիւնն ու բարեխառն գօտիներու զովութիւնը կրնար զգալ : Հոն ամեն այլ և այլ ցեղերը իրարու մօտ կ'աճէին և կը փրթ-

թէին, միայն կանանչ թեթև որմածով  
կամ ապակիէ սահմանով մը բաժ-  
նուած :

Երբոր Յովսէփինէ հոն այցելութեան  
կ'երթար, այլ և այլ ծաղիկներ անուշ  
ցնորքներ մտքին մէջ կը ծնանէին : Որ-  
դենսիա՝ դեռ նոր իրեն աղջկան անունն  
ստացեր էր . փառասիրութեան խոր-  
հուրդներ ալ ունէր . վասն զի Պոնա-  
բարդի յաղթանակներէն վերջը, աւա-  
րէն իրեն ելած մասը պահանջեր էր, և  
իտալիոյ ու Եգիպտոսի յիշատակները  
կարծես թէ աչքին կը մեծնային ու կը  
փայլէին . Ալպեանց արմաւածաղիկը,  
Բարմայի մանուշակը, Գասդիլիոնի ա-  
դոնիսը, Լոտիի շահգրամը, Արևելքի  
ուռին, Մալդայի խաչածաղիկը, Նիւ-  
սի շուշանը, Ասորւոց տուղտը, Տամիէ-  
դի վարդը . ասոնք էին իր աշխարհա-  
կալութիւնները : Գոնէ ասոնցմէ շատը  
Գաղղիա մնացին :

Իր ամենայն հարստութեանցը մէջ  
նաև իրեն սիրուն ծաղիկն ալ ունի, ի-  
րեն որդեգիր ծաղիկը . Մարդինիկէի  
աղուոր յասմիկը, որուն սերմը ինքը  
ժողվեր, լինքը ցաներ, ինքը մշակեր էր .

որով ծննդեան երկիրը , տղայութիւնը , զարդարանքը և աղջկային պսակները , հօրենական տունն և նախկին սէրն առ նախկին փեսայն կը յիշէր :

Ո՛հ , ինչ աղէկ ըմբռնեց խեղճին բուսակին համար ունեցած վախը՝ թէ մէկ հատ մը միայն ունենալով՝ ո՞ գիտէ ինչպէս կը սիրէ :

Եւ ինչպէս չգորովէր սիրտը խեղճ բանտելոյն բաղդին վրայ : Պոհառնէի այրւոյն բնակութիւնը միշտ հիւպատական կամ կայսերական պալատին մէջ չէր եղած . չէր մոռցած իր բանտարգելութեան օրերը : Երկրորդ անգամ՝ ըզՇառնէ հանդարտ , պարծենկոտ , աշխարհքի բաներէ համ չառնող , և մարդկանց ամենէն գոլտր զգացմունքներն ալ ծաղրող մարդ մը ճանչցեր էր : Ի՛նչ փոփոխութիւն արդեօք եղեր է վրան . ո՞վ արդեօք այն դուռող ոգին կրցեր է կակղցնել : Դու Աստուծոյ իսկ չէիր ուզեր երկրպագութիւն ընել , և հիմա ահա ծունկ ընկած բուսակիդ համար շընորհք կը խնդրես : Ո՛հ , պիտի շնորհուիքեցի :

Աս մտածութեանց մէջ՝ զօրաց վեր-

ջին շարժմունքները և կեղծեալ ընդու-  
նայն մարտակուխը՝ նեղութեան ու ան-  
համբերութեան պատճառ եղան իրեն  
համար . վասն զի կը վախնար թէ Շառ-  
նէի ծաղկին համար մէկ կարևոր վայր-  
կեան մ'ալ չկորսնցնէ : Ուստի նաև երբ-  
որ Նաբոլէոն չորս կողմը զօրավարնե-  
րով լեցուն իրեն եկաւ, անշուշտ ուրա-  
խակցութիւններ ընդունելու յուսով, և  
դեռ ըրած զինուորական աշխատու-  
թեան ախորժը՝ զոր այնչափ կը սիրէր,  
վրան էր :

— Տէր, հրաման մը Ֆէնէսդրէլլոյի  
քաղաքապետին համար. առանձին շտա-  
պողական հրաման մը, գոչեց կայսրուհին  
բարձր ձայնով ու աչքերը կրակ կտրած .  
անանկ իբրև թէ նոր յաղթութեան  
գործ մ'ըլլար, և իրեն իյնար հրամա-  
նը շտապեցնելը . և կը ցուցնէր միան-  
գամայն թաշկինակը երկու ձեռքովը  
տարածեալ բռնած, որպէս զի դիւրաւ  
կարենայ կարդալ :

Նաբոլէոն զարմացած ու տհաճ դէմ-  
քով գլխէն ինչուան ոտքը զինքը դի-  
տելէն վերջը՝ կռնակը դարձուց ու ան-  
ցաւ, այնպէս իբրև թէ զինքն ալ լաւ

մը աչքէ անցընելով զօրահանդէսը լմրն-  
ցուց :

Ըստ սովորութեանը պատերազմի  
դաշտին այցելութեան ելաւ, որ արեամբ  
կարմրացած չէր, այլ ուր միայն գետ-  
նոյն վրայ ինկեր թաւալեր էր նորա-  
հաս հունձքը. գարին ու բրինձը ման-  
րուեր փշրուեր էին. հողը տեղ տեղ ա-  
նիւններուն խոր հետքէն աւրըշտրկուած  
ու խառնափնդոր կ'երևար. այլ և այլ  
կողմեր վիշապազօրաց ձեռնոցներ, փե-  
տուրներ, ուսանոցներ ցանուած կը տես-  
նուէին. յետոյ քանի մը կաղացող հե-  
տևակ զօրքեր ու ոտքերնին կարկամած  
ձիեր կը հասնէին. աս էր բովանդակ  
մնասը :

Բայց մէկ ատեն մը այս ձեռնարկն  
երկիւղալի երևոյթ առաւ. երբ Մարէն-  
կոյ գեղը պաշտպանող աւստրիական  
զինուորները երկմտելով՝ իբրև յաղ-  
թեալ ձևանալնուն վրայ՝ ցուցակին նը-  
շանած ժամանակէն աւելի երկնցուցին  
դէմ դնելնին, ասկէ մեծ գրգռմունք մը  
ծագեցաւ երկու հակառակ կողմանց  
մէջ : Այս երկու զնդերը տարբեր բա-  
նակէ էին և իրարու մէջ զինուորական

նախանձոտութիւնն ունեցեր էին . զի-  
րար նախատեցին ու կռուոյ կանչեցին .  
սուիններն սկսան ուղղուիլ :

Քիչ մնաց որ պիտի զարնուէին , և  
հազիւ հազ զօրավարները մեծաւ շա-  
նիւ կրցան արգիլել որ կեղծ պատե-  
րազմն իրականի չփոխուի . վերջապէս  
շատ մը նեղուելէ ետքը՝ հաշտուեցան ու  
ըմպելեաց ամաններն իրարու հետ փո-  
խեցին , բայց ամանները պարապ էին .  
զանոնք լեցնելու համար բռնութեամբ  
գեղին գինետունները մտան , կարգը  
աւրեցին , բայց կեցցէ կայսր պոռա-  
լով :

Այս ամենը սաստիկ աշխուժի հե-  
տեանք համարուեցաւ :

Շատ մը շողակրատանքէ և շատ  
մ'ալ գինուոյ գաւաթներ պարպելէն  
վերջը , Աւստրիացիք հազիւ հազ ոտքի  
վրայ կարենալով կենալ , որոշեցին նա-  
հանջ զարնել . ու Գաղղիացիք յազթո-  
ղաբար ցատքելով պարելով , մարսի-  
լիական նուագն երգելով մտան 'ի Մա-  
րէնկոյ , իրենց աղաղակին մէջ խառ-  
նելով հին գոչիւն մ'ալ , այս ինքն է՝  
կեցցէ Հասարակապետութիւնն պոռալը :

Այս ամենն ալ գինովութեան հետեանք սեպուեցաւ :

Երբոր գնդերը առգեցան՝ Նարոլէոն խաչանշան բաժնեց հին զօրաց, որոնք հինգ տարի առաջ նոյն տեղոյն վրայ գտնուեր էին : Ըստ իրենց կարգին՝ նաև յայսկոյս Ալպեանց գլխաւոր պաշտօնեաներն ալ պատուանշան ընդունեցան իրմէ : Յետոյ Յովսէփինէի հետ մէկտեղ՝ Մարէնկոյի մարտակռուոյն յիշատակը մշտնջենաւոր ընելու համար, շինուելիք դաստակերտին հիմանն առաջին քարը դրաւ : Աս ալ որ լմնցաւ՝ կայսրուհին, դեսպանները, պաշտօնեաները, ժողովուրդն ու բանակը՝ ամենքն ալ Ալեքսանդրիոյ ճամբան բռնեցին :

Իսկ Բի՛ւլիոյայի վիճակը գեռ չէր որոշուած :

## Ե

Նոյն իրիկունը Ալեքսանդրիոյ քաղաքին առաջին պանդոկին պատրաստուած բնակարանին մէջ Նարոլէոն ու Յովսէփինէ իրենց հասարակաց սեղան



նը լմնցնելէն վերջը կեցեր էին . մէկը մեծ մեծ քալելով ու գոհ դէմքով ձեռքերը շփելով՝ քարտուղարի մը գրելիք նամակներուն իմաստներ կու տար . միւսը՝ պարզ հտպտանօք բարձր հայլիի մը առջև նոր հագած զգեստներուն շքեղութեանն ու զարդարանքին ճոխութեանը վրայ կը զարմանար :

Երբոր քարտուղարը դուրս ելաւ՝ Նաբոլէոն նստաւ , երկու թևերովն երկայն ստովին կոթընեցաւ , որ ոսկեզարդ երիզներ ունեցող կարմիր թաւիչով մը ծածկուած էր . գլուխը ձեռքերուն մէջ առաւ ու մտածելու պէս կեցաւ , բայց մտածութիւնները նեղացուցիչ նիւթերու վրայ չէին , վասն զի դէմքէն քաղցր ցնորից մէջ ըլլալն յայտնի էր :

Սակայն Յովսէփինէ եղած լուրթեւէն ձանձրացաւ . արդէն նոյն օրը անյարմար դիրքով անգամ մը ֆէնէս դրէլոյի աղերսագրոյն նկատմամբ խօսեր էր կայսեր , և տեսնելով որ իր ըրած պաշտպանութիւնը անօգուտ եղաւ՝ սաստիկ փութալուն պատճառաւ , միտքը դրեր էր ուրիշ յարմար առիթ մը գտնելու : Բայց առանց շատ ուշանալ

լու՝ ատենը հասած սեպեց, գնաց ստու-  
լին միւս կողմը և նստաւ էրկանը առ-  
ջևը, և անոր պէս կռթռնելով, ձևացուց  
թէ կը մտածէ. քիչ ատենէն երկուքն  
ալ ժպտելով իրարու երես նայեցան :

— Ի՞նչ կը մտածես, հարցուց անոր  
Յովսէփինէ, ձայնն ու նայուածքը ա-  
նուշաբունելով :

— Կը մտածեմ, պատասխանեց Նա-  
բոլէոն, թէ թագը գլխուդ շատ ազէկ  
կը յարմարի, և մեղք պիտի ըլլար եթէ  
մէկ հատ մը գզրոցիդ մէջ դնել տալու  
անհոգ եղած ըլլայի :

Յովսէփինէի ժմիտը կամաց կամաց  
սկսաւ փոխուիլ. իսկ Նաբոլէոնինը ա-  
ւելինչանաւոր կերպ մ'առաւ, վասն զի  
կ'ախորժէր անոր նեղացուցիչ կարծիք-  
ներուն հետ վիճել՝ որոնցմէ կայսրու-  
հին չէր կրնար հրաժարիլ մտածելով  
թէ ինչ մեծ պատուոյ հասեր էին. սա-  
կայն իրեն համար չէր որ կը դողար ազ-  
նուական խաթունը :

— Չե՞ս ախորժիր, ըսաւ իրեն Նաբո-  
լէոն, աւելի զիս կայսր տեսնել՝ քան  
թէ պարզ զօրավար :

— Յայտնի է. կայսր ըլլալովդ իրա-

ւունք ունիս շնորհք ընելու, և մէկ չընորհք մը միայն ունիմ խնդրելիք :

Այս անգամուս Նարոյէոնի երեսին զուարթութիւնը փոխուեցաւ ու կայսրուհւոյն դէմքին վրայ փայլեցաւ . յօնքը պուստեց ու պատրաստուեցաւ հաստատուն կենալու, վախնալով որ չըլլայ թէ Յովսէփինէ սրտին վրայ ունեցած ազդեցութեամբը զինքը վատ տրկարութեանց խոնարհեցնէ :

— Դարձեալ . Յովսէփինէ, դու ինձի իոստացեր էիր որ արդարութեան արգելք չըլլաս : Կը կարծես թէ շնորհք ընելու իրաւունք ունինք պարզ մեր քրմաց հաճոյքը գոհ ընելու համար : Ձէ, օրինաց խիստ պահանջմունքը մեղմացնելու համար պէտք է գործածենք զայն, կամ ատենից սխալմունքը դարմանելու համար : Թշնամեաց միշտ օգնելը, իրենց թիւն ու ժպրհութիւնը բազմացրնել ըսել է :

— Բայց, ըսաւ Յովսէփինէ՝ խնտալը բռնելով, որ քիչ մնաց պիտի պոռուկար, յուսամ որ այս խնդրած շնորհքս պիտի կատարես :

— Կը տարակուսիմ :

— Բայց ես չեմ տարակուսիր . նախ կը խնդրեմ որ վերցնել տաս երկու . . . նեղացուցիչները : Այո՛, թող ելլեն երթան տեղերնէն . և եթէ պէտք է՝ կորսուին :

Ասանկ խօսելով, թաշկինակը շրթանցը վրայ կը սխմէր . վասն զի Նաբոլէոնի զարմացած դէմքը տեսնելով, չէր կրնար ինքզինքը բռնել :

— Ի՞նչ կ'ըսես, Յովսէփինէ . դու կը ստիպես զիս որ պատժեմ . որո՞նն համար է խօսքդ :

— Երկու խճաքարերու համար՝ որ գաւթի մը մէջ աւելորդ են : — Ու խընտայր՝ որ հազիւ հազ բռներ էր՝ վերջապէս պոռտկաց : Նաբոլէոն ոտք ելաւ, ուժով մը ձեռքերը կռնակը տարաւ, և տարակուսանօք ու զարմացմամբ երեսն 'ի վեր նայելով ,

— Ի՞նչպէս, ի՞նչ ըսել է . երկու խճաքար . կատակ կ'ընես :

— Չէ, ըսաւ . ու ինքն ալ նոյնպէս ոտք ելաւ, մօտեցաւ, ու երկու ձեռքերն իրար անցուցած ուսերուն վրայ դրաւ գաղթածնոյ շնորհալից մեղկութեամբ :

— Այս երկու քարերէն անգին կեանք մը կը կախուի: Աղէկ մտիկ ըրէ ինծի, Տէր, ըսաւ, վասն զի բովանդակ յօժար կամբդ պէտք է՝ որ ըսածս հասկընաս:

Պատմեց աղերսագրոյն նիւթը և ինչ որ աղջկանէն իմացեր էր բանտելոյն նկատմամբ, որուն անունը չտուաւ, և թէ խեղճ աղջկան խանդաղատանքն էր. վերջը բանտելոյն վրայ ունեցած սիրոյն նկատմամբ խօսելով, բերնէն կը հոսէին անուշ ու գողտր բառերը, սիրուն ու գորովալից սրտէ բխած բնական ճարտասանութեամբ:

Կայսրը մտիկ ընելով կը ժպտէր, ու կնկանը վրայ կը զարմանար:

## 2

Շառնէ ժամերը վայրկեանները մանր, երկրորդները կը համբէր. իրեն կ'եռևար թէ ժամանակին ամենաթեթև բաժանմունքը իրարու վրայ կը դիզուէին ծաղկին վրայ ծանրանալու ու ջախջախելու համար զայն: Երկու օր անցեր էր ու դեռ սուրհանդակը ըւր

չէր բերած, որով և ծերն իսկ անհան-  
գիստ ու տանջուած՝ չէր գիտեր թէ  
ինչ գուշակէ այն լուսթեանէն ու յա-  
պաղմունքէն. արգելքներ կ'ենթա-  
դրէր. կը վստահացնէր զՇառնէ դեսպա-  
նութիւնը յանձն առնողին եռանդեանն  
ու անձնանուիրութեանը վրայ, (ա-  
ռանց աղջիկն ըլլալը իմացնելու), և  
կը ջանար ընկերակցին յոյս տալու՝  
մինչդեռ ինքը յոյսը կորսնցնելու վրայ  
էր:

Երրորդ օրն ալ անցաւ, ու աղջիկը  
դեռ չերևցաւ:

Թերեզա՛ աղջիկս՝ արդեօք ի՞նչ եղած  
պիտի ըլլայ, կը կրկնէր անձկանօք:

Ամբողջ չորրորդ օրը ժիրարտի գաւ-  
թին պզտիկ պատուհանէն չնայեցաւ.  
բայց թէ որ Շառնէ ուշադրութեամբ  
մտիկ ըրած ըլլար՝ թերևս խեղճ հօր հե-  
ծեծագին աղօթելը լսած կ'ըլլար՝ ըն-  
դունած ահաւոր հարուածոյն համար:

Կարծես թէ այս թշուառութեան  
տեղւոյն վրայ յանկարծ սգապատ քօղ-  
մ՝ ինկեր էր, ուր երբեմն առանց ազա-  
տութեան իսկ՝ ատեն ատեն խնդու-  
թեան և երջանկութեան ճառագայթ-  
ներ կը ծագէին:

Տունկն օր ըստ օրէ փճանալու վրայ էր, և անմխիթարն Շառնէ Բի'չխոյայի մահուանն հանդիսատես կ'ըլլար: Յուսահատելու երկու պատճառ ունէր. կը վախէր աշխատութեանցը արդիւնքը ու կենաց վայելքը կորսնցնելու, և երկրորդ՝ ընդունայն անդ նուաստացած ըլլալու: Ի՛նչ, փո՛ճ տեղը ճակատը խոնարհեցուցած պիտի ըլլար. շնորհք մը խընդրելու համար ինչուան գետին իյնալէն վերջը՝ պքացի պիտի մերժուէր:

Որպէս զի կարծես թէ Շառնէ ամենայն կողմանէ ձախորդութիւն կրէ՝ Լուդուիկ իսկ որ այնչափ պարզսիրտ ու հաղորդական էր, հիմա հետը խօսելու ալ կը զգուշանար: Լուռ մունջ ու նեղ սրբտութեամբ կու գար, վեր կ'ելլէր, կ'անցնէր, լեցուն բերնով կը ծխէր ու հազիւ վրան կը նայէր, ան ալ կարծես թէ մտքէն՝ արժանի ես քաշածիդ՝ ըսելով:

Վասն զի Լուդուիկ մէյմը որ լըտեց թէ հրամանատարը Շառնէի ազաչանքը ժխտեր է, իմացաւ թէ այնպիսի հանդամանոց մէջ էր որ կամ իր հաւատմտութեանը պէտք էր հեռուեր, և

կամ պէտք էր որ պարտքը կատարէ .  
բայց հարկ էր որ պարտքը վերագոյն  
դասեր , և ինքզինքը քաջալերելու հա-  
մար՝ վայրագ ու խոժոռ կերպ մը սկսաւ  
բանեցնել : Որովհետև անշուշտ խստու-  
թիւնները կրկնապատիկ պիտի ըլլային ,  
ուստի կանխաւ սկսաւ կրկնապատիկ  
խստութեամբ վարուիլ :

Հասարակօրէն անոնք որ աղէկ դաս-  
տիարակութեամբ կրթուած չեն՝ այս-  
պէս կը գործեն : Հոգւոյ վեհանձն սլաց-  
մունքները կը ճնշեն՝ երբ դժնդակ պաշ-  
տօններ հարկ ըլլայ կատարել , փոխա-  
նակ բարեսրտութեամբ այն դժնէու-  
թիւնը թեթեցնելու : Լուգուիկ չէ թէ  
խօսքով իր սրտին ազնուութիւնն յայտ-  
ներ էր՝ հապա գործով : Գործելէն ար-  
գիլուելով՝ կը լռէ , և այն անձին վրայ  
զգացած ծածուկ գորովն՝ որուն՝ ի պաշ-  
տամանէ ստիպեալ է բռնաւորն ըլլա-  
լու , նոյն իսկ այն անձին դէմ բարկու-  
թեան կը փոխուի իր սրտին մէջ : Ան-  
գութ հրամանի մը գործադրող եղած  
ժամանակը՝ կը ջանայ անզգայ երևնա-  
լու : Եթէ անով ատելի ըլլայ , ալ լաւ .  
պարտքն աւելի կը դիւրըննայ . ընդ մէջ



դահճին և դատապարտելոյն, ընդ մէջ  
բանտելոյն և բանտապանին պատե-  
րազմ պէտք է :

Երբ Շառնէի ճաշելու ժամն եկաւ,  
Լուդուիկ զանիկա բուսակին առջև ոտ-  
քի վրայ կայնած տեսաւ խոր ու մեծա-  
մեծ մտածութեանց մէջ ընկղմած: Զգու-  
շացաւ ուրիշ անգամներուն պէս զուար-  
թադէմ երևնալու երբ կու գար իր պրզ-  
տիկ սիրունիկ սանը աղջիկ անունով կը  
փայփայէր կ'ողջունէր, և Պարոնին ու  
Խաթունիկին վրայօք լուրեր կը հարցը-  
նէր: Շուտ քալելով անցաւ գաւթէն  
ու ձևացուց իբրև թէ զՇառնէ սենեկին  
մէջ կը կարծէր և շտապաւ ուտելիք կը  
բերէր. բայց Շառնէի շարժմունք ընե-  
լովը աչքերնին իրարու դպան ու Լու-  
դուիկ կանկ առաւ ու զարմացաւ քիչ  
օրուան մէջ բանտարգելոյն կերպարան-  
քը բոլորովին փոխուած տեսնելով:

Անհամբերութիւնը և ակնկալութիւ-  
նը ճակատը լայն խորշոմներով կընճը-  
ռեր էին. տժգոյն շրթունքը, նիհար ու  
գունատ այտերը վհատութեան մէջ կը  
ցուցնէին զիկքը, ևս առաւել մօրու-  
քին ու մագերուն խառնափնդորութիւ-

նը : Լուդուիկ առանց ուզելունքի մ'առտեն զգացուեցաւ այսպէս դիտելուն ժամանակ , բայց յանկարծ յիշելով հաստատուն առաջադրութիւնը՝ աչքը բուսակին վրայ դարձուց , աչք ըրաւ հեզնաբար , կծող ձևերով ուսերը թօթուեց , երգ մը սուլեց , ու երբ ճամբայ ելլելու վրայ էր՝ ցաւազին ու ազդու ձայնով մը՝

— Ես ինչ ըրի քեզի , Լուդուիկ , ըսաւ Շառնէ :

— Ինծի . . . ինծի . . . և ոչինչ , պատասխանեց բանտապանը , անոր յանդիմանական ձայնէն շփոթած , և այնչափ զգացուած որչափ որ չէր ուզեր երևալ :

— Աղէկ ուրեմն , կրկնեց կոմսը դէպ 'ի իրեն գալով և ուժով մը ձեռքէն բռնելով , ազատենք . գեռ ժամանակն է , և ես կերպ մը գտայ : Այո . . . հրամանատարը ասոր չկրնար նեղանալ . չկրնար իսկ իմանալ : Մնտուկ մը հող ճարէ ինծի . միայն քիչ մ'ատենուան համար քարերն հանենք . . . ո՞վ կրնայ դիտնալ . վերջը նորէն տեղերնին էր հաստատենք : . . .

— Դա , դա , գա՛ ըրաւ Լուդուիկ յան

կարծ ձեռքը ետ քաշելով, թող կորսուի ծաղիկը . արդէն ամենուն ալ բաւական վնաս հասուց, քեզմէ սկսեալ որ հիւանդանալու մօտ ես : Ըմպելիք չինէ անով, անկէ զատ ուրիշ բանի չծառայեր :

Շառնէ զայրացկոտ ու արհամարհական աչքով մ'անոր նայեցաւ :

— Բայց գոնէ միայն քեզի վնաս բերած ըլլար, աւելցո՞ւց Լուդուիկ, դու կը քաշէիր, և թո՞ղ ըլլար . բայց այն խեղճ մարդն ալ աղջկանէն զրկեցիր . . ալ պիտի չտեսնէ . . և քու պատճառաւդ :

— Իր աղջիկը . ինչպէս, գոչեց կոմսը :

— Այո՛, անանկ է . ինչպէս ալ կը հարցընես, շարունակեց միւսը կերակրոյ կողովը գետին դնելով, թեւերն իրարու վրայ բերելով, և սաստիկ յանդիմանութիւն տալու պատրաստուող մարդու մը դիրք առնելով . — Ձիերը կը մըտբակեն, և չեն ուզեր որ կառքը շրջինետը կը նետեն և վիրաւորելուն վրայ կը զարմանան . աս ինչ աղէկ բան : Կայսեր ուզեցիր գրել ու գրեցիր . աղէկ . ասիկա հրամանատարին կամօքին դէմ է . լսելուն պէս զքեզ կը պատժէ ամե-

նայն իրաւամբ : Բայց քեզի սուրհան-  
դակ մը պէտք էր նամակդ տանելու հա-  
մար . սուրհանդակը աղջիկը եղաւ :

— Ի՞նչ . . . այն մատղանջ աղջիկը . . .  
ինչքը :

— Զարմանալ կը ձեացնես . կարծէիր  
թէ կայսեր հետ ըրած թղթակցու-  
թիւնդ հեռագրով պիտի խաւրուէր .  
անիկա ուրիշ բանի կը գործածեն : . . .  
Այսչափս յայտնի է որ հրամանատարն  
ամեն բան իմացած է . . . չեմ գիտեր  
ինչպէս . . . անշուշտ առաջնորդէն , վասն  
զի աղջիկը միայն չէր կրնար այն ճամ-  
բաներէն երթալ : Հիմա դղեկին դուռն  
իրեն համար փակուած է . հայր ու աղ-  
ջիկ իրարմէ բաժնուած պիտի ապրին .  
որո՞ւն է յանցանքը :

Շառնէ ձեռքերովն երեսը գոցեց :

— Թշուա՞ն ծեր , ըսաւ . միակ միտի-  
թարութիւնը : . . . Ինչքը գիտէ :

— Երեկուրնէ 'ի վեր ամեն բան գի-  
տէ . մտածէ թէ զքեզ կը սիրէ : Բայց  
կերակուրդ պաղելու վրայ է :

Լուգուիկ կողովը վերցուց ու մէկէն  
բանտելոյն խուցը տարաւ :

Կոմսը տագնապած բազմոցին վրայ

ինկաւ . նախ ուզեց ինքը անձամբ մէկ  
հարուածով զԲի'յի ոչա փճացնել , բայց  
սիրտը չդիմացաւ : Դեռ մշուշ յոյս մը  
աղօտ կերպով առջևը շողաց . այն խեղճ  
աղջիկը որ վեհանձնութեամբ իրեն հա-  
մար կեանքը նուիրեր է , որուն թշուա-  
ռի մը օգնելու նախանձը ասանկ ան-  
գուլթ կերպով քաւել կու տան , դար-  
ձեր է . անշուշտ կրցաւ կայսեր հետ  
խօսիլ . այժ , անշուշտ : Նաև անշուշտ յա-  
ջողցուց . . . և ասոր համար է որ հրա-  
մանատարը իրեն դէմ զայրացեր է :  
Եթէ Բի'յի ոչայի ազատութեան հրա-  
մանը ձեռքն է , ինչո՞ւ կ'ուշացնէ . բայց  
պէտք է որ հնազանդի եթէ կայսեր  
կտուրն է : « Ո՛հ , օրհնած ըլլաս , աղնիւ  
աղջիկ , խեղճ աղջիկ , որ ինձի համար  
հօրմէզ զրկուեցար . . . ս՛հ , իմ կէս կեան  
քըս , ես զայն քեզի համար պիտի տամ . .  
քու երջանկութեանդ համար : Պիտի  
տամ . . . միայն թէ բացուին մէյմը այս  
բանտին դռները քեզի համար :

Է

Հազիւ թէ կէս ժամ մ'անցեր էր, երկու քաղաքացի սպաներ ազգային երիզով (écharpe) ֆէնէսդրէլլոյի հրամանատարին հետ մէկտեղ Շառնէի առջև ներկայացան ու հրաւիրեցին որ վեր խուցը ելլէ :

Երբոր սենեակը մտան՝ հրամանատարը սկսաւ խօսիլ: Մարմնեղ մարդ մ'էր, ճազատ ու գմբեթարդ ճակտով, խիտ ու սպիտակախառն մաղերով մէկը: Սպի մը ձախ յօնքէն սկսեալ դէմքը երկու կը բաժնէր և կու գար միանգամայն վերին շրթանցը վրայ կը լմննար զոր թեթև մը ճեղքած էր: Երկայն կապոյտ լօղիկ մը լայն ծայրերով, ինչուան վեր կոճկած, սունազգեստին վրայէն կօշիկներ, քիչ մը փոշիի<sup>1</sup> հետք մազերուն վրայ որոնք կողմնակի ծալլուած էին, ազանջէն օղեր կախած և կօշիկներուն վր-

<sup>1</sup> Նոյն ժամանակի սովորութիւն էր տեսակ մը փոշի ցանել կամ քսել գլխու մազերը փայլուն երեցնելու համար:

րայ խթաններ, (անշուշտ մասնաւորնը, շանակութեամբ, վասն զի յօդացաւի պատճառաւ և պաշտօնովը ըստ ինքեան դղեկին առաջին բանտարկեալն էր) . ասանկ կ'երևար արտաքուստ այն անձը՝ որուն ունեցած բոլոր զէնքը ձեռքի ունեցած գաւազանն էր :

Մորան հազարապետը մասնաւորապէս երևելի ընտանիքներէ քաղաքական յանցանաց համար բռնուածները իրեն պահպանութեանը յանձնուած ըլլալնուն՝ անոնց հետ աղէկ կերպով վարուիլը պարծանք կը համարէր, թէ պէտ և յաճախ առանց ուզելուն կիրք ալ կ'եղէր, ինչպէս նաև մաքուր խօսիլը, հանդերձ քանի մը բաղաձայններ հնչելու ունեցած դժուարութեամբը : կուրծքը տնկած ու մարմինը ուղիղ կը բռնէր . ձայնն ուժով և ազդու էր . զանազան շարժմունքներ կ'ընէր բարև տալու ժամանակ, և խօսելու ատենը ճակատը կը քերէր : Հանդերձ այսու Մորան հազարապետը՝ Ֆէնէսդրէլլոյի հրամանատարը՝ աղէկ զինուորական մը կրնար սեպուիլ :

Շառնէ տեսնելով որ խօսակցութիւն

նը քաղցր կերպով սկսաւ, և երկու ընկերներուն պաշտօնական դարձուածներէն կարծեց թէ Բիւլիոյսյի շնորհք ընելու նամակներ բերեր էին :

Հրամանատարը աղաչեց որ վկայէ եթէ երբեք տմարդութիւն ըրեր էր պաշտօնին մէջ իրեն նկատմամբ, պակաս խնամք տանելով, կամ իշխանութիւնը չափազանց բանեցնելով :

Այս յառաջարանութիւնը բարի գուշակութիւն էր. Շառնէ ուզածը գրուցեց :

« Գիտես, պարոն, հիւանդութեանդ ժամանակամբն տեսակ խնամք տարուեցաւ վրադ, եթէ չուզեցիր բժշկաց հրամաններուն հնազանդիլ, յանցանքը ոչ իրենցն է, և ոչ իմն : Մտածեցի որ հիւանդութենէդ վերջը աւելի դիւրաւ վրայ կրնաս դնել բաց օդոյն մէջ շարժմունք ընելով. և գրեթէ կատարեալ ազատութիւն ունեցար որ գաւթիդ մէջ ժուռ գաս » :

Շառնէ շնորհակալութեան համար ողջունեց զինքը, բայց անհամբերութենէն շրթունքը կը կափկափէր :

« Բայց սակայն, պարոն, խօսքն ա.



ուաջ տարաւ հրամանատարը՝ մահացեալ և անիրաւութիւն կրող մարդու մը ձայնով, տեղւոյս կանոնաց դէմ բռնի՝ զոր յայանի է թէ գիտէիր: Մընու զօրավարին առջև որ Բիէմնդի քաղաքապետն է զիս պատասխանատու բրիր. նաև կայսեր իսկ առջև, աղերսագիր մը ձեռքն հասցնելով:

— Չեղքն հասցնելով. ի՞նչ, ուրեմն ընդունեցաւ, հարցուց Շառնէ:

— Այո՛, պարոն:

— Աղէկ ուրեմն:

Եւ յուսով խեղճին սիրտը կը թընդար:

— Աղէկ ուրեմն, պատասխանեց հրամանատարը. պարզ այս բանիս համար հին դղեկին խուցերէն մէկուն մէջ պիտի փոխադրուիս և ամիս մը առանձին պիտի կենաս:

— Բայց վերջապէս, — գոչեց Շառնէ, դէմ դնել ջանալով այն անդուլթ և ըստոյգ հրամանին որ զինքը վերջին պատրանքէն ալ պիտի զրկէր, — կայսրը ի՞նչ ըսաւ:

— Կայսրը անանկ սնտոի բաներու մտադրութիւն չըներ. լսեց արհամարհանօք:

Կոմսը խցին մէջ եղած միակ աթոռն  
առաւ նստաւ, և անկէ վերջը չորս կող-  
մի հանդիպածներուն հազիւ ուշ դրաւ :

— Դեռ այսչափս ալ բաւական չէ: Քու  
հաղորդակցութեան միջոցներդ և դրսի  
հետ ունեցած վերաբերութիւններդ ի-  
մացուելով՝ բնականապէս կրնայ են-  
թադրուիլ որ նամակագրութիւնդ դեռ  
հեռուները տարածած ըլլաս: Կայսեր-  
մէ զատ ուրիշ անձանց ալ գրեցիր:

Շառնէ պատասխան չտուաւ:

— Այցելութիւն մը հրամայուած է,  
չարունակեց հրամանատարը աւելի չոր  
ձայնով, և ահաւասիկ այս պարոնայքը  
Թուրինի քաղաքապետէն խաւրուած  
են մէկէն օրինաց համեմատ քու առ-  
ջևդ քննութիւն բնելու: Հրամանը կա-  
տարելնէս առաջ՝ կ'ուզես գաղտնիքդ  
յայտնել. կրնայ օգտակար ըլլալ քեզի:

Բանտարկեալը նոյնպէս լուռ կե-  
ցաւ:

Հրամանատարը յօնքը պոստեց, ճա-  
ղատ հակառն ամբողջ խորշոմեցաւ և  
դէպ 'ի Մընուին խնդրակներուն դառ-  
նալով՝

— Հայա, պարոնայք, սկսինք, ը-  
տաւ:

Մէկէն երկուքը միարան սկսան վա-  
ռարանէն ինչուան անկողնոյն յարդե-  
րը զննել, և ինչուան կոմսին զգեստ-  
ներուն ներքին կտաւները :

Այս միջոցին հրամանատարը նեղ  
խցին մէջ ծանրութեայլ ժուռ գալով,  
զաւազանին ծայրովը փոփոխակի տախ-  
տակամածին իւրաքանչիւր քառակու-  
սիններուն վրայ կը զարնէր, որպէս զի  
իմանայ թէ կարևոր թղթեր ծածկելու,  
կամ փախչելու պատրաստութեամբ փո-  
րուած ծակեր կան արդեօք :

Կը յիշէր լաղիւտը և ուրիշ Պասդի-  
յէն փախչողները, ուր լայն ու խորունկ  
խրամներ, տասն ոտք թանձրութեամբ  
որմեր, վանդակներ, առ 'ի շեղ պա-  
տեր, ներքնածակ պատշգամներ, եր-  
կաթէ ճանկերով և թնդանօթներով  
լեցուն պատնէշներ, ամենայն զաղտնի  
դրանց և եզերաց քով պահապաններ  
չէին կրցած բան մ'ընել չուան և գամ  
ունեցող մարդու մը յարատևութեանը :

Տէնէսդրէլլոյի դղեակը այսպիսի ա-  
պահովութիւններ ամենևին չունէր .  
96<sup>էն</sup> վերջը իր ամրութիւնները մասամբ  
մը մնացեր էին, և հազիւ թէ քանի մը

զինուոր արտաքին որմոց վրայ պահ-  
պանութիւն կ'ընէին :

Երկայն բարակ քննութիւններ ընե-  
լէն վերջը՝ որչափ որ կարելի էր ընել  
անանկ խցի մէջ, կասկածաւոր բան  
մը չգտան, բայց եթէ ապակիէ ճերմակ  
շիշ մը որուն մէջ սևկակ հեղանիւթ մը  
կար, անշուշտ բանտարկելոյն թանա-  
քը :

Հարցուցին թէ ինչ կերպով ձեռք  
ձգեր էր այն թանաքը. անիկա աթո-  
ռին վրայ նստած պատուհանին կողմը  
դարձաւ և սկսաւ յարմարութեամբ  
մատերն ապակւոյն վրայ խաղցնել, ա-  
ռանց ամենեին պատասխան տալու :

Դեռ արկղիկը չէին քննած. բանա-  
լին ուզեցին. նետեց Մորան հազարու  
պետն ալ ոչ շարժուածքովը և ոչ նայ-  
ուածքովը մարդասիրութիւն կը ցու-  
ցընէր. բարկութենէն ինքզինքը կ'ու-  
տէր. երեսը կարմրած, աչքերը կրակ  
դարձած՝ խցին պզտիկ միջոցին մէջ  
կը շարժէր, դողդոջուն ձեռքերովը քա-  
կելով ու կոճկելով իր զգեստը, սաս-  
տիկ կրից մէջ կերպով մը ինքզինքը ըզ-  
բաղեցնելու համար :

Մէյմ'ալ երկու դասաստանական խնդրակները յանկարծական շարժմամբ, արկղիկին մէջիները դիտելու գրադած, մէկ ձեռքով զայն բռնած ու միւսով խառնելով, աշխուժով մը պատուհանին մօտենալով՝ որպէս զի աւելի լոյս տեսնեն, ուրախութեամբ միաբան գոչեցին .

« Բռնեցինք, բռնեցինք » :

Ան ատեն արկղին խորէն շատ մը թաշկինակներ գուրս հանեցին, ամենն ալ բարակ ու նեղ դրութեամբ սկսած, և կարծեցին որ մեծ դաւաճանութեան հաւաստիքը գտան :

Շառնէ իր անգին դիւանին պղծութիւն տեսնելով՝ ոտք ելաւ, թէն երկրնցուց սք առնու զանոնք . բերանը բացաւ . . . ետքը յանկարծ հանդարտելով դարձեալ նստաւ ու անշարժ կեցաւ, առանց բան մ'արտաբերելու :

Բայց այն նախկին նշանաւոր բորբոքումը բաւական եղաւ հրամանատարին կարծել տալու որ մեծ բան էր ձեռք ձգած աւարը : Իրեն հրամանաւր շուտ մը թաշկինակները դրոշմաւոր ու կրնքուած քսակներու մէջ դրուեցան . ա.

ուին շիշն, ինչուան նաև ակուխաունի,  
չը : Տեղեկութիւն մը գրեցին . Շառնէի  
առաջարկեցին որ ճշդութեանը վկայե-  
լու համար անունն ստորագրէ . մերժե-  
լու ձև մ'ըրաւ :

Ըրած ձևը յանձն չառնելու սեպե-  
ցին, և նոյն վայրկենին հրամայեցին որ  
հին ամրոցին մէջն իջնէ :

Ո՛հ, ինչ դառն, խառնակ ու տար-  
տամ մտածութեան մէջ էր Շառնէ . ա-  
մեն զգացմունքներէն աւելի սաստիկ էր  
լքեալ բանտարգելոյն սրտին ցաւը : Եւ  
ոչ ծաղրական ժմիտ մը երեսն երև-  
ցուց այս մարդկանց յաղթանակին  
վրայ, որոնք պանծանօք դատաստանի  
կը տանէին, իբրև դաւաճանութեան  
խորհուրդի մասունք՝ բուսակին վրայ ը-  
րած տեսութիւնները : Բոլորովին կը  
բաժնէին զինքն իր յիշատակներէն :  
Շառնէի անհնարին ցաւն ու տագնա-  
պը կրնայ զգալ տարփաւոր մը՝ որուն  
քովէն սիրելի հոմանունն նամակներն  
ու կերպարանքը մշտնջենապէս յափըջ-  
տակուած ըլլան : Բի'լլիոյան ազատե-  
լու համար ոտքի տակ առաւ իր ամ-  
բարտաւանութիւնն ու պատիւը . վնա-

սեց ծերու մը սրտին ու աղջկան մը կեանքին, և բան մը չմնաց անոնցմէ ուրոնցմով կապուած էր ընդ կեանս, և ոչ իսկ այն գրուածներն՝ որ իր սուրբ հետազօտութեանցն համառօտութիւնքըն էին :

Ը

Յովսէփինէի միջնորդութիւնը՝ որչափ որ նախ կ'երևար այնչափ զօրաւոր չեղաւ : Չէ : Ի շնորհս բուսակին և բանտարկելոյն ըրած գողտր փաստաբանութենէն վերջը, երբ նամակը պարունակող թաշկինակը Նաբոլէոնի ձեռքը տուաւ, կայսեր միտքն եկաւ կայսրուհւոյն նոյն առաւօտ Մարէնկոյի պատերազմական հանդիսին ժամանակ ունեցած նորօրինակ զբաղմունքը՝ զոր պատուոյն դէմ սեպեր էր, և Շառնէի ստորագրութիւնը կրկնապատկեց իր տժգոհութիւնը :

« Խենդեցեր է, ի՞նչ է, այս մարդը, ըսեր էր. ի՞նչ խաղ կը կարծէ ընել ինձի : Ժազոպէն մը տնկաբան. կարծես

Թէ դեռ ականջիս մէջ կը հնչէ Մարայի  
գիւղօրէից բնութեան գեղեցկութեան  
ցը վրայ զմայլիլը . կամ կարծես թէ  
դեռ աչքիս առջևը կը տեսնեմ Գութո-  
նը որ վարդ մը կոճակին օղին վրայ ան-  
ցուցած Ազգային Ժողովոյ կը ներկա-  
յանայ :

Յովսէփինէ ժագոպէն մակդիրին  
դէմ բողոքեց՝ որ կայսրը թեթևու-  
թեամբ ազնուական կոմսին տուեր էր .  
բայց նոյն վայրկենին սենեկապան մ'ե-  
կաւ իմացուց Նաբոլէոնի թէ զօրավար-  
ները , դեսպաններն և իտալական գա-  
ւառաց երեսփոխաններն ընդունելու  
թեան դահլրճին մէջ իրեն կը սպա-  
սէին . փութաց տեսութեան երթալու .  
հոն ոչ այնչափ աղերսագրին իմաստ-  
ներէն՝ որչափ աւելի հանդիսականաց  
ներկայութենէն ներշնչեալ՝ աղերսար-  
կուին անունը առիթ առաւ գաղափա-  
րախօսներու ( idéologues ) և փիլիսո-  
փայից դէմ եռանդեամբ ճոխանալու .  
դարձեալ ժագոպէնաց վրայ բերելով  
խօսքը՝ ըսաւ թէ աղէկ գիտէր զանոնք  
ճնշելն ու խոնարհեցնելը . և սպառնա-  
լից ու որոշողական կերպով մը ձայնը



կը բարձրացնէր՝ իրականէն աւելի ինք-  
զինքը տաքցած երևցնելով . և յարմար  
առիթները չկորսնցնելու ունեցած ճար  
տարամտութեամբը , կ'ուզէր որ խօսքե-  
րը լսուին ու կրկնուին , մասնաւորա-  
պէս Բրուսիոյ դեսպանէն որ նոյն ժո-  
ղովոյն մէջն էր :

Ասիկա հանդիսաւոր կերպով Յեղա-  
փոխութեան հրածեչտ տալ էր :

Ամենքը իրենց աիրոջ աչքը մտնելու  
համար ախորժ մը ցուցըցին ըրած խօ-  
սակցութեանը վրայ , մասնաւանդ թու-  
րինի քաղաքապետ զօրավարը Յակոբ  
Ապտալլահ Մընու մոռնալով՝ կամ թէ  
լաւ ևս ըսել , իրեն առջի համոզմունքն  
ուրանալով՝ սկսաւ բրտութեամբ իտա-  
լիոյ և Գաղղիոյ հանգանակներուն և ժո-  
ղովակաց Բրուտոսներուն վրայ յարձը-  
կել և ընդդիմախօսել . և շուտ մը նոյն  
կայսերական ատեանին դիմաց միա-  
ձայն և դասովին ամենքն ալ սկսան սաւ-  
տիկ անիծել դաւաճանները , խռովա-  
բարները , ժագոպէնները . անանկ որ  
Յովսէփինէ այս սոսկալի մրրկին առջև ,  
որուն անմեղութեամբ ինքը պատճառ  
եղեր էր , պահ մը շփոթեցաւ :

Երբ վախն անցաւ՝ Նարոյէոնի ականջէն կէս ծաղր ընելու ձայնով՝ « Է՛հ, Տէր, Խնչ պէտք է այսչափ աղաղակ խնդիրը ոչ ժազոպէնաց և ոչ խռովարարաց վրայ է, այլ խեղճ ծաղկի մը վրայ որ երբեք մարդու վնաս հասուցած չէ » :

Կայսրն ուսերը թօթուեց :

« Կարծե՛ն թէ զիս պիտի խաբեն այնպիսի փուճ խօսակցութիւններով, պոռաց : Աս Շառնէն վտանգաւոր մարդ է, անմիտ չէ . ծաղիկը պատրուակ է... վախճանը յատակը վերցնել տալ է . փախչելու կ'ուզէ պատրաստուիլ . վրան աղէկ հսկէ, Մընու : Եւ Խնչպէս այս մարդս կրցեր է գրել՝ առանց իր խնդիրը հրամանատարին ձեռքէն անցնելու : Այս է Տէրութեան բանտերուն մէջ եղած հսկողութիւնը » :

Կայսրուհին դարձեալ փորձեց պաշտպանել զբանտարկեալը :

« Մէկդի թողունք այս նիւթը, խաթուն » , ըսաւ կայսրը :

Եւ Յովսէփինէ այլայլած վհատած լռեց, ու աչքը վար առաւ, տեսնալով որ Նարոյէոն իրեն կը նայի :

Մընու կայսերմէ յանդիմանութիւն լսելով՝ ինքն ալ Ֆէնէսդրէլլոյի զղեկին հազարապետ. հրամանատարը յանդիմաներ էր. ուստի աս ալ փութացեր էր իր կողմանէ խստութիւն բանեցնելու դեռ նոր սաստ ընդունած ըլլալով :

Նոյն առաւօտը ժիրարտի ալ որ աղջկանէն զատուած՝ սիրտն յուսով լի զղեկին աշտարակներուն վրայ կը նայէր, շուտով Ֆէնէսդրէլլոյի հողէն ելլելու հրամանն ընդունելու ու ալ մէյմ՝ ալ հոն չերևնալու համար, Շառնէի պէս ինքն ալ խցին բաներուն այցելութիւն ունեցեր էր, բայց վրան տարակուսելու ամենևին բան մը չէին գտած :

Իսկ գալով կոմսին՝ ձեռագիրներուն յափշտակութենէն աւելի ծանրադոյն նեղութիւններ պահուած էին իրեն համար :

Երբոր մարտկոցին խուցը երթալու համար Մորան հազարապետը գաւիթն ինչաւ՝ հրամանատարին և երկու արքանեակներուն ետևէն, բուսակին չորս կողմն եղած շատ մը տախտակէ թեթև պատնէշները ածանցելով՝ որոնց առաջ թերևս մտադրութիւն չէր ըլլած, կամ

Թէ թերևս այցելութեան ժամանակ Շառնէի պահած յամառ լռութեանը վրէժն առնելու համար՝ կրկնապատիկ զայրացաւ .

« Ի՞նչ է այս ամենը , հարցուց Լուդուիկի , որ ձայնը լսելուն պէս փութով վազեց . ասանկ կը պահպանես դու բանտարկեալներդ :

— Ասիկա , տէր հազարապետ , պատասխանեց մումուալով ու տարակուտանօք բանտապանը , մէկ ձեռքով ծխիչը վար առնելով բերնէն ու միւսը գլխարկին տանելով իբրև զինուորական բարևի նշան . ասիկա այն բուսակն է որ գիտես . . . . որ շատ աղէկ դեղ է յօդացաւի և ուրիշ հիւանդութեանց համար » :

Յետոյ նախընթաց շարժման հակառակ զգացմամբ թևն հակելով , աջ թևը կուրծքին երկայնութեամբը սահեցուց ինչուան ազդրը , ու ձախը վեր առնելով՝ ծխիչը սովորական տեղը դրաւ :

« Թշուառութեանս , ըսաւ հազարապետը , թէ որ այս պարոններուն թողլու ըլլայինք , դղեկին գաւիթներն ու սենեակները մէյմէկ պարտէզ , փարախ ,

խանութներ և տօնավաճառի հրապարակներ պիտի դառնային : Հնապա, վերուցէք այս անպիտան խոտը ու ամեն շորս կողմինները » :

Լուդուիկ՝ փոփոխակի բուսակին Շառնէի և հրամանատարին նայեցաւ . ուզեց արդարացուցման քանի մը խօսքեր մտմտալ :

« Լուու կեցիր, պոռաց հազարապետը, ու շուտով հնազանդէ » :

Լուդուիկ լռեց . դարձեալ ծխիչը բերնէն վար առաւ, և մարելով թօթուեց, ու պատին շրթանցը վրայ գրաւ, և հրամանը կատարելու պատրաստուեցաւ : Գլխարկն ու զգեստը հանեց, ձեռքերը շփեց, ինքիրեն սիրտ տալու համար, և յանկարծ՝ իբրև թէ գլխաւորին բարկութեանը մէջ թափանցած ըլլար՝ քաշեց հանեց կապերն ու յարդերը, մանրեց ու բարկութեամբ գաւթին մէջ ցրուեց : Կարգն եկաւ բոյսը կանգուն բռնող նեցուկներուն . իրարու ետև զանոնք ալ հանեց, ծնկին վրայ կոտրեց ու ոտքին տակ առաւ : Տեսնողը կը կարծէր թէ Բի'յչիոյայի վրայ ունեցած նախկին սէրը ատելութեան փոխեր էր,

և թէ նոյնպէս ինքն ալ վրէժ առնուլ կ'ուզէր :

Շառնէ այս միջոցին անշարժ կեցեր էր . աչքերն անյագարար մերկ բուսակին վրայ տնկած՝ անանկ իբրև թէ նա յուածքովը կարենար զինքը պաշտպանել :

Զով օր մ'էր, երկինքն ամպոտ . ցօղունը առջի իրիկունէ ոտքի ելած էր ու թոռմած ճիւղերուն մէջէն պզտիկ կանանչ ծիլեր կ'երևային : Կարծես թէ Բի'լլիոյա մեռնելու համար կ'ուժովնար :

Ի'նչ . Բի'լլիոյա՛, իրեն Բի'լլիոյա՛ն . իւր իրական աշխարհքը, պատրանաց աշխարհքը, կենացն առանցքը, մտածութիւնը փայլեցնող առանցքը ալ պիտի չապրէր : Իսկ ինքը խեղճ բանտարկեալ մը՝ որուն յանցանաց քառութիւնը նախախնամութիւնն 'ի կախ թողեր էր, դէպ 'ի ճշմարիտ ուսման գաւառները թռչելուն մէջ պէտք էր որ դադարնմն առնուր : Հիմա տխուր ու պարապ ժամանակներն ինչո՞վ պիտի զբաղի . ո՞վ սրտին ամայութիւնը պիտի լեցունէ : Բի'լլիոյա, քեզմով բարգաւաճած

անապատը՝ անապատանայ պիտի դար-  
ձեալ : Ա՛լ լմնցա՛ն ուրեմն խորհուրդք ,  
հետազօտութիւնք, ցնորական մտածու-  
թիւններ , դիտողութիւններ , և ամե-  
նայն նիւթ սիրոյ : Ո՛հ , ինչպէս բան-  
տը նեղ պիտի գայ իրեն համար . ինչ-  
պէս ծանր պիտի երևայ շնչած օդը հոն ,  
որ ա՛լ ուրիշ բան չէ իրեն համար՝ բայց  
եթէ Բի՛ւլիոյայի գերեզմանը : Ի՛նչ .  
այն ոսկեղինիկ ճիւղը , այն սիրիլեան  
ոստը որ զինքը տանջող չար սատանա-  
ները վռնտեր էր , ա՛լ հոն պիտի չըլլար  
զինքը պաշտպանելու համար : Անհա-  
ւատ ու անզգայ փիլիսոփան իր հին կե-  
նօքը և դէմ առ դէմ իրեն դառն մտա-  
ծութեանցը պիտի ապրէր : « Չէ . լա-  
ւագոյն է մեռնիլ քան թէ վերստին այն  
ցուրտ գիշերուան մէջ ընկղմիլ ուսկից  
ինքը զիս ազատեց » :

Շառնէ այն միջոցին ստուեր մը տե-  
սաւ վանդակապատ պզտիկ պատուհա-  
նին քով . ծերուկն էր :

« Ա՛հ , հառաչեց մտքէն , յափշտա-  
կեցի միակ բարիքը , զրկեցի զինքն աղջ-  
կանէն . անշուշտ նեղութեանս վրայ զը-  
ւարճանալու և զիս անիծելու համար

եկած է : իրաւունք չունի արդեօք . ինչ է իմ թշուառութիւնս իր յուսահատութեանը քով » :

Երբոր նոյն կողմը դարձաւ՝ տեսաւ որ տկար ձեռուրներովը վանդակները բռնած՝ սիրտն ելած կը դողդըղար : Շառնէ չէր համարձակեր ճակատը վեր առնլու ու սրտանց շնորհք խնդրելու այն միակ անձէն , որուն մեծարանքը կ'ուզէր պահել . կը վախէր այն ազնուական դէմքին վրայ իրեն համար արժանաւոր յանդիմանութեան կամ արհամարհանաց նշան մը տեսնելու . և երբ աչքերնին իրարու հանդիպեցան , խեղճ հօրը գորովալից նայուածքը տեսնելով , որ իրեն յատուկ վշտերը մոռնալով , թշուառութեան ընկերոջը ցաւակից կ'ըլլար , Շառնէի սիրտը սաստիկ լեցուեցաւ , և երկու արցունք առաջին անգամ աչքերուն վրայ տեսնուեցաւ :

Քաղցր էին այն արտասուքը իրեն համար , բայց կատաղութեան մնացորդ մը զանոնք չորցնել տուաւ շուտով : Ձէր ուզեր որ վատ տկարութիւն մը կարծեն վրան չորս կողմը եղողները :

Հոն գտնուողներէն միայն երկու խընդ-



րակները անտարբեր ըլլալով՝ բան մը չէին հասկընար տեսածնէն . փոփոխակի զբանտարկեալը , ծերը , հրամանատարը , բանտապանը կը դիտէին , կը զարմանային ամենուն դէմքին սաստիկ ըզգացմանցը և այլ և այլ փոփոխութիւններուն վրայ , և դաշն ձայնով իրարու կը հարցընէին , թէ ասանկ ամուր պատրսպարուած խոտոյն տակ կարևոր գաղտնիք մը պահուած չէր արդեօք :

Բայց սակայն դառն գործը կատարուելու վրայ էր . Լուդուիկ՝ հազարապետէն ստիպուած , գիւղական նստարանին մոյթերն հանել փորձեց , բայց ամուր գտաւ :

« Մուրճ մը ան , մուրճ մը » , պոռաց հազարապետը :

Լուդուիկ առաւ , բայց ձեռքէն ինկաւ :

« Շուտ ըրէ , լմնցուր » , կրկնեց միւսը :

Առաջին հարուածով նստարանը ճայթեցաւ . երկրորդին՝ կործանեցաւ : Անատեն Լուդուիկ բուսակին վրայ ծռեցաւ որ աւերակաց մէջ կանգուն մնացեր էր :

Երոման հիւժեակ ու գունատ էր, ճակատէն քրտինքը կը վազէր : « Պարոն , պարոն , ինչո՞ւ սպաննէք . արդէն մեռնելու վրայ է » , գոչեց վերջապէս՝ մէկ անգամ մ'ալ դարձեալ աղաչաւորի կերպի խոնարհելով :

Հազարապետն իրեն նայեցաւ ու հենգնաբար ժպտեցաւ , բայց պատասխան չտուաւ :

« Աղէկ ուրեմն , ըսաւ Շառնէ եռանդեամբ . ես անձամբ կ'ուզեմ քաշել հանել , ես կ'ուզեմ փճացնել զինքը :

— Կ'արգելում , զրուցեց հրամանատարը զօրաւոր ձայնովը , և դաւազանը Շառնէի առջևն երկնցուց , իբրև ընդ մէջ բանտելոյն և բանտակցին անջրպետ մը քաշելով : Ան ատեն իրեն հրամայական ձևին համեմատ Լուդուիկ զԲի'յիոյաւ երկու ձեռքովը բռնեց գետնէն խլելու համար :

Շառնէ ահաբեկ յուսահատ՝ դարձեալ աչքերը բուսակին վրայ դարձուց :

Յօղունին ծայրը վերջին ճիւղերուն վրայ ուր հոյզն անդադար կ'ելլէր , փայլուն ու նուրբ պզտիկ ծաղիկ մը բանալու վրայ էր : Արդէն մէկալնոնք կա-

խուած ինկած էին իրենց ճզմուած կոթերուն վրայ . միայն անիկա դեռ կ'ապրէր . դեռ սոսկ անիկա ճնշուած խրդուած չէր բանտապանին լայն ու կոշտ ձեռուրներուն մէջ : Հազիւ թէ քանի մը տերևներով ծածկուած պսակը դէպ 'ի Շառնէի դարձած բացուելու վրայ էր : Կարծես թէ հոտն առաւ ու աչուրները արցունքով թրջած , շողալը , մեծնայն , աներևութանայն ու վերստին յայտնուելը տեսաւ :

Մարդն ու բոյսը փոփոխակի նաշուածքով վերջին բարև կու տային իրարու :

Եթէ այս վայրկենիս՝ յորում այսչափ կիրք և խանգաղատանք կը թափուէր խեղճ բուսակի մը բոլորը , յանկարծ քանի մը անձինք բանտին գաւթին մէջը մտնէին , ուր երկինք նսեմ ու տժգոյն ճառագայթներ կ'արձըկէր , այս հանդէսը և արդարութեան դատաւորները տեսնելով ու իրենց եռագոյն երիզը և զինուորական գլխաւորին անողոք հրամաններ տալը , անշուշտ պիտի կարծէին թէ դաղանի և արիւնահեղ պատուհաս մը կը կատարուէր , ուր Լուգուիկ գա-

հիճն էր և Շառնէ դատակնիքը լսող եղեռնաւորը : Այսպէս անշուշտ՝ անանկ չէ՛ : Շատ աղէկ ուրեմն . այս քանի մը անձինքը դալու վրայ են . . . ահաւասիկ եկան :

Մէկը Մընու զօրավարին անձնապահապետն է . միւսը կայսրուհւոյն ծառաներէն մէկը . վրանին եղած փոշին յայտնի կը ցուցնէ թէ շուտով հասնելու համար փութացեր են :

Ժամանակն էր :

Անոնց ներս մտնելու ձայնէն լուդուիկ զԲի'չիոյա թողուց , գլուխը վեր առաւ , և Շառնէ ու ինքը գունաթափ իրարու երես նայեցան :

Անձնապահապետը Դուրինի քաղաքապետին կողմանէ հրաման մը բերաւ Մորան հազարապետին . հազարապետը տեղեկացաւ ու տարակուսելու ձեմ'ըրաւ . գաւազանը շարժելով գաւթին մէջ քիչ մը քալեց . նոր ընդունած հրամանագիրն առջի իրիկուն ընդունածին հետ բաղդատեց . ուր ուրեմն այլ և այլ անգամ 'ի նշան զարմացման յօնքը վեր առնելէն վար իջեցնելէն վերջը , կէս մարդասէր դէմք մը կեղծելով

ու Շառնէի մօտենալով, զօրավարին նստակը շնորհքով ձեռքը տուաւ :

Բանտարկեալը բարձրաձայն հետա-  
գայ տողերը կարդաց .

« Երայսերական ու Թագաւորական վեհափառութիւնը հրամայեց ինձի, պարօն հրամանատար, ծանուցանելու քեզի թէ վերջապէս կը հաւանի պարօն Շառնէի բանտին գաւթին մէջ բուսած տնկոյն նկատմամբ ըրած խնդրոյն . նեղութիւն տուող քարերը թող վերցուին : Քեզի կը յանձնեմ որ հսկես հրամանին կատարմանը, և այս նիւթոյս մէջ գոհ ընես զՇառնէ » :

« Եեցցէ կայսրը, գոչեց լուղուիկ :

— Եեցցէ կայսրը », մումուաց ուրիշ ձայն մ'ալ, կարծես թէ որմոյն մէջէն :

Ընթերցուածոյն ժամանակ հրամանատարն ազդրովը գաւազանին վրայ կը թընած էր, կերպ մ'առնելու համար . երկու երիզապատ անձինքը չկարենալով մեկնութիւն մը տալ այս բաներու շփոթեր էին, և կը մտածէին թէ ինչպէս կրնային այս դէպքերը իրենց ենթադրած դաւակցութեանն հետ կապուիլ . անձնապահապետն ու սպասա-

ւորը կը հարցընէին իրարու թէ ինչո՞ւ համար այնչափ փութով խաւրուեցան : վերջապէս այս վերջինս Շառնէի դառնայով՝

« Կայսրուհւոյն կողմանէ ալ ծանօթութիւն մը կայ », ըսաւ : Ու Շառնէ կարդաց լուսանցքին վրայ .

« Պ. Շառնէն կը յանձնեմ Պ. Մորան հազարապետին խնամոցը . մասնաւորապէս երախտագէտ կ'ըլլամբան, տարկելոյն վիճակն անուշքընելու ջանիցը փոխարէն :

ՍՅՈՐԱԳՐԵԱԼ

ՅՈՎՍԷՓԻՆԷ »

« Եեցցէ կայսրուհին, » գոչեց Լուգուիկ :

Շառնէ համբուրեց ստորագրութիւնը, ու քանի մը վայրկեան գրուածքին վրայ նայեցաւ :



Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Գ





# ԲԻՉՉԻՈՒՄ

---

Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Գ

---

Ա

Ֆենէսդրէլլոյի հրամանատարը դարձեալ սկսաւ ամենայն մտրդասիրութիւն բանեցնել կայսերէն և կայսրուհի-թագուհիէն պաշտպանեալ Շառնէի նկատմամբ: Ոչ միայն խուցը չփոխադրեց, այլ մանաւանդ թէ Բի՛չչիո լայի պատնէշներն և ապաստանները վերստին կանգնել տուաւ, որոնց օգնութեանը սաստիկ կարօտ էր կէս խըլեալ և դալկահար տունկը:

Մորան հազարապետին Շառնէի և բուսակին գէմ ունեցած կատաղութիւնն այնչափ հանդարտեցաւ, որ ամեն առաւօտ լուգուիկի բերնով հար-

ցընել կու տար թէ բան մը կ'ուզէր արդեօք, և թէ ինչ վիճակի մէջ էր Բ'իշխոյա :

Շառնէ այս պատրաստականութիւնը տեսնելով՝ գրիչ թանաք թուղթ ուզեց, որպէս զի ճոխաբար գրէ մտքին բուսարանական հետազօտութիւնքն ու գիտողութիւնները . վասն զի Դուրինի քաղաքապետին նամակը քննութեան և յարբունիս գրաւելու իրաւունքը չէր ոչնչացներ . երկու դատաստանական խնդրակները իր կտաւէ դիւանները տարեր էին, և խոր քննութենէ վերջը ծանուցանելով թէ Չկրցանք այն քրթակցո՞թեանց քաղիքը գտնել, ամբողջը մէկէն Բարիզու ոստիկանութեան պաշտօնէին խաւեր էին, որպէս զի հոն իրենցմէ աւելի վարժ եղողները քննեն զնենն ու կարդան :

Իսկ միւս կողմանէ ծանր զրկմունք մ'ալ ունեցաւ Շառնէ որուն չէր կրնար այսպէս դիւրաւ գարման ընել :

Հրամանատարն ուզելով հսկողութեանը նկատմամբ Մընու զօրավարէն կրած յանդիմանութեան վրէժը ժիրարտիէն առնուլ, դղեկին մէկ ուրիշ կողմն

անցուցեր էր զինքը : Այս անջատումը որով ծերը բոլորովին առանձնութեան մէջ ինկաւ , կերպ մը խղճմտանք եղաւ Շառնէի սրտին , ուստի և հազարապետին ըրած շնորհքներն ապարգիւն կը սեպէր :

Օլուան մեծ մասը աչքերը վանդակին և փակուած պզտիկ պատուհանին վրայ տնկած կ'անցընէր : Հոն դեռ կը կարծէր տեսնել զժերունին իբրև նոյն վայրկենին մէջ որ ջանքով ստորին վանդակներէն ձեռքը դուրս հանելով ընդունայն տեղը բարեկամին ձեռքը բռնելու կ'աշխատէր . կը տեսնէր առ կայսր գրած աղերսագրին որմոյն քովէն սահելով չուանի մը ծայրէն ինչուան վանդակը բարձրանալը , որպէս զի իրմէ ժիրարտիի անցնի , ժիրարտիէն՝ Թերեզայի , Թերեզայէն՝ կայսրուհոյն . և այն անջրպետներուն ետևէն կը շողար ու կը բորբոքէր դարձեալ այն գլխած ու ներող նայուածքը՝ որ դեռ քիչ առաջ քաջալերութիւն եղեր էր իրեն անձկութեանցը ժամանակ , և բեկեալ սրտի մը ուրախութեան ձայնը կը լսէր՝ երբ վերջապէս Բի'լլիոյսյի շնորհքն հասեր էր :

Այս շնորհքն անոր և անոր աղջկանը պարտական էր, և այս մեծաշան փորձոյն փոխարէն՝ ուսկից միայն Շառնէ շահ ունեցեր էր՝ սոսկ իրենք պատժուեցան ու անզթութեամբ պատժուեցան : Խեղճ հայր, խեղճ աղջիկ :

Շատ անգամ աղջիկն ալ կ'երևար աչքին այն տեղն ուր վայրկեան մը տեսեր էր զինքը դժխեմ՝ ցնորքէն արթընցած ժամանակը, որ բուսակին մեռնիլը կը նախագուշակէր : Նոյն օրուան շփոթ մտածութեանցը մէջ կարծեր էր թէ երազոյն մէջ տեսածը Բի'յիոյայի դէմքն է, և հիմա ալ նոյնպէս զինքը կը կարծէ տեսնել :

Երբ բանտարգեալն այսպէս միշտ աչքերը ժիրարտի հին բնակարանին վրայ դարձուցած քաղցր ցնորքներով կը սնանէր, շարժմունք մը եղաւ աղտոտ ու մութ ապակոյն ետեւէն . պրզտիկ պատուհանը բացուեցաւ, խաթուն մը վանդակին առջև երևցաւ . գորշ ու հողագոյն մորթ ունէր, մեծ ելունդն, ազահ ու նենգաւոր յաչքեր :

Լուղուիկի խաթունն էր :

Ասկէ վերջը Շառնէ ալ ուրիշ բան չտեսաւ :

Բ

Բի'ւլիոյա ոտնակապերէն արձը-  
կուած, աղէկ հողով շրջապատեալ, յա-  
տակին վրայ ընդարձակօրէն տարա-  
ժուած՝ ունեցած վտանգն անցուց, նո-  
րէն կանգնեցաւ և ամենայն նեղութիւն  
ներուն յաղթանակեց : Բայց սակայն  
ժողիկները կորսնցուցեր էր, բաց 'ի մէկ  
պզտիկ ծաղկէ մը որ ցողունին ծայրը  
վերջին բացուածն էր :

Շառնէ հողոյն շատնալէն և բաժա-  
կին մէջ հասունցող հատիկին ուռելէն  
նոր ու վսեմ գիւտեր կը նախատեսէր  
և նոյն իսկ՝ սերմանեաց հանգէսը կ'ե-  
րագէր : Ա'լ հիմա հողը պակաս չէ .  
Բի'ւլիոյա կրնայ մայր ըլլալ և դատե-  
րացը աճիլը տեսնել իր հովանեացը  
ներքև :

Այն մեծ օրուան սպասելուն ժամա-  
նակ սրտին մէջ փափաք մը ծնաւ ըն-  
կերոյը ճշմարիտ անունը գիտնալու, ո-  
րուն հետ այնչափ քաղցր վայրկեաններ  
անցուցեր էր :

« Ի՛նչ, պիտի չկարենամ երբեք Բի՛չ-  
չխոյալի, ընկեցիկ խեղճ աղջկան նոյն  
անունը տալ ինչ որ ուսմունքն ու սո-  
վորութիւնը սեպհականած է, ինչ որ  
կը կոչուի մարգաց և լերանց ընկերնե-  
րուն հետ միաբան » : Հրամանատարն  
իրեն այցելութեան եկած ըլլալով՝ Շառ-  
նէ իմացուց տնկարանական գրուածք  
մը հետազօտելու պէտքը : Հազարապե-  
տը առանց խնդիրքը մերժելու և պա-  
տասխանատուութիւնն ալ ուզելով ա-  
պահովցրնել՝ մտածեց նախ Բիէմոնդի  
քաղաքապետէն հաւանութիւն առնուլ  
և Մընու ոչ միայն փութաց կատարե-  
լապէս հրաման տալու, այլ նաև Դու-  
րինի գրատունէն շատ մը ստուար հա-  
տորներ խաւրեց՝ բանտարկելոյն հետա-  
զօտութիւնքը դիւրացրնելու մտքով . . .  
Յոռսալով, կը գրէր, որ վեհափառ  
կայսրոշհիև և քագոշհիև մեծապէս  
տեղեկոշքիշև ոշևեևալով՝ ինչպէս շատ  
ոշքիշ՝ նոյնպէս այս գիտոշքեանս մէջ,  
կ'ախորժի այս ճաղկան անոշևը գիտ-  
նալ, որոշև վրայ այսչափ մեծ մտա-  
դրոշքիշև ցոշցոշց :

Շառնէ տեսնելով որ լուղուիկ գիտու-

Թեան բեռան տակ կարկամած, բազմաթիւ հատորներ կը բերէր, ժպտեցաւ.

« Այսչափ մեծ բանակի ի՞նչ պէտք կայ ծաղկին անունն իմանալու համար »  
ըսաւ :

Բայց սակայն գոնեա այս անգամ ախորժ մը կը զգայ պահ մ'ալ դարձեալ ձեռքը գրոց վրայ դնելով :

Կը թղթատէ զանոնք այն հետաքրքրութեան դողով զոր առաջ ալ զգացեր էր երբեմն՝ մինչդեռ գիտութիւնն իրեն համար գաղտնի ու ցանկալի բան էր. հիմա միայն ծաղկանց գիտութիւնը կը յարգէ ու տենչալի կը համարի, բնութեան գիտութիւնը՝ ի շնորհալից բացատրութեան իւրում :

« Եթէ ըլլայ երբեք որ այս տեղերէս դուրս ելլեմ, կ'ըսէ ինքիրեն, տնկարան պիտի ըլլամ, յորում չկան դպրոցական ու հետեակ հակաճառութիւններ որ լուսաւորելու տեղ կը մոլորեցընեն զմարդ : Բնութիւնն ամեն աշակերտացը նոյն պէտք է երևայ. թէպէտ փոփոխական՝ այլ միշտ ճշմարիտ, թէպէտ պարզ՝ այլ միշտ գեղեցիկ : »

Եւ նոր եկած գրքերուն կը սկսի



հարցմունքներ ընել. իրենց վերնագիր-ներն ու անուննին ալ հարցնելով, որոնք էին Ազգք տնկոց Լիննէոսի, Բռնասքանոչիռն Դուռնըֆորի, Պոհէնի Հանդիսարան տնկոցը, Բլիւքընէի, Ալտրովանտի, Շաիւցէրի Տնկագրոչիռնը, Ծառախօսոչիռնը, Երկրագրոչիռնը. յետոյ գաղղիներէն և իտալերէն ուրիշ գրքեր:

Շառնէ թէպէտ և այս ուսումնական կազմածները տեսնելով պահ մը սոսկաց՝ բայց չյուսահատեցաւ, և կանխաւ մտածած քննութեանցը պատրաստուելով՝ նախ ամենէն բարակ հատորը բացաւ քննելու համար, կամ պատկերներու մէջ տեսնելու համար թէ բոյս մը ինչ զանազան անուանակոչութիւններ կրնայ ունենալ:

Կը փափաքէր եթէ կարելի ըլլար ազատօրէն ընտրելու այս ծաղկային տօնացոյցին մէջ անուն մը ընդ մէջ Ալսէայի, Ալիզմայի, Անտրիալայի, Պրոմէլայի, Սէլոզիայի, Գորոնիլլայի, Էուֆրազիայի, Հելվելլայի, Բասսիֆլորայի, Բրիմուլայի, Սանդովինայի, կամ ուրիշ որ և իցէ քաղցրահնչիւն և քաղցրալուր անուն մը:

Յանկարծ միտքը վախ ինկաւ որ չըլլայ թէ բոյսն այլանդակ ու անշնորհք անուամբ մը հանդերձ՝ արական ու չէզոք սեռ ունենայ, որով սիրուհւոյն և ընկերուհւոյն նկատմամբ ունեցած գաղափարները կը շփոթէին :

Ինչ պիտի ըլլար ցնորիցը մէջ տեսած օրիորդը եթէ ասոնցմէ մէկն ըլլար իր անունը, ինչպէս օրինակի համար Շաւաշարիւն կամ Նուիճ (Hydrocharis morsus ranæ), կամ Բանկ-խուլորճն (Satyrium hyosciamus), կամ Շանալեզու (Cynoglossum), կամ Հեղզն (Cucubalus), կամ Քերոցատունկ (Cenchrus), կամ Շաւառ (Ruscus), կամ Գաղղիերէն խժդժագոյն ևս անուն մը, ինչպէս են Եզնարգել (Arrête-boeuf), Ճանճորսակ (Attrape-mouche), Խողաբուտ (Pain de pourceau), Խոտ հիբի (Herbe à pauvre homme), կտուց կոընկան (Bec de grue), Աչարոյժ կամ Աչոցարեկ (Casse lunette), Շնատամն (Dent de chien), Ականջ նապաստակի (Oreille de lièvre), Աղուէսագի (Queue de renard), Յոուկ որթոյ (Mufle de veau), Մօրուք այծի (Barbe

de chèvre), Լեզու եղջերուի (Langue de cerf) կամ Մաղիկ կկուի (Fleur de coucou). միթէ յարատև վիշտ մը պիտի չըլլար իր սրտին. չէ, այսպիսի վտանգաւոր փորձի մը մէջ պէտք չէ ձգէ ինքզինքը :

Բայց հանդերձ այսու յոչկամս հետ-զհետէ իւրաքանչիւր հատորները դար-ձեալ կ'առնուր կը բանար, վերստին կը թղթատէր, բնութեան անթիւ հրաշալեացն առջև հիանալով, մարդկանց կարգադրական ոգւոյն (esprit systématique) դէմ նեղանալով, որոնք ինչուան այն ատեն իրեն համար ամենէն քաղցր ուսմունքը՝ քան զամենայն դրժնեայ, արուեստական և խառնաշփոթ ուսմունքն ըրեր էին :

Ամբողջ ութը օր միակերպ ջանաց զբոյսը զննելու որպէս զի անունը կարենայ իմանալ. չկրցաւ յաջողիլ: Այնչափ նորատեսակ բառերու քառսին մէջ մէկ դրութենէ միւսոյն մէջ իյնալով, յամր ու ընդարձակ համանուանց մէջ թափառած, որ իրաւցնէ Հեփեստոսի ուռկանին կը նմանի, այնմ որ կը փակէ զտնկաբանութիւնը ցանցով մը՝

կարծես թէ վայելքը ծածկելու համար  
և ինչուան խողելու չափ վրան կը ծան-  
րանայ : ի զուր կը խորհրդակցէր իրա-  
րու ետև ամենայն հեղինակաց հետ 'ի  
գասուց 'ի կարգս իջնելով, 'ի կարգաց  
'ի սեռս, 'ի սեռից 'ի տեսակս, 'ի տե-  
սակաց 'ի զանազանութիւնս . անդա-  
դար կը կորսնցնէր հետքը և խարերայ  
առաջնորդները կ'անիծէր միշտ անմիա-  
բան գտնելով զանոնք իրարու մէջ, ոչ  
միայն յընդհանուր անուանադրութեան  
(nomenclature), այլ նաև երբեմն բու-  
սակին նշանակութեան և իւրաքանչիւր  
գործարանացը պաշտօններուն նկատ-  
մամբ <sup>1</sup> :

1 Մէկ օրինակ մը միայն յիշեմ՝ հոս տնկաբա-  
նից տարօրինակ կարծեաց զանազանութեանը :  
Մակելեպեանց վըայ (ազգ. Ապոկլիփեանց) լիննէոս  
կը համարի թեփերն իբրև առէջք . Ատանսոն՝ եղ-  
ջիւրները կը համարի իբրև նրբաթելք առէջից, և  
թեփերն իբրև երկուորիկք ծաղկանց . Ժաքէն կը  
համարի որ երկուորիկք թեփից խորշերուն մէջ  
փակեալ են . Տէֆոնդէն կը համարի սև մանրա-  
մաղ փոշիներն իբրև ճշմարիտ երկուորիկք . Թի-  
շար իբրև շարժուն գրոշմք . վերջապէս Ղամարք  
թեփերն առէջք կը կարծէ և անոնց ներքին երե-  
սին երկու խորշերը երկուորիկք : (Տես Մտաղկոց  
գաղղփական, հտ. Գ. երես 668 :)

Այս բիւր անգամ կրկնուած փորձերուն մէջ պզտիկ ծաղիկը, միակ ծաղիկը, բլթակ առ բլթակ քննեալ ինչուան բաժակին մէջ, յանկարծ քննողին անդամազնին ձեռքին տակ բաժնուեցաւ ինկաւ, հետը տանելով հետազօտութեան փափաքները հատիկին վրայ, սերմանց յոյսն ու Բի'չչիոյայի մայրութիւնը :

Շառնէ տրտում տխուր քիչ մը ժաւմանակ լուռ կեցաւ. ետքը գողտր ձայնով մը և բարկացայտ աչքով դեռ ծընկանը վրայ բացուած գլքերուն խօսելով՝

« Ի՞նչ մտածութիւն ունեցայ խորհրդակցելու ձեզի հետ, գոչեց. անունը Բի'չչիոյա է, ոչ այլ ինչ քան զԲի'չչիոյա, բանտարգելոյն բոյսը, մխիթարութիւնը, բարեկամը. ինչ պէտք ունի ուրիշ անուան, և ինչ ուրեմն կ'ուզէի գիտնալ : Անզգամ. ինչ, այս իմանալու ծարաւոյն դէմ ստոյգ դեղ մը չկայ . . . կարելի չէ բժշկուիլ : »

Եւ բարկութեամբ գլքերն իրարու ետև ձեռքն առնելով կատաղաբար գետին նետեց. անոնց մէկուն մէջէն թրղ-

Թիկ մը դուրս ելաւ և վայրագաւթին մէջ թռաւ . Շառնէ գետնէն վեր առաւ . նոր գրուած քանի մը տողեր կային վըրան և կնկան գիր էր :

Եւ ահա աս էր գրուածքը .

« Յոշաա՛, և դրացոյդ աչ ըսէ որ յոշաայ , վասն զի երկուքնիդ աչ չեմ մոռնար : »

Աւեփարան ըստ Մարիէնոսի :

## Գ

Շառնէ կրկին կրկին քսան անգամ այս տոմսակը կարդաց որուն իմաստը աներկբայելի էր . բայց ո՞վ էր այն անձնանուէրը որ միջոց գտեր էր թղթակցութիւն ընելու իր հետը . կին մը զոր հազիւ թէ տեսեր էր . ձայնը չէր լսած , և եթէ յանկարծ առջևը ներկայանար՝ անտարակոյս չէր կրնար ճանչնալ . բայց սակայն ան է միայն որ ազնուութեամբ մը ինքզինքը կը յայտնէր . . . : Ի՞նչպէս թերեզա իր Արգոսներուն հսկողութեանն յաղթելով կրցեր էր այս տողերն իրեն հասցընել : Ըսէ դրացոյդ

որ յուսա՛յ , . . . : Խեղճ աղջիկ , որ չէր համարձակեր հօրը անունը տալու . Խեղճ հայր , որուն պիտի չկարենայ աղջրկանը յիշատակը ցուցընել :

Այս բարի ծերուկին վրայ մտածելով՝ որուն մեծ թշուառութեանը պատճառ ինքն եղեր էր և ալ չէր կրնար տառապանքը մեղմացնել՝ Շառնէ սաստիկ ցաւ կը զգար և անքուն գիշերներուն մէջ Ժիրարտի միտքը կ'իյնար ու մեծ վիշտ կ'ըլլար իրեն :

Այս գիշերներէն մէկուն մէջ անսովոր աղաղակ մը լսուեցաւ խցին վրայ եղած վերին յարկի սենեկին մէջ որ ինչուան այն ատենը պարապ էր , և միտքն իրարմէ այլանդակ մտածութիւններով լեցուեցաւ :

Առտուան դէմ Լուդուիկ զբաղեալ դէմքով խուցը մտաւ , և թէպէտ կ'ուզէր կեղծել , սակայն վառվռուն ու կրակոտ աչուրները մէկ մեծ լուր մը ունենալն յայտնի կ'ընէին :

« Ի՞նչ կայ , հարցուց Շառնէ , և ի՞նչ էր այս գիշերուան վերի խշրտոցը :

— Ո՛հ բան մը չէր , պարոն կոմս , բան մը չէր . . . այսինքն ընդհակառակ .

կրն . . . երէկ նոր խումբ մը բանտարկելոց աւելցան և պարապ խուցերը լեցուեցան : Այո՛, ընկերակից մը պիտի ունենաս ու գաւթիդ զուարճութիւնը մէկտեղ պիտի վայելես . . . . ո՛հ , ապահով եղիր՝ աղէկ մարդիկ հոս կը բերենք : Աղէկ մարդիկ ըսելով , վրայ բարաւ փութով , կը հասկընամ որ գող չկայ մէջերնին : . . . Սանդուխին վրայ մարդու ոտքի ձայն կը լսեմ . ահաւասիկ նոր անձը . . . անշուշտ կու գայ քեզի առաջին այցելութիւնն ընելու : »

Այս անակնուճելի ծանուցման վրայ Շառնէ զարմացմամբ ոտք ելեր էր ու չէր գիտեր թէ արդեօք ուրախանայ՝ թէ տրտմի այս նորութեան վրայ , երբ յանկարծ մէյմ՝ալ տեսաւ որ ժիրարտի խուցը մտաւ :

Խօսք մը չլսուեցաւ բերներնէն , բայց իրենց ուրախութեանը վկայ էր սղմուած ու յուզեալ ձեռքերնին , և հոգիներնին մէկ նայուածքով իրարու հետ կցեցաւ :

« Հայա , հայա , ըսաւ Լուդուիկ խնտալով , կը տեսնեմ որ շուտով պիտի ճանչուորիք . » ու դուրս ելաւ երկուքն իրարու առջև համր ու զմայլած թողլով :



Ասանկ վայրկեան մը նշանաւոր լու-  
թենէ վերջը «Ո՛վ զմեզ միացուց, հար-  
ցուց Շառնէ :

— Անտարակոյս ազլիկս . և ինչպէս  
կրնամ խարուիլ . միթէ կենացս ամեն  
երջանկութիւնը իրմէ ընդունած չեմ : »

Շառնէ ճակատը խոնարհեցուց ու  
ձեռքերովն ուժգին և ո ծերոյն ձեռքե-  
րը սղմեց . յետոյ արկղիկէն պզտիկ  
թուղթ մը դուրս հանելով իրեն ցու-  
ցուց .

« Կը ճանչնամ այս գիրը :

— Իրենն է, գուցե ժիրարտի , աղջ-  
կանս՝ ի՞մ թերեզայիս գիրն է : Չէ , ին-  
քը զմեզ չէ մոռցած , և խոսամունքը  
կատարելու չուշացաւ . վասն զի երկուք-  
նիս ալ ահաւասիկ միացանք : Ի՞նչպէս  
այս թուղթը ձեռքդ հասաւ : »

Շառնէ պատմեց . ետքը անմտադրու-  
թեամբ շարժմունք ու ձև մ'ըրբու թուղ-  
թըն առնելու . բայց տեսնելով որ ժի-  
րարտի զգածեալ ու գողգոջուն ձեռքե-  
րուն մէջ բռնած ծանր ծանր՝ բառ առ  
բառ՝ գիր առ գիր կը կարդար , բիւք  
անգամ կը համբուրէր , իմացաւ որ ալ  
Քրենն չէր վերաբերեր , և սրտին խորէն

սաստիկ ցաւ մը զգաց որուն պատճառը չկրցաւ ըմբռնել :

Առաջին վայրկեաններն անցնելէն վերջը՝ երբոր Թերեզայի վիճակին և բընական անհասկացիմ նկատմամբ խորհրդածութիւններն սպառեցան, Ժիրարաի բնական հետաքրքիր աչքով ասպնջականին բնական արանը դիտելով՝ պատին իւրաքանչիւր արձանագրութեանց առջև կանկ կ'առնէր :

Անոնցմէ երկուքը արդէն մասամբ մը սրբագրուած էին . ծերն ըմբռնեց եթէ տնկոյն ազդեցութեամբն էր, և գուշակեց թէ ինչ մեծ օգուտ և դաս եղած էր փիլիսոփային . ինքն ալ ձեռքը ածուխ մը առաւ :

Առաջներէն մէկն աս էր .

Մարգիկ երկրիս վրայ, ինչպէս ժամանակաւ տակը, իրարոջ մօտ կը կենան՝ բաց առանց կապակցութիւն ունենալու մէկմէկու հետ : Մարմնոյ համար այս աշխարհս բազմամարդ կըրկէս մ'է, ոչք ամեն կողմանէ ոգորելու է . իսկ սրտի համար՝ ամբարաւան մը :

Աւելցուց .

Եթէ բարեկամ մը չուենեաւք :  
Յետոյ մեղմով մ'ընկերակցին դառնալով թեւերը բացաւ :

Շառնէ դեռ յուզեալ մտքով մէջ վազեց, և երկուքը մէկէն բարեկամութեան սուրբ գաշինքը կնքեցին եռանդուն և երկայն գրկախառնութեամբ :

Երկրորդ օրը մէկտեղ առաջին յարկի խցին մէջ նախաճաշիկ կ'ընէին, մէկը անկողնոյն վրայ նստած, միւսը աթոռոյն վրայ, և մէջտեղնին դրուագեալ ստոյը կար, որուն վրայ բանտին օրական պարէնին հետ լճի աղուոր կարմրախայտ մը, Սընըզի խեցգետիններ, Մոնտովի գերազանց գինիէն մէկ շիշ մը և կտոր մը Միլլէզիմոյի ախորժակ արթընցնող համեղ պանրէն որ ընդհանուր իտալիոյմէջ ըռապիոյա անուամբ ճանչցուած է :

Խնջոյք մ'էր ասիկա բանտարգելոց համար . բայց Ժիրարտիի ստակ չէր պակսեր և ոչ ալ հրամանատարին կողմանէ բարեհաճութիւն՝ նոր հրամաններն ընդունելէն վերջը :

Անուշ ու վստահ խօսակցութիւն մը սկսան ընել մէջերնին :

Ոչ երբէք Շառնէ ասանկ աղէկ սեղանի համ վայելեր էր, ոչ երբէք ասանկ սննդարար կերակուր կերած կը կարծէր ինքզինքը. վասն զի եթէ հրահանգք և Եւրոտասայ ջուրը Սպարտացւոց սև կերակրոյն համեմունք կու տային, բարեկամի մը ներկայութիւնն ու խօսակցութիւնը ամենէն պարզ և անպաճոյճ կերակրոց ալ համը կրկին կ'անուշընեն:

Մէկէն մտերմութիւնն իրեն ընթացքն առաւ. հազիւ դեռ մէկզմէկ ճանչնալով՝ զիրար սատարիկ կը սիրէին. առանց տարակուսի և նախերգանաց, առանց յորդորուելու առ այն ուրիշ կողմանէ՝ բայց եթէ առջի իրիկուան բարեկամութեան դաշինքը կատարելու համար: Շառնէ պատանեկութեանը ամբարտաւան աշխատութիւններն ու ընդունայն յիմարութիւնները պատմեց. ծերն ալ նոյնպէս խօսեցաւ ու կենացը նախկին մուրրութիւնները խոստովանեցաւ:

Դ

Փիրարտի Դուրին ծնած էր ուր հայ-  
րը ընդարձակ գործարան մ'ունէր զի-  
նուց :

Բիէմնդ միշտ անցք եղած է վաճա-  
ռուց և գաղափարաց Գաղղիայէն դէպ  
'ի Իտալիա , ինչպէս նաև Իտալիայէն  
Գաղղիա մտնող վաճառուց և գաղա-  
փարաց : Թէ առջինէն և թէ երկրորդէն  
միշտ մաս մը ճամբան կը մնայ : Գաղ-  
ղիոյ քամին հօրը վրայ փչեր էր , որով  
փիլիսոփայ էր ու վոլդէրեանց ու վերա-  
նորոգողաց դասէն էր . Իտալիոյ քամին  
ալ փչեր էր մօրը վրայ , որով չափա-  
զանց ջերմեռանդ էր . իսկ ինքը խեղճ  
աղան զիրենք սիրելով մեծարելով և  
մի և նայն վտտահութեամբ երկուքին  
ալ մտիկ ընելով՝ հարկաւ երկուքին  
բնաւորութեանն ալ մասնակից կ'ըլ-  
լար : Ասանկ եղաւ իրաւընէ . իբրև բա-  
րեպաշտ հասարակապետական՝ կրօնից  
և աղատութեան թագաւորութիւնը  
կ'երազէր , անշուշտ շատ աղուոր դաշ-

նակցութիւն մը՝ բայց իր կերպովը՝ կ'ըմբռնէր ու քսան տարուան էր . այն ատեն այդչափ տարիք ունենալը երիտասարդ ըլլալ ըսել էր :

Շուտով երկու կողմին ալ առհաւատչեայ նշանները տուաւ :

Այս միջոցին բիէմոնդեցի ազնուականք այլևայլ արտունութիւններ կը վայելէին , որոնցմէ զուրկ ըլլալը ընկերութեան միւս դասուց մեծ նուաստութիւն էր : Օրինակի համար՝ միայն իրենց անդամակիցները տեսարանին տախտերուն մէջ կրնային երևալ , և որ անհաւատալի կը տեսնուի՝ հասարակաց պարտէջ կաքաւել . վասն զի պարն օգնուածութեան հրահանգ սեպուած էր , և քաղաքացիք իբրև հանդիսատես հոն ներկայ պիտի գտնուէին :

Յակոր ժիրարտի երիտասարդ քաղաքացեաց ամբոխի մը զլուխ անցած , այս եզակիսն առանձնաշնորհութիւնն ոտքի տակ տուաւ . չվախցաւ ազնուականաց պարտէջ ռամկական պարմը հաստատելու : Ազնուական կաքաւողները բարկացան . սոսկական հանդիսականքն ու պարտոյք ահեղագոչ

ձայնով սկսան պոռալ կանչել հասարակաց պար պահանջելով: Սյո խոռվական ձայներուն ուրիշ ազատական սղաղակներ յաջորդեցին, և հետևեալ խառնակութեան ժամանակ քսան անգամ մենամարտութեան հրաւիրելէն և ժխտուելէն վերջը, ոչ թէ հակառակորդաց վատութենէն՝ հապա ամբարտաւանութենէն, անխոհեմն ժիրարտի հասակին և հաւասարութիւն սիրող գաղափարացը սաստկութենէն մղուած՝ անուանի ազնուականներէն և վայրագ հակառակորդներէն մէկուն երեսին ապտակ մ'ինջեցուց:

Ծանր էր նախատինքը. Ս. Մարտանոյի հզօր ազգատոհմն երդուընցան որ վրիժառու ըլլան. Ս. Մօրիկի և Աւետմանն ասպետները, վերջապէս բոլոր երկրին ազնուականները, որոնք վտանգի ժամանակ մէկ մարմին կը ձևացնեն՝ կարծես թէ մէկ դէմք մը կ'երեցնէին. այնչափ իւրաքանչիւր դք իբրև իրեն թշնամանք կը սեպէր եղածը:

Յակօր հօրը հրամանաւը ազգականներէն մէկուն տունը ապաւինեցաւ որ Պիէլի շրջակայքը Մասսերանոյի իշխա-

նապետութեան պզտիկ աւանին ժողովրդապետն էր . և դատաւորի առջև ելլելու հրաւիրուելով ու շերեւակովն՝ ՚ի պատիժ 5 տարուան համար պքսորուեցաւ Դուրինէն :

Այս եղածին՝ զոր դառակցութիւն կ'աքառական կոչեցին, տրուած անճահ կշիռը՝ հայրենակցացն առջև մեծցուց զՅակոբ : Ոմանք զինքն իբրև ժողովրդեան վրիժառու սեպեցին . այլք այն վտանգաւոր նորասէրներէն մէկը որ ընդհանուր յեղափոխութիւն կ'երազեն . և երբ ապտակահարը արքունեաց մէջ ռամկապետական կողմին գործունեայ անձինքներէն մէկը կը սեպուէր, խեղճ ողորմելի աղմկարարը հանդարտութեամբ գեղի պատարագներուն կը սպասաւորէր, և ոչ երբէք եկեղեցիէն դուրս կ'ելլէր, ուր ամեն եօթնեակ մէյմը սրբութեամբ կը հաղորդուէր :

Հանդարտութեամբ անցնելիք կեանքի մը ահաւոր սկիզբը երկայն ժամանակ Յակոբ ժիրարտիի վիճակին վրայ ազդեցութիւն ունեցաւ . ծերութեանը ժամանակ սուղի նստան երիտասարդա-



կան խենթութիւնները, վասն զի առաջին հիւպատոսին դէմ ըրած ենթադրեալ դաւակցութեանն համար բռնուած ժամանակ՝ ամբաստանները յիշեցին ատենօք վրան եղած դատաստանը և նախկին ատենակառն քննութեանց նայելով՝ մոլեգին հասարակապետական մը համարեցան զինքը :

Յակոր Դուրինէն ելլելէն վերջը աքսորանացը մէջ հօրմէն ստացած հաւասարութեան սէրը բոլորովին շիջուցանելով սրտին մէջ, կամաց կամաց մօրէն առած կրօնական զգացմունքն սկսաւ անեցնել :

Քիչ ատենէն զասուր չափազանցի տարաւ, և իր ազնիւ ու արժանապատիւ քահանայ ազգականը՝ որուն դիտմունքը ամենաբարի՛ բայց միտքը թերևս չափաւորեալ էր, փոխանակ այս տաքգլխութեանս սկզբունքը հանդարտեցրնել ջանալու՝ գրգռեց զինքը, յուսալով քրիստոնէական խոնարհութիւնը իբրև վահան մը բնելու անոր աշխոյժ բնութեանը դէմ : Ժամանակաւ իբր հաշուին անխոհեմութիւնը ըմբռնեց :

Երբեմնեան—փիլիսոփան փափաք մը

ուխտ մը միայն ունէր, այսինքն քահայեայն օծուիլ կ'ուզէր: Ծնողքն այս բանս արգիլելու համար, որով իրենց միակ որդիէն պիտի զրկուէին, ժողովրդապետին խնամակալութենէն զինքը հեռացուցին և իրենց վրայ ունեցած եռանդուն զթոյն վստահանալով այնչափ բռին որ համոզեցին, կամ լալով պաղատելով բռնադատեցին որ համոզուի ու կարգուի:

Կարգուեցաւ ուրեմն Յակոբ, բայց իր ամուսնութիւնը կտրժուածին պէս չեղաւ. կնկանն հետ իրրև քրոջ պէս վարուեցաւ, որ երիտասարդ ու գեղեցիկ էր և մեծ սէր ունէր էրկանը վրայ: Թակոբ ուզած ազդեցութեամբը շարժեց անոր սիրտը. իր բնական և կրօնկրօն ճարտասանութիւնը բանեցուց ոչ թէ տնական կենաց երջանկութիւնն քմբունել տալու համար, հապա միանձնական կենաց անուշութիւնները: Յայտմ կատարելապէս յաջողեցաւ. անտանկ որ տարի մը հրեշտակաց նման սրբասէր միութեամբ անցընելէն վերջը, մատաղ հարսնը վանք մը քաշուեցաւ, ինքն ալ Պիէլի շրջակայքը դարձաւ:

Քիչ հեռու այն աւանէն՝ ուր կը բնա-  
կէր՝ լեռանց գօտի մը կայ, Պեննինեան  
Սլապեանց վերջին բազուկը . Մոնդէ Մու-  
գրոնէի նստին վրայ, որ այս լեռանց ա-  
մենէն բարձր սարն է, ծմակ մը կայ սաս-  
տիկ խորափիտ նսեմ սև ու մառախլա-  
պատ, որ ցցուած ժայռերով լի է ու  
հեռուէն կը նմանի վիրգիլիոսի և Տան-  
դէի դժոխքին բերնին համար ըրած  
նկարագրութեան տեղւոյն . բայց որ-  
չափ որ հոն մօտենալու ըլլանք՝ ժայռե-  
րը կանանչազարդ և ակնահաճոյ կը  
տեսնուին, գահավէժները մէյմէկ մեղմ՝  
զառ ՚ի վայրի կը փոխուին, որոնց վրայ  
կը ծաղկին Սլապեան թուփեր . հոն են  
սանդղաձև պզտիկ բլրակներ սիրուն ու  
բնական անտառներով ծածկուած, և  
շողին արևու ճառագայթիցն առջև ման-  
րիկ ու նրբին երևոյթներ առնելով եր-  
բեմն ճերմակ՝ մերթ կարմիր կամ մա-  
նուշակագոյն կ'երևայ . և ուր ուրեմն  
բոլորովին կ'անհետանայ : Ան ատեն  
զուարճալի հովտին խորք կը տեսնուի  
500 ոտք լայնութեամբ լիճ մը աղբե-  
րակներէ ծնած, ուսկից դղջելով կը  
ծագի Որորբա գետակը, որ անկէ քիչ

հեռու կ'երթայ լեռնագօտուոյն պտկունքը պատելու, որուն ծայրը կը բարձրանայ ժողովրդեան ջերմեռանդութեամբը Ս. Աստուածածնայ նուիրուած բազմածախ եկեղեցի մը: Այս եկեղեցին երկրին ամենէն հռչակաւորն է:

Եթէ վիպաց հաւատանք՝ Ս. Եւսեբիոս Ասորիքէն դառնալու ժամանակ՝ Ս. Ղուկաս աւետարանչին քանդակած փայտեայ սուրբ Աստուածածնայ արձանը այս միայնացեալ տեղւոյն մէջ դրաւ, արիոսեանց պղծութենէն ազատելու դիտմամբ:

Աղէկ ուրեմն. այն ծմակին մէջ, այն ժայռերուն ծայրը, գահաւանդից շեպերուն վրայ, լծին ու դետակին եզերքը, այն լերան վրայ, այն եկեղեցւոյն մէջ, այն արձանին ոտքին առջև Յակոբ Ժիրարտի կենացը հինգ տարին անցուց, մոռնալով ամբողջ զաշխարհ, բարեկամներն, ընտանիքը, կիներ, մայրը՝ Որորբայի սուրբ Աստուածածնայ համար:

Զգիտնալով որ միամտութիւնը հաւատք չէ և թէ աւելորդապաշտութիւնը զմարդ կռապաշտութեան կը տանի, և թէ ամենայն բանի մէջ զեղծմունքը

զմեզ Աստուծմէ կը հեռացնէ, ոչ թէ երկնաւոր սուրբ Աստուածածինը՝ Յիսուսի մայրը կը պաշտէր, հապա լերան վրայ եղած սուրբ կուսին արձանը: Գիշեր ցորեկ առջևը աղօթք ընելով ու երևակայական պակասութեանցը վրայ լալով կ'անցընէր, վասն զի սիրտը ալ դու մը սրտին կը նմանէր:

Ազգական բարի ժողովրդապետը ներդանալով այս օր ըստ օրէ ջերմեռանդութիւնը չափազանցի տանելուն ու անձին մաստոյտը ընելուն վրայ, ի գուր կը ջանար խելքը գլուխը բերելու. դարման մը չէր կրնար ընել: Ի գուր այս մտեռանդն և ժոռանգաւոր կանխակալոյ մտածութիւնը մտքէն թօթափելու համար առաջարկեց որ Ս. Աստուածածնայ ուրիշ ջերմեռանդական տեղերուն այցելութեան ելլէ. Ժիրարտի թիւ 5 հոգն էր Էորեատոնի, Պոլմեթայի, Միլանու Ս. Աստուածածինը. միայն նիւթական առարկան պատկերը, սև ու որդնահար փայտի կտորը կը պաշտէր և ոչ թէ հոն անարժանապէս կերպարանեալ սուրբ կոյսը:

Այս եռանդնալից զգացումնը իր խո-

բութիւնը կորսնցուց ու տարածուեցաւ։  
Որորքայի Ս. Աստուածածնայ չորս կող-  
մը սուրբեր ու սրբուհիներ պատած  
էին. ժիրարտի անոնց վրայ բաժնած  
էր ամենայն երկնային զօրութիւնները,  
Աստուծոյ ամենայն ստորոգելիքը։ Մէ-  
կէն կը խնդրէր որ կարկտալից ամպերը  
ցրուէ՝ որ երբեմն Մոնդէ Մուքրոնէի  
ծայրէն իր լերանը վրայ կ'իջնային. միւ-  
սէն որ մօրը ցաւերը քաղցրացնէ. եր-  
րորդէ մը որ քնոյն ժամանակ հսկէ,  
մէկ ուրիշէ մ'ալ որ օտտանայէն պին-  
քը պաշտպանէ. այսպէս նաեւ մնացած-  
ներէն ալ, որով իր ջերմեռանդութիւ-  
նը պիտի բազմաստուածութիւն մը կը  
դառնար, և իր Որորբաւ լեռը Ոլիմպոս  
մը՝ ուր Աստուած միայն տեղ չունէր։

Խիստ զրկմունքներ և ապաշխարու-  
թիւններ կ'ընէր, պահք կը պահէր,  
մարմինը կը ճնշէր, երբեմն ինչուան ե-  
րեք օր անսուաղ կ'անցընէր ու տկա-  
րութեանց մէջ կ'իյնար զոր ինքը յա-  
փրշտակումն կ'անուանէր. տեսիլներ՝  
յայտնութիւններ ունէր. ոմանց հան-  
դրասականաց նման իր նիւթական բը-  
նութիւնը ճնշելով կաթօէր թէ հոգին

տեսանելի եղած էր աչքին և հետը կը խօսէր . առողջութիւնը կ'աւրէր , խեղճը կը կորսնցընէր . խենդ էր :

Օր մը ձայն մը լսեց երկնքէն որ կը հրամայէր իրեն երթալու հերձուածող վաղէացիները դարձընելու , որոնց քանի մը մնացորդները իրմէ քիչ հեռու դեռ վալէի մէջ էին . ճամբայ ինկաւ , Սէզիայի ոռոգած երկիրներէն անցաւ , մեծ Ալպեանց գագաթն հասաւ Ռոզա լեւրան կողմէն . բայց յանկարծ ձմերուկն է պաշարուելով հովիւ ժողովրդեան մը մէջ , հարկ եղաւ որ շատ մը ամիս ընդարձակ հիւղի մը տակ անցընէ , վասն զի ձեանց դէզերը ամենայն անցք խափաներ էին :

Այս հիւղը՝ որ երկրին մէջ Գուլք կը կոչուի , երկայն քառակուսի մ'էր 500 ոտք տարածութեամբ , միայն հարաւային կողմանէ բաց , և ուրիշ կողմանէ փակուած եղևնեայ տախտակներով , որոնք թաղիքով խցուած և իրարու հետ խէժով , ուտինով , մամուռով , լոռով մածուցեալ էին : Չմեռ ատեն արք և կանայք , տղաք և հօտք ամէնքը կը միաբանէին ու կը հնազանդէին մէջերնին

երիցագոյն եղողին : Բնակարանին մէջ տեղը անդադար արժարժեալ վառարան մը կար , և վրան կուտակադէզ ահագին սան մը կը բորբոքէր , յորում կը պատրաստէին հասարակութեան համար երբեմն փոփոխակի , երբեմն ալ ամենը մէկէն նոյն օրուան մէջ չոր ընդեղէններ , խոզի գիրուց , ոչխարի միս , լեռնայծի կտորուանք , Ալպեան մկան խորվածք , որոնց հետ մէկտեղ շագանակեայ հաց կը գործածէին կերակրոյ ժամանակ , և գինւոյ տեղ մաթզի և կարմրաթփիկի եռացածով կազմուած թրթուանուշ ըմպելիք մը :

Հոն անթիւ զբաղմունք , հօտի և տղայոց խնամք , պատրաստուելիք պանիր , մանեղիք կանեփներ , նորոգուելիք մշակութեան գործիքներ՝ ժամանակաւ նոյն կլիմային երազ ամառուան մէջ ժայռերն արգասաւորելու համար , ոչխարի կաշիէ զգեստներ , կեղևէ կողովներ , քաղքին համար կուենւոյ և ժանտաթ զենւոյ փայտերէ փառաւոր մանր մունր կահ կարասիներ արթուն կը բրնէին ամբողջ հիւղին մարգիկը՝ աշխատաւոր ու զուարթ անձիկքը , որոնց ծիծաղն



ու նուագները՝ կացնաց, անուոց և ու-  
ռանց շնկոցին հետ կը խառնուէր : Հոն  
աշխատութիւնը քաղցր կ'երևար, ուս-  
մունքն ու աղօթքը պարտք և հաճոյք  
համարեալ էին : վարժ և դաշնակաւոր  
ձայներով օրբազան երգեր կ'երգէին .  
երիցագոյնք երիտասարդաց կարդալ ու  
հաշիւ բռնել կը սորվեցնէին , յարմա-  
րագունից երաժշտութիւն և քիչ մը լա-  
տիներէն : վասն զի վերին Ալպեանց  
քաղաքականութիւնը բուսոցը նման  
ձեան տակ կը ծածկուի՝ գոնեա այս ժո-  
ղովրդոց մէջ, և շատ անգամ ամառուան  
սկիզբները այս գոմերէն դաշտին աւա-  
նը կ'իջնան նուագածուններ և վարժա-  
պետներ, ու կ'երթան լերան ստորոտն  
հաճոյք ու կրթութիւն տարածելու :

Յակորայ հիւրընկալները վաղգէացի  
էին :

Ճշմարիտ հաւատք վարդապետողի  
համար յարմար առիթ էր . բայց հա-  
զիւ թէ քարոզին առջի բառը բերնէն  
ելեր էր, ազգասուհմին գլխաւորը ութ-  
սընամեայ ծերունի մը, հասակէն ա-  
ւելի աշխատութեամբն ու առաքինու-  
թեամբը պատկառելի, որովք անցուցեր

էր բոլոր կենացն ընթացքը, հրամայեց  
որ լռէ :

« Մեր հարքն, ըսաւ, արտորուեցան  
ցրուեցան մնահ յանձն առին՝ քան թէ  
պատկերաց նիւթական պաշտօն մը տա-  
նելու հաւանիլ. մի յուսար ուրեմն յա-  
ջողցնելու ինչ որ հալածանաց դարեր  
չկրցան : Օտարական ես ու մեր յարկին  
տակը կը բնակիս, դու քու կերպովդ աղօ-  
թէ, մենք ալ մեր կերպովը. բայց միացուր  
ջանքդ մեր ջանքին հետ հատարակաց  
աշխատութեան մէջ, վասն զի հոս գո-  
ւում գոչումէ ու երկրաւոր մտաց զբաղ-  
մունքներէ ազատ՝ անգործութիւնը կը  
մեռցրնէ զքեզ : Մեր ընկերն, եղբայրն  
եղիր քանի որ ձիւները վրանիս ծան-  
րացած են. ետքը ճամբաները հար-  
թուելուն պէս՝ եթէ կ'ուզես կրնաս մեզ-  
մէ բաժնուիլ՝ առանց օրհնելու զվառա-  
բանն, որ գքեզ տաքցուց, և տռանց  
դառնալու և ձեով բարեւելու զանոնք որ  
դքեզ ասպնջականեցին ու սնուցին, չե-  
տերնիս աշխատած ըլլալովդ ամենեկն  
մեզի պարտապան չես ըլլար, իսկ եթէ  
մենք պարտաաէր ըլլանք՝ Աստուած կը  
հատուցանէ : »

Յակոբ ստիպուելով հնազանդի՝ հինգ ամիս այս ազնիւ անձանց հետ ընկերացած ապրեցաւ . հինգ ամիս ականատես եղաւ անոնց առաքինութեանցը . հինգ ամիս միակերպ գիշեր ցորեկ միայն առ Աստուած ուղղեալ շնորհակալութիւններ լսեց իրենց բերնէն , և միտքը անձնական պաշտամանն հետևելունիւթ չունենալով՝ հանդարտեցաւ . և երբ այս բանտը որ սառով փակեալ էր արևով բացուեցաւ , ՚ի տեսիլ արևուն և բնութեան վսեմութեանցը , ուսկից երկայն ատենէ ՚ի վեր զրկուած էր և հիմա Ալպեանց ծայրէն աչքին առջև կը տեսնէր՝ յաւիտենական և ամենազօր Աստուծոյ գաղափարը մեծապէս և եռանդեամբ սրտին մէջ թափանցեց և հոն պէտք եղած տեղը բռնեց :

Առաջին թռչնոց գալուստը , առաջին տնկոց տեւքը որ բոլորովին ծաղկած ձեան տակէն վեր կ'ելլէին , և անոնց չորս կողմը մեղուաց բզզիւնը , ուրախութեամբ և սիրով կը լեցընէին իրեն սիրտը :

Հատոր մը ամբողջ բաւական չէ ժիրարտիի ունեցած բազմաթիւ և այլ և

այլ զգացմունքը նկարագրելու : Գոմին բարի ծերունին սէր կապեր էր վրան , և թէպէտ իմաստնոց դրոց շատ տեղեակ չէր՝ բայց իր դիտողութիւնները հարցը դիտողութեանցն հետ միացուցած էր , և կ'ախորժէր արարչութենէն Արարիչը վարդապետել : Վերջապէս՝ այն օթեանէն ուր գլուխը եռանդնամողութեամբ և աններողութեամբ լըցուած մտեր էր ժիրարտի , հաւատք վարդապետողը , բոլորովին հաւատքը փոխած դուրս ելաւ : Աշխատութեան վարժութիւնը , ընտանեաց տեսարանը , Յակոբին զաւլափարը դարձուցին այն պարտքերուն որ պէտք էր կատարեր :

Փութայ կնկանը վանքը վազեց :

Ասիկա ալ գրելիք ամբողջ պատմութիւն մը կրնայ ըլլալ թէ ինչ միջոցներ բանեցուց վերստին իրեն ստանալու համար այն սիրար՝ զոր նախ մերժեր էր :

Այս պատմութիւնն արժանի է որ գրուի մէկ օր մը :

Համառօտ ըսենք . կինը կուսանաց վանքէ հանելու համար և առջի դասերուն ու վարդապետութեանցը արդիւն

քը սրբագրելու համար անշուր ճիշդ թափելէ վերջը՝ Ժիրարտի խելքի գալով, երջանկութիւնը և հաւատաց ճշմարտութիւնները ճանչնալով բարի օրինակ փեսայ մ'եղաւ, վերջն ալ քանի մը տարիէն երջանիկ հայրերէն մէկը :

Քսանը հինգ տարուան մէջ իմաստութեամբ և առաքինութեամբք իր մոլորութիւնները քաւեց :

Գուրին դարձած ժամանակը իրեն ներուն մէջ ճարտարութեամբ անձին արժանաւոր զբաղմունք գտաւ : Շատ ստացուածք ունէր՝ զոր աշխատութեամբք դեռ ալ անեցուցած կ'ըլլար՝ եթէ բարեգործութեամբը չպակսեցնէր : Իր նմանեացը սէքը սիրտը ուրախութեամբ կը լեցընէր, և բնութեան ուսմունքը անսպառ զմայլմունք կը յաւելուր իր կենացը :

Եննդանացեալ բնութիւնը մասնաւորապէս իր հետաքրքրական խուզարութեանցը պատճառ եղաւ, և որովհետև Աստուած մեծ է և 'ի շնչին գործա իւր, միջատները՝ որոնք դիւրաւ զգօն փիլիսոփային ձեռքը կ'իյնային՝ զեհ գործաւորին գրիչ ստեղծուածներէն աւելի նախապատիւ սեպուեցան :

Ահաւասիկ այսպէս առեն անցնելք վերջը՝ կալանաւորութեան օրերուն մէջ ծերունին ժիրարաի՝ Լուդուիկի կողմա-  
նէ այս եզական մակդիրն ընդուներ էր ձանձորս կոչուելու :

Ե

Երկու բանտարկեալները քիչ ատե-  
նէն ամենևին իրարու մէջ գաղտնիք  
չունէին : Համառօտ մը պատմելէն վեր-  
ջը իրենց կենաց գլխաւոր դէպքերը՝  
մանրամասն կտորներու կ'իջնէին , մէկ-  
մէկու շնչին յուզմանցն ալ հաղորդա-  
կից ըլլալու համար :

Նաև Թերեզայի վրայ ալ կը խօսէին ,  
բայց այս անունն յիշուելուն պէս Շառ-  
նէ կը շփոթէր ու ճակատը կը կարմրէր .  
ծերն իսկ մտածութեան մէջ կ'ընկըզ-  
մէր , և վայրկեան մը հանդիսաւոր ու  
ախուր լռութիւն կը նուիրուէր միշտ 'ի  
յիշատակ հեռաւոր հրեշտակին : Աւելի  
հաճութեամբ խօսակցութիւննին կ'ընդ-  
հատէր երբ բարոյական խնդրոյ մը վը-  
րայ ծանր հակահարութիւն կ'ունենա-

յին, կամ մարդկային բնութեան այլ-անդակութեանց վրայ դիտողութիւններ կ'ընէին: Ժիրարտեայ անուշ ու մխիթարական փիլիսոփայութիւնը երջանկութիւնն ընկերսիրութեան վրայ կը կայացնէր. իսկ Շառնէ չէր կրնար հասկընալ թէ ինչպէս առաքինի բիէմոնդեցին ներողութեամբ և գթով կը մտածէ մարդկանց վրայ՝ անիրաւութիւն և հալածանք կրած ըլլալով հանդերձ իրենցմէ:

« Բայց, կ'ըսէր, չանիծեցիր զմարդիկ երբ զքեզ վատութեամբ զրպարտելէ վերջը զրկեցին նաև ազատութենէ ու... զաւակդ տեսնելէդ:

— Ոմանց սխալմունքը պէտք էր որ հասարակաց համարէի. անոնք ալ որ ինծի քնաս հասուցին ո՞վ գիտէ թերևս առ երևոյթս զեղծած, քաղաքական մոլեռանդութեամբ կուրցած էին՝ բայց մտքերնին բարի էր: Հաւտա ինծի, բարեկամ, պէտք է մեզի եղած չարիքը 'ի խորոց սրտի ներելով յիշել: Ո՞վ մեզմէ այս բանիս մէջ անձին համար պէտք ունեցած չէ. ո՞վ մեզմէ մոլորութիւնը ճշմարտութիւն սեպած չէ. Ս. Յովհանն.

նէս առաքեալը Աստուած սէր է, կ'ըսէ .  
նէ, ինչ աղուոր ու ճշմարիտ խօսք . այո՛ ,  
սիրելով է որ առ Աստուած կը բար-  
ձրանանք և իրմէ ոյժ կ'առնունք նեղու-  
թեանց համբերելու : Եթէ ես բանտ  
մտած ըլլայի մարդկութեան դէմ ատե-  
լութիւն ունենալով մտքիս մէջ՝ ան-  
շուշտ յուսահատութենէս կը մեռնէի .  
բայց չէ, օրհնած ըլլայ երկինք, այս  
դառն խորհուրդները ինծմէ հեռու էին :  
Թշուառութեանս մէջ ալ հաւատարիմ  
կեցող այնչափ ազնիւ բարեկամաց և  
այնչափ ինծի վշտակից սրտերու յիշա-  
տակը իմ նմաններս ինծի աւելի սիրե-  
լի կ'ընէր, և բանտարկելութեանս դրժ-  
նեայ վայրկեանն այն եղաւ երբ մար-  
դու տեսութենէն արգիլուեցայ :

— Ի՞նչ, անանկ խստութիւններ բա-  
նեցուցին քեզի դէմ, հարցուց Շառնէ :

— Բռնուելուս առջի վայրկենէն, ա-  
ռաջ տարաւ խօսքը նոր բարեկամը,  
Դուրինի դղեակը փոխադրուեցայ, ա-  
ռանձին և դետնափոր նկուղի մը մէջ  
ձգուեցայ, ուր և ոչ բանտապանները  
հետս կրնային հաղորդակցիլ : Աշտա-  
րակի մը միջոցով կերակուրս կու տային



և ամբողջ երկայն ամսուան մը մէջ ոչ  
ոք այս խուլ առանձնութիւնն ընդհա-  
տեց : Աղէկ ըմբռնելու համար, ընդդէմ  
փիլիսոփայից վայրենի ցնորքներուն, թէ  
ընկերական վիճակը մարդկութեան  
բնական վիճակն է, պէտք է գիտնալ  
թէ ինչ կը կրէի ես այն ժամանակ, և  
թէ ինչ զրկումն կը կրէ միայնութեան  
դատապարտեալ դժբաղդ մը : Մարդ  
չտեսնել, ապրիլ առանց մէկու մը վը-  
րադ նայելուն, առանց ձայն մը լսելու,  
առանց ուրիշի մը ձեռքը բռնելու, ճա-  
կա՞ կուրծ ու սիրտ ցուրտ և անզգայ  
նիւթոց վրայ պարզ հանգչեցնելով՝  
քստմնելի բան է և ամենէն զօրաւոր  
միտքն ալ կ'ընկճէ : Սակայն ամիս մը,  
յաւիտենական ամիս մը ինծի համար  
այսպէս անցաւ : Ի սկզբան իսկ երբ  
բանտին փակակալը երկու օրը մէյմը  
պարէնս բերելու կու գար, պարզ քայ-  
լերուն ձայնը անբացատրելի ուրախու-  
թիւն կ'ազդէր ինծի. անձկանօք նոյն  
վայրկենին կը սպասէի, բարի լոյս կը  
պտռայի դրան երկաթի անջրպետանե-  
րուն մէջէն, բայց անիկա ամենևին պա-  
տառիսան չէր տար. կը ջանայի աշտա-

րակին<sup>1</sup> թաւալելուն շարժման ժամանակ դէմքը, ձեռքը կամ գունէ զգեստը տեսնելու, և երբ չէի կրնար՝ կը վշտանայի: Երեսին վրայ անգթութեան ու ախտի նշաններ ալ ըլլային՝ այնու հանդերձ գեղեցիկ պիտի երևար աչքիս. եթէ ձեռքն երկնցնելու ըլլար պարզ զիս մէկդի հրելու համար, պիտի օրհնէի զինքը. բայց չէ, չէ... միայն Ֆէնէս, դրէլլոյ փոխադրուելու օրը զինքը տեսայ:

Մտքիս բովանդակ զբաղմունքը և միակ վայելքս և ընկերներս էին քանի մը պզտիկ սարդեր՝ զորս ժամերով կը դիտէի. բայց ասոնցմէ արդէն անբաւ դիտեր էի: Մկներ ալ պակաս չէին բանտիս մէջ. զանոնք ալ ինծի բարեկամ ըրեր էի և հացս իրենց կը վշրէի. բայց այս կենդանիներն ինծի միշտ սոս.

<sup>1</sup> Հեղինակը կ'ակնարկէ հոս անշուշտ Ապաշխարական կամ Մեղաբանական բանտերէն (Les prisons pénitentiaires ou cellulaires) մէկը, ուր եղեռնաւորք բաց ՚ի իրենց հոգևոր հօրմէն, որ երբեմն զէրեմք խրատելու համար քովերնին կը հանդիպի, ուրիշ՝ ոչ պահապան և ոչ զոք կը տեսնեն, և կերակուրնին մասնաւոր շինուած աշտաբակաձև գլանով իրենց կը տրուի:

կումն և անհնարին զգուռումն պատճառած են . կրցածիս չափ կը սնուցանէի՝ զգուշանալով իրենց մօտենալէ ու դրպչելէ : Սակայն ո՛հ , սարդերուս վրայ տարած խնամքս , խեղճ անպիտան մկներուն ինծի ազդած սոսկումնը բաւական չէին ըլլար միտքս զբաղեցնելու . և աղջկանս վրայ մտածած ժամանակս յուսահատութիւն կը տիրէր վերաս :

Շառնէ շարժմունք մ'ըրաւ . թիրարաթի հասկըցաւ թէ ինչ կ'անցնէր մըտքէն ու փութաց խօսքն առաջ տանելու , զուարթ դէմք մը առնելով .

« Ո՛հ , բայց քիչ ատենէն բաղդս բանեցաւ . նկուղս լոյս կ'առնուր խաչաձև երկաթներով ամրացած լուսանցոյցէ մը , (և ես բանտիս այս խաչին առջևը առտուան և երեկոյեան աղօթքս կը մատուցանէի) . առ'ի շեղ քիւ մը հետզհետէ լայննալով կը բարձրանար լուսանցոյցին առջևը , որով բան մը չէի կրնար տեսնել բայց եթէ որմոյն լայն անկիւնին վերին ծայրը , որ իբրև կապ էր ընդ մէջ երկուց պատնիշաց : Իմ բնակարանիս վրան էր դղեկին աշտարակը : Օր

մը , — երկնային նախախնամութիւն ,  
որչափ շնորհակալ եղայ քեզի , — օր մը  
մարդու մը ստուերը նկարուեցաւ պա-  
տին այն կտորին վրայ ուր կը նայէի .  
միայն ստուերը , բայց ինչ կ'ըլլայ ե-  
ղեր . ստուերին շարժմունքէն մարդունը  
կը գուշակէի : Այս ստուերը կ'երթար  
կու գար , աշտարակին հարթայատակին  
վրայ նոր պահպանութեան դրուող զի-  
նուորին ստուերն էր . զգեստին կըտ-  
րուածքը , ուսանոցը , հրացանին պա-  
յուսակը , սուիինին ծայրը , գարգմանա-  
կին ճօճմունքը կը զանազանէի : Ի՞նչ  
պէս բացատրեմ , բարեկամ , այն ատեն  
սրտիս զգացած ուրախութիւնը . ալ  
միայն չէի . ընկեր մ'ունեցեր էի : . . .  
Երկրորդ օրը , և յաջորդաբար ամեն օր  
զինուորին ստուերը դարձեալ տեսնուե-  
ցաւ որմոյն վրայ , նոյն առջինին , կամ  
երկրորդի մը ստուերը . բայց վերջապէս  
միշտ մարդ մըն էր , ինծի նման մէկն  
էր որ կը շարժէր ու կ'ապրէր հոն գրե-  
թէ իմ աչքիս տակ : Կը դիտէի , ստուե-  
րին դալու և երթալու շարժմանցը կը  
հետևէի . մտքովս հետը կը հաղորդա-  
կցէի . նկուղիս երկայնութեամբը կը քա-

լէի նոյն ակորթով՝ ինչպէս զինուորը  
հարթայտտակին երկայնութեամբը :  
Երբ պահապանն առնելու կու գային  
ըստ պահպանութեան կարգի, գացո-  
ղին երթաս բարով՝ եկողին բարի եկար  
կ'ըսէի : Տասնապետը կը ճանչնայի . քիչ  
ատենէն ամեն զինուորական պահա-  
պաններս ալ ճանչցայ՝ միայն իրենց ըս-  
տուերագիր նկարէն : Խոստովանիմ .  
զոմանս շատ նախապատիւ կը համա-  
րէի ըստ իրենց կենալուն, քալելուն,  
ծանր և աշխոյժ շարժելուն . հասակնին  
բնութիւննին զգացմունքնին կ'ենթա-  
դրէի գուշակել : Մէկը շուտ շուտ քայ-  
լերը կ'առնուր, հրացանը փութապէս  
ձեռքէ ձեռք կը փոփոխէր, ու կշռով եւ  
չափակցութեամբ գլուխը կը շարժէր .  
անշուշտ երիտասարդ ու զուարթ բնա-  
ւորութեան տէր էր, սիրային ցնորքներ  
կը մրմնջէր կամ կ'երագէր : Ուրիշ մը  
ճակատը կախած կը քալէր, երբեմն  
կանկ կ'առնուր և երկու թևովը գէնքե-  
րուն կռթընելով՝ երկայն ժամանակ  
մաղձոտ դրից մէջ կը մնար . անշուշտ  
հեռաւոր մօրը, իր գեղին և հոն թողած  
ներուն վրայ կը մտածէր . ձեռքը երե-

սին կը տանէր . . . Թերևս արցունքը սրբելու համար : Եւ այս սիրուն ստուերներէն ոմանք ինծի ախորժելի կ'ըլլային , կարեկից կ'ըլլայի իրենց վիճակին , մաղթանքներ կ'ընէի և իրենց համար կ'աղօթէի . և ահա նոր գորովանք կը ծագէին սրտիս մէջ ու ինծի մխիթարութիւն կ'ըլլային : Հաւտա ինծի , բարեկամ , պէտք է մեր նմանները սիրենք . պէտք է ամենայն եռանդեամբ սիրել զանոնք , յայսմ է երջանկութիւն :

— Գերազանց մարդ , ըսաւ Շառնէ սիրտը ելած , գրեզ ո՞վ կրնայ չսիրել . ինչո՞ւ համար գրեզ դեռ կանուխ չճանչցայ . կեանքս փոխած կ'ըլլայի . բայց պէտք է որ դանդատիմ . չգտայ արդեօք հոս՝ ուսկից աշխարհքիս մէջ զրկուած էի , անկեղծ սիրտ մը , ամուր նեցուկ մը , առաքինութիւնն ու ճշմարտութիւնը , գրեզ և գրի'չչիոյս : »

Վասն զի այս խանդաղատանաց ժամանակն ալ Բի'չչիոյս մոռցուած չէր : Երկու ընկեր միաբան լայնկեկ ու ախորժելի ու առջինէն հանգիստ ուրիշ բազմոց մը շիներ էին բուսակին առջև , հոն իրարու քով կը նստէին ու կը կարծէին

Թէ իրեք հոգի մէկմէկու հետ կը խօսակցին: Այս բազմոցին անունը Բանախօսութեան թագմոց դրեր էին. ուր անպաճոյճ և համեստ մարդը կը ջանար ճարտասան ըլլալ համոզող ըլլալու համար, և համոզող՝ օգտակար ըլլալու համար, և բնական ճարտասանութիւն և համոզողութիւն լիովին ունէր: Այս նստարանը դպրոցի նստարան մ'էր և կրթութեան բեմ. կը նստէին վարժապետն ու աշակերտ. վարժապետը քիչ գիտցողն էր, բայց աղէկ գիտցողը, այսինքն է Ժիրարտի, աշակերտ՝ Շառնէ, գիրք՝ Բի'լլիոյան:

## Զ

Սովորական տեղերնին նստեր էին. աշունն սկսեր էր գալ. Շառնէ Բի'լլիոյայի նորէն ծաղկելէն յոյսը կտրելով՝ բարեկամին հետ վերջին ծաղկին անկմանը վրայ կը ցաւակցէր. իսկ Ժիրարտի այն կորուստը մոռցրնել տալու համար որչափ որ կրնար՝ բուսոց պտղաբերութեան ընդհանուր պատկերն առջևը կը պարզէր:

Յայսմ՝ ինչպէս յայլս՝ բնութեան ամենայն գործոց մէջ աստուածային ձեռաց կնիք մը կ'երևար: Ժիրարտի կը պատմէր թէ ինչպէս քանի մը լայն ու տարածուած տերևներով բոյսեր՝ որոնք խուռն իրարու քով աճելուն փոխն՝ ի փոխ պիտի խղզուէին՝ փետրապսակ սերմունք ունին, որպէս զի քամին դիւրաւ ևս կարենայ ցրուել զիրենք. և թէ ինչպէս երբ այս փետուրները չունենան՝ հատիկները փոճոկի մէջ փակուած կը ծնանին, առաձգական կարողութիւն ունեցող պատիճներու մէջ, որոնց կճեպը հասունացած վայրկենին բացուելով՝ սերմունքը իրարմէ բաժնելու համար հեռուները կը ցատքեցնէ: Փետուրներն ու զսպանակները Աստուծոյ իրենց տուած ոտքերն ու թևերն են, որով կրնայ իւրաքանչիւրը ազատաբար իրեն համար արևոտ տեղ մը բռնել:

Ո՞վ աչքով կրնայ տեսնել յուզեալ օդուն մէջ կնձնոյ, հացւոյ, շոճւոյ և ցախոյ մտտ պտուղներուն երազասլաց ընթացքը, որ մթնոլորտին մէջ բիւրաւոր ուրիշ հունտերու հետ կը հոլովին, թեթևութեամբ կը թռչին, և կարծես թէ իրենք



իրենցմէ թռչնոց առջև կը դիմեն անոնց անօթութիւնն անցընելու համար :

Ծերունին կը բացատրէր միանգամայն թէ ինչպէս գետային բոյսերը, առուակներուն զարդ եղող կամ լճակներուն եզերքները պճնող տունկերը այնպիսի ձևով հունտ մ'ուենին որ կըրնան ջրոյ վրայ լողալ և երթալ մէկ գետափնէ միւս գետափն թումբերուն կողերուն վրայ բուսնիլ, և թէ ինչպէս գետոյն նստին կամ տղմին վրայ աճելու համար դէպ 'ի ստոր կը հակին . ինչպէս նաև սերմ շունենալնուն կրնան բազմանալ իրենց արմատովը և բողբոջներովը, իրենք իրենցմէ արգասաւորելով պողիպտներու նման, և շահաւոր ընել կենաց առատութիւնը . զոր օրինակ այսպէս են լոռերը և եղէգները, որոնք տիգալից բանակի մը պէս տրվամուտ ջրոյն ծոցէն վեր կը բարձրանան, և այն պսպղուն նունուֆարներն որ ոտքերնին շաղախին վրայ հաստատած ջրոյն երեսին վրայ կը տարածեն իրենց կլոր ու փալփլուն տերևները և ալապաստրեայ կամ ոսկեգօծ սիրուն ծագիկնին :

Բուսարանական բնախօսութեան հըրաշալիքներէն մէկով մը արժանապէս խօսակցութիւնը կնքելու համար, տընկոց բազմանալուն վրայ ճառելով իրենց տարփանաց վրայ սկսաւ վարդապետել. տարփանք՝ յորս կը կարծուին մարդկոնց սիրային զգացմանց նըման ինքնանուիրմունք և անձնուրացութիւնք: Ան ասեն պատմեց նաև վայրիգնէրեայ տոփանքը որ իր փեսայէն բաժնուելով՝ ջրոյն վրայ ծաղկելու համար՝ կ'երկըննայ ու կը թուլցնէ իրեն կոթունի տեղ ծառայող խխնջածներ, մինչգեռ փեսայն այս ձկտման կարողութենէն զրկուած՝ պինքը կաշկանգող կապերը բռնութեամբ կը փրցընէ և կուգայ կը բացուի հարսին մօտ ու արգասաւորելով զայն կը մեռնի:

« Ի՛նչ, ասանկ բաներ կան, գոչեց Շառնէ, և մարդկանցմէ շատը արժանի չեն սեպեր նայելու դիտելու: »

Այս եղաւ ծերուն դասերէն մէկը:

« Բարեկամդ իմ, ըսաւ օր մ՝ընկերը, երբ երկուքնին մէկտեղ խօսակցութեան բազմոցին վրայ նստեր էին. միջատնեւրը զորս ախորժով կը հետազօտէիր՝

Բի'լլիոլայիս նման գիտողութեան արժանի այսպիսի հրաշալիքներ ընծայեցին քեզի :

— Հաւասարապէս , պատասխանեց վարժապետը . հաւատա՛ ինձի , Բի'լլիոլայի յարգն աղէկ կրնաս ճանչնալ այն պզտիկ կենդանի էակներուն հետ ծանօթանալով որ երբեմն իրեն այցելութեան կու գան ու չորս կողմը կը թռչըտին ու կը բզզան . այն ատեն կը տեսնես այն անթիւ վերաբերութիւններն , այն գաղտնի օրէնքներն որ զմիջատը բուսակին հետ կը կապեն , ինչպէս նաև միջատն ու բուսակն ալ աշխարհիս մընացած մասերուն հետ . վասն զի ամենայն ինչ մի և նոյն կամքէն առաջ եկած ու ծնած է , և մի և նոյն իմացականութեամբ կը կառավարուի : « Տիեզերք մէկ թափով արարչագործեցան , » ըսաւ Նեւտոն . ասկից է այն դաշնակութիւնն , այն ընդհանուր միաբանութիւնը՝ զոր մենք չենք կրնար ըմբռնել ընդարձակ ամբողջութեանը մէջ , բայց սակայն կայ : »

Ժիրարտի մտածութիւնը բացատրելու վրայ էր երբ յանկարծ աչքերը Բի'լլ-

չիոյայի վրայ յառեալ քանի մը վայր-  
կեան լուռ կեցաւ ու մտածեց :

Երփնազարդ թիթեռնիկ մը բուսա-  
կին ճիւղերէն մէկուն վրայ կայներ էր,  
և յատուկ դողով մը թևերը կը ծածա-  
նէին :

« Ի՞նչ կը մտածես, բարեկամ :

— Կը մտածեմ, պատասխանեց վար-  
ժապետը, թէ Բի'չիոյա կ'օգնէ ինձի  
նախկին հարցմունքիդ պատասխան տա-  
լու : Նայէ սա թիթեռնիկը . քեզի հետ  
խօսած ժամանակս բուսակիդ հետ սի-  
րոյ դաշինք կը դնէ . վասն զի իրեն սե-  
րընդեան յոյսը անոր ճիւղերէն մէկուն  
աւանդած է : »

Շառնէ ծռեցաւ որ եղածն ստուգէ .  
թիթեռնիկը թռաւ հակիթները խի-  
ժոտ հիւթով մը կպցրնելէն վերջը, որ-  
պէս զի բուսակին կեղևին վրայ կարե-  
նան հաստատուն կենալ :

« Աղէկ ուրեմն, յաւել ժիրարտի,  
բաղդովին կամ դիպուածով արդեօք  
եկաւ Բի'չիոյայի յանձնելու իր անգին  
աւանդը . մտքէդ հանէ . բնութիւնն ա-  
մեն տեսակ միջատի առանձին տեսակ  
բոյս մը շնորհած է . ամեն բուսակ իրեն

օթեվանելու և սնուցանելու հիւրն ունի : Հիմա լսէ ինչ զարմանալի բան որ կայ թիթեռնիկին վրայ . նախ թրթուրէր և այն միջոցին ասոր նման բոյս մ'ուտելով կ'ապրէր . վերջն պլակերպեցաւ և անհաւատարիմ ըլլալով իրեն առաջին սիրակցին՝ անխտիր ամեն ծաղկանց վրայ թռաւ անոնց նեկտարին հոյզը ծրծելու համար : Իսկ մայրութեան ժամանակն երբ հասաւ՝ ինքն որ զմայրը ամենևին տեսած չէր և տղաքներն ալ տեսնալիք չունի, (վասն զի ընելիքը կատարեց և պիտի մեռնի), որ հետևաբար փորձով սորված չկրնար ըլլալ, եկաւ հաւկիթներն ածելու և յանձնելու առջի բուսակին նման բոյսի մը՝ որ ուրիշ կերպարանաց և եղանակի մէջ զինքը անոյց : Գիտէ թէ պզտիկ թրթուրներ պիտի ծնանին հաւկիթներէն, և անոնց համար մոռցաւ իր թիթեռնիկի թափառական կեանքը : Ո՞վ սորվեցուց իրեն այս բանս . ո՞վ իրեն յիշողութիւն, ըմբռնողութիւն և բոյսը ճանչնալու կարողութիւն տուաւ, որուն տերևը գարնան ժամանակի տերևին պէս չէ . վարժաչքերն իսկ երբեմն կը սխալին, բայց ինքը չսխալեցաւ : »

Շառնէ շարժմունք մ'ըրաւ :

« Ո՛հ, դեռ այսչափս ալ բաւական չէ, կցեց ժիրարտի . ընտրած ճիւղը մէյմը դիտէ . ամենէն հին և զօրաւոր ճիւղերէն մէկն է . վասն զի նոր տկար և փափուկ բողբոջները ձմեռը կրնան սառիլ կամ կոտորուիլ քամիէն . այս բանս ալ ուրեմն գիտէ . դարձեալ կ'ըսեմ, ո՞վ իրեն սորվեցուցեր է այս բանս :

— Թողու՞թիւն ըրէ, բարեկամս, ըսաւ իրեն Շառնէ, կը վախեմ թէ զեղծած ըլլաս մէկ դրութենէ մը, կամ մէկ կողմնեան կարծիքէ մը : . . .

— Լուռ կեցիր, սկեպտիկեանդ դու, պոռաց ծերը բարակ մը ժպտելով . թերևս կը հաւտամս արդեօք երբոր տեսնելու ըլլաս . աղէկ ուշ դիր ինծի . Բի'չ չիոյա ալ իրեն կատարելիք մասն ունի . միայն միջատին նախատեսութենէն կախուած չէ, այլ նաև բնութենէն՝ այն ներդաշնակութեան օրէնքներուն մէկէն որոնց վրայ քիչ մը առաջ խօսեցայ, որ կը տոխպեն զբոյսը թիթեռնրկան ժառանգութիւնն ընդունելու : Գալ զարնան այս հրաշալիքը մէկտեղ կրնանք ստուգել, ըսաւ՝ սրտէն առ իւր դուստրն

ըրած հառաչանքը բռնելով—: Ան ատեն  
երբ Բի'լլիոյայի առաջին տերևներն  
սկսին բացուիլ, հաւկթի մէջ փակուած  
մանր թրթուրներ պիտի փութան ի-  
րենց պատեանը կոտրելու: Անշուշտ գի-  
տես որ այլ և այլ թփերու ծիլերն ա-  
մենքը մէկէն մի և նոյն ժամանակ չեն  
փթթիր. նաև այլ և այլ տեսակ թիթե-  
ռանց հաւկիթներն ալ նոյն օրը չեն բա-  
ցուիր. բայց յայսմ' ընդհանուր օրէնք  
մը բուսակին ծլիլը կը կանոնաւորէ մի-  
շատին նման: Եթէ թրթուրները տե-  
րևներէն առաջ ելլէին՝ սնանելու բան  
չէին գտներ. եթէ տերևները թրթուր-  
ներուն ծնանելէն առաջ պնդանային՝  
անկարելի էր որ իրենց ծամելեզքը կա-  
րենային ծամել: Բայց ասանկ չկրնար  
ըլլալ. բնութիւնը ոչ երբեք կը խաբէ.  
Իւրաքանչիւր բուսակ կը զարգանայ մի-  
շատի մը համեմատ զոր պարտքն է սնու-  
ցանելը. առջինը ծիլերը կը սկսի բա-  
նալ՝ երբ երկրորդին հաւկիթները կը  
բացուին, և մէկտեղ մեծնալէն և ու-  
ժովնալէն վերջը՝ մէկտեղալ իրենց տե-  
րևներն ու թևերը կը տարածեն:

— Բի'լլիոյա, Բի'լլիոյա, մրմնջեց

Շառնէ, դուն ինձի դեռ ամեն բան սոր,  
վեցուցած չէիր : »

Այսպէս օր ըստ օրէ քաղցր տեղեկու-  
թիւններ կը յաջորդէին . իրիկուան զի-  
րար բանտարկեալները գրկախառն կը  
բարևէին և սենեակներն կը քաշուէին  
քնանալու, կամ շատ անգամ առանց  
իրարու միտքը գիտնալու երկուքնին  
մէկէն թերեզայի վրայ մտածելու հա-  
մար :

Իրաւցնէ ինչ եղաւ արդեօք թերեզա  
հրամանատարին բռնութեամբ զինքը  
հօրը քովէն արտաքսելէն վերջը :

Նախ կայսեր ետևէն Միլան գացեր  
էր, բայց հոն շուտ մը անձին փորձովը  
հասկըցաւ որ երբեմն աւելի դիւրին է  
բանակ մը կտրել անցնիլը՝ քան թէ նա-  
խասենեկէ մը ներս մտնել . սակայն ժի-  
րարտեայ բարեկամները դարձեալ իր-  
մէ յորդորուելով ամենայն ջանք կը թա-  
փէին և կը խոստանային որ օր մը ա-  
ռաջ զինքը բանտէ ազատեն . և թերե-  
զա աւելի հանդարտ սրտով դէպ 'ի Դու-  
րին ճամբայ ելեր էր, ուր ազգականնե-  
րէն մէկուն տունը պիտի բնակէր :

Այս ազգական խաթունին փեսան



քաղքին գրապետն էր. Մընու իրեն յանձնեց Ֆէնէսդրէլլոյի դղեակը խաւրուելիք գրքերուն ընտրութիւնը. թե՛րեզա այս գրքերուն նիւթէն դուշակեց որսւ համար ըլլալնին, որով հատորներէն մէկուն մէջ դրաւ այն պզտիկ թըղթիկը, որուն խորհրդաւոր գրութեան ձևը չէր կրնար պատասխանատու ընել ոչ ազգականը և ոչ ալ զբանտարգեայր: Չէր գիտեր այն ժամանակ թէ հայրն ու Շառնէ իրարմէ բոլորովին բաժնուած կ'ապրէին. և երբ իմացաւ գրքերը տանող նուիրակէն՝ վախնալով որ ծերուն համար ասանկ իսպառ առանձնութիւնը կրնայ վտանգաւոր ըլլալ, նախ քան զամենայն բանտարկեալները միացրնելու մտածութիւնը գրաւեց իր սիրտը:

Ոչ միայն նամակ նամակի վրայ ուղղեց հօրը ամեն բարեկամներուն՝ այլ նաև Դուրինի գլխաւոր ընակչաց ամենուն մտադրութիւնն արթնցուց. ինչուան Մընու խաթունինն իսկ, որուն ձեռքով քիչ մը ժամանակէ բիէմոնդի քաղաքապետին ներկայանալով՝ յայտնեց իր ցաւը անոր առջև: Ծերունի զօ-

րավարը թեթև մը զարմացած այս տեսութեան վրայ, և զգացուած խանդադատանաց օծումն տեսնելով վրան, պահ մը սովորական բրտութիւնը մէկդի ձգեց և գորովանօք ձեռքէն բռնելով,

« Երբեմն երբեմն ինծի՝ մանաւանդ թէ խաթունիս տեսութեան եկուր, ըսաւ. թերևս ամիս մը չանցնիր՝ ուրախալի լուր մը քեզի կ'աւետէ : »

Թերեզա կարծեց թէ վերստին Ֆէնէսդրէլլոյ դառնալը և ամեն օր միջոց միջոց բանտին մէջ հօրը քով անցընելը պիտի շնորհուէր իրեն. զօրավարին ոտքն ինկաւ ու դէմքն ուրախութեամբ արծարծած քսան անգամ շնորհակալ եղաւ :

## Է

<sup>1</sup> Հոկտեմբերի տղուոր արևներէն մէկուն, որ գարնան օրերը կը յիշեցնեն, Ժիրարտի ու Շառնէ բազմոցին վրայ էին. երկուքն ալ գեղացնակ աթուին յենարանին կռթընած լուիկ կը մտածէին : Իրարու նկատմամբ անտարբեր պէտք

էր սեպել զիրենք եթէ երբեմն կոմսը կարեկից և անհանգիստ նայուածքով դէպ 'ի ընկերոջը չդառնար՝ որ իսպառ խորունկ ցնորից մէջ ընկղմած էր : Ժիրարտի դէմքը քիչ անգամ այսպէս տրտում կ'երևար . Շառնէ դիւրաւ կըրնար խաբուիլ ինչ պատճառաւ ըլլալուն վրայ , ու խաբուեցաւ :

« Այո՛ , այո՛ , յանկարծ գոչեց՝ ընդերկար լռութիւնն ընդհատելով , սոսկալի և ահաւոր է անիրաւ բանտարգելութիւնը : Կեանք է , ապրիլ է , բաժնուած ապրիլ մեր սիրելիէն : »

Ժիրարտի գլուխը վեր առաւ և մանուածոյ մտածութենէն միտքը թօթափելով՝

« Բաժանումը կենաց մեծ փորձն է . անանկ չէ՛ , բարեկամս :

— Ե՛ս քու բարեկամդ , պատասխանեց կոմսը . կը պատշաճի ինձի այս անունը : Ես պատճառ չեղայ արդեօք իրմէ զրկուելուդ . ինչպէս կրնաս մոռնալ : Ա՛հ , միժած կերինձմէ թէ աղջկանդ վրայ կը մտածէիր և չէիր կրնար աչքդ իմ վրաս դարձնել : Կ'իմանամ . երբ այս խորհուրդները միտքդ կու դան՝ զիս տեսնելն ատելի կ'ըլլայ քեզի :

— Շատ կը խարուխ ցնորիցս պատ-  
ճառներուն վրայ, ըսաւ ծերը: Ոչ եր-  
բէք թերևս աղջկանս յիշատակը այսօ-  
րուան պէս անուշ եկած է ինծի, վասն  
զի նամակ մ'առի իրմէ:

— Կարելի բան է. նամակ գրե՛ր է,  
և թողուցե՛ր են: »

Ու Շառնէ զուարթութեամբ մէկէն  
երջանիկ հօրը քով մօտեցաւ.

« Բայց այս նամակէն ձախորդ լուր  
մ'առիր արդեօք:

— Չէ, չէ... ընդհակառակն:

— Ինչո՞ւ է տրտմութիւնդ ուրեմն:

— Ո՛հ, ինչ կ'ուզես, բարեկամ, մար-  
դըս այսպէս է. ցաւ մը միշտ կը խառ-  
նուի մեր անուշ ակնկալութեանցը հետ.  
այս աշխարհիս վրայ երջանկութիւնն  
առջևէն իր ստուերն ունի, և այս ստուե-  
րին վրայ նախ մեր աչքը կանկ կ'առ-  
նու: Դու բաժանման վրայ կը խօսէիր...  
ահաւասիկ նամակը. առ կարդա և ի-  
մացիր թէ ինչո՞ւ համար տխրութիւն  
տիրեց վրաս այս առաւօտ քովդ կեցած  
ժամանակս: »

Ու իրեն երկնցուց նամակը:

Շառնէ առաւ և քիչ մ'ատեն առանց

բանալու վրան նայեցաւ : Աչքերը ժի-  
րարտիի վրայ տնկած՝ կարծես թէ նա,  
մակին նիւթը կ'ուզէր սիրուն ընկերո-  
ջը կերպարանքէն գուշակել . յետոյ հաս-  
ցէն նայեցաւ ու գիրը ճանչնալով զդա-  
ծուեցաւ . վերջը թղթին ծալքը բացաւ  
և ջանաց բարձրաձայն կարդալու , բայց  
ձայնը կը դողդրղար , բաւերը բերնին  
մէջ կը չորնային , և երբեմն հարկադրե-  
ցաւ ընդհատելու :

Ահաւասիկ այս էր կարդացածը .

« Իմ բարի Հայրս ,

« Այս առմտակը որ հիմա ձեռքդ է՝ բիւր  
անդամ համբուրէ . ես ալ բիւր անդամ  
համբուրեցի . կատարեալ հունձ մ'ունիս  
քողելիք անկէ : . . .

Ո՛հ , ըսածիդ պէս ըրի , . . . սիրուն  
աղջիկս , » մրմնջեց ժիրարտի :

Շառնէ առաջ տարաւ .

« Ինչպէս ինձի՝ նոյնպէս Հրամանքիդ  
համար ալ շատ ախորժելի է անշուշտ իրա-  
րու հետ թղթակցութիւն կարենալնիս ը-  
նել , անանկ չէ՞ . այս բանիս համար պէտք  
է յաւիտեան Մընու զօրավարին երախ-  
տագէտ ըլլանք . ինքն է լուծիւննիս կըտ-

րել առողջը որ հեռաւորութենէ աւելի  
խիստ բաժանուին էր մեզի համար։ Օրհ-  
նանձ ըլլայ . ասկէ վերջը կրնանք գոնեա  
մեր մտածութիւնները իրարու հաղորդել։  
Ես Հրամանքիդ ակնկալութիւններս պիտի  
ըսեմ՝ որով քաջալերուիս . Հրամանքդ ալ  
վշտերդ պաամէ , որոնց վրայ լալով իբրև  
քու քովդ լացած պիտի կարծեմ ինքզին-  
քըս : . . . Բայց , սիրուն հայր , եթէ աւե-  
լի մեծ շնորհք մը մեզի պահուած ըլլար . . .  
ո՛հ , կ'աղաչեմ՝ հոս քիչ մը 'ի կախ թող  
ընթերցմունքդ և յաջորդը կարգալէդ ա-  
ռաջ՝ սիրտդ լսելիք յանկարծական ուրա-  
խութեանդ պատրաստէ . . . Հայր , եթէ  
կարելի ըլլար ինծի քովդ գալ Ֆէնէսդրէլ-  
լոյի մէջ . . . երկու տարի երբեմն երբեմն  
զքեզ տեսնելը , ձայնդ լսելը և զքեզ հո-  
գալը բաւական երջանկութիւն եղաւ ին-  
ծի , և այն աստե՛ն բանտարգելութիւնը թե-  
թև կ'երևար քեզի :

Աղէկ ուրեմն , եթէ յոյսս արդիւնաւո-  
րի . . . քիչ ատենէն այն որմոց մէջ պիտի  
դառնամ ուսկից աքսորուեցայ : . . .

« Պիտի դառնայ . ինչպէս . հոս . քու  
քովդ . ընդհատեց ու հարցուց Շառնէ  
լի ուրախութեամբ :

— Կարդա , կարդա , » պատասխա-  
նեց ծերը տխրութեամբ :

Շառնէ վերջին իմաստը դարձեալ

կարդաց ու ընթերցմունքն տուաջ տա-  
րաւ :

«Քիչ ատենէն այն որմոց մէջ պիտի դառ-  
նամ ուսկից աքսորուեցայ : . . Անշուշտ  
եմ որ գոհ ես , ու կարգէ դուրս գոհ :  
Այս մխիթարական լրոյն վրայ ալ քիչ մը  
կեցիր հանգիստ առ . . . քու աղջիկդ , Թե-  
րեզան է որ կ'աղաչէ . շատ մի փութար  
նամակը լմնցնելու : Սաստիկ զգացմունքը  
երբեմն շատ վտանգաւոր է . բաւական չէ՞  
ինչուան հիմա ըսածս : Եթէ փափաքդ կա-  
տարելու համար հրեշտակ մ'ալ իջած ըլ-  
լար երկնքէն՝ աւելի բան չէիր համարձա-  
կեր խնդրելու : . . . Ես թերևս շատ պա-  
հանջող ըլլալովս անոր երկինք թռչելէն  
առաջ Հրամանքիդ ազատուելուն՝ և կա-  
տարելապէս ազատուելուն համար միջնոր-  
դութիւն կ'ընէի : . . . Այդ հասակիդ մէջ  
շատ ծանր է ծննդեան երկրէ դուրս ապ-  
րիլը : Տորիայի եզերքները շատ աղուոր  
են , և Հրամանքիդ բլրոյն պարտիզին մէջ  
ողորմած հոգի մօրս և խեղճ եղբօրս տըն-  
կած ծառերը շատ աճեր են : . . . Հոն ա-  
մեն տեղէ աւելի իրենց յիշատակը կենդա-  
նի է : Մէյ մ'ալ որ՝ չես ցաւիր բարեկամնե-  
րէդ հեռու ըլլալուդ վրայ , որոնք վեհանձ-  
նութեամբ աշխատեցան և օգնեցին ըրած  
տկար փորձերուս յաջողելուն : . . . Ա՛հ  
հայր իմ , հայր իմ , գրիչը մատուըներս

կ'այրէ . գաղտնիքս յայտնուելու վրայ է .  
անշուշտ յայտնուեցաւ ալ : Կ'աղաչեմ՝ զօ-  
րացիր ու քաջալերուէ , վասն զի երջան-  
կութիւնն ահա հասնելու վրայ է : Քիչ օ-  
րէն կու գամ հետդ կը միանամ , ոչ պարզ  
բանտարգելութիւնդ անուշցնելու համար՝  
այլ դադրեցնելու համար . ոչ եթէ որոշեալ  
ժամերուն քովդ ու բանտի փակարանին  
մէջ գտնուելու համար , հապա զՀրաման-  
քդ ազատ ու յաղթական դուրս հանելու  
համար . այո՛ յաղթական , և իրաւունք ալ  
ունիս ըլլալու , վասն զի Հրամանքիդ հա-  
ւատարիմները Տըլարիւ և Քողէննա ոչ թէ  
շնորհք մ'ընդունեցան , այլ արդարութիւն  
և հատուցումն :

« Մնաս բարով , իմ ազնիւ հայրս . ո՛հ ,  
ինչպէս կը սիրեմ զՀրամանքդ ու ինչպէս  
երջանիկ եմ :

### Թ Ե Ր Ե Ձ Ա .

Այս նամակին մէջ Շառնէի նկատ-  
մամբ մէկ բառով մ'ալ յիշատակու-  
թիւն չկար : Ինքը այս հեռաւոր բառին  
անձկանօք կը յուսար հանդիպիլ ամ-  
բողջ ընթերցմանը ժամանակ , և թէ-  
պէտ չգտնելով զայն տհաճեցաւ՝ այլ  
հանգերձ այնու լիուլի ուրախութեամբ  
« Պիտի ապատիս ուրեմն , գոչեց . պիւ



տի կարենան ընդ հովանեաւ ծառոց  
հանգչիլ ու արևուն ելլելը տեսնել :

— Այո՛, ըսաւ ծերունին, պիտի բաժ-  
նուիմ . . . քեզմէ . և այս է գողցես եր-  
ջանկութիւնս մթագնելու համար առ-  
ջևէն քալող ստուերը :

— Է՛հ, ինչ փոյթդ է, կցեց Շառնէ՛  
կրից սաստկութեամբն ու վեհանճու-  
թեամբը ինքզինքը մոռնալով, որով  
կը ցուցընէր թէ ալ ըմբռնած էր բա-  
րեկամութեան ինչ ըլլալը . — հուսկ ու-  
րեմն իրեն պիտի դառնանս, ինքն ալ իմ  
սխալմանս համար վշտանալէն պիտի  
դազրի . երջանիկ պիտի ըլլաս, և ալ  
պիտի չզգամ 'ի խորս սրտիս այն ծան-  
րութիւնն որ զիս կը նեղէր : Իրարու  
հետ անցընելու մնացած քիչ մը ժա-  
մանակին մէջ գոնեա կրնանք իրեն վը-  
րայ խօսիլ : »

Այս ետքի բառերը ծերունի բարե-  
կամին բազկացը մէջ վերջացուց :

Ը

Քիչ ատենէն բաժնուելու մտածու-  
թեամբ երկու բանտարկելոց գուժը փո-  
փոխակի իրարու վրայ աւելցաւ : Միշտ  
մէկտեղ էին և երբեք չէին ձանձրանար  
գրուցատրութեան բազմոցին երկայն և  
օգտակար խօսակցութիւններէն :

Բայց սակայն քանի մը նիւթեր կա-  
յին, ծանր նիւթեր, որոնց վրայօք կ'ու-  
զէր երբեմն Ժիրարտի խօսք բանալ, և  
ընդհակառակն Շառնէ փախուստ կու-  
տար : Եւրն հարկաւոր կը սեպէր. զա-  
նոնք խօսիլն, ուստի դիւրաւ չէր յու-  
սահատեր :

Օր մը առիթն եկաւ անոնց վրայ դառ-  
նալու :

« Չես զարմանար, կ'ըսէր Շառնէ,  
թէ ինչպէս ճակատագիրը երկուքնիս  
ալ հոս իրարու հետ միացուց . զմեզ որ  
մեր ծնած տեղերովն մէկմէկէ զատուած  
էինք, հակառակ նախապաշարմունքնե-  
րով սնած և բոլորովին տարբեր ճամ-  
բաներով մի և նոյն կէտին հասեր էինք

աստուածային նախախնամութեան աչաց առջև :

— Այս վերջին խօսքդ չեմ ընդունիր, յաւել ժիրարտի ժպտելով. մոռնալն ուրանալ չէ :

— Այնպէս է, կը հաւանիմ. բայց երկուքնէս ո՞վ աւելի կոյր ու ցաւալի եղաւ :

— Դու, առանց տարակուսելու պատասխանեց ծերունին. այո՛ դու, բարեկամս : Ամեն բանի չափազանցը անշուշտ զմարդս 'ի կորուստ կրնայ մղել. բայց նախապաշարման մէջ հաւատք կայ, կիրք կայ, կեանք կայ. յանհաւատութեան ամենայն ինչ մեռած է. մէկն իրեն ճշմարիտ ընթացքէն խոտորած դետ մ'է, կ'ողողէ, կ'ընկղմէ, բուսական ու սննդական հողը կը խառնակէ, բայց կը պղտորի ու կը յաղենայ, և կրնայ ժամանակաւ պատճառած մլնասները կարկրտել : Միւսը չորութիւն ամլութիւն է. կը սպաննէ, կ'այրէ անդարման կերպով. հողն աւազ կը դարձընէ, և ճոխ Պալմիրան՝ աւերակ մը անապատի մէջ : Անհաւատութիւնը գոհ չըլլալով զմեզ Արարչէն բաժնելու, ընկերութեան և

նոյն իսկ ընտանեկան հապերն ալ կը քակէ . զմարդ իր արժանապատուութեանէն զրկելով, չորս կողմանէ առանձնութեամբ ու լքմամբ կը պաշարէ և միայն կը թողու զինքը իր ամբարտաւանութեանն հետ : ... Աղէկ ըսի . աւերակ մը անապատի մէջ :

— Միայն իր ամբարտաւանութեանն հետ, մրմնջեց Շառնէ՝ թեւը բազմոցին կոթընցուցած, ճակատը ձեռքին մէջ առած : Մարդկային գիտութեան ամբարտաւանութիւնն . այո՛ ... այո՛, այնպէս է : Ինչո՞ւ համար կ'ախորժի մարդ իր երջանկութեան տարերքը կործանել երբ ուզէ անոնց խորունկը մտնել ու զննել : Երբ այս երջանկութիւնը սուտի մը պէտք ունի՝ ինչո՞ւ համար դիմակը վերցրնելու ջանալ և անձամբ ընդ առաջ վազել թշուառութեան : Ճշմարտութիւնն այսչափ քաղցր է մարդուս համար . միթէ բաւական է գիտութիւնը իրեն ամբարհաւած ըղձիցը : Այսպէս անզգամօրէն անցուցի իմ կեանքս : « Ի՞նչ եմ ես . ոչնչանալու սահմանեալ որդ մը . » բայց կանգուն կեցած աղբւիս վրայ՝ այս գիտնալուս վրայ կը պարծէի :

կը պարծէի ցաւայի մերկութեանս վրայ . երջանկութեան և առաքինութեան վրայ կը տարակուսէի, ամեն բանի վրայ կ'երկբայէի . ոչնչութեան առջև ըսկեպտիկութիւնս կանկ առաւ . հաւտացի : Նուաստութիւնս փառաւոր երևցաւ ինծի . ես ինծմէ գտայ, և արդարեւ իսկ իրաւունք չունէի սաստիկ ուրախանալու . այս գեղեցիկ գիւտին փոխարէն արքայական վերարկուս և անմահութեան գանձս տուեր էի : »

Ծերը ձեռքը ընկերոջը երկնցուց :

« Որդը գետնին վրայ սողալէն վերջը, ըսաւ, լեղի տերևներով սնանելէն ետքը, տղմուտներու շաղախին և ճամբաներու փոշուոյն մէջ թաթաւելէն վերջը, իրեն փակարանը կը շինէ որ առժամանակեայ դագաղ մ'է, ուսկից այլակերպեալ ու մաքրուած դուրս կ'ելլէ, ծաղկէ ծաղիկ կը թռչրտի, անուշահոտութեամբ կ'ապրի, և երկու փայլուն թևեր բանալով դէպ 'ի երկինք կը բարձրանայ : Որդոյն պատմութիւնը մեր պատմութիւնն է : »

Շառնէ, ժխտողական ձև մ'ըրաւ :

« Անհաւատ, յաւել թիրարտի՛ յան

դիմանելով զինքը կէս տխուր ժմիտով մը . կը տեսնես , քու թշուառութիւնդ իմինէս շատ մեծ է , աւելի երկայն խընամբ պէտք է . մուցար ուրեմն Բի'չ չիոյսիդ դասերը :

— Չէ , պատասխանեց Շառնէ լուրջ ու զգայուն ձայնով մը . կը խոստովանիմ զՄատուած . կը հաւատամ արդայն նախկին պատճառին զոր Բի'չ չիոյս լա ինծի սորվեցուց . այն յաւիտենական զօրութեան որ տիեզերաց զարմանալի կարգաւորիչն է : Բայց թէ որդոյն այլակերպելէն մարդուս ապագայ վիճակունենալու խնդիրը կը ծագի , ո՞վ կըրնայ զայն ապացուցանել :

— Ո՞վ կ'ապացուցանէ . իր մտածութիւնը , որ միշտ ապագային վրայ է և անդադար յառաջ կը վարէ զինքը . միշտ կենաց փափաքելով կը սպառի . ակամայ միշտ դէպ 'ի այն անծանօթ ըւեւը կը դառնայ որ զինքը կը քաշէ , վասն զի իր ժառանգութեան ամենէն փառաւոր մասը երկրաւոր արդիւնք չէ : Ամենայն ազգաց մէջ հանդերձեալ կենաց գաղափարն եզրած է , և ինչո՞ւ համար այս յոյսը երբեք պիտի չկատա-

րուի. մարդուս մտածութիւնը միթէ  
կրնայ քան ՂԱստուծոյ կարողութիւնը  
յառաջել: Ո՞վ կ'ապացուցանէ: . . . Չեմ  
ուզեր յայտնութեան ու Ս. Գրոց հե-  
ղինակութիւնները մէջ բերել. ինծի  
համար համոզողական՝ քեզի համար  
անզօր կրնան սեպուիլ. քամին որ ըզ-  
նաւը կը մղէ առաջ կը տանի իր ճամ-  
բուն մէջ՝ անշարժ ժայռերուն բան  
մը չկրնար ընել. ժայռն առագաստներ  
չունի քամին մէջն ընդունելու համար  
և խարխիսը գետնին յատակը ընկըղ-  
մած է: Ի՞նչ, բարեկամս, նիւթոյ ան-  
մահութեան հաւտանք՝ և չհաւտանք  
իմացականութեան յաւիտենական ըլ-  
լալուն որով կրնանք դատել նոյն իսկ  
զնիւթը: Ի՞նչ. առաքինութիւն, սէր,  
անձնանուիրութիւն, հանճար կը պար-  
գեին մեզի երկրաւոր ու անզգայ քանի  
մը բարակ հիւլէներէ. խոհուն չեղողը  
մեր խորհելուն պատճառ ըլլայ: Ի՞նչ.  
անբան նիւթը զիմացականութիւնը ըս-  
տեղծած ըլլայ, երբ իմացականութիւ-  
նէն որ կ'ուղղէ ու կը կառավարէ զնիւ-  
թը. ան ատեն քարերն ալ պէտք էին  
սիրել ու մտածել: Ըսէ, ըսէ, պատառ  
խան տուր:

— Նիւթոյ խոհուն ըլլալն ընդունե-  
լու, պատասխանեց Շառնէ, Լոք անգ-  
ղիացին հակամէտ կ'երևար. սակայն  
հակասութեան մէջ ալ ինկաւ ինքը,  
վասն զի բնածին գաղափարները կը  
մերժէր, ինքնադիմական ծանօթու-  
թիւնն (connaissance intuitive) ընդու-  
նելով. . . » Յետոյ խօսքը կտրելով դոչեց  
ծիծաղաձայն. « Չգուշացիր ուրեմն, բա-  
րեկամս. կ'ուզե՞ս զիս դարձեալ այն լա-  
բիւրինթոսին մէջ ձգել որ բնազանցու-  
թեան երերուն գետնոյն վրայ է :

— Բնազանցութենէ ամենեկին չեմ  
հասկընար, ըսաւ Ժիրարտի :

— Ես ալ զարմանալի մը չեմ գի-  
տեր, պատասխանեց Շառնէ. սակայն  
անոր վրայ ժամանակ անցընելը մեզք  
չէ : Բայց մէկդի թողունք այս հակա-  
ճառութիւնը որ անբեղուն կամ մահա-  
բեր կրնայ ըլլալ : Համոզուած ես, հա-  
մոզմանդ մէջ կեցիր : կ'իմանամ որ  
սիրելի են քեզի : Թէ որ ես զանոնք փը-  
ճացնէի :

— Չես կրնար . յանձն կ'առնում  
կռուիլ :

— Ի՞նչ շահ անկէ :



— Զքեզ կատարելապէս մխիթարա-  
կան համողմանց բերել: Քիչ մ'առաջ  
Լոքն յիշեցիր ինձի. մէկ բան մը գի-  
տեմ իրեն վրայօք, այսինքն թէ անդա-  
դար՝ ինչուան նաև մահուան անկող-  
նոյն մէջ ալ կը վարդապետէր թէ միայն  
ճշմարիտ երջանկութիւնը մարդուս հա-  
մար մաքուր խիղճ և հանդերձեալ կե-  
նաց յոյս ունենալուն վրայ է:

— Կ'ըմբռնեմ թէ քաղցր է կանխաւ  
անմահութեան ըմպելոյն համն առնե-  
լը. բայց իմ միտքս կը դժուարի ճաշա-  
կելու զայն: Հաւտա՛ ինձի, ալ աս բա-  
նիս վրայ չխօսինք: »

Երկուքն ալ ստիպեալ լռեցին:

Այս վայրկենիս բան մը որ գլխը-  
նուն չորս կողմը վեր վար կը թռչրտէր՝  
յանկարծ առջևնին բուսակին տերևնե-  
րուն վրայ թառեցաւ կեցաւ: Կանան-  
չագոյն միջատ մ'էր, աղուոր գոյնզգոյն  
բզէզ մ'էր, ճերմակ ու ալեճև ժապա-  
ւէնով, նեղ զրահով:

« Նայէ, բարեկամ, ահա զբաղմունք  
մը մեզի համար. Աստուծոյ հրաշալիք-  
ներէն ուրիշ մէկ քրանիին ալ զիս տե-  
ղեկացուր: »

ժիրարտի զգուշութեամբ բռնեց մի-  
ջատը, քննեց, խորհրդածեց . յետոյ  
յանկարծ դէմքն յաղթանակի յուսով  
փայլեցաւ . կարծես թէ փութով եր-  
կրնքէն անդիմադրելի պատճառ մը առ-  
ջևը բացուեցաւ : Նախ իրեն վարժա-  
պետական ձայնն առնելով, ու հետզհե-  
տէ բարձրացնելով՝ քանի որ դասուն  
գաղտնի պատճառը խօսակցութենէն  
յայտնի կ'ըլլար՝

« *Ես ձանձորաս, բաւ առ երևոյթ*  
միամտութեամբ մը, կը տեսնեմ թէ  
պէտք է իմ չափաւոր տեղեկութեանցս  
սահմանին մէջ ամփոփուիմ . ես գիտ-  
նական չեմ :

— Լուսաւոր և գիտութեամբ սպա-  
ռազինեալ միտք մը, պատասխանեց  
Շառնէ, շուտ կ'ըմբռնէ մտացն ու կա-  
րողութեանը սահմանները, երբ ստորա-  
յին խորհրդական բաներու մէջ կ'ուզէ  
սաստիկ յառաջ մխիլ : Հանճարն իսկ  
կը մաշի, կը խոնջի՝ նախ քան զճմա-  
րիտ լոյսը ցայտեցնել կարենալը :

— Մ'ենք տգէտքս, կրկնեց ծերու-  
նին, դիւրին և կարճ ճամբով դէպ 'ի  
նպատակ կը դիմենք . աչքերնիս պարզ

կը բանանք և Աստուած կը յայտնուի մեզի 'ի վսեմութեան գործոց իւրոց :

— Այս կէտիս վրայ միաբան ենք , ըսաւ Շառնէ :

— Առաջ տանինք ուրեմն ճամբանիս : Չնչին խոտ մը բաւական եղաւ քեզի հասկցնելու զաշխարհք կառավարող ի մացականութիւնը . թիթեռնիկ մը տիեզերական ներդաշնակութեան օրէնքը սորվեցուց քեզի : Հիմա այս սիրուն բըզէզն որ նոյնպէս կեանք ու շարժմունք ունի , և որուն գործարանաւորութիւնը վերադաս է քան զթիթեռնիկինը , թերեւ աւելի յառաջ պիտի վարէ զմեզ : Դուն դեռ բնութեան անհուն գրքին մէկ երեսը կարդացիր . դարձնենք թուղթը : »

Շառնէ քովը մօտեցաւ և ուշի ուշով ծերուն ցուցրցած միջատը դիտեց :

« Կը տեսնես այս պզտիկ էակը . մարդուս բովանդակ ստեղծական հանճարոյն կարողութիւնը չկրնար բան մ'աւելցնել իրեն գործարաններուն վրայ . այսչափ ըստ իրեն պիտոյիցը և ըստ դիտեալ վախճանին իմաստութեամբ կազմուած է : Թեևեր ունի տեղէ տեղ փոխաւ

դրուելու համար . վերնաթևեր ալ ունի պինդ մարմնոց հարուածներէն զգուշանալու և պահպանելու համար զթևերը . կուրծքը զրահապատ է , աչքերն ալ ցանցապատ՝ որպէս զի չըլլայ թէ վայրենի վարդին փուշը կամ թշնամուց մը խայթոցը կուրացնէ զինքը : Գէմն ելած արգելքներուն ինչ ըլլալը իմանալու համար զգայուն եղջիւրներ ունի . որ սորգութեամբ ապրելուն՝ արագընթաց ուղքեր ունի որսոյն ետևէն հասնելու համար . երկաթէ ծամելիքներ ունի ուտելու , հողը փորելու և բնակարան կազմելու , հոն իր աւարը գնելու կամ հաւկիթներն ածելու համար : Եթէ մնասակար թշնամի մը համարձակի վրան յարձրկելու՝ պահեստի թթու և մաշող հեղանիւթ մ'ունի որով շուտ մը կը հեռացնէ : Բնածին ազդեցութիւն մը նախ պարէնը մատակարարելու , բնակարան շինելու , զէնքերն ու գործիքները բանեցնելու միջոցները սորվեցուց . եւ մի կարծեր թէ ուրիշ միջատներն իրմէ նուազ ձիւղքեր ունին . ամենքն ալ մասնակից են բնութեան պարզևաց ճոխ բաժանմանը : Մարդուս երևա-

կայութիւնը կը սոսկայ երբ կը մտածէ նախախնամութեան գործածած ան-  
թիւ ու զանազան միջոցներուն վրայ՝  
այս տկար ցեղերուն էութիւնն ու տևո-  
ղութիւնը ապահովցնելու համար: Հի-  
մա բաղդատենք, և կը տեսնես որ այս ու-  
ղորմելի արարածը բաւական է ըստ պի-  
տոյից զմարդս անբանէն բաժնող ան-  
հուն գիծը հաստատելու համար:

« Մարդս երկրիս վրայ ինկաւ տկար,  
անկարող՝ թռչնոց պէս թռչելու, եղջե-  
րուաց պէս վազելու և օձի պէս սողա-  
լու. մերկ՝ ընդդէմ ահագին ժանիքա-  
ւոր և խայթոցաւոր թշնամեաց. բրդոտ,  
թեփոտ և մուշտակաւոր կենդանեաց  
մէջ ինքը անպատուար՝ եղանակաց  
խառնակութենէն պահպանուելու հա-  
մար. անապաւէն, երբ իւրաքանչիւր ա-  
նասուն իրեն որջը խշտին պատեանն  
ու խեցին ունէր. անզէն՝ երբ շուրջա-  
նակի ամենն ալ իրեն դէմ զինուորեալ  
էին: Տես ուրեմն. առիւծէն բնակու-  
թեան անձաւն ուզեց, ու անիկա աչ-  
քին նայուածքէն ետ քաշուեցաւ. յա-  
փըշտակեց արջոյն աւարը, և այն եղաւ  
իր առաջին զպետար. խզեց ցլոյն եղջիւ-

ըրև այն եղաւ առաջին բաժակը . վերջը հողոյն ինչուան ընդերքը փորեց իրեն հանդերձեալ զօրութեան գործիչները գտնելու համար . կողէ մը, ջղէ մը եղէգէ մը զէնքեր շինեց . և արծիւը՝ որ նախ անոր տկարութիւնն ու մերկութիւնը տեսնելով իբրև որս յափշտակելու կը պատրաստուէր՝ օդոյն մէջ զարնուելով ոտքի առջևն ինկաւ , միայն փետուր մը շնորհելու համար իբրև զարդանոր մագին :

« Անասնոց մէջ կայ մէկը , միակ մէկ մը որ կրցած ըլլայ ապրիլ ու պահպանուիլ այս պայմաններով : Բաժնենք վայրկեան մը գործաւորն յիւր գործոյն , բաժնենք , զԱստուած 'ի բնութենէ . ազէկ ուրեմն . բնութիւնն ամենայն ինչ այս միջատին համար ըրած է , և մարդուս համար ոչինչ . պատճառն է՝ վասն զի մարդս աւելի իմացականութեան արդիւնք պէտք էր ըլլար քան թէ նիւթոյ , և Աստուած իրեն այս երկնաւոր պարզեր շնորհելով , աստուածային վառարանէն բղխած լուսոյ հոսանքը՝ տկար ու խեղճ ստեղծեց զինքը , որպէս զի ինքը բանեցնէ իր իմա-

ցականութիւնը և ստիպուի գտնելու յինքեան իր մեծութեան տարերքը :

— Բայց , բարեկամ , վրայ բերաւ Շառնէ , յորո՞ւմ է այս մարդկան ժառանգութիւն եղող և ինքը զինքը աստուածային կոչող կարողութեան մեծագին ըլլալը : Շատ նկատմամբ վերագաս ենք քան զանասունս , ուրիշ շատ նկատմամբ ալ ստորին ենք անոնցմէ . և նոյն իսկ այս միջատը՝ որուն հրաշալիքը մանրամասնաբար պատմեցիր՝ արժանի չէ նախանձնիս շարժելու և խոնարհութեան քան թէ ամբարտաւանութեան զգացմունք մը ծնուցանելու ՚ի մեզ :

— Չէ . վասն զի անասունք իրենց էական գործոյն մէջ ոչ երբեք փոփոխութիւն ցուցըցեր են . ինչպէս որ են՝ միշտ նոյնպէս եղած են , ինչ որ գիտեն՝ միշտ նոյնը գիտցած են : Եթէ կատարեալ ծնած են՝ չեն կրնար յառաջադիմել : Ոչ թէ իրենց սեպհական շարժմամբը կ'ապրին՝ այլ Արարչին տուածովը : Այսպէս աշխարհիս ստեղծմանէն ՚ի վեր կուղբերը նոյն կերպով իրենց հիւղը շինած են , թրթուրներն ու մամուկներն

ալ մի և նոյն ձևերով իրենց պատեանն ու  
ոստայնը ոլորեր ու մաներ են . մեղուաց  
բլիջներն ալ միշտ կանոնաւոր վեցան-  
կիւնի եղած են . և մրջնառիւծներն ա-  
մեն ժամանակ առանց կարկինի շրջա-  
նակներ ու ոլորածոյներ գծիր են : Ի-  
րենց յատուկ ճարտարութիւնն է միա-  
կերպութիւնն ու կանոնաւորութիւնը .  
իսկ մարդկային ճարտարութեան յա-  
տուկ՝ փոփոխութիւնը . վասն զի ազատ  
ու միանգամայն ինքնաստեղծ մտածու-  
թենէ մը առաջ կու գայ : Հիմայ դա-  
տէ . ամենայն ստեղծուած էակներէն  
մարդս միայն խորհրդածութիւն , գիւտ ,  
պարտուց և ծածուկ պատճառաց գա-  
ղափար , մտածողութիւն , բորբոքումն  
ու յարումն և սէր ունի . միայն ինքն է  
որ մտածութեամբ և ոչ թէ բնական  
բերմամբ կը շարժի . միայն ինքը կրնայ  
տիեզերաց բովանդակութիւնն ըմբռ-  
նել . միայն ինքը ուրիշ աշխարհք մը կը  
նախադիտէ , և ինքը միայն տեղեակ է  
կենաց և մահու :

— Անտարակոյս , ըսաւ Շառնէ ,  
բայց բան մըն ալ հարցընեմ . շահաւոր  
բան մի է անասուններէն ունեցած զա-



Նազանութիւնը. ինչո՞ւ համար Աստուած մեզի մոլորական միտք և սխալական գիտութիւն տուեր է : Բարձր իմացականութեամբ երբեմն մենք մեզի խղճայի կ'ըլլանք . ինչո՞ւ համար միակ առանձնաշնորհութիւն ունեցող էակը նաև միակ մոլորութեան ենթակայ է . ինչո՞ւ համար մենք ալ անասնոց բնազդումնը չունինք , կամ թէ անասունք մեր բանականութիւնը չունին :

— Վասն զի նոյն վախճանին համար ստեղծուած չեն . իրենցմէ Աստուած առաքինութիւն չպահանջեր : Եթէ իրենք ալ միտք , և բնակութեան ու սննդեան ազատ ընտրութիւն ունենան , մէկէն աշխարհիս հաւասարակչութիւնը կը խարխալի : Արարչագործն ուզած է որ այս երկրագնացոյս մակերևոյթն ու նոյն իսկ խորութիւնը շնչաւոր արարածներով լեցուն ըլլան և հոն ամենուրեք կեանք ըլլայ : Եւ արդարև իսկ դաշտորայք , հովիտք , անտառք , լեռանց ծայրերէն սկսեալ ինչուան անդունդները , ծառերն ու ժայռերը , ծովերը , լճերը , գետերը , առուակներուն եզերքը՝ ինչպէս նաև յատակը , աւա-

զուտ տեղեր ու ճախճախուտ ճահիճք ,  
ամեն կլիմաներու , ամեն լայնութեան  
տակ , մէկ բևեռէ միւս բևեռ ամեն տեղ  
լի է բնակութեամբ , և ամենքն ալ դաշ-  
նաւորութեամբ ու միաբանութեամբ  
կը շարժին : Առիւծը անապատներու  
խորը , ինչպէս մրջիւնն ալ յարդի մը  
շիւղին ետև՝ իրենց համար որոշուած  
տեղը բռնած են : Իւրաքանչիւրն իրեն  
մասը և կանխաւ սահմանեալ տեղն ու-  
նի . իւրաքանչիւրը նախախնամական  
շրջանով մը հոն կը դառնայ . իւրաքան-  
չիւրն իր սահմանին մէջ կապուած է ,  
վասն զի պէտք էր որ այս անհուն սատ-  
րինջին ամեն խորշերը լեցուն ըլլային .  
և են իսկ . ոչ դք կրնայ իրենինէն դուրս  
ելլել առանց մեռնելու : Մարդս է մի-  
այն որ ամեն տեղ կ'երթայ և կ'ապրի  
ամենուրեք . կ'անցնի ովկիանոսներն ու  
անապատները . իր վրանը աւազներու  
մէջ կը տնկէ , կամ ալիքներէ անվախ  
ծովափանց վրայ իր ապաւէնը կը կա-  
ռուցանէ . Ալպեանց ձիւներուն մէջ կը  
բնակի , ինչպէս նաև արևադարձին ջեր-  
մութեան տակն ալ . և աշխարհք իրեն  
բանտն է :

— Բայց եթէ այս աշխարհիս կառա-  
վարն Աստուած է, ըսաւ Շառնէ, ինչո՞ւ  
համար են մարդկային ընկերութեանց  
այնչափ եղերունքն ու բնութեան թը-  
շուառութիւնները : Կը զարմանամ ես  
ալ քու հետդ ստեղծեալ էակաց վեհ  
բաժանմանը վրայ . միտքս կը շփոթի  
այս հիանալի բովանդակութեան առ-  
ջև . բայց երբ աչքերս մարդուն վրայ  
կը դարձնեմ . . .

— Բարեկամդ իմ, յաւել իմաստու-  
նը, մարդուս սխալանացն ու հրաբրդ-  
խին ժայթքելուն համար զԱստուած մի  
բամբասեր . յաւիտենական օրէնքներ  
տուած է նիւթոյն և գործը կը կատա-  
րուի, և ինքը չտազնապիր նաւու մը փո-  
թորկի ժամանակ ընկղմելուն, կամ  
երկրաչարժով քաղաքի մը կործանուե-  
լուն վրայ . ինչ փոյթ է քանի մը էա-  
կաց աւելի կամ նուազ ըլլալը : Իր առ-  
ջևը մահ չկայ . բայց մեր հոգւոյն թո-  
ղուցած է ինքըզինքը կառավարելը, և  
մեր կրիցն անկախութիւնը նոյնը կ'ա-  
պացուցանէ : Յուցուցի քեզի թէ կեն-  
դանիները զիրենք շարժող բնական ազ-  
դեցութեան կը հնազանդին կոյր հա-

կամիտութեամբ՝ իրենց տեսակին յարակից յատկութիւններ ունենալով : Մարգս միայն է որ առաքինութիւն կը գործէ ու ախտի մէջ կ'իյնայ . միայն ինքն է որ ազատ կամք ունի . վասն զի իրեն համար այս երկիրս՝ փորձուելու երկիր է : Բարւոյն ծառը որ այնչափ ջանքով այս աշխարհիս վրայ կը մշակենք՝ յերկինս պիտի ծաղկի մեզի համար : Ո՛հ , մի կարծեր թէ Աստուած առանց անզգամին ուզելուն կարենայ փոխել անզգամին սիրտը , և թէ՛ կարենայ թողուլ արդարն իր ցաւոցը մէջ առանց վարձք մը պատրաստելու : Ի՞նչ էր ուրեմն կամքը զմեզ ստեղծելուն ժամանակ : Եթէ մենք այս աշխարհքիս մէջ մեր առաքինութեանցն ու չարեացը փոխարէն հատուցմունքն ընդունելու ըլլայինք , ամենայն յաջողութիւնք պատուաւոր կ'ըլլային , և կայծակի հարուած մը վատ մահ պիտի սեպուէր : »

Շառնէ զարմացեր մնացեր էր տեսնելով որ այս պարզ մարդը համոզմունքէն յանկարծ ճարտասան եղաւ . նա յուածքը կը դիտէր , վեհ կերպարանացը վրայ կը զարմանար յորում կը փայ-

լէին զգօն հողոյն ամենայն պայծա-  
ռութիւնքը, և ակամայ ինքզինքը ըզ-  
գացուած կը գտնէր :

« Բայց ինչո՞ւ համար յաւիտենակա-  
նութիւննիս ստուգապէս շուզեց իմա-  
ցունել մեզի Աստուած, միմնջեց Շառնէ :

— Ուզեց արդեօք, պէտք էր որ ու-  
զեր, — կրկնեց սուրբ ծերունին վսեմու-  
թեամբ մը ոտք ելլելով, և գորովանօք  
ձեռքն ընկերոջն ուսին վրայ դնելով. —  
Թերևս տարակոյսը մեզի պէտք էր ին-  
տաց ամբարտաւանութիւննիս խոնար-  
հեցնելու համար : Ո՞ր կը մնար առաքի-  
նութիւնն եթէ իր հատուցմունքը կան-  
խաւ ստոյգ ըլլար . ո՞ր կը մնար անձն-  
իշխան ազատութիւնը : Մարդուս մը-  
տածութիւնը անհուն է և ոչ անսահ-  
ման . միանգամայն մեծ և ամփոփ է .  
մեծ է՝ ըմբռնել տալու համար իր ար-  
ժանապատուութիւնը և մինչև առ Աս-  
տուած բարձրացնելու համար իրեն գոր-  
ծոցը վրայ մտածելով . ամփոփ է՝ որ-  
պէս զի Աստուծմէ ունեցած կախմուն-  
քը ճանչնայ : Մարդս այս աշխարհիս  
վրայ պէտք է ընդ ազատ նշմարէ . մնա-  
ցածը հաւատքը կ'ընէ : Աստուած իմ,

Աստուած իմ, — գոչեց ժիրարտի՝ եռանդեամբ թևերը բանալով և արտասուած լից աչքերը դէպ 'ի երկինք վերցնելով. — ոյժ տուր ինձի՝ այս յուսահատ մարդը որ դէպ 'ի քեզի կ'ուզէ գալ՝ կատարելապէս վերամբառնալու. օգնէ ինձի որ թևաւորեմ՝ այն անմահ հոգին որ անծանօթ է ինքն յինքեան. համոզողական ըլլան իմ խօսքերս՝ որովհետև սիրտս մինչ իսպառ համոզուած է, Բայց արդ ինչ կ'ընէ փաստաբանը խընդրոյն համար, երբ բովանդակ բնութիւնը միաձայն կը վկայէ: Այնչափ իսկ պէտք էր արդեօք: Ծաղիկ մը՝ միջատ մը բաւական են քու ամենակարողութիւնդ յայտնելու և մարդուս իր հանդերձեալ վիճակն իմացնելու: Քաջ է, ուրեմն. թող այս բոյսն իր գործը կատարէ. ինքն ալ միւս ամեն արարածոց պէս, Աստուած իմ, քու արևովդ լուսաւորուած և ինքնաբուղիս շնչովդ բեղնաւորուած չէ: »

Այս միջոցին կարծես թէ ծերը լռին զմայլման մը մէջ յափշտակուեցաւ. անշուշտ մտքէն կ'աղօթէր. և երբ ընկերոջը դարձաւ՝ տեսաւ որ երկու ձե,

ուսուրները գեղացի բազմոցին կռնակին  
յեցուցած կեցեր էր. վար կախուած  
ճակտին ու դէմքին վրայ սուրբ ամփո,  
փումն դրոշմեալ կը տեսնուէր:

Թ

Շառնէի մաքրուած սրտին մէջ ա-  
րիւնը աւելի մեղմով կ'ընթանար. մեծ-  
ցած գլխոյն մէջ մտածութիւններն ա-  
նուշ մխիթարական ու անձկալից իրա-  
րու ետե կը յաջորդէին: Պէտք կը զգար  
ինքն ալ իմաստուն Բիէմոնդեցւոյն պէս  
զհոգին գորովանօք դուրս զեղանելու.  
ախորժով կ'երազէր այն էակաց վրայ  
զորս երախտագիտութեան կամ բարե-  
կամութեան կապով մը կրնար յարել  
իրեն հետ:

Ասոնց մէջ նախ Յովսէփինէ, ժիրար-  
տի ու Լուգուիկ աչքին առջև կ'ելլէին.  
յետոյ երկու կանանց ստուերներ ալ  
կը գծուէին մրրկէ ետքը ծագած սիրոյ  
ծիածանին ծայրերուն վրայ. նման ե-  
կեղեցեաց նկարներու մէջ տեսնուած  
զոյգ սերորէից որ գլուխնին ծռած՝ ծալ

ի ծալ զգեստով , կիսաբաց թևերով  
Գրախտի մը սահմանաց ուր ըլլալը կ'ի-  
մացնեն :

Այս ստուերներէն մէկը իր ցնորիցն  
համբարուն էր՝ Բի'լլիոյա օրիորդը ,  
ծաղկանց անուշահոտութենէն ձևացած  
այն առոյգ երևոյթը . միւսն էր բանտին  
հրեշտակը՝ երկրորդ նախախնամութիւն  
Թերեզա-ժիրարտի :

Առաջինն որ պարզ իբրև գաղափար  
էր՝ այլանդակ վրիպակաւ մը առջևը կը  
տեսնէր հաստատուն , մասնաւոր ու կա-  
յուն կերպարանօք : Թեթև մը ճակտին  
կնճռիլը , աչացը վառուիլն ու շրթանցը  
ժպիտը կը տեսնէր : Ասանկ երևցեր էր  
աչքին երազի մը մէջ , միշտ ալ նոյն-  
պէս աչքին առջև կը գիտէր : Գալով  
Թերեզայի՝ ոչ երբեք վրան նայած ըլ-  
լալով , կամ կարծելով թէ ցնորիցը ժա-  
մանակ տեսած է , ինչ կերպարանօք  
կրնար աչքին առջևը բերել : Սերորէին  
երեսը ծածկուած էր . և երբ Շառնէ  
կ'ուզէր վեր առնուլ այս քողը , դար-  
ձեալ Բի'լլիոյայի կերպարանքն առջևը  
կ'ելէր , նախանձորդին ընծայուելիք  
սէրն ու յարգութիւնն ինքն ընդունե-  
լու համար :



Առաւօտ մը Շառնէ՛ թէպէտ ար-  
թուն , այսպիսի նորորինակ զառանցա-  
նաց մէջ ընկղմեցաւ :

Լուսըննալու վրայ էր ու ինքը ոտք  
ելած ժիրարտիի վրայ կը մտածէր , որ  
իրեն մերձաւոր ազատութիւնը նախա-  
գուշակելով՝ հոգեշարժ ու ցաւագին  
սրտի բացատրութիւններով իրեն երե-  
կոյեան վերջին բարեւր տուեր էր , որով  
կոմսը չէր կրցած գիշերը քուն ըլլալ .  
այնչափ այս բաժանման մտածութիւնը  
զինքը կը տազնապեցնէր :

Շառնէ քիչ մը ժամանակ սենեկին  
մէջ ճեմելէն վերջը՝ մեքենայօրէն աչքը  
խօսակցութեան բազմոցին վրայ դար-  
ձուց , ուր գեռ նոր նախընթաց իրիկու-  
նը հօրն հետ աղջկանը վրայ խօսեր էր ,  
երբ բանտին գաւթին մէջ նոյն նստա-  
րանին վրայ՝ աշնանային գորշերանգ  
մառախլոյն մէջէն յանկարծ օրիորդ մը  
նոյն տեղը նստած տեսաւ : Միայն էր  
և շնորհալից դրիւք բուսակին առջև մը .  
տածականի մէջ ընկղմած կ'երևար :

Մէկէն Շառնէի միտքը թերեզայի և  
անոր հասնելուն վրայ գնաց :

« Ինքն է , ըսաւ . վայրկեան մը պիտի

տեսնեմ՝ յաւիտեան մէյմ՝ ալ չտեսնելու համար . ինքը և ծեր ընկերս մէկտեղ անշուշտ ելլան պիտի երթան : »

Այս ըսելուն ժամանակ օրիորդը դըլուխը դէպ իրեն դարձուց և տեսած դէմքը դարձեալ ու միշտ Բի'յիոյայի դէմքն էր :

Ապշած՝ ձեռքը ճակտին և աշուրնեբուն տարաւ . հագուստը, պատուհանին ցուրտ վանդակները շօշափեց ապահովնալու համար որ այս անգամուս ակ ցնորք չէր :

Օրիորդն ոտք ելաւ կայնեցաւ, քանի մը քայլ իրեն մօտեցաւ, և ժմտելով՝ ամէկուտ ու վախկուտ կերպով բարև տրւաւ : Շառնէ ոչ ժպտելուն և ոչ ալ բարևին պատասխանեց . ուշի ուշով այն շնորհալից երևոյթները կը դիտէր որ մշուշին մէջ կը շարժէին . ճիշդ նոյներն էին որ երբեմն Բի'յիոյայի իրեն տրւած հանդէսներուն մէջ տեսած էր . անդադար նոյն գէմքերը կը նկարուէին թէ մտացն և թէ ցնորիցն առջև, և տենդալից բանդագուշանաց մէջ ինկած կարծելով ինքզինքը՝ հանգստանալու համար գնաց անկողնոյն վրայ ինկաւ :

Քանի մը վայրկեան վերջը դուռը բացուեցաւ ու Լուդուիկ ներս մտաւ ,

« Վա՛յ , վա՛յ , պոռալով . բարի ու ձախորդ լուր , պարոն կոմս . թռչուններէս մէկը պիտի թռչի , բայց չէ թէ պատին վրայէն՝ հապա դռնէն : Իրեն համար բաղձ՝ քեզի համար դժբաղդութիւն :

— Ի՛նչ , այսօր պիտի ելլէ ուրեմն :

— Չեմ կարծեր , պարոն կոմս . սակայն շատ չկրնար ուշանալ . կ'ըսեն թէ ստորագրութիւնն եղած է 'ի Բարիզ , և հիմա դէպ 'ի Դուրին ճամբայ ելած է : Գոնեա աղջիկը իմ առջև հօրն ասանկ պատմեց :

— Ի՛նչպէս , գոչեց Շառնէ , կէս մ'ան կողնէն վեր կանգնելով . հասեր է , հոս է :

— Երէկ իրիկուրնէ 'ի վեր Ֆէնէս դրէլոյ է , բացայայտ գրուածքով հոս մտնելու թոյլտուութիւն ունենալով : Դժբաղդաբար պահանորդաց տրուած հրամանէն արգիլուած է որ անանկ ուշ ատեն կնկան մը համար շարժական կամուրջը չբացուի , ուստի հարկ եղաւ որ այցելութիւնն այսօրուան թո՛ւ

դու : Ես գիտէի՝ բայց զգուշացայ խեղճ ծերուն իմացնելու . գիշերը պիտի չկարենար քուն ըլլալ, և ժամանակը շատ երկայն պիտի երևար եթէ աղջկանն ասանկ մօտ ըլլալը գիտնար : Այս առաւօտ թերեզա արշալուսին ելեր էր և կանուխ եկեր էր մառախուղին մէջ՝ գղեկին դրանն առջև Աստուծոյ արժանաւոր ստեղծուածոյն սպասելու :

— Բայց, հարցուց Շառնէ շփոթած, քիչ մը ատեն գաւթին մէջ բազմոցին վրայ չնստա՞ւ » : Եւ դէպ 'ի պատուհանը վազելով՝ աղէկ մը գաւթին կողմը նայեցաւ, ու Լուդուիկին դառնալով՝

« Ա՛լ հոն չէ, ըսաւ :

— Անշուշտ ա՛լ հոն չէ, բայց քիչ մ'առաջ էր : Այ՛ո՛ ինքը հոն կեցաւ երբոր ես բարի ծերուկին գացի ընդունելիք այցելութեան պատրաստելու համար զինքը, որպէս զի ուրախութիւնը մահաբեր չըլլայ : Ուրախութիւնն՝ ինչպէս կ'երևայ, զօրաւոր ըմպելիքներու կը նրմանի . ընդհատ ընդհատ պուտ մը՝ երկու պուտ խմելն օգտակար է . բայց պէտք չէ մէկ անգամով գաւաթը պարպել : Հիմա մէկտեղ են, երկուքն ալ

դոհ ու զուարթ . և ես զիրենք այսպէս  
ուրախ տեսնելով յանկարծ զմայլե-  
ցայ : Ջքեզ մտածեցի , պարոն կոմս , որ  
քիչ ատենէն առանց ընկերով պիտի  
մնաս , և եկայ որպէս զի յիշես թէ լու-  
դուիկ ու Բի'չխոյան գեռ հետդ են :  
Ինքը տերևները կորանցնելու վրայ է ,  
բայց եզանակին հետևանքն է . պէտք չէ  
արհամարհել ասոր համար » :

Ու դուրս ելաւ առանց Շառնէի պա-  
տասխանին սպասելու :

Իսկ ինքը Շառնէ գեռ զարմանաց ու  
յուզմանց մէջ կը ջանար այն նորատե-  
սիւ երևութին մեկնութիւնը տալ , և  
վերջապէս կը սկսէր մտածելու որ Բի'չ-  
չիոյա օրիորդին կերպարանքն առած  
այն քաղցր կերպարանքը ուրիշ մէկուն  
չէր կրնար ըլլալ՝ բայց եթէ Թերեզայի ,  
զոր երբեմն վանդակապատ փոքրիկ պա-  
տուհանէն տեսեր էր , և առանց գիտ-  
նալուն անոր յիշատակն անշուշտ ցնո-  
րիցը մէջ աչքին առջևը կը ներկայա-  
նար :

Այս բաներս մտածելու ժամանակը  
սանդուխին վերէն երկու հոգւոյ խօսե-  
լու ձայնը լսեց և իմացաւ որ ուրիշ մէկ

մ'ալ ծերուն ծանօթ քայլերուն հետ  
յուշիկ ու գազտագողի ոտք առնելով  
վար կ'իջնէր : Քիչ ատենէն այս կանո-  
նաւոր ձայնը իրեն դրանն առջևը լռեց :  
Շառնէ ուրախացաւ . բայց ժիրարտի  
միայն երևցաւ ,

« Հոս է , ու բուսակին քով մեզի կը  
սպասէ » , ըսելով :

Շառնէ լռիկ մնջիկ ետևէն գնաց ա-  
ռանց կարենալու բառ մը յօղել , և սիր-  
տը անձկութեամբ քան թէ հաճու-  
թեամբ լցուած :

Արդեօք կնկան մը առջև ելլելու յուզ-  
մունքէն էր , որուն ամենայնիւ պարտա-  
կան էր և բան մը չէր կրնար փոխարէն  
հատուցանել . ինչ կերպով առաւօտը  
ժպիտն ու բարևն ընդունիլը կը մտա-  
ծէր արդեօք . բաժանման պահուն մօտ  
ըլլալէն պէտք էր որ տկարանար սըր-  
տապնդութիւնն ու համակամութիւնը :

Այս պատճառներով , կամ ուրիշ ո՞ր  
և իցէ պատճառով ալ սեպենք , երբոր  
թերեզայի առջևն ելաւ , ոչ դք կերպէն  
խօսակցութենէն կրնար անուանի Շառ-  
նէի կոմսն ըլլալը ճանչնալ : Փոխանակ  
աշխարհատես մարդու պէս ազատ կերպ

և փիլիսոփայական արիասրտութիւն մը բանեցնելու՝ կակազեց ու տմարդի երևցաւ, զոր թերեզա անշուշտ իր կողմանէ առերևոյթ պաղ ու զգուշաւոր կերպով վարուելուն ու պատասխանելուն արդիւնք սեպեց :

Ճիրարտի թէպէտ շատ ջանաց աղջիկն ու բարեկամը իրարու հետ ընտանեցնելու, բայց խօսակցութիւնն՝ ի սկըզբան սովորական ոճով յուսոյ և ապագայ մխիթարութեան վրայ դարձաւ : Շառնէ առաջին յուզմունքէն սթափելուն պէս՝ թերեզայի հանդարտ դէմքին վրայ անտարբերութիւն նշմարեց, ու դիւրաւ համոզուեցաւ թէ իրեն համար ըրած ծառայութեանցը մէջ բաղդախնդիր բնաւորութեանն և հօրը հրամանացը հնազանգեր էր :

Ան ատեն գրեթէ զինքը տեսնելուն վրայ ալ ցաւեցաւ : Հին ցնորիցը մէջ եթէ դարձեալ միտքը ցրուրտեր՝ ալ պիտի զգար արգեօք ատենուան մը վայելքը :

Իրեքնին մէկէն բազմոցին վրայ նրատած էին . Ճիրարտի աղջկանն առջև տխուր մտածութեանցը մէջ ընկղմած ,

ու Շառնէ քանի մը ցուրտ ու ցատկը, տուկ խօսքեր արտաբերելով. մէյ մ'ալ յանկարծ թերեզա շարժմունք մ'ըրաւ դէպ 'ի առ հայրը, և ահա վզէն կախուած ու զգեստին ծալքին մէջ ծածկուած լայն միտալ մը գուրս ելաւ : Շառնէ անոր մէկ կողմը ծերուն ճերմակ մազերը տեսաւ, միւս կողմն ալ չորցած ծաղիկ մը ապակւոյն ու մետաքսին մէջ զգուշութեամբ պահուած . լուրուիկի ձեռքով իրեն խաւրած ծաղիկն էր :

Ինչ, այն ծաղիկը պահեր և խնամքով մէկտեղ զետեղեր էր հօրը մազերուն հետ զոր կը յարգէր : Բի'յիոյայի ծաղիկն ալ աղջկան ճակտին վրայ չէր փայլեր . սրտին վրայ կը կրէր :

Այս որ տեսաւ Շառնէ, բոլորովին միտքը փոխեց :

Դարձեալ սկսաւ թերեզան դիտել իբրև թէ իր առջևը այլակերպեալ ըլլար, և տեսնար վրան զայն՝ զոր մինչև այն ատենը չէր երևցուցած : Եւ իրաւցընէ . թերեզա երեսը հօրը դարձուցած կէս ուրախութեամբ կէս խանդաղանօք կը փայլէր : Գեղեցիկ էր նա այն ժամա,



նակ Ռափայելի նկարած ամբիծ ու ան-  
ձկալի հոգևոց պէս : Շատնէ մեզմով կը  
դիտէր այս շնորհալից ու ոգևորեալ կող-  
մնանկարը (profil), յորում կապակցեալ  
էին քաղցրութիւն և կորովութիւն ,  
պնդութիւն սրտի ու երկչոտութիւն :  
Շատ ատեն էր որ պատանեկութեամբ ,  
գեղեցկութեամբ ու առաքինութեամբ  
փայլող մարդկային կերպարանք մը չէր  
դիտած . հիացեր սքանչացեր էր այս  
տեսարանին վրայ . ու լաւ մը վզին , ու  
սերուն ու հասակին բարեվայելուչ ամ-  
բողջութիւնը նկատելէ վերջը՝ եռանդ-  
նալից աչքերը միտալին վրայ կանկ ա-  
ռին .

« Չարհամարհեցիր ուրեմն իմ խեղճ  
ընծաս » , մրմնջեց . և թէպէտ սաստիկ  
գաշն ձայնիւ՝ բայց թերեզա մէկէն շրտ-  
կուեցաւ , և առաջին շարժումները մի-  
տալը ներս դնելն եղաւ . սակայն մի և  
նոյն միջոցին կոմսին գէմբին փոփո-  
խութիւնը կը դիտէր , և երկուքն ալ  
կարմրեցան :

« Ի՞նչ ունիս , ազլիկս » , հարցուց ծե-  
րը՝ շփոթիլը տեսնելով :

— « Ոչինչ . — պատասխանեց թերեզա ,

և մէկէն ինքզինքն ամփոփելով՝ իբրև թէ ամհնալով անմեղ ու պատուաւոր զգացմունք մը ժխտելուն վրայ. — Աս միտալն է . . . նայէ, հայր իմ, հրաման քիդ մտգերն են. — վերջը դէպ 'ի Շառնէի դառնալով՝ — Տես, պարոն, ըսաւ, ահաւասիկ հրամանքիդ կողմանէ ընդունած ծաղիկս զոր կը պահեմ . . . և միշտ ալ պիտի պահեմ » :

Այս խօսքերուն ձայնին հնչմանը և բնածին ամօթխածութեանը մէջ՝ յորմէ ազդեցութիւն ունեցաւ բացատրութեանը ժամանակ տո. հայրն և միանգամայն տո. օտարականը պատասխանելու, թնամակ ազատ և համեստ կերպ մը, խանդակաթ ու անապակ զգացմունք մը կար՝ որ Շառնէ ամեն անգամէ աւելի զմայլեցաւ :

Օրուան մնացած մասը խանգաղատանօք և բարեկամութեան սիրալիր զգացմունքներովն անցաւ, որ գոգցես վայրկեան տո. վայրկեան կ'աճէր: Գաղտնի սրտակցութեան հետ, որ զմեզ իրարու հետ կը կապէ՝ մտերմութիւնը միշտ նոր սիրոյ զգացմանց գրաւած ժամանակին համեմատ կ'ընթանայ :

Շառնէ ու Թերեզա այսօրուրնէ առաջ իրարու հետ խօսած չէին, բայց շատ իրարու վրայ մտածած էին և Թերեզա քիչ ժամանակ ունէին . ուստի երբ Շառնէ պարզ բարակութեան ու պատշաճութեան համար շարժեցաւ որ քաջուի, ուզելով, կ'ըսէր, այնչափ երկայն բացակայութենէ վերջը հայր և որդի զիրար տեսնելու երջանկութեան մէջ ձգել .

« Կը բաժնուիս մեզմէ, — գոչեց Թերեզա . նայուածքովը կեցընելով՝ երբ ժիրարտի ալ ձևով մը կ'արգելուր . — օտարական մ'ես ուրեմն հօրս . . . ու ինձի համար », կրկնեց յանդիմանական քնքուշ ձայնով :

Աւելի յայտնելու համար որ հոն կենալն ախորժելի էր իրեն՝ սկսաւ մանրամասնաբար պատմել Ֆէնէսդրէլլոյէն գուրս ելլելէն վերջը ըրածները, և զիրենք երկուքնին միացնելու համար բանեցուցած միջոցները : Երբ պատմեց լմնցուց, ստիպեց որ Շառնէ իրենը սկսի ու Բի'լլիոյայի քով օրերն ինչպէս անցընելն ու զբազմունքները պատմէ :

Շառնէ ուրեմն պարտաւորեցաւ բանտ,

արգելութեան առաջին ժամանակներուն ձանձրութեանցը, ձեռագործական աշխատութեանցը, բուսակին ծագմանն ու զարգանալուն պատմութիւնն ընել. ու թերեզա զուարթ և հետաքրքրքիր դէմքով իւրաքանչիւր գիւտերուն համար տեսակ տեսակ հարցմունքներ ընելէն չէր դադրեր :

ժիրարտի ընդ մէջ երկու խօսողներուն նստած՝ մէկ ձեռքով աղջկանը դէպ իրեն երկնցուցած ձեռքէն բռնած, և միւսով բարեկամինը՝ յորմէ պիտի բաժնուէր՝ մտիկ կ'ընէր և փոփոխակի խառն ուրախութեան և տխրութեան զգացմամբ վրանին կը նայէր : Բայց երբեմն ծերունին իր ձեռքերը իրարու կը մօտեցընէր, որով միանգամայն Շառնէի ու թերեզայի ձեռուրները. այն ատեն երկուքն ալ զգացուած ու այլայլած՝ լռիկ ու վառվռուն աչքերով իրարու կը նայէին . վերջապէս աղջիկը առանց ձևացման կամ կեղծ համեստութեան, հանեց մեղմով ձեռքը և հօրն ուսին վրայ դնելով՝ անհոգութեամբ մը հօն կռթրնցուց գլուխը հրապուրիչ դրիւք, ու ժրպտելով աչքերը դէպ 'ի Շառնէի դարձուց ստիպելով որ շարունակէ :

Շատնէ այսչափ ընտանութիւն ու  
չնորհայից կերպ տեսնելով՝ սիրտ առաւ  
ու յորդորուեցաւ, և սկսաւ ինչուան  
բուսակին քով ունեցած ցնորքներն ալ  
պատմել: Ինչպէս ըսեր եմ՝ ասոնք Շառ-  
նէի կենաց առանձնութեանը մէջ մե-  
ծամեծ պատահարներ էին: Այն սրբ-  
տահաճոյ և անշուք օրիորդին վրայ խօ-  
սեցաւ, յոր Բի'լլիոյա անձնաւորեալ  
կ'երևար. և մինչդեռ աշխուժով ու ե-  
ռանդեամբ անոր կերպարանքը կը ծրա-  
գրէր՝ Թերեզայի դէմքին ժպիտը աստի-  
ճանաբար կ'անհետանար և կուրծքը  
կ'ուռէր մտիկ ընելով:

Պատմիչն զգուշացաւ այն քաղցր  
պատկերին ճշմարիտ գաղափարը բե-  
րան առնելու. բայց բուսակին պատմու-  
թիւնն ու թշուառութիւնները լմնցնե-  
լէն վերջը՝ յիշեց այն վայրկեանը՝ յո-  
րում հրամանատարին կամացն համե-  
մատ Բի'լլիոյա մեռնելու վիճակի մէջ  
աչքին առջև գեանէն պիտի խլուէր:

« Խեղճ Բի'լլիոյա, գոչեց ան ատեն  
Թերեզա սիրտն ելած. ո՛հ գու ինձի ալ  
կը վերաբերիս, սիրունիկս. վասն զի  
քու ազատութեանդ օգնական եղայ »:

Ու Շառնէ լի ուրախութեամբ շնորհակալ եղաւ 'ի սրտէ այն որդեգրութեանն համար որով սուրբ միութիւն կը հաստատուէր Թերեզայի ու Շառնէի մէջ:

Ժ

Անշուշտ է թէ Շառնէ կամովին ու մշտնջենաւորապէս ւզատութենէն, ըստացուածքէն ու աշխարհքէ ալ կը հրաժարէր, եթէ բովանդակ կեանքը Թերեզայի ու անոր հօրն հետ բանտի մէջ անցընելու ըլլար: ԶԹերեզայնչափ կը սիրէր՝ որչափ ոչ զոք սիրած էր: Այս զգացումներ որ ինչուան այն ատեն օտար էր իր հոգւոյն՝ տեղիք գտաւ 'ի խորս սրտին անուշախառն ուժգնութեամբ, դառն և միանգամայն օժեալ կերպով, թթու պըտղոյ մը պէս՝ որ թէպէտ ակռայ կ'առնու, բայց բերնի համ կու տայ: Անսովոր ուրախութեամբ և անձկութեամբ և գորովաշարժ սլացմունքներով խառն էր յինքեան այս զգացումներ, յորում կը բովանդակուէին առ հասարակ Աս.

տուած և մարդիկ և համօրէն բնու-  
թիւնը . կարծէր թէ գլուխը սիրտը  
կուրծքը կը ձկտէր կը լայննար, ակրն-  
կալութիւնները՝ խորհուրդները և ու-  
նեցած բիւր հիացմունքը պարունակե-  
լու համար :

Երկրորդ օրը դեռ իրեքն ալ բուսա-  
կին մօտ վայրագաւթին մէջն էին . եր-  
կու բարեկամները բազմոցին վրայ, թե-  
րեզա ալ անոնց առջևը ակտուի մը վը-  
րայ նստած, զոր Լուդուիկ կանխեր հոն  
դրեր էր :

Թերեզա քանի մը կանացի բանուած  
ձեռագործներ ու ասղնեգործ մը բերեր  
էր . զուարթ դէմքով ու վառվրուն  
երեսներով, որով յայտնի կը ցուցնէր  
թէ աղէկ ու գոհ վիճակի մը մէջ է,  
ասղան համեմատ գլուխը շարժելով,  
ձեռքին հետ աչքերն ալ վեր առնելով,  
մերթ ընդ մերթ հօրն ու Շառնէի կը  
նայէր ու կը ժպտէր, իրենց ծանր խօ-  
սակցութեանը մէջ քանի մը սնոտի  
խօսքեր նետելով . յետոյ ոտք ելաւ և ա-  
ռանց խղճելու թէ խօսակցութիւննին  
կ'արգելու՝ գնաց հօրն հետ գրկախառ-  
նեցաւ ու սկսաւ մազերն համբուրել :

Խօսակցութիւնն իրմով ընդհատեցաւ ու ալ առաջ չտարուեցաւ . Շառնէ խորին մտածութեան մէջ ինկաւ :

Կը սիրէր արդեօք զինքը թերեզա : . . . Ասանկ մտածելուն ժամանակ՝ երկու հակառակ խորհուրդներ կը տազնաւ, պէին զինքը . կը վախնար հաւտալու, կը սոսկար տարակուսելու :

Շառնէի տուած ծաղիկը պահեր էր ու խոստացաւ որ միշտ պահէ . նախընթաց իրիկունը շփոթեցաւ երբ ծերուն ծնկան վրայ իրենց երկուքին ձեռքերը մէկմէկու կը մօտենային . այլայլեցաւ ու զգացուեցաւ եռանդնալից ցնորքներուն պատմութիւնը լսելով . բայց գողտր ձայնով արտաբերած խօսքերը հօրն առջև ըսեր էր : Ի՞նչպէս մեկնելու էր գթոյ, կարեկցութեան ու անձնանուիրութեան սիրուն նշանները : Թերեզա այս տեսութենէն շատ առաջ ցուցըցած չէր ասոնց հաւաստիքը քանի որ դեռ աչքերնին իրարու չէր հանդիպած ու մէկմէկու հետ չէին խօսած : Անդգամ, անզգամ, որ կը կարծէ ասանկ դիւրաւ տեղիք գտնել այն սրտին մէջ՝ որ որդիական գորովալից զգացմամբ լի էր



բորորովին, և կուսի մը ամօթխած խըն-  
տումը սիրոյ մորմոքումն կը կարծէ:

Ի՛նչ փոյթ. ինքը կը սիրէ, կ'ուզէ  
ընդերկար՝ միշտ սիրել և փոխանակել  
այն մարմնաւոր հրեշտակը գազափարա-  
կան երեւութին տեղ որով ալ յայնմհե-  
տէ չէր կրնար շատանալ:

Այս սէրն ինքն յինքեան պիտի պա-  
հէ. մեզք է, և ապերախառութեան ու  
վաս անձնասիրութեան ազգացոյց մըն  
է՝ եթէ ջանայ մասնակցել զայն: Ո՛չ  
արդեօք ճակատագրեալ են մէկմէկէ  
բաժնուած ապրելու. թերեզա. ազատ  
ու երջանիկ՝ բազմաթիւ ընկերութեան  
մէջ ուր քիչ առենէն կրնայ փեսայ մը  
ընտրել. իսկ ինքը Շառնէ մինաւորիկ  
իր բանտին մէջ, ուր պէտք է մնայ Բի՛չ-  
չիոյայի հետ ու վայրկենական յիշա-  
տակաց յաւիտենականութեանն հետ:

Շառնէի խորհուրդն ու մտածութիւ-  
նը յայտնի ու որոշ է. այսօրուընէ, այս  
վայրկենէն սկսեալ թերեզայի քով իբրև  
սիրոյ անձուկ ու տազնապ, կամ գո-  
նեա կեղծ ու հանդարտ բարեկամու-  
թիւն մը պիտի ձևացընէ. վայ իրեն, վայ  
երկուքին ալ՝ եթէ թերեզան ալ զՇառ-  
նէ կը սիրէր:

Այս չքնաղ խորհուրդներով լի՝ երբ  
լմնցուց խորհրդածելը, ուշ դրաւ ժի-  
րարտիի ու թերեզայի սիրալիր խօսա-  
կցութեանցը :

Թերեզա հօրը մերձաւոր ազատու-  
թեանը վրայ կը մտածէր բոլորովին, և  
կ'երևար թէ կ'ուզէր ծերուն միտքը  
փոխել, որ կեղծեզ կամ համոզմամբ  
կը հաստատէր թէ ինչուան տարւոյն  
վերջը բանտի մէջ պիտի մնար :

« Գիտեմ՝ արքունեաց դանդաղու-  
թիւնը. ոչինչ բան մը բաւական է ար-  
դարութիւնը կամ զօրաւոր անձանց  
բարեմտութիւնն 'ի կախ թողու :

— Եթէ այդպէս է, ըսաւ աղջիկը,  
վաղը Դուրին կը դառնամ իրենց խոստ-  
ման կատարումը փութացընելու հա-  
մար :

— Ո՛վ այսչափ զմեզ կը ստիպէ, հար-  
ցուց ժիրարտի :

— Ի՛նչ. նախամեծար կը համարիս  
ուրեմն մութ ու նեղ խուցդ և այս ու-  
ղորմելի գաւիթը քու տանդ ու Քոլլի-  
նեայ աղուոր պարտէզներուդ քով » :

Թերեզայի այս առերևոյթ պատրաւ  
տականութիւնը, շուտով Ֆէնէսդրէլ-

լոյէն հեռանալու համար կերպ մը ցուցրցած անհամբերութիւնը՝ պէտք էր հաճելի ըլլար Շառնէի, մտածելով թէ սիրելի չէր, և թէ թերեզայի համար ենթադրած վտանգն ալ ընդունայն վախ էր. բայց սակայն այն որ իրեն ըզձիցն համեմատ էր՝ սաստիկ տագնապեցուց զինքը ու յանկարծ մտածած խորհուրդը մոռցրնել տուաւ: Ոչ անձկութիւն և ոչ անխռով մտերմութիւն կեղծեց: Ցաւ մը զգաց սիրտը զոր չկրցցաւ ծածկել. իսկ թերեզա գրեթէ միտ չդնելով կատակ ըրաւ լուռ ու խոժոռադէմ կենալուն համար, և դարձեալ իրեն խօսքն առաջ տանելով սկսաւ ցուցրնել որ եթէ հրովարտակը դեռ ուշանալու ըլլար, շուտով պէտք էր Մընուի քով երթար, և նոյն իսկ՝ եթէ պէտք ըլլար՝ առ կայսրն՝ ի Բարիզ:

Թերեզա որ ՚ի բնէ զթած ու զգուշաւոր էր՝ յանկարծ անըմբռնելի հարկէ մը ստիպեալ ծաղրաբան ու շատախօս եղեր էր:

« Ի՞նչ ունիս այս առաւօտ », կը հարցրնէր հայրը խեղճ բանտարգելոյն առջև՝ ուսկից քիչ ատենէն պիտի բաժ-

նուէին, զինքն անանկ ուրախ տեսնե-  
լուն վրայ զարմացած :

Շառնէ չէր գիտեր թէ ինչ մտածէ  
Թերեղայի վրայ :

Այս է որ Թերեղա ալ իր կողմանէ  
նոյն մտածութեանց մէջ էր Շառնէի  
պէս : Չէր զգացած երբ սիրել սկսիլը,  
այլ գիտէր թէ երկայն ատենէ 'ի վեր  
կը սիրէր : Շառնէի պէս ինքն ալ վտան-  
գօք և վնասիւք իրեն կ'ուզէր պահել  
զայն սէրը . բայց երկուքն ալ փոխա-  
դարձ իրարու վրայ կը տարակուսէին :  
Եւ այս սիրոյ հրճուանքը ու սիրելի ըլ-  
լալու վախը զԹերեղա հակասութեան  
մէջ կը ձգէր, և այն աշխոյժ խօսակցու-  
թեան մէջ՝ որով կ'ուզէր սիրտը հան-  
դարտեցնել :

Բայց շատ չանցաւ ամեն ջանքն ու  
ճշմարիտ զգացմունքը ծածկելու ամե-  
նայն բռնադատութիւնն երկու կողմա-  
նէ միանգամայն ինքիրեն վերացան :  
Հանդարտութեամբ թիրարտիի ըսածին  
միտ դնելով՝ որ կը պատմէր թէ ինչպէս  
չատ բանտարգեաներ տեսած էր որոնց  
ազատութեան շնորհքը յայտնապէս  
հրատարակուած ըլլալով՝ ամբողջ ա-

միաներ ընդունայն տեղ հրամանին կա-  
տարուելուն սպասեր էին, հաճութեամբ  
ու խաչնդաղատանօք երկուքն ալ համո-  
զուեցան . կրնար կարծել մէկը թէ  
յայնմհետէ մշտնջենաւորապէս այս  
բանտն իրենց բնակարանը պիտի ըլ-  
լար, այնչափ տեսակ տեսակ խորհուրդ-  
ներ մտածեցին հետևեալ օրերուն հա-  
մար . և թէ հոն իրենց պահապան հրեշ-  
տակովը ամփոփեալ բանտարդեալք  
մէկ բանի մը վրայ միայն՝ մէկու մը ա-  
զատութեանն համար միայն կը տարա-  
կուսէին :

Իրեքն ալ զուարթացան . փիլիսո-  
փայքն սկսան դարձեալ իրենց խօսա-  
կցութիւնն առաջ տանիլ, թերեզա ալ  
բանուածքն ու զուարթ խօսքերը :

Արևու գունատ ճառագայթ մը կը  
ցոլար դեռ գաւթին մէջ ու թերեզայի  
դէմքին վրայ կը շողար . զով քամի մը  
փողակապին ծալքերն ու երիզները կը  
ծածանէր . թերեզա վայրկեան մը 'ի  
կախ թողլով աշխատութիւնը՝ ճակա-  
տը վեր առաւ, մազերը ցնցեց, գոգ-  
ցես օդով՝ լուսով ու երջանկութեամբ  
զմայլեցաւ . մէյմ՝ ալ յանկարծ գաւ-  
թին պզտիկ դուռը բացուեցաւ :

Մորան հազարապետը սպայ մը ու  
լուղուիկն հետն առած եկաւ ժիրար-  
տեայ ազատութեան հրամանն իմացը-  
նելու : ժիրարտի փութով դղեկէն դուրս  
պէտք էր ելլեր . կառք մը կը սպասէր  
իրեն համար զառ 'ի վայրին ծայրը և  
Դուրին պիտի տանէր զինքը թերեզայի  
հետ :

Հրամանատարին հասնելուն պէս օ-  
րիորդն ոտք ելեր էր . բայց մէկէն դար-  
ձեալ աթոռոյն վրայ ինկաւ , և Շառ-  
նէի նայած ատենը՝ ինքնին կոմսն ալ  
տեսաւ թէ ինչպէս շուտ մը վեհ դէմքը  
գունատեր ու զուարթ ժպիտները կոր-  
սընցուցեր էր . Շառնէ ալ բազմոցին  
վրայ գլուխը վար կախած կեցեր էր ,  
երբ ժիրարտի թղթեր կ'ընդունէր ու  
վերստին պատիւն ու ազատութիւնը  
կը ստանար :

Ճամբայ ելլելու պատրաստութիւնը  
երկայն չէր կրնար տևել :

Արդէն լուղուիկ ժիրարտիի սենե-  
կէն վար իջեր էր . սպայն ալ արկղով  
հանդերձ հետն էր որ ինչուան Դուրին  
իրենց պիտի ընկերէր :

Բաժանման ժամն հնչեր էր :

Թերեզա դարձեալ ոտք ելաւ ու սկըսաւ խնամքով ձեռքի ասղնեգործ լաթը քսակին մէջ ամփոփել ու վզնոցը շրտկեց : Յետոյ ձեռնոցներն ուզեց դնել, ... բայց չկրցաւ : Ան ատեն Շառնէ սիրտ ըրաւ Ժիրարտիի մօտեցաւ ու թևերը բանալով ,

« Երթաս բարով, հայր իմ, ըսաւ :

— Որդեակ իմ, սիրելի որդեակ, մրմնջեց ծերունի ընկերակիցը ... արիացիր . յոյսդ մի կտրեր մեզմէ : ... Մնաս բարով, մնաս բարով » :

Քիչ մ'ատեն այնպէս գրկամած կեցաւ . յետոյ թողուց ու Լուդուիկի դառնալով զգացմունքը լաւ ևս ծածկելու համար, քանի մը չնչին հրաժարական յանձնարարութիւններ ըրաւ Շառնէի նկատմամբ : Լուդուիկ պատասխան չտրւաւ, այլ ծերուն թևը մտաւ, վասն զինեցուկի կարօտ էր :

Այս միջոցին Շառնէ Թերեզայի քով ալ մօտեցեր էր վերջին բարև տալու համար . իսկ աղջիկը՝ մէկ ձեռքը աթոռին կոնակին վրայ դրած, մտածութեան մէջ ընկղմած, ակնկոր, անշարժ տեղը կեցեր էր . իբրև թէ ամե-

նեին հոնկէ բաժնուելիք շունէր : Երբ զՇառնէ քովը տեսաւ՝ սթափեցաւ ու անբարբառ. քանի մը վայրկեան երեսը նայեցաւ . Շառնէ գունատ ու նուաղեալ էր և գրեթէ խօսելու կարողութիւն չկար վրան :

Յանկարծ աղջիկը մաքին որոշմունքը մոռնալով՝ թեւը դէպ 'ի բանտարգելոյն բուսակին երկնցուց :

« Մեր Բի'յիոյան վկայ կը բռնեմ », ... ըսաւ, ու ալ բան մը չկրցաւ բերնէն հանել :

Չեռքը բռնած մետաքսեայ ձեռնոցներէն մէկը գետին ինկաւ . Շառնէ վերուց՝ համբուրեց ու լուռ մունջ իրեն դարձուց :

Թերեզա առաւ ձեռնոցը որ ծառայեց իրեն արցունքով թրջած աչքերը սրբելու, և յետոյ շուտ մը կոմսին նետելով վերջին ժմիտով մը՝

« Մնաս բարով, դարձեալ տեսնուի՞նք », գոչեց, ու զհայրը պզտիկ դաւթէն դուրս հանեց :

Մեկնէր հեռացեր էին, շատոնց դուռը փակուած էր իրեն և անոնց մէջ, և տակաւին ինքը քարացած կեցեր էր,



և երևակայութեամբ ձեռքովը դեռ սըր-  
տին վրայ կը պնդէր Թերեզայի պզտիկ  
ձեռնոցը :

## Վ Ե Բ Զ Մ. Բ Մ. Ն

Փիլիսոփայ մը ըսած է թէ մեծութիւնը  
հանչնալու համար պէտք է անկէ զրհուիլ-  
նոյնը կրնար ըսել նաև ստացուածոց, եր-  
ջանկութեան և այն ամենայն քաղցր վայելից  
համար որոնց հետ մարդուս հոգին  
գիւրաւ կը կապուի :

Ոչ երբեք Շառնէ այնչափ մեծարոյ հա-  
մարեր էր Ֆիրարտիի իմաստութիւնը, Թե-  
րեզայի առաքինութիւնն ու ազնուութիւ-  
նը՝ որչափ իրենցմէ բաժնուելէն վերջը :  
Օրուան մը թմրութենէն վերջը խորին  
սրտնեղութիւն մը տիրեց վրան : Լուգուի-  
կի ջանքը, Բի'յիոյայի՝ խնամոց կարօտ ըլ-  
լալն իսկ զինքը չէին կրնար սթափել : բայց  
սակայն զօրութեան և բարոյականի բող-  
բոջները՝ զորս քաղցր յուզողութեամբքն  
ստացեր էր՝ կրցան վերջապէս առ վհա-  
տեալ մարդը կանգնել :

Յուզմամբ հոգին կատարելագործուեր  
էր : Նախ օրհներ էր միայնութիւնը որ կը  
ներէր յինքեան առանց ընդհատման վախ  
ունենալու հեռաւոր բարեկամացն հետ խօ-  
սիլ . յետոյ ուրախութեամբ տեսաւ մէկու

մը բազմոցին վրայ գալ նստիլը՝ ուր իմաստուն ծերոյն տեղը պարապ մնացեր էր :

Նոր ընկերակիցներէն առաջինն ու յարատւը եղաւ բանտին երէցը , այն բարի քահանան զոր երբեմն բրտութեամբ՝ ի բաց մերժեր էր : Իսկ քահանան Ղուգուիկէն լսելով անոր խոր տխրութեան մէջ ինկած ըլլալը , անցեալը մոռցած՝ եկաւ ներկայացաւ մխիթարելու համար զինքը , ու երախտագիտական ընդունելութիւն գտաւ :

Շառնէ աւելի մարդամօտի եղած ըլլալուն՝ փութով սիրտը քահանային հետ ալ կապեց , և գեղջունակ նստարանը վերըստին խօսակցութեանց բազմոց եղաւ :

Փիլիսոփան իր բուսակին ու բնութեան հրաշալիքները կը բարձրացընէր և ծեր Ծիրարտին գասերը կը կրկնէր . քահանան ալ առանց վարդապետական հակաճառութեանց մէջ մտնելու՝ Քրիստոսի վեհ բարօյականին վրայ կը խօսէր , և իրարու յետոյ յետոյ երկուքն ալ կը զօրանային :

Երկրորդ այցելուն եղաւ գղեկին հրամանատարը՝ Մորան հազարապետը , որ մօտանց տեսնուելով՝ բաւական բարի մտրդ էր . զինուորական էր սիրտը , այսինքն սոսկ ըստ հրամանի իր ձեռքի անձինքը կը նեղէր . գրեթէ հաշտեցուց զՇառնէ ստորակարգեալ բռնաւորաց հետ :

Վերջապէս շատ չանցաւ՝ Շառնէ ալ հազարապետին ու քահանային իր վերջին հրաժեշտի իարևը տուաւ : Աղուոր օդով

մը՝ երբ ամենեին մտքէն չէր անցըներ , բանտին դռները իրեն համար ալ բացուեցան :

Նարուէոն՝ Աւսդէրլիցէն դարձած ժամանակը Յովսէփինէի աղաչանքէն ձանձրացած , երբ թերևս ինքը կայսրուհին ալ ձանձրացած էր մէկու մը Ֆէնէսդրէլլոյի բանտարգելոյն համար ըրած միջնորդութենէն , ուզեց իմանալ ինչ որ աս վերջինիս քով խուզարկութեամբ գրաւելիք բան գտեր էին :

Կայսեր առջև բերուեցան լաթէ ձեռագիրներն որ ինչուան այն ատեն արդարութեան պաշտօնէին դիւանին մէջ պահուած էին . անձամբ աչքէ անցուց նայեցաւ , ու հասուն քննութենէ մը վերջը յայտնի վրկայեց թէ Շառնէի կոմսը խենդ էր , բայց յայնմհետէ անվաւս խենդ :

« Ով որ կրցեր է մտածութիւնը խոնարհեցնել ասանկ չնչին խոտոյ մ'առջևը կրնայ ասկէ վերջը երևելի տնկագէտ մ'ըլլալ և ոչ դաւադիր : Ազատութիւն կը շնորհեմ իրեն . թող կալուածները ետ դարձուին ու մշակէ զանոնք , երբ այսչափ աստորժ կը զգայ » :

Շառնէ ալ ուրեմն Ֆէնէսդրէլլոյէն դուրս ելաւ , բայց ոչ մինաւորիկ . կրնար իրեն առաջին ու հաստատուն բարեկամէն բաժնուիլ : Հողով լեցուն լայն արկղի մը մէջ փոխադրելէ վերջը՝ յաղթանակաւ հետը մէկտեղ տարաւ Բիլլիոյան ալ : Բիլլ-

յիոյան որուն պարտական էր միտքը . Բի'չ-  
յիոյան՝ որ իր կենացն ազատարարն եղեր  
էր . Բի'չյիոյան յորմէ իրեն համար մխի-  
թարական համոզմունքներ քաղեր էր . Բի'չ-  
յիոյան՝ որ բարեկամութիւն ու սէր ծնու-  
ցեր էր սրտին մէջ . համառօտ ըսել, Բի'չ-  
յիոյան՝ որ իրեն ազատութիւն շնորհեր էր .  
Եւ երբ դղեկին շարժական կամուրջին  
վրայէն անցնելու հետ էր , բիրտ ու լայն  
ձեռք մը դէպ 'ի իրեն երկնցաւ .

« Պարոն կոմս , կ'ըսէր Լուդուիկ , ջա-  
նալով զգացմունքը սրտին մէջ թաղել ,  
ձեռքդ ինծի տուր . հիմա որովհետեւ կ'եր-  
թաս կը բաժնուիս մեզմէ , որովհետեւ մէյ-  
մըն ալ պիտի չտեսնուինք , կրնանք բա-  
րեկամ ըլլալ : . . . Փառք Աստուծոյ » :

Շառնէ վիզը պլլուեցաւ . « Դարձեալ  
կը տեսնուինք , ազնիւ Լուդուիկս , իմ բա-  
րեկամ Լուդուիկս » .

Ըսաւ ու հետը գրկախառնուելէն վեր-  
ջը ու քսան անգամ ձեռքը սղմելէն ետքը՝  
դղեկէն դուրս ելաւ :

Անցեր էր լեռը որուն վրայ է դղեակը ,  
և զգաշտավայրը ու Քլիւզոնի կամուրջն  
ալ անցեր էր , և դէպ 'ի Սուզայի ճամբան  
դառնալու վրայ էր՝ երբ ձայն մը դեռ պատ-  
նէչներուն վրայէն ,

« Երթաս բարով , պարոն կոմս , երթաս  
բարով , Բի'չյիոյա » , կը գոչէր :

Վեց ամիս վերջը շքեղ կառք մը կանկ  
տռաւ Ֆէնէսդրէլլոյի վիճակին բանտին

առջև . անցորդ մը վար իջաւ ու Լուդովիկոս Տիգրան ուզեց :

Հին բանտարկեալն էր որ եկեր էր այցելութիւն ընելու իր բանտապան բարեկամին . օրիորդ մը երկու թեւիք ճանապարհորդին թևին կաթընած էր :

Այս օրիորդը Թերեզա Ժիրարտի՛ Շառնէի կոմսուհին էր : Միաբան վայրագութիւն ու այն սենեկին այցելութեան ելան , ուր երբեմն ճանճութիւն՝ անհաւատութիւն տիրած էին , և յետոյ արթնութիւն և սթափումն մտաց : Ճերմակ որմոյն վրայ գրուած յուսահատ վճիռներէն մէկ մը միայն մնացեր էր .

Գիտոսրիան , հասնար , գեղեցկոսրիան , պատանեկոսրիան , հարստոսրիան և այլ ամենայն ինչ որ այս աշխարհիս վրայ կան՝ չեն կրնար զմարդ երջանիկ ընել :

Թերեզա աւելցուց՝ « Ասանց սիրոյ » :

Շառնէ ճակտին վրայ համբոյր մը դրուածելով հաստատեց գրածը :

Կոմսն եկեր էր աղաչելու զԼուդովիկոս որ կնքահայր ըլլայ իր առաջին զաւակին , ինչպէս որ Բի՛լլիոյայլի եղեր էր , և կոմսուհւոյն արտաքին նշաններէն բաւական յայտնի կ'երևար թէ Լուդովիկոս ամառուան վերջը պէտք էր պատրաստ ըլլար :

Խնդիրնին յարմարցընելէն վերջը երկու ամուսինները Դուրին դարձան , ուր իրենց կը սպասէր Ժիրարտի՛ Քոլլինեայ գեղեցիկ կալուածին մէջ :

Շառնէ իրեն առանձին բնակարանին մօտ արեգգէտ և լուսաւոր ածուի մը մէջ դնել տուեր էր իր տունկը, որուն անտուն ոչ զք նեղութիւն կ'ըլլար: Իրեն հրամանին համեմատ բնաւ օտար ձեռք մը չէր խնամեր, չէր մշակեր զայն. արգելած էր. ինքը միայն կ'ուզէր հսկել վրան: Երախտագիտութեան յիօխարէն զբաղմունք, պարտք և հատուցումն սեպած էր այս բանս:

Օրերը շուտ շուտ կը սահէին: Շառնէ բարօրեայ ու վայելից կեանք մը կ'անցընէր գետոյ մը եզերք, գեղեցիկ երկնքի մը տակ, չորս բոլորտիքն անհուն պարտէզներ ունենալով: Ժամանակը նոր զմայլմունք՝ նոր զօրութիւն մը կը յաւելուր այս ամեն առնչութեանց վրայ. վասն զի վարժութիւնը որմնասող բաղեղանց նման ինչ որ չկրնար կործանել կը պնդէ կը հաստատէ: Ըստ ամենայնի զեղուն էր իրեն երջանկութիւնը, Ժիրարտեայ մտերմութեամբը, Թերեզայի սիրովն ու տնեցւոց օրհնէնքովը: Հասաւ այն ժամանակն ալ որ իր այս երջանկութիւնը պիտի աւելնար:

Շառնէ հայր եղաւ:

Ո՛հ ան ատեն սիրտը լցաւ խանդաղատանօք. որդւոյն վրայ զգացած գգուանքէն կարծես թէ կրկնապատկեցաւ կնկանը վրայ ունեցած սէրն ալ: Անդադար կը դիտէր ու վրանին կը հիանար. վայրկեան մը անոնցմէ բաժնուիլը տանջանք էր իրեն համար:

Այս միջոցին ըստ խոստմանը Լուգուիկ  
հասաւ : ուզեց առաջ բանտին նախկին  
սանին. այցելութիւն ընել, բայց ափսոս .  
այն սիրոյ զգացմանց մէջ, Քոլլինեայ տան  
լիազեղ յաջողութեանց մէջ՝ ամենայն ու-  
րախութեան և երջանկութեան ազբիւր՝  
Խեղճ Բիլլիոյան մեռեր էր . . . և անխնամ  
մնալով մեռեր էր :

Վ Ե Ր Ջ







HDI



HW 8564 9

